

ԱՎԱԳ ՇԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՐ

1921 ԹՎԱԿԱՆԻ
ԹԱՎՐԻՋԻ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ


9(47.925)

Հ-42 ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ
1921 ԹՎԱԿԱՆԻ ԹԱՎՐԻՋԻ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ լրացված, բարեփոխված հրատարակություն

3337



ՀՀ ԳԱՎ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2004



ՀՏԳ- 941(479.25)
ԳՄԴ- 63.3(2Հ)
Հ 422

Ա.Յարությունյան: Գարեգին Նժդեհի 1921թ. Թավրիզի դատավարությունը. 2-րդ չրացված, բարեփոխված հրատարակություն, Երեւան, 2004, 239 էջ:

Առաջին անգամ ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում Գարեգին Նժդեհի 1921թ. թավրիզյան դատավարությանն առնչվող վավերաթղթեր: Իր բացատրություններում, նախակներում եւ ցուցմունքներում Գ.Նժդեհին անաչառորեն ներկայացնում է ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը, քննադատում ՅՅ ղեկավարության անհեռատես քաղաքականությունը, Երեւանից գաղթի եւ Պարսկաստան փախուստի բարոյա-հոգեբանական եւ ռազմա-քաղաքական վնասները, ներկայացնում ՅՅ քաղաքական-կուսակցական ղեկավարության անձնական շահերն ու հաշիվները:

Հ 0503020913
703(02)2004թ.

ԳՄԴ- 63.3(2Հ)

ISBN5-80-80-0567-1

© Ավագ Յարությունյան 2004թ.

Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

1919-21թթ. հայությունը կանգնած էր աշխարհաքաղաքական չարավետ խաղերի եւ ներքին խլրտումների կործանարար ընթացքի առջեւ: Այդ ամենին դիմակայելու համար անհրաժեշտ էր համախմբվել կարող ղեկավարների շուրջ: «Միեւնույն ժողովուրդը, բանակը՝ նայած իր ղեկավարներին, կարող է եւ հրաշագործություններ կատարել եւ խայտառակորեն ծունկի գալ հակառակորդի առաջ» (Գ.Նժդեհ):

Եվ Սյունիքն ունեցավ իր առաջնորդին՝ ի դեմս Գարեգին Նժդեհի: Սյունիքում «զինվորը, ամբողջ ժողովուրդը սիրել ու հարգել է իր ղեկավարներին, որովհետեւ տեսել է, որ նույն չարքաշ ու պարզ կյանքով են ապրել վերջիններս: Յրամանատարության վարձատրությունն եղել է զուտ բարոյական՝ ժողովրդի եւ զինվորության սեր: Ոչ մի ավելորդ պաշտոն, որը կապված չէ եղել տրքնության եւ ստեղծագործ աշխատանքի հետ, ոչ մի պաշտոնյա, որը չի վայելել ժողովրդի վստահությունը: Քաղաքական խիստ խաղաձեւող հոսանքներ չեն եղել: Կռվի հրամանը ընդունվում էր որպես քեֆի ու խրախճանքի հրաման, շարժվում էին մի չտեսնված խանդավառությամբ: Կռվի դուրս գալ՝ հաղթել էր նշանակում».- գրում էր Նժդեհը:

Այս գրքի հրատարակությունն ամենեւին միտված չէ Գ.Յ.Գ. անցյալ կամ ներկա հավաքական գործունեության քննադատմանը:

Գրքի հրատարակության նպատակն է բացահայտել եւ պարզաբանել Լեռնահայաստանի հերոսամարտի եւ հատկապես նրան հաջորդած շրջանի քաղաքական եւ կուսակցական վերիվսյրումների տարաբնույթ զարգացումները, այդ համապատկերում Նժդեհի դերակատարումը եւ նրա հանդեպ տեղի ունեցած դատական հաշվեհարդարի մանրամասները, որպեսզի վերհանվի ճշմարտությունը, քանզի «ամեն բան մեռնում է աշխարհում, բացի ճշմարտությունից» (Գ.Նժդեհ):

Անաչառ եւ առարկայական մեկնակետով ներկայացվել եւ գնահատվել են ինչպես ռազմա-քաղաքական իրադարձությունների ընթացքը, այնպես էլ՝ տվյալ ժամանակաշրջանի ազգային-կուսակցական ղեկավարության ոչ միանշանակ գործունեությունը:

Ավելին, ներկայացվող վավերաթղթերն ինքնին լիարժեք հնարավորություն են տալիս ընթերցողներին զխափորապես *հենց դրանց* հիման վրա կատարել արդեն իսկ շատ որոշակի եզրահանգումներ, ընդհանրացված ու ճշմարտացի պատկերացում կազմել թե «ամբաստանյալի» եւ թե հատկապես մեղադրողների մասին:

Այս առումով ուշագրավ է, որ հարցաքննության ժամանակ Նժդեհի դեմ ուղղված ոչ մի մեղադրանք չհաստատվեց: Ավելին, իր դեմ ուղղված դատը Նժդեհն ուղղեց իր դատավորների դեմ:

Հրատարակվող վավերաթղթերը պահպանվում են Հայաստանի Ազգային արխիվում եւ Բոստոնի Յ.Յ.Դ. Կենտրոնական արխիվում (վերջին սիրահոժար տրամադրել է պատմագիտության թեկնածու Համլետ Գեւորգյանը, ում հայտնում ենք մեր շնորհակալությունը):

Գրքի երկրորդ հրատարակության ընթացքում ավելացվել են բավականին թվով նոր վավերաթղթեր եւ թեման ընթերցողին է ներկայացվում իր՝ հնարավորինս ամբողջության մեջ:

Վավերաթղթերը հրապարակվում են ոչ էական, բայց անհրաժեշտ լեզվա-ոճական եւ ուղղագրական փոփոխություններով:

Լեռնահայստանի հերոսամարտի պատմության մասին գրականությունից հիշատակենք Վ.Գեւորգյանի, Ավոյի, Վլ.Ղազախեցյանի, Ա.Սիմոնյանի աշխատությունները:¹

Լեռնահայաստանի հերոսամարտից, Նժդեհի դատի պարագաներից՝ նկատի ունենալով դրանց արդիական հնչեղությունը, այսօր հարկավոր է դասեր քաղել, անհրաժեշտ հետեւություններ կատարել:

¹Արմոտ գիրք, Գորիս, 1921; Ազատ Սյունիք, Գորիս, 1921; Գեորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը, Պուքրեշ, 1923; Աւո, Նժդեհ, Պէյրուք, 1968; Սիմոնյան Ա., Լեռնահայստանի գոյամարտը, Երեւան, 2000; Ղազախեցյան Վլ., Նժդեհը Ձանգեզուրում, Երեւան, 2001:

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ ԴԱՏԸ

Լեռնահայաստանը (Ձանգեզուր-Սյունիք), Ղարաբաղը եւ Նախիջեւանը 1918-20թթ. գտնվում էին Ադրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության ռազմա-քաղաքական անընդհատ հակամարտության պայմաններում: Այդ իրադրությունը պետք է բացատրել, ի շարս այլ հանգամանքների, նաեւ կազմակերպվածության եւ ղեկավարության պակասով, ինչը հարկ է որոշ վերապահությամբ արձանագրել Սյունիքի պարագայում:

ՀՀ ղեկավարությունը Սյունիքում որոշ քայլեր ձեռնարկում էր: Մասնավորապես, անգլիացիների կարգադրությամբ Ձանգեզուրից 1919թ. մարտին Անդրանիկի հեռացումից հետո այնտեղ ներկայացուցիչ նշանակվեց Արսեն Շահնազյանը, որը գործեց մինչեւ 1919թ. նոյեմբերը:

Արժանին մատուցելով հիշյալ գործիչներին, այնուամենայնիվ, նշենք, որ հրամայաբար զգացվում էր համախմբող ղեկավար անհատի անհետաձգելի կարիք, քանզի Ձանգեզուրում վիճակը սպառնալից եւ վտանգահարույց էր: ՀՀ կառավարությանը 1919թ. օգոստոսի 18-ին գրած նամակում այդ պարագայի մասին ցայտուն վկայում էր Գողթանի կառավարիչ Աշոտ Մելիք-Մուսայանը:¹

Օգնության խնդրով Երեւան է անցնում Գողթանի միլիցայետ Մ.Գյուլնազարյանը: Սակայն, այդ ժամանակ, ՀՀ ղեկավարությունը զբաղված էր Վեդի Բասարի եւ Շարուրի անհաջող կռիվներով ու անկարող էր կանոնավոր զորք ուղարկել: Հենց այսպիսի պայմաններում, Յ.Յ.Դ. Բյուրոյի առաջարկով, Գարեգին Նժդեհը անցնում է Սյունիք:

Իսկ ինչպիսի՞ն էր Սյունիքում տիրող իրադրությունը: Փաստորեն, երկրամասում չկային կանոնավոր զորամասեր եւ զինտեխնիկա: Ավելին, որեւէ կազմակերպչական աշխատանք կատարված չէր: Միակ զինված ուժը գյուղացիությունն էր, ում շրջանում էլ հենց Նժդեհը ձեռնարկեց ժողո-

¹ Գեւորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը, Երեւան, 1991, էջ 25-26:

վրդական վաշտերի կազմակերպումը: Մինչդեռ, դժվարությունները բազմաթիվ էին:

Այսպես, ՀՀ կառավարությունը Գողթանի Ե. համագումարի նախագահությանն այդ օրերին հղեց հետևյալ անհամատ գրությունը. «ՀՀ կառավարությունն այժմ ձեզ որեւէ դրական օգնություն չի կարող հասցնել: Գաղթեցուցե՛ք Գողթանի ժողովուրդը Գենվազի եւ Ղափանի շրջանները»:¹

Այսինքն՝ մեր վրա հույս չղնեք, ձեր գլխի ճարն ինքներդ տեսեք: Բարեբախտաբար, տեղի ուժերը նման պարտավողականությունից զերծ էին, եւ, բարոյալքում չառաջացնելու նպատակով, հիշյալ գրության մասին ժողովրդին չհայտնեցին: Ղափան-Գենվազի Ազգային Խորհրդի հրավերով, Նժդեհը ստանձնեց այդ շրջանների զինվորական ընդհանուր հրամանատարությունը: Նրա առաջին գործն եղավ 18-52 տարեկանների զորահավաքը:

Գ.Նժդեհի 1919թ. հոկտեմբերի 23-ի թիվ 4 հրամանով ամենօրյա զինվորական անվանացուցակի ստուգման ժամանակ պետք է ընթերցվեին ազգային նահատակների անունները:² Նման քայլը զինվորների շրջանում պետք է ստեղծեր բարոյա-հայրենասիրական բարձր տրամադրություն, Հայրենիքի համար հավատարմությամբ ու անձնվիրությամբ ծառայելու եւ քաջորեն մեռնելու հոգեբանություն: Իսկ նման «խնկելի անուններ» էին Քեռին, Խեչոն ...

Ի հավելումն՝ բոլոր գյուղերում սկսեցին կառուցվել միջնաբերդեր, որոնք կոչվեցին «հեղափոխական նահատակների» անուններով՝ Քրիստափորաբերդ, Խեչոաբերդ եւ այլն: Այս ամենից գատ, բոլոր ժողովրդական վաշտերը, կազմման օրվանից, ունեին իրենց «հեղափոխական սուրբը»՝ իրենց զորավիզը. Քրիստափորը, Ռոստոմը, Դումանը, Խեչոն ...

Ավելին, ժողովրդական աշխարհագրի կազմակերպման եւ հետագա գործունեության ընթացքում Նժդեհը մարտականից գատ ու գլխավորապես՝ շեշտը դնում էր պայքարի գաղափարական-հոգեփոխիչ կողմերի վրա: Հենց այս փաստը ՀՀ բանակում առկա չէր, ինչն էլ 1920թ. թուրքական

¹ *Գեորգյան Վ.*, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 27:

² *Անդ.*, էջ 31-32:

արշավի ժամանակ անպատրաստվածության հիմնական պատճառներից մեկն էր:

Այսպիսով, ի մեծ տարբերություն նախորդ գործիչների, Նժդեհը Սյունիքում հանդես եկավ ո՛չ միայն որպես ռազմական հրամանատար, այլև՝ *գաղափարահաղորդ դեկավար ու անդուլ կազմակերպիչ*: Ինչ խոսք, նման նվիրվածությունն առարկայաբար պետք է տար իր օրինաչափ արդյունքը:

Արդեն 1919թ. նոյեմբերի վերջին Նժդեհի Դավիթ Բեկյան վաշտերն ընդամենը 7 օրում ազատագրեցին Գեղվաձորը: Այդ կապակցությամբ, 1920թ. հունվարի 15-ին, 25 վաշտապետներ «սիրելի հրամանատար» Նժդեհին նվիրեցին Դավիթ Բեկյան պատվո սուր՝ հետևյալ մակագրությամբ. «*Գարեգին Նժդեհին, որին Ղափանն անվանեց երկրորդ Դավիթ Բեկ, իսկ թշնամին՝ Աժդահա փաշա*»:¹ Այս առումով, չափազանց ուշագրավ է Հ.Յ.Դ. տեղի պաշտոնաթերթի «Երկրորդ Դավիթ Բեկ» հոդվածը:²

Իսկ ինչպիսի՞ էր ՀՀ կենտրոնական իշխանությունների ու Հ.Յ.Դ. դեկավարության վերաբերմունքը այդ ժամանակ:

Հ.Յ.Դ. Բյուրոյի հերթապահ անդամ Արշ. Ջամայանը 1919թ. դեկտեմբերի 10-ին վարչապետ Ալ.Խատիսյանին հղած գրությամբ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը պայմանավորում էր արտաքին ուժերի միջամտությամբ: Սակայն, նա միաժամանակ խորհուրդ էր տալիս ստանձնել հակամարտության գոտի հանդիսացող գավառների պաշտպանությունը:³

Այսուհանդերձ, ՀՀ կառավարությունը մինչեւ վերջ, որպես կանոն, անհաղորդ մնաց, իսկ երբեմն ուղարկվող օգնությունն անհրաժեշտ դրական արդյունքի չհանգեցրեց:

Դեռ 1919թ. նոյեմբերին, Դրոն 600 զինվորով ժամանել էր Գորիս: 1920թ. հունվարին նա գեներալ Ղազարովի հետ ծրագրեց Շուռնուխի արշավը, որին Նժդեհը իրավացիորեն վերապահությամբ էր մոտենում եւ ավելի նպատակահարմար գտնում Օրդուբադի դեմ արշավը: Դրոյին հղած գրությամբ նա՝ «*որպես հեղափոխական*», իր «*բարոյական*

¹ *Գեորգյան Վ.*, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 41:

² «Սյունիք», Գորիս, 1920, թիվ 7, էջ 2:

³ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 155, թ. 1:

պարտքը» էր համարում նախազգուշացնել, սակայն, միա-
ժամանակ, որպես զինվորական կատարելով հրամանը:

Այդ արշավից հետո՝ Ազուլիսի հայերը տեղահանվե-
ցին, իսկ Գողթանի վիճակը՝ վտանգվեց: Վերջինիս փրկու-
թյան գործը փառքով կատարեցին Սյունյաց վաշտերը: 1920
փետրվարի 12-ի հրամանում Նժդեհն արժանիորեն կարեւո-
րում էր դրա նշանակությունը. «Հասել է ժամը, երբ երկու մեծ
ու ընտիր հայորդիների՝ *Աստվածաշունչ Քրիստափորի եւ
Ռոստոմի* արյունաներկ ու սրբապղծված ծննդավայրը՝ երբ-
եմնի չքնաղ Ազուլիսները պիտ վերագրավվին, պիտ վերա-
կանգնին իրենց շենությամբ ու բարոյական մեծությամբ: Քաջ
եւ հայրենասեր զինվորներ, լցվե՛ք բոցով ու վրեժով: *Առաջ,
մեզ հետ Աստված եւ մեծ հայորդիների՝ Քրիստափորի ու
Ռոստոմի անհանգիստ հոգիները*»:¹

Նժդեհի օգնական Քաչալ Ղազարի վկայությամբ՝ հրա-
մանատարը «իր պերճախոս լեզվով զինվորները խրախուսեց
ու քաջալերեց անշունչ քարերն իսկ»:²

Հակառակ դրսից էական օգնությունից զուրկ լինելու
պարագային, Նժդեհը ժամանակին անհրաժեշտ աջակցու-
թյուն էր ցոյց տալիս նաեւ Ղարաբաղի մարտական ուժերին:
Հատկանշական է վերջիններիս 1920թ. ապրիլի 8-ի դիմումը
Զանգեզուրի զինուժի հրամանատար գեներալ Ղազարովին,
պատճենը՝ Նժդեհին:³ Այդտեղ ղարաբաղցիները խնդրում էին
օգնել ո՛չ թե զորքով կամ դրամով, այլ՝ մի «փորձառու առաջ-
նորդով», որպիսին համարում էին Նժդեհին, քանզի նա
«ստեղծված է ժողովուրդի համար»: Արդյունքում, Նժդեհի
ուժերն անցան Դիզակի շրջան եւ չեզոքացրեցին Դրոյի
զորամասի աջ թեւին սպառնացող վտանգը: Այդ կռիվների
ընթացքում Զանգեզուրից Արցախ ընկած ողջ տարածքն
ազատագրվեց թշնամուց:

1920թ. մայիսի 17-ին, Կապարգողթի հայության ժողո-
վը Նժդեհի զեկուցումից հետո որոշեց ՀՀ անկախության դեմ
ուղղված բոլոր շարժումները «խեղդել սաղմի մեջ»:⁴

¹ *Գեորգյան Վ.*, նշվ. աշխ., էջ 46-48:

² *Աւօ*, Նժդեհ, Պէյրուք, 1968, էջ 97:

³ *Անդ*, էջ 57-58:

⁴ *Անդ*, էջ 61-62:

Սյունիքի համար այդ ժամանակ հայտնվեց մի նոր
թշնամի եւս՝ Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ խոր-
հրդայնացված Ադրբեջանը: Սյուս կողմից, 1920թ. հունիսին,
ՀՀ կառավարությանը հղած գրությամբ Զանգեզուրի գեներա-
լ-կոմիսար Ս.Մելիք-Յուլյանը տեղեկացնում էր, որ Դրոն
ուզում է հեռանալ Սյունիքից եւ գործում է ինքնուրույն՝ իր
քայլերը չհամաձայնեցնելով տեղի իշխանությունների հետ
ու խնդրում՝ ղեկավար անձ ուղարկել:¹ Ինչեւէ, արդեն հունի-
սին Զանգեզուրից հեռացան պետական պաշտոնյաները եւ
գրեթէ բոլոր դաշնակցական գործիչները: Խորհրդարանի
անդամ Զաքար Յուլյանն եւս հունիսի 1-ին ՀՀ կառավարու-
թյանն առաջարկում էր շտապ ղեկավար անձ ուղարկել:²

Զանգեզուրի կոմիտեին ուղղված 1920թ. հունիսի 19-ի
նամակում Հ.Յ.Դ. Բյուրոյի հերթապահ անդամ Համո Օհան-
ջանյանը՝ նաեւ կառավարության անունից, ընդունում էր երկ-
րամասում բոլոր գործերը վարելու նպատակով մեծ լիազո-
րություններով հատուկ խորհրդի ստեղծման անհրաժեշտու-
թյունը:³

Նշենք, որ նման խորհուրդ այդպես էլ չստեղծվեց:
Չնայած այս պարագային՝ տեղի ուժերն անգործ չէին: 1920թ.
հունիսի վերջին Գորիսում գումարվեց Ազգային խորհրդի եւ
կուսակցական բոլոր պատասխանատու գործիչների ընդհա-
նուր ժողով, որի օրակարգում մեծամասնականների դեմ
պայքարելու խնդիրն էր: Այդ ժողովին ներկա էին Դրոն,
Նժդեհը, Արշակ Շիրինյանը, Վահան Խորենին, Զաքար Յու-
լյանը, Սերգեյ Մելիք-Յուլյանը, Գերասիմ Բալայանը եւ Յապո-
նը: Ժամանակակցի վկայությամբ, «*համարյա բոլորը խուսա-
փողական տրամադրություն ունեին* չցանկանալով բախվել
խորհրդային զինուժի հետ»: Մեծամասնականները միամտա-
բար համարվում էին հավատակից գաղափարակիրներ: Այդ
վճռական պահին, միանգամայն *կրավորական* էր նաեւ Դրոյի
դիրքորոշումը: Եվ միայն Նժդեհն էր, որ արմատական բեկում
մտցրեց այդ հանդուրժողական մթնոլորտում. «*Կարծես Դա-
վիթ Բեկը վերակենդանացել էր. Կրակ էր ժայթքում իր բեր-*

¹ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 117, թ. 20:

² *Անդ*, ֆ. 1021, ց. 2, գ. 1080, թ. 1-2:

³ *Անդ*, ֆ. 1457, ց. 1, գ. 161, թ. 2:

նից եւ համակ վճռականութիւն»: Նա հատկապէս շեշտեց, որ «Հայրենիքը ո՛չ ոք իրավունք չունի առանց կռվի զիջելու խորհուրդներին, որոնց միացած է Ադրբեջանը: Սուտ են նրանց շռայլած բոլոր խոստումները»: Իբրեւ *«գորավար եւ քաղաքական ղեկավար»*, Նժդեհը միանգամայն ճիշտ ըմբռնեց իրադրությունը: Այսպիսով, ներկաներից *«ոչ ոք ունեցավ այն դրական կեցվածքը, վճռականութիւնը եւ հստակ պատկերացումը, ինչ որ ունեցավ Նժդեհը»*:¹

Սակայն, Դրոյի անհեռատես առաջարկով որոշվեց ամբողջ կազմով հեռանալ Ջանգեզուրից եւ թողնել, որ «ժողովուրդը ճաշակէ մեծամասնականների համն ու հոտը՝ թեկուզ ժամանակավոր»:²

Ահա՛ այսպէս, ոչ ավել, ոչ պակաս: Դիցուք, Դրոն իր զինուժով նահանջեց դեպի Վայոց Ձոր, իսկ Նժդեհի վաշտերն ամրացան Խուստուփ լեռան շրջանում:

Օգտվելով ստեղծված իրադրությունից, մեծամասնականները հուլիսի 3-ին գրավեցին Գորիսը, ապա՝ Սիսիանը: Եվ միայն օգոստոսի 2-ին վերադառնալով՝ Դրոն ազատագրեց Գորիսը: Բայց, մինչ այդ, հեղկումն արդեն գնդակահարել էր Վ.Խորենուն եւ Ա.Շիրինյանին: Ի դեպ, Դրոյի գործնասի հաջողությունը երկար չտևեց. մեծամասնականները օգոստոսի 7-ին վերագրավեցին Գորիսն ու Սիսիանը: Հիշատակության արժանի է Հ.Յ.Դ. Ջանգեզուրի Արտակարգ կոմիտեի 1920թ. հուլիսի 28-ի սթափության եւ պայքարի կոչը, որն անհրաժեշտ հետեւանքներ չունեցավ:

Տեղին է նշել, որ 1920թ. օգոստոսին Դրոն իր տրամադրության ներքո ուներ 1300 զինվոր, Նժդեհը՝ 300, իսկ Պողոս Տեր-Դավթյանը (Սիսիան)՝ 120:³ Այս թվերն արդեն ինքնին վկայում են ամեն ինչի մասին:

Այսուհանդերձ, Դրոյի գործնասի նահանջն ապահովեցին Նժդեհի վաշտերը: Կռվի ժամանակ Նժդեհը վիրավորվեց, եւ թեւ Դրոն նրան առաջարկեց բուժվելու համար գնալ Երեւան, սակայն Նժդեհը նախընտրեց *«մնալ ժողովրդի հետ ու մեռնել, քան թե վտանգի այդ ծանր օրերին լքել նրան»*:

¹ Աւօ, նշվ. աշխ., էջ 489-492:

² Անդ, էջ 485-486:

³ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 173, թ. 1:

Ավելին, նահանջելիս Դրոն Երեւան տարավ ղափանցիների ունեցած երկու թնդանոթները եւ թույլատրեց Կապարգողթի թնդանոթային դասակին եւս գնալ իր գործնասի հետ:

Ինչ խոսք, Երեւանում այդ թնդանոթները հավանաբար ավելի անհրաժեշտ էին: Առանց այդ էլ, Նժդեհն ու սյունեցիները, զինված՝ *վճռական մեծակի բարոյականով*, ապավինել էին զուտ սեփական ուժերի վրա: Էլ ի՞նչ կարիք կար նրանց որեւէ ձեւով օգնել:

Այս ամենից զատ, ՀՀ ներկայացուցիչները 1920թ. օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնագիր կնքեցին: Ըստ դրա ՀՀ զինվորական նախարար Ռուբենը Դրոյի միջոցով Նժդեհին հրամայեց, որպեսզի նա «հավաքի իր գործնասերը, նույնպէս բոլոր ցանկացողներին ու նախագուշակական միջոցներ ձեռք առնելով անցնի *մեր տարածքը* (ՀՀ - Ա.Յ.), բերելով իր հետ *ամբողջ զենքերը*»:¹

Այս գրության առթիվ Նժդեհը նշում էր. «Խոստովանում եմ, որ կյանքիս մեջ ոչինչ է ինձ այնպէս հանկարծակի բերել, ինչպէս այդ գրությունը: Հայաստանի զին. նախարարը ... նման վերաբերմունքով ո՛չ թե միայն Ջանգեզուրն էր հանձնում կարմիրներին, այլեւ՝ Արարատյան Հայաստանը»:²

Իսկ թե ո՞ւմ հույսին էր թողնվելու ռազմավարական նշանակություն ունեցող Սյունիքի ինքնապաշտպանության գործը՝ այդ արդեն «կարեւոր» չէր: «Մեծ» քաղաքականության խնդիր կար, Սյունիքով զբաղվելու ժամանակ ՀՀ ղեկավարությունը չունէր:

Համաձայնագրի նկատմամբ Դրոն եւ Նժդեհը ունեին միանգամայն հակադիր դիրքորոշում. եթե Դրոն հակված էր անխոս կատարելու հրամանը եւ անմիջապէս վերադառնալ Երեւան, ապա Նժդեհն օգոստոսի 13-ի գրությամբ կտրակաճապէս հրաժարվեց: Ավելի կոնկրետ՝ իր խոսքերով. *«չկատարելով հրամանը՝ փրկեցի Հայրենիքը»*:³

Այս դեպքերի հետ կապված, Ղափանի գյուղացիության ներկայացուցչական խորհրդի նախագահ Ս.Մելիք-Փարսադանյանը ՀՀ Խորհրդարանին եւ Զինվորական նախարար-

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 156:

² *Գեորգյան Վ.*, նշվ. աշխ., էջ 68:

³ «Հայրենիք», Բոստոն, 1923, թիվ 12, էջ 96-98:

րին բողոքեց Դրոյի «ռազմական անմիտ խաղերի» դեմ, որի արդյունքում Ջանգեզուրը կրկին մնաց «մենակ, պաշարված, կտրված աշխարհից, գինաթափված»:¹

Տեղի տալով այս դիմում-բողոքներին եւ վարագուրելով սեփական անճարակությունը՝ Ռուբենը 1920թ. սեպտեմբերի 23-ին նոր միայն պատասխանեց Նժդեհի օգոստոսի 13-ի գրությանը. «Համսձայն ենք, որ Ձեր դուրս գալուց հետո Ղափան-Գողթանը ձեռքից կգնա եւ նրանք սրի-հրի կմատնվեն եւ նոցա համար կստեղծվի *ավելի վատթար վիճակ*, քան ուրիշ վայրերու: Համաձայն ենք նույնպես Ձեզ հետ, որ դուք *դուրս չպիտի գաք* եւ պիտի գբաղվեք ինքնապաշտպանությանը՝ հանուն Ղափանի փրկության: *Միք հուսահատվի, եղեք ժողովրդի հետ եւ նահատակվեք նրա հետ մինչեւ վերջին վայրկյանը*»:²

Սին դաս տալը հեշտ էր, եթե հաշվի առնենք, որ ՀՀ ղեկավարությունը «պատրաստվում» էր Քենալի հետ սպասվող պատերազմին: Այսինքն, ՀՀ ղեկավարությունը «բավարարվում» էր Խորհրդային Ռուսաստանին դիվանագիտական նոտաներ հղելով:³ Ինչեւէ, գոնե բողոքարկում առկա էր, թեկուզ ... թղթի վրա:

Հատկանշական է, որ Ջանգեզուրում տեղակայված կարմիր բանակի հրամանատարությունը լավ գիտակցում էր, որ իր դիրքերը չեն ամրապնդվի այնքան ժամանակ, քանի դեռ կռվում է Ղափանի հայությունը:⁴ Երբ օր-օրի սպասվում էին լայնածավալ մարտեր Դենկինին հաղթած կարմիր հրամանատար Կուրիշկոյի եւ Նժդեհի զինուժերի միջեւ, Երեւանում աշխույժ դիվանագիտական աշխատանք էր տարվում միջպետական պայմանագրի նախագիծը վերջնական տեսքի բերելու համար: 1920թ. հոկտեմբերի 28-ի պայմանագրի նախագծով Ռուսաստանը եւ Ադրբեջանը ճանաչում էին Նախիջևեանի եւ Ջանգեզուրի անցումը ՀՀ-ին, իսկ ՀՀ կառավարությունը պարտավորվեց հրաժարվել Ղարաբաղից:⁵

¹ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 9-10:

² ԱՆդ, ֆ. 199, ց. 1, գ. 117, թ. 116:

³ *Գեորգյան Վ.*, նշվ. աշխ., էջ 70-71:

⁴ ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 211, թ. 202, գ. 219, թ. 272:

⁵ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 122, թ. 1-2:

Սին հույսեր, եւ, սովորականի պես, հայկական իրավանց «ճանաչում» ... մեռյալ թղթի վրա: Այսինքն, Նժդեհի խոսքերով. «Հանուն իր քաղաքական «կորրեկտության» Երեւանը վճռել էր ձեռք քաշել Ջանգեզուրից: Այսպես, Երեւանը մեզ մեր բաղտին էր թողել, լքել, առանց գիտակցելու, որ դրանով արագացնում է եւ իր անկումը»:¹

Իսկ մինչ այդ, 1920թ. օգոստոսի 25-ին, Ղափանի Կավարտ գյուղի եկեղեցում Կապադոզի հայությունը ուխտեց «Պատմական մեծ հերոս Դավիթ Բեկի եւ Մխիթար սպարապետի անունով՝ հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատության, հրամանատար Նժդեհին եւ կռվել մինչեւ վերջին շունչը»: Հենց այդ ժողովում Նժդեհին կոչեցին Սպարապետ:²

Արժեւորելով պահի ոգեղենությունն ու հերոսականը, նույն օրը Նժդեհը վաշտերին ուղղեց ցեղային բարոյականով լեցուն ռազմաշունչ յոթ պատվիրաններ:³

1920թ. հոկտեմբերի 1-ին Նժդեհը մեկ անգամ եւս օգնության հարցով («*մեր տղաները փամփուշտ, փամփուշտ եւ փամփուշտ են խնդրում*») դիմեց ՀՀ Զինվորական նախարարին: Այս դիմումին ստացվեց արդեն սովորական դարձած պատասխան. «*Հայաստանը ի վիճակի չէ Ձեզ ներկայումս իրական օժանդակություն ցույց տալ: Դուք ինչպես մինչ այժմ, այնպես եւ հիմա պիտի մեմ-մենակ շարունակեք Ձեր հերոսական գոյամարտը: Միայն ինձացեք, որ մեր եւ ամբողջ հայ ժողովրդի համակրանքը դեպի Ձեզ է*»:⁴

Հ.Յ.Դ. Բյուրոյի անունից պատասխանեց հերթապահ անդամ Սարգիս Արարատյանը. «Ստեղծված կացության մեջ կառավարությունն անկարող է որեւէ զգալի օգնություն հասցնել ձեզ: Գիտակցելով անգամ ձեր վարած հերոսական պայքարի պատմական նշանակությունը մեր պետության կազմակերպման համար, Բյուրոն եկավ հետեւյալ եզրակացության. ա) Ձեր շարժումը համարել խիստ կարեւոր եւ անհրաժեշտ եւ մեզ համար բացարձակապես օգտակար, բ) Ջանգեզուրի

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, թ. 29:

² *Նժդեհ Գ.*, էջեր Լեռնահայաստանի գոյամարտն, «Հայրենիք», 1924, թիվ 3, էջ 134:

³ Արնոտ գիրք, Գորիս, 1921, էջ 34:

⁴ *Նժդեհ Գ.*, Խուստուպեան կանչեր, Գորիս, 1921:

ամբողջ գործի ղեկավարությունը թողնելով ձեզ՝ թե՛ զինվորական եւ թե՛ քաղաքացիական, Բյուրոյի կողմից ուղարկված բոլոր անձինք կլինեն ձեր տրամադրության տակ: Վստահ Ձեր եւ Ձեր ընկերների անձնագոհության եւ շրջանիդ քաջարի ժողովրդի անձնագոհության ու հայրենասեր ոգիին, հույս ունենք, որ ո՛չ մի բռնաբերում չպիտի վարանք շարունակելու սրբազան կռիվը մեր դարավոր թշնամու դեմ»:¹

Յ.Յ.Դ. Բյուրոն այս գրությամբ սյունեցիների պայքարի ողջ ղեկավարությունը, փաստորեն, հանձնում էր Նժդեհին (ինչն արդեն փաստ էր)՝ կրկին չճշմարտացի կռիվներով, որ ... օգնել չի կարող:

Ամենեւին չհուսահատվելով 1920թ. հոկտեմբերի 10-ին Նժդեհի վաշտերը ազատագրեցին Ղափանը, իսկ նոյեմբերի ընթացքում՝ Գորիսը եւ Սիսիանը, եւ, առաջին հերթին, վրիժառու ձեռքով պատուհասեցին Յ.Յ.Դ. անվանի գործիչներ Վ.Խորենու եւ Ա.Շիրինյանի նամարդ մարդասպաններին: Գնահատելով այդ մամուլը արձագանքեց. «Ապստամբ Ղափանն ու Գեղվազը խլեցին Յայաստանից, իրեն իսկ Յայաստանի համար հաղթության դափնյա պսակները: *Փառք եւ պարծանք Ձանգեզուրի հերոսներին, պատիվ ու հարգանք Յ.Յ.Դ. ծնունդ Նժդեհին, հայ անվեհեր կտրիճ զինվորներին*, որոնք, փարած զենքին, հայ ազատագրության գոյամարտն են մղում ծյունապատ բարձունքներում, սոված ու տկլոր»:²

Իսկ Յ.Յ.Դ. Արեւիքի կոմիտեն հոկտեմբերի 16-ին ազդեց. «*Թող հպարտանա՛ մեր կուսակցությունը, թող ժպիտը փայլի՛ նորա շուրջն բոլորած շիտակ ու անկեղծ կուսակցականների դեմքերին, որ իր շարքերում ունի Նժդեհ, որ իր ծոցում սնվել, մեծացել է Գեղվաձորի աժդահա փաշան, Չավնդուրի փառիշահը, Կապարգողթի սիրելի հրամանատարը: Թող հրճվին մեր բոլոր ընկերները*»:³

Հաղթանակների առթիվ Յ.Յ.Դ. Բյուրոյի եւ կառավարության քարտուղար Յովհաննես Տեւեճյանը նոյեմբերի 30-ին ՅՅ ղեկավարության անունից հիացմունք հայտնեց Նժդեհին. «Ամբողջ ընկերները հիացմունքով կհետեւին Ղափի

¹ *Գեորգյան Վ.*, նշվ. աշխ., էջ 85-86:

² *Անդ*, էջ 180:

³ «Այգ», Թաւրիզ, 1920, թ. 41:

Բեկի հոգեզավակի հերոս պայքարին եւ կարող եմ ասել, թե *ամբողջ մեր կուսակցական մարմինների եւ առհասարակ հայության լայն խավերի ջերմ համակրությունը* Ձեզ հետ է»:¹

Օժանդակության հարցով վերջին անգամ Երեւան մեկնած Ձանգեզուրի Գյուղացիական խորհրդի ներկայացուցիչ Ա.Սելիք-Մուսյանը ՅՅ կառավարությանը առաջարեց սկսել «լուրջ ծրագրված գործողություններ Ձանգեզուրում» եւ օգնել զենքով:² Այս դիմումը եւս մնաց անպատասխան:

Արդեն ՅՅ անկումից հետո՝ Խորհրդային Յայաստանի կարմիր զորքի հրամանատար Դրոն եւ զինկոմ Ավիսը Ձանգեզուրի գյուղացիությանը եւ հրամանատարությանը կոչեցին «կանգնել Խորհրդային Յայաստանի դրոշի տակ»:³

Նման դիմում-կոչերը հպանցիկ քանու պես զարնվում-փշրվում էին Սյունիքի ռազմաշունչ լեռներին:

Պայքարի վճռականությամբ Տաթևի համագումարը 1920թ. դեկտեմբերի 25-ին վճռեց. «Ձանգեզուրը հայտարարել ժամանակավոր ինքնավար, մնալով անկախ մինչեւ քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Յայաստանի հետ»: Յամագումարը նաեւ միաձայն որոշեց հրավիրել Նժդեհին որպէս «Սյունյաց Սպարապետ եւ իր բախտը հանձնել նրան»:⁴

Ավելորդ չէ հիշատակել, որ Սյունիքի անձնագոհ գոյամարտին անհրաժեշտ աջակցություն չէր ցուցաբերվում նաեւ Թավիղզի ազգային-քաղաքական շրջանների կողմից:⁵

Այս առումով բնորոշ է Նժդեհի նամակը Յ.Յ.Դ. Ատրպատականի կոմիտեին. «Իմ դրության *ողբերգականությունը* նրանում է, որ, *կտրված աշխարհից* զուրկ եմ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից: *ՅՅ-ը ինձ դրել է ամենամեղ դրության մեջ: Ո՛չ օգնություն, ո՛չ տեղեկատվություն, ո՛չ էլ որոշ հրահանգներ եմ ստանում:* Ես շարունակելու եմ կռիվները եւ պիտի դիմադրեմ, քանի դեռ ժողովուրդի մի մասն ինձ հետ է: *Արագացրե՛ք օգնությունը, որի ուշացումը*

¹ *Գեորգյան Վ.*, նշվ. աշխ., էջ 92:

² *Անդ*, էջ 109:

³ *Անդ*, էջ 111-113:

⁴ *Անդ*, էջ 123-125:

⁵ Ազատ Սիւնիք, Գորիս, 1921, էջ 48-60:

կնշանակի թուլացնել մարտնչող գյուղացու մարտական կորովն ու հավատը»:¹

Իսկ Յ.Յ.Դ. Ատրպատականի կոմիտեն իր «անխառն հիացմունքը» հայտնելով նրա «անձնվեր եւ տոկուն» պայքարի համար նշում էր, որ օժանդակությունը միայն «բարոյական նշանակություն» ունի եւ տիրող պայմաններում ցանկալի չափով չի կարող օգնել «պատմական նշանակություն ունեցող մեծ գործին»:²

Իսկ օգնությունը չկար կամ լավագույն դեպքում ... ուշանում էր:

Սյունիքը դեռ պետք է մաքառեր բոլշեիկների դեմ: Իսկ Դրոն 1921թ. հունվարի 21-ին Բաքվից Ջանգեզուրի գյուղացիական կոմիտեին եւ Նժդեհին գրած նամակում, ներկայացնելով Հայաստանի ժանր դրությունը, առաջարկում էր Ջանգեզուրը «անմիջապես հայտարարել խորհրդային եւ միանալ խորհրդային Հայաստանի հետ»:³

Այս նամակի արժանի պատասխանը 1921թ. փետրվարի 15-ին Յապոնի կողմից Դարալագյազի ազատագրումն էր՝ Նժդեհի ղեկավարությամբ: Այդ հաղթանակն արժանվույն գնահատեցին Յ.Յ.Դ. Գորիսի կոմիտեն եւ Յ.Օհանջանյանը:⁴

1921թ. փետրվարի 21-ին Գորիսի եկեղեցում Նժդեհի մեջքին կապեցին օծված գոտի եւ հանձնեցին Հայկական Եռագույն: Դրանով Նժդեհին հանձնվեց Սյունիքի «քաղաքական բախտը, պատվի եւ նամուսի պաշտպանությունը»:

Երեւանում, Հեղկոմի անկումից հետո. 1921թ. փետրվարի 20-ին, Վրացյանը Ռուբենին եւ Նժդեհին գրում էր. «Եթե այդտեղ առանձին անհրաժեշտություն չկա, շատ լավ կլիներ, որ Նժդեհը իր մի քանի հարյուր զանգեզուրցի-դարաբաղցի մարտիկներով անցներ Երեւան՝ ժողովուրդի բարոյական թափը ամրացնելու համար: Կկանենայի, որ Նժդեհն այստեղ պաշտոն ստանձներ»: Իսկ մարտի 25-ին Նժդեհին եւ Յապոնին առանձնապես շեշտում ու խնդրում էր բացել Դարալա-

¹ Յուշամատեան Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թանգեանի, Թեհրան, 1968, էջ 116-120:

² Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

³ Գեւորգյան Վ., նշվ. աշխ., էջ 179:

⁴ ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 70, թթ. 29, 35-39:

գյազ-Ջանգեզուր-Երեւան կենտրոնական գիծը, ինչպես նաեւ մարտական օժանդակություն հասցնել:¹

Երբ ժամանակին Սյունիքն էր օգնության նման դիմումներ հղում ՀՀ ղեկավարությունը եւ նույն Վրացյանը անտարբերությամբ էին վերաբերվում ու սոսկական դիտորդի դեր ստանձնում: Ավելին, Վրացյանի տրամաբանությամբ Նժդեհը պետք է իր վաշտերով թողներ մարտնչող Սյունիքը եւ անցներ Երեւան: Փաստորեն, անգամ ՀՀ անկման ողբերգականը չէր սթափեցրել քաղաքական կարճատեսներին:

Ի պատասխան՝ Նժդեհը տեղահանեց Դարալագյազի եւ Չանախչիի միջեւ ընկած թրքական գյուղերը եւ Երեւանի հետ կապը ապահովագրեց: Իրադրությունը, սակայն, կտրուկ փոխվեց 1921թ. ապրիլի 2-ին Երեւանի անկումից հետո: Այդ առթիվ, ապրիլի 15-ին Նժդեհը կոչ ուղղեց Գեմվազի զորքին եւ ժողովուրդին՝ փրկելու «հայ ժողովուրդի սիրտն ու ուղեղը՝ նրա մտավորականությունը»: Մի ուշագրավ փաստի մասին եւս: Վրացյանը ապրիլի 4-ին Ռուբենին գրել էր. «Մեր բանակի մնացորդները, մեր ամբողջ մտավորականությունը, մեր շատերի ընտանիքները կարող են փրկվել միայն Լեռնահայաստան ապաստանելով»:²

Այսինքն, Վրացյանը փրկության այլընտրանք չուներ: Փակ էր նաեւ դեպի Քենալի մոտ տանող ուղին: Հետեւաբար, ապրիլի 21-ին, ճարահատյալ, նա Հայաստանի «բոլոր ռազմուժերը եւ գույքերը» հանձնեց Լեռնահայաստանի կառավարությանը եւ Սյունյաց Սպարապետին:³

Նժդեհը Լեռնահայաստանի բոլոր իշխանություններին հրամայեց Գեմվազ անցնող Վրացյանին, Քաջազունուն, Օհանջանյանին եւ այլոց ցույց տալ «ամենապարտ եւ պատշաճ աջակցություն»: Վրացյանի Թավրիզ անցումը դյուրացնելու եւ ապահով դարձնելու խնդրով Նժդեհը հատուկ միջնորդագիր հղեց Ատրպատականի խաներին:⁴

Մայիսի 15-ին Յ.Յ.Դ. Ատրպատականի կոմիտեին գրած նամակում Նժդեհը հատկապես շեշտում էր, որ «բոլոր

¹ «Ազատ Սիւնիք», Գորիս, 1921, թ. 5:

² Գեւորգյան Վ., նշվ. աշխ., էջ 150-153:

³ Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

⁴ Գեւորգյան Վ., նշվ. աշխ., էջ 158-159:

3337



դրություններից, որքան էլ որ նրանք կրիտիկական լինեն, վճռական եւ ուժեղ ցանկության դեպքում միշտ էլ կարելի է պատվով դուրս գալ, մենք եւ կուսակցությունը փրկեցինք մեր ցեղի մտավորականությանը կարմիր կացնից, ինչն ինքնին մի մեծ, պատմական ծառայություն է, իսկ եթե Երեւանյան ապստամբությունը տարերային բնույթ չկրեր եւ այն առաջացած ու վարած լիներ միայն եւ միմիայն մեր կուսակցությունը՝ գուցե եւ աղետը տեղի չունենար»։ Ըստ այդմ, Նժդեհը խորհուրդ էր տալիս լարել բովանդակ ուժերը, «ջրցեղել թուլացած կամքը եւ ցանկությունը»¹

Նժդեհը մտահոգ հայ գաղթականության ծանր վիճակով դեռ 1921թ. ապրիլի 26-ին Պարսից Շահից նրանց համար Արաքսն անցնելու թույլտվություն էր խնդրել։ Ի պատասխան, պարսկական խսաները «խոր եւ բարձր գնահատելով Նժդեհի հռչակավոր անունը եւ հեղինակությունը» համաձայնեցին²

Բնականաբար, Երեւանից նահանջող գաղթականությունն որոշակիորեն պետք է հուսալքեր Սյունիքի ուժերին, իսկ դրա առաջն առնելու համար անհրաժեշտ էր ոգեւորիչ մի նոր քայլ։ Այս նկատառումներից ելնելով, 1921թ. ապրիլի 27-ին, Տաթևի երկրորդ համագումարը Ինքնավար Սյունիքը հռչակեց Լեռնահայաստան։ Վարչապետ ընտրվեց Նժդեհը՝ միաժամանակ ստանալով գորավարի աստիճան եւ պարզեւատրվելով «խուստուփյան արժիվ» երկաթե շքանշանով³

1921թ. մայիսի 28-ին Գորիսում հանդիսավոր նշվեց անկախության տարեդարձը։ Այս առթիվ, ուշագրավ է ականատեսի վկայությունը. «Մարդ ակամա կհիշեր Ավարայրի դաշտի հերոսամարտը, սպարապետ Վարդան Զորավարին ու վերջինիս կհամենատեր մեր նորագույն պատմության պատիվը փրկող սպարապետ Նժդեհի հետ։ Եթե առաջինը կմղեր կրոնական կռիվ, երկրորդը կմղեր գերազանցորեն քաղաքական կռիվ, հանուն հայ ժողովրդի ազատության եւ անկախության, հանուն իսկական հեղափոխության»⁴

¹ Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

² Անդ:

³ Գեորգյան Վ., նշվ. աշխ., էջ 155-158:

⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 150:

Արժեւորելով 1921թ. մայիսի 28-ի նշանակությունը («Մեր Անկախության Մայիսը»), Նժդեհը նշում էր. «Այդ օրը Սյունեցու աչքերի մեջ կարելի էր տեսնել մեր ցեղի բովանդակ գորույթն ու թափը։ Այդ օրը հաղթական էր Սյունեցին, քանզի ցեղի ոգին կշարժեր հայ վաշտերը, քանզի Սյունյաց աշխարհում սպայեն եւ զինվորեն՝ հեղինակությունն եւ հնազանդությունն զատ կար մի Երրորդը՝ Ցեղը։ Ես այդ օրը տեսա Սյունիքը՝ իր ուժի, փառքի իր մեծության մեջ»¹

Մյուս կողմից, Երեւանից նահանջած նախկին ԶԳ եւ Զայրենիքի փրկության կոմիտեի ղեկավարությունը այլեւս չէր կարող «բավարարվել» երկրորդական դերերով։ Նրանք Լեռնահայաստանում էլ էին ուզում «գործել»։ Նրանց նախկին վախը եւ Սյունիքին ապավինելու ձգտումը միանգամայն փարատվել էր. փրկվել էին Չեկայի ճիրաններից, բայց եւ միաժամանակ շատ շուտ մոռանալով փրկիչներին։

Եւ արդեն հունիսի 11-ին, «երեւանցիների» կուսակցական ճնշմամբ, Լեռնահայաստանը հայտարարվեց ... Զայաստան։ Դեհ, ամերիկացի Վիլսոնի գծած թղթե քարտեզից ոչինչ դուրս չեկավ, զոնե առաջմ բավարարվեն այդ փոքրով։ Դեռ լավ է, որ սյունեցիները կռվել-պահպանել էին այդ հողակտորը՝ թե չէ ինչո՞վ էին զբաղվելու իրենք։

Դրանից առաջ Գ.Նժդեհը, Ս.Մելիք-Յուլյանը, Զ.Տեւեճյանը, Ս.Եղիազարյանը, «սոսկ իբրեւ ընկեր», Վրացյանին հայտնում էին իրենց մտահոգությունները Սյունիքում տիրող իշխանական երկվության վտանգահարույց լինելու մասին՝ թե՛ արտաքին եւ թե՛ ներքին ճակատներում։ Նման վիճակը «միեւնույն նպատակի» առկայության եւ «կուսակցական խստության» բացակայության դեպքում միանգամայն «անհեթեթ» իրադրություն էր ստեղծել² Նժդեհը Վրացյանին իրավացիորեն բողոքում էր այդ որոշման դեմ՝ ավելացնելով, որ նման քայլը ծայրահեղորեն բացասաբար է ընդունվում Սյունիքի ժողովրդի կողմից³

Բնականաբար, վարչապետ դարձավ Վրացյանը, իսկ փոխվարչապետ՝ Արշակ Զովհաննիսյանը։ Նժդեհին «վստա-

¹ «Այգ», Թաւրիզ, 1921, թ. 25:

² Նժդեհ Գ., Ցեղի Ոգու շարժը, էջ 26-27:

³ Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

հեցին» գինվորական նախարարի պաշտոնը: Նա ախր՝ միայն կռվելուց էր գլուխ հանում: Իսկ այ, օրինակ, փոխվարչապետը՝ հակառակ ռազմի դաշտում սյունեցու տարած հաղթանակների, 50 միլիոն ռուբլով Սինքենդի 3000 թուրք քոչվորների թույլատրեց Ջանգեզուր ներգաղթել: Ինչ խոսք, Պարսկաստան եւ ապա Եվրոպա հեռանալուց առաջ չէր խանգարի մի մեծ կլոր գումար վաստակել:

Սրանից գատ, Վայոց Ձորի ճակատում կանգնած ԶԶ նախկին բանակի զորամասերի համար սովորական երեւույթ էր դարձել անկռիվ հանձնվելը, ինչը բացասաբար էր ազդում սյունեցիների մարտունակության եւ բարոյա-հոգեբանական տրամադրվածության վրա: Այդ առթիվ, փաստերի առումով հիմնականում անաչառ խորհրդային ռազմական հետախուզությունը միանշանակ նշում էր, որ «մինչ Երեւանի գաղթականների գալը Ջանգեզուրում գյուղացիների տրամադրությունը մարտունակ էր, բայց նրանց գալուց հետո այն ընկել է»: Այսուհանդերձ, համեմատելով երկու ուժերի բարոյա-հոգեբանական վիճակը, նշվում էր, որ Ջանգեզուրի գյուղացիների տրամադրությունը «գերբարձր է՝ Նժդեհի օգտին»:¹

Ակամա հանգում ես այն մտքին, որ ինքնապաշտպանության ռազմավարական կարելոր նշանակությունը գիտակցում էին Նժդեհը, Սյունեցիներն ու ... կարմիրները միայն:

Նժդեհը 1921թ. հունիսի 26-ին ԶԶ կառավարությանը եւ Վրացյանին ուղղեց հետեւյալ բնորոշիչ գրությունը. «Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կա՝ խորհրդային Արարատյան Հայաստանն իրեն ապահով զգալ չէ կարող: Այսպես է մտածել ու գործի անցել Երեւանի հեղկոմը: Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կա՝ Նախիջեւանն ու Շարուրը չեն կարող կցվել Ադրբեջանին, Հայկական Ղարաբաղը չի ադրբեջանանա՝ ըմբռնել է մուսուլմանությունը»:²

Դրանով կարմիրները՝ հանձինս Առաջին կովկասյան կորպուսի հրամանատար Թողորսկու եւ զինկոմ Սվիրիդովի կազմած «Ջանգեզուրյան կռվի գաղափարական բովանդակությունը եւ մեր մարտավարությունը» գրքույկում եւ կոչեւրում, հատկապես շեշտում էին Հ.Յ.Դ. եւ Նժդեհի դեմ մղվող

¹ Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

² *Գեորգյան Վ.*, նշվ. աշխ., էջ 169-170:

պայքարի կարեւորությունը: Ավելին, վերջինս համարվում էր դեռեւս մարտնչող «վերջին գեներալը», իսկ Ազատ Սյունիքի հերոսամարտի ապագան միանշանակ կապում էին Նժդեհի անձի հետ:¹

Ջանգեզուրյան հերոսամարտն ուներ նաեւ «միջազգային» ենթատեքստ: Այսինքն, բացառապես Նժդեհի առաջնորդած պայքարի շնորհիվ Ռուսաստանի կոմկուսի ղեկավարությունը՝ անսալով ՀՍԽՅ բողոքներին, ստիպված համաձայնվեց Ռիգայում բանակցել Հ.Յ.Դ. Արտասահմանի Պատասխանատու Մարմնի ներկայացուցիչների հետ: Եւ միայն Նժդեհի Արաքսն անցնելուց հետո մեծամասնականները դադարեցրին Հ.Յ.Դ. հետ տարվող ճարահատյալ բանակցությունները: Ավելի կոնկրետ՝ ինչպես Հ.Քյուրքչյանն է նշում. «Ռիգայի բանագնացները կկորցնեին կարելոր այդ զենքը (Սյունիքի կռիվը - Ա. Հ.), որու համար գլխավորաբար խորհուրդները պիտի բանակցեին Հ.Յ.Դ. հետ»:²

Իսկ հեռանալուց առաջ Նժդեհը սյունեցիներին հայտարարեց, որ ինքն ընդմիջտ չի հեռանում Լեռնահայաստանից, որ պիտի վերադառնա՝ եթե Երեւանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հողի վրա ոտք դնողը: Այսինքն, իր իսկ խոսքերով. «սրտի անհուն կսկիծով, հակառակ իմ անհատական կամքի եւ ձգտումների, անխուսափելի հանգամանքներից ստիպված թողեցի Լեռնահայաստանը»:³

Նժդեհը 1921թ. հուլիսի վերջին Հ.Յ.Դ. Ատրպատականի կոմիտեին գրում էր. «Լեռնահայաստանից ես չէի դուրս գա, չնայած որ Հայաստանի կառավարության փոխվարչապետ Արշակ Հովհաննիսյանը Ղափանում կառավարության եւ Հ.Յ.Դ. անունից պահանջեց, որ ես չմնամ այդ երկրում, եթե այդ երկրի զինված գյուղացիությունը կանգնած չլիներ հացի եւ ռազմամթերքի ճգնաժամի առաջ»:⁴

¹ ՀԱԱ, ֆ.1022, ց. 8, գ. 306, թթ.1-3, գ. 317, թթ. 1-9, գ. 318, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 15:

² *Քյուրքչյան Յ.*, Ուրուագիծ Հ.Յ.Դ. Պատմութեան 1919-1924 հնգամեակ, Աթէնք, 1988, էջ 63:

³ Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

⁴ Անդ:

Պարսկաստանում Նժդեհի ազգային-կուսակցական գործունեությանը կանդրադառնանք առանձին: Պարզապես, հիշատակենք, որ նա Բուլղարիա մեկնեց 1921թ. նոյեմբերի 22-ին՝ խմբապետ Քաչալ Ղազարի եւ ուսանող Յայկ Ասատրյանի հետ: Իսկ Վրացյանը Թավրիզից մեկնել էր նոյեմբերի 10-ին՝ չմոռանալով տանել իր հետ 3000 դոլար:¹

Չետաքրքիր է այն փաստը, որ Թավրիզում Նժդեհը կտրականապես մերժել էր Ջանգեզուրում ապստամբություն բարձրացնելու անգլիական հյուպատոսի առաջարկը:²

Այսպիսով, Ջանգեզուրը Նժդեհի առաջնորդությամբ մաքառեց՝ առանց շունչ իսկ առնելու: Գրեթե համատարած ռազմա-քաղաքական շրջափակման պայմաններում շատ ու շատ թշնամիներ եկան-անցան, իրադարձություններն հարափոփոխ ելեւէջումներ ունեցան, որոշ տեղատվություններով:

Ջանգեզուրի լեռներից *անդին* գրեթե ոչ ոք էր անհանգիստ ու մտահոգ երկրամասի ճակատագրով: Այն բոլորի կողմից անտարբերության մթնոլորտում՝ մոռացության էր մատնվել:

ՀՀ ռազմա-քաղաքական եւ կուսակցական ղեկավարությունը մինչեւ վերջ էլ *ընդհանուր առմամբ* ինքնահոսի էր ձգել Սյունիքի պաշտպանությունը եւ ո՛չ միայն իրական նկատելի օգնություն չէր ցուցաբերում, այլեւ՝ երբեմն, արգելակում էր:

1918-21թթ. Ջանգեզուրում եղել են մի շարք գործիչներ թե՛ ներսից եւ թե՛ դրսից: Եվ հենց այդ տեսանկյունից կարելու է դիտարկել եւ կարելու էլ, թե ո՞րն է Ջանգեզուրում գործած ռազմա-քաղաքական գործիչների ողջ շարքում Նժդեհի տեղը եւ դերը: Եվ, վերջապես, որո՞նք են այն էական տարբերակիչ առանձնահատկությունները, որոնք նրան որակապես առանձնացնում են այդ շարքում:

Ամենեւին նպատակ չհետապնդելով ստվերելու մյուսներին, հարկ է շեշտել, որ, որպես կանոն, նրանց գործունեությունը գերազանցապես կրում էր անցողիկ եւ ժամանակավոր բնույթ: Նրանք Ջանգեզուր էին գնում լոկ որպես պաշ-

¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թթ. 34-35:

² Անդ, թթ. 24-25:

տոն կատարողներ եւ որպես այդպիսին էլ՝ հեռու մնում ժողովրդից, նրա հոգսերից, դժվարություններից, պայքարից:

Եւ ամենակարեւորը՝ իրենց գործողություններին նրանք երբեք ոգեղենիկ, հուսահատին ցնցելու եւ վերափոխելու բնույթ չէին հաղորդում: Պարզապես, նման գործիչները լավագույն հատկանիշներով հանդերձ, սոսկական պաշտոնյայից կամ զինվորականից անդին չէին անցնում:

Ի՞նչ Նժդեհը: Ինչպիսի՞ն էր նա որպես զինվորական, ռազմագետ եւ ազգային-քաղաքական գործիչ: Նրա էության բնորոշիչ հատկանիշներից են անձնագուհի նվիրվածությունը, գաղափարական վեհությունը եւ ոգու անաղարտությունը, իսկ որպես զորավար՝ իր ռազմական կազմակերպչական անդուլ ջանքերով օրն ի բուն մտահոգ էր միմիայն մեկ գերխնդրով՝ Սյունիքի ինքնապաշտպանությամբ:

Պայքարելով Սյունիքում եւ նրա համար՝ Նժդեհը միշտ տեսադաշտում ռազմավարական տեսանկյունից նկատի է ունեցել ՀՀ եւ հայոց հավաքական շահը:

Այսինքն, երբեք որեւէ դժվարության հանդեպ չընկրկելով նա Սյունիքը ոչ մի դեպքում չի հակադրել ՀՀ-ին:

Նժդեհը բոլոր սյունեցիներին համախմբելով դարձրեց մի հավաքական ամրակուռ բռունցք, որն առաջին հերթին եւ գերազանցապես ուղղված էր ՀՀ-ի թշնամիների դեմ:

1919-21թթ. Նժդեհը միշտ հավատարիմ մնաց յուր բախտն ու ապագան նրան ապավինած սյունեցուն, չլքեց նրան, համահավասար կիսեց եւ մի կտոր չոր հացը եւ խրամատը՝ անգամ մերժելով Երեւան վերադառնալու մասին ՀՀ ղեկավարության պարտվողական հրամանները:

Նա վայելեց ու արժանացավ Սյունեցու հարգանքին, պատվին, սիրուն եւ անսասան վստահությանը:

Այս ամենի արդյունքում, ցեղային կանչին զորավիգ Նժդեհին օրինաչափորեն դարձավ Լեռնահայաստանի առաջնորդը: Չենց այդ պարագայի շնորհիվ էլ Ազատ Սյունիքը պայքարեց, գոյատևեց եւ հարատևեց՝ միաժամանակ հավաստելով ու ապացուցելով հայ ցեղի եւ ՀՀ գոյության իրավունքը:

Ըստ այդմ, Նժդեհի ամենագլխավոր տարբերակիչ առանձնահատկությունն էր ժողովրդի առաջնորդ լինելը, որին ի գորու չեղավ տիրապետել ժամանակի եւ ոչ մի գործիչ:

Տեղին ենք համարում նշել Լեռնահայաստանի տեղա-
տվության հետեւյալ գլխավոր պատճառները.

1. ՀՀ քաղաքական-կուսակցական ղեկավարության
կրավորական դիրքորոշումը,

2. Վրաստանի եւ ՀՀ անկմամբ Այսրկովկասում
աշխարհաքաղաքական միանգամայն նոր իրադրության
առաջացումը,

3. Լեռնահայաստանում ՀՀ անկումից հետո ստեղծ-
ված ռազմա-քաղաքական երկվությունը,

4. 10 հազար գաղթականների նահանջի բարոյա-
հոգեբանական եւ ռազմական բացասական վնասակար
ազդեցությունը,

5. Ռազմամթերքի եւ պարենի խիստ պակասությունը:

Խորապէս համոզված լինելով եւ միանշանակ ընդու-
նելով, որ Լեռնահայաստանի գոյամարտի արժանի գնահա-
տականի առհավատոյան ՀՀ եւ նրա կազմում՝ Սյունիքի
գոյությունն է, ավելորդ չենք համարում կատարել մի շարք
դիտարկումներ:

Լեռնահայաստանի պայքարը ժողովրդական էր եւ
համազգային, կռիվը չէր մղվում *«այս կամ այն կուսակցու-
թյան կամ դասակարգի դրոշի տակ»* (Գ. Նժդեհ): Ուղղակի,
նա հայ ցեղի մարտական ոգու վճռական կանչն էր՝ ուղղված
թրքո-բոլշեւիզմի հայատյաց ոտնձգությունների դէմ:

Սյունիքը 1919-21թթ. իր անկոտրում վիճականության
եւ Նժդեհի առաջնորդութան շնորհիվ ռազմի դաշտում տվել
է ընդամենը 28 նահատակ: Այդ այն դեպքում, երբ թրքո-բոլ-
շեւիկ թշնամին կորցրել է 15 հազար սպանված, 7 հազար գե-
րի, 200 գնդացիր, 7 թնդանոթ, 10 հազար հրացան: Եվ, ամե-
նակարեւորն, այդ ժամանակահատվածում մաքրվել-հայաց-
վել են 200 թրքաբնակ գյուղեր:¹

Թվեր, որոնք գուցե անհավանական եւ չափազանց-
ված թվան ցեղի ուժերի հնարավորությունների անսպառու-
թյան նկատմամբ թերահավատներին:

Եթե Նժդեհի առաջնորդութամբ Սյունիքի հայությունը
հերոսաբար չկռվեր, ապա ՀՀ անվտանգ գոյությունը մեծա-

¹ *Գեորգյան Վ.*, նշվ. աշխ., էջ 177:

պես հարցականի տակ կլիներ ազերի-բոլշեւիկ թշնամական
աքցանում: Իսկ հետագայում՝ Ռուսաստանը Սյունիքը կզի-
ջեր Բաքվին: Այդ ամենից հետո՝ կվտանգվեր Խորհրդային
Հայաստանի՝ առանձին հանրապետություն լինելու հանգա-
մանքը: Լավագույն դեպքում նա պարզապէս ինքնավար մի-
ավորի կարգավիճակով կընդգրկվեր Այսրկովկասը երկու մա-
սի բաժանած Վրաստանի եւ Ադրբեջանի խորհրդային հան-
րապետությունների սահմաններում: Այսպիսով, հերոսական
Սյունիքը փրկեց եւ ապահովագրեց հայկական պետական
միավորի պահպանման հնարավորությունը ինչպէս խորհր-
դային, այնպէս էլ՝ ներկա եւ ապագա ժամանակների համար:

Ավելի կոնկրետ՝ Նժդեհի գնահատմամբ Սյունիքը լի-
նելով «հոգեկան հրահրիչը Երեւանի փետրվարյան պոռթկու-
մի, պաշտպանութան եւ փրկության կամուրջ հանդիսանա-
լով, *խորհրդային կացնից փրկեց հայ մտավորականությանը,
սպայությունը եւ խմբապետությունը*»:¹

1921թ. ապրիլի 2-ից հետո Երեւանից խուճապային
փախուստ սկսվեց. ողջ գաղթականությունը Սյունիքով ուղղ-
վեց դեպի Պարսկաստան: Նման վիթխարածավալ նահանջն
ու Արաքսով անցումն անհնարին կլինեին, եթե բացակայեր
Ազատ Սյունիքը: Փրկվեց ժամանակի հայ մտավորականու-
թյան սերունդը, «որը չէ ստեղծվում ամիսների եւ տարիների
ընթացքում, որի կորուստը մահացու հարված պիտի հաս-
ցներ հայ ժողովրդին»:² Իսկ եթե վերհիշենք այն ցավալի
փաստը, որ Եղեռնի արդյունքում արեւմտահայությունը գրե-
թե զրկվել էր մտավորական ներուժից, ապա վերոնշյալն
ավելի է կարեւորվում: Եվ հենց Սյունիքի շնորհիվ փրկված
մտավորականությունը, սկսած 1920-ական թվերից, Սփյուռ-
քում էական մղում տվեց հայ մշակույթի վերագարթումին:

Նահանջը կատարելապէս անկազմակերպ էր եւ բար-
ձիթողի պայմաններում: Փախչելու մոլուցքով տարված
«առաջնակարգ ղեկավարները» ներքին գործերի նախարար
եւ Բյուրոյի անդամ Սարգիս Արարատյանին ... մոռացել էին
Աշտարակի դռերում, իսկ Նիկոլ Աղբալյանի ու Մարտին Շա-

¹ *Նժդեհ Գ.*, Լեռնահայաստանի գոյամարտը, «Հայրենիք», 1923, թ. 11, էջ 78:

² «Հայրենիք», Բոստոն, 1923, թ. 8, էջ 80:

թիրյանի նման վաստակավոր եւ տարեց դաշնակցականները մնացել էին անտեր, անբնակ վայրերում ... սրարշավ ընթացող խմբապետների աչքի առջեւ:¹

Ազատ Սյունիքն ու Նժդեհը փրկիչն եղան ՀՀ նախկին քաղաքական-կուսակցական ղեկավարության, որոնք սյունեցու զորեղ բազուկի չգոյության դեպքում պետք է արժանանային Չեկայի բանտում կացնահարված Համազասպի եղերական ճակատագրին: Այս պարագան ապագայի տեսանկյունից դիտարկելու դեպքում, բացահայտ է, որ առանց այդ գործիչների՝ սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքն, առաջին հերթին եւ գլխավորապես՝ Հ.Յ.Դ. գործունեությունը, ամենեւին համապատասխան դաշտ չէին ունենա:

Ավելի լավ պատկերացում կազմելու համար, բավական է հիշատակել մի շարք անուններ, որոնց հետ ամենասերտ կերպով շաղկապված է սփյուռքի եւ Հ.Յ.Դ. հետագա ճակատագիրը. Սիմոն Վրացյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Հանո Օհանջանյան, Ռուբեն Դարբինյան, Նիկոլ Աղբալյան, Լեւոն Շանթ: Իսկ ավելի ամփոփիչ. «Սյունիքի հերոսականի շնորհիվ փրկված են նաեւ Հայաստանի մտավորականությունը, Հ.Յ.Դ. դաշնակցությունը, հայ հեղափոխական եւ մարտական տարրերը»:²

Շատերի համար *կարեւորը* փրկվելն էր: Իսկ թե ինչպե՞ս «երախտապարտ» եղան նրանք Սյունիքին ու Նժդեհին՝ այդ արդեն ժամանակի հայ կուսակցա-քաղաքական համակարգի ողբերգա-զավեշտական կողմն էր, ցավալի՝ բայց փաստ:

Նշենք, որ Հ.Յ.Դ. Գերագույն Դատական Ատյանը ստեղծվել էր 1919թ.՝ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի կողմից եւ իրավասու էր քննության ենթարկել Հ.Յ.Դ. բոլոր անդամների գործերը՝ շարքայինից մինչեւ Բյուրոյի անդամներ: Նա իր որոշումները պետք է հանձներ Բյուրոյին՝ «ի գիտություն եւ ի գործադրություն»:³

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 197, թ. 3-5:

² *Նժդեհ* Պ., Ինքնակենսագրություն, էջ 4:

³ Հ.Յ.Դ. կազմակերպական կանոններ, Երեւան, 1919, էջ 28:

Նժդեհի Արաքսն անցնելուց ընդամենը մեկ շաբաթ անց *գլխավոր փրկյալ* Վրացյանը 1921թ. հուլիսի 19-ին դիմեց Հ.Յ.Դ. Գերագույն Դատական Ատյանին՝ Նժդեհին կուսակցական դատական պատասխանատվության ենթարկելու պահանջով:¹ Հիմնական մեղադրանքները հետեւյալներն էին. Նժդեհը վիրավորել է Երեւանից եկածներին եւ սրել նրանց ու Սյունիքի միջեւ ներհակությունները, անպատվորեն խուզարկել նախարար Հակոբ Տեր-Հակոբյանին եւ Արշալույս Աստվածատուրյանին, սպանել սպա Ասլանյանին, ոչ մի տեղ անձամբ չի ղեկավարել կռիվները: Նշենք, որ թեպետ Վրացյանը նաեւ պահանջում էր «լայն քննություն Հայաստանի կառավարության, կուսակցական գործիչների եւ հրամանատարական կազմի վրա», բայց դատվեց միայն Նժդեհը:

Ի դեպ, դեռ հուլիսի 15-ին, Վրացյանը Նժդեհին գրում էր. «Թավրիզում խճողված ծանր մթնոլորտը ինձ հարկադրում է քեզ նախազգուշացնել եւ խորհուրդ տալ, որ անախորժություններից խուսափելու համար *առայժմ մնաս տղաներով Մուժումբարում* (գյուղ Արաքսի ափին-Ա. Հ.)»:² Նշենք, որ ՀՀ կառավարության անդամները Նժդեհի թավրիզ անցնելուն դեմ էին, քանզի նա իրենց չարաշահումները կարող էր հայտնաբերել:³

Վրացյանի եւ այլոց կողմից Նժդեհի դեմ հարուցվում է կուսակցական դատ, որը տեւել է 1921թ. հուլիսի 24-ից մինչեւ սեպտեմբերի 29-ը: Դատաքննությունը կատարել են Հունան Տեր-Դավթյանը (նախագահ), Մերուժան Օզանյանը եւ Լեւոն Թադեւոսյանը (անդամներ)՝ երեքն էլ Սյունիքի ու Նժդեհի մղած կռիվների շնորհիվ *փրկվածներ*: Հարցաքննվել են 49 վկաներ: Ինքնին «պատկառագրու է» դատական թիվ 6 գործի ծավալը՝ 487 էջ:⁴

Հետաքրքրությունից զուրկ չէ դատարանի նախագահ Տեր-Դավթյանի հետ կապված հետեւյալ փաստը: ՀՀ անկումից հետո նրա մոտ Հ.Յ.Դ.-ին պատկանող մեծաքանակ ոսկիներ են եղել, ինչը նա թաքցրել էր եւ չէր տվել կուսակցական

¹ Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

² Անդ:

³ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 1:

⁴ Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, Դատական գործ թիվ 6:

ընկերներին բանտից ազատելու համար՝ պատճառաբանելով դրանց բացակայությամբ: Սակայն, «մանրախնդիր» մեծամասնականները խուզարկելով նրա մոտից հարյուրավոր ոսկիներ գտան՝ ինչը նախ եւ առաջ օգտագործվեց հենց Յ.Յ.Դ. դեմ պայքարելու նպատակով:¹

Հենց սկզբից նշենք, որ Նժդեհի դեմ ցուցմունք տվողների պակաս չի զգացվել՝ գործը կազմակերպված էր հիմնավորապես: Դրա համար առանձնակի դժվարություններ չկային: Արաքսն անցած գործիչներից երկդիմիների համար գոյատևելու տարրական կարելու խնդիր կար, իսկ դրամական միջոցների բաշխման համակարգող տերն ու տնօրենը Վրացյանն էր: Ատյանի կազմն եւս ֆինանսական կախման մեջ էր գտնվում նրանից: Սրանից զատ, կար նաեւ Պարսկաստանից «ազատվելու» ու Եվրոպա անցնելու խնդիր՝ անհրաժեշտ էր դեկավարության աչքին «լավամարդ» երեւալ: Դատավորների եւ վկաների ուշադրությունից բոլորովին չի վրիպել Նժդեհի գործունեության եւ ոչ մի «մանրուք»՝ սկսած նեղ անձնականից մինչեւ ընդհանուր քաղաքական:

Սովորականի պես, առաջին պարտավորեցնող օրինակը ծառայեց Վրացյանը: Օգոստոսի 17-ի ցուցմունքում նա հայտարարեց. «Նժդեհը ամենաօրհասական թուլեցնում, երբ նրա ներկայությունը կարելու է կռվի դաշտում, այդ վայրը թողած՝ նա անցնում է բոլորովին ուրիշ վայր»: Կարծես ինքը՝ միշտ կռվի դաշտից անբացակա է եղել: Այնուամենայնիվ, հանուն ճշմարտության Վրացյանը նշում էր, որ մյուս «զաստրոյոր ընկերների» նման Նժդեհը չհեռացավ Ջանգեզուրից եւ «պատվով կատարեց կուսակցության կողմից իր վրա դրած պարտականությունները»: Իսկ որ Նժդեհն «*ահագին հեղինակություն*», «*մեծ հմայք*», «*ազդեցիկ խոսք*» ուներ եւ «*ամեն ինչ էր*» ստիպված էր ընդունելու:²

Այժմ կետ առ կետ քննենք «մեղադրանքները»:

1. Հակոբ Տեր-Հակոբյանի եւ Արշալույս Աստվածատուրյանի խուզարկություն-ծեծ կամ ինչպես դատական գործում է նշված՝ «Դուզալի (գյուղ Արաքսի ափին-Ա.Հ.) ինցիդենտ»:

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 198, թ. 2-3:

² Դատական գործ, էջ 179-185:

Այս հարցին օգոստոսի 23-ին հանգամանալից անդրադարձել էր Յ.Յ.Դ. Հայաստանի կոմիտեն: Լսելով Ս.Եղիազարյանի, Ե.Սարգսյանի եւ Ա.Հովհաննիսյանի ցուցմունքները՝ կոմիտեն «բռնության ենթարկված ընկերներին ցավակցելով», Վրացյանի առաջարկությամբ բավականացավ միայն Նժդեհին կոմիտեից հեռացնելով եւ նրա գործը դատարան ուղարկելով:¹ Հետաքրքիր է այն փաստը, որ Վրացյանի առաջարկով Նժդեհին Յ.Յ.Դ.-ից կախակայման կետը օրակարգից հանվեց:²

Դեռ հուլիսի 20-ին՝ Նժդեհին գրած նամակով, Վրացյանը «հավաստելով» վերոնշյալ մեղադրանքները, դրանք բավական էր գտնում նրան կառավարության անդամությունից հեռացնելու համար:³

Իսկ թե ո՞ւմ եւ ինչի՞ էր պետք ՀՀ անկումից եւ Լեռնահայաստանի տեղատվությունից հետո այդ կառավարությունը՝ միայն նրա նախագահին էր «հայտնի»: Շնորհիվ Նժդեհի՝ այդ կառավարությունը ֆիզիկական ոչնչացումից արդեն փրկված էր, եւ նախկին սիրելի զորավարի կարիքն այլեւս չէր զգացվում: Մինչդեռ ավելորդ չէ նշել, որ դեռ հուլիսի 19-ին Յ.Յ.Դ. Հայաստանի կոմիտեն Նժդեհի մասին կախակայման որոշում էր ընդունել:

Յ.Յ.Դ. Հայաստանի կոմիտեին ուղղված նամակում Նժդեհը հայտնում էր, որ Տեր-Հակոբյանին խուզարկել են ոչ թե իր հրամանով, այլ հակառակը՝ միայն իր միջամտությամբ է նա ազատվել ժողովրդի ինքնադատաստանից, իսկ Աստվածատուրյանին զինվորները թյուրիմացաբար են խուզարկել: Ի դեպ, այն ժամանակ, երբ Սյունիքի ժողովուրդն ու զաղթականությունը կիսաստված վիճակում էին գտնվում, այդ նույն Տեր-Հակոբյանն իր ծիու համար խոտ էր գնում ոսկով:

Յ.Յ.Դ. Հայաստանի կոմիտեն օգոստոսի 30-ին Նժդեհին տեղեկացրեց իր վերոնշյալ որոշման մասին:⁴

Ո՞րն էր խուզարկության պատճառը: Գաղթականության համար ցորեն տեղափոխելու նպատակով պարկ եւ

¹ Դատական գործ, էջեր 241-244, 250-280:

² Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

³ Դատական գործ, էջ 245-249:

⁴ Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

պարան չգնող Տեր-Յակոբյանը պատճառաբանում էր, որ դրամ չունի: Սակայն խուզարկության ժամանակ նրա մոտ հայտնաբերվել են 125 թուրքական ոսկե լիրա, իսկ Աստվածատուրյանի մոտ՝ 250 թուման: Նման պայմաններում պարենավորման նախարարի նկատմամբ *ավազախառն ցորենով սնվող* ժողովրդի վերաբերմունքն էլ պարզ է թե ինչպիսին պետք է լիներ:¹ Դատից հետո, Տեր-Յակոբյանը Թավրիզից Երեւանում գտնվող կնոջը 10 ոսկի էր ուղարկել, ինչի մասին իմացել էր նաեւ Նժդեհը:²

Յակառակ այս ամենին Նժդեհը նույնիսկ իր նկատմամբ ծայրահեղ թշնամաբար տրամադրված կարմիրների ռազմական հետախուզության խոստովանությամբ «ոչ մի դրամական միջոց չունի»:³

2. Կապիտան Ասլանյանի սպանությունը:

Նա պարսից խաների ներկայությամբ ոչ միայն պատվի չի առել, այլեւ՝ սպառնացել էւ փորձել է սպանել Նժդեհին, ինչը կանխվել է ներկա գտնվող սյունեցի զինվորի կողմից:⁴

Սա դասալիք էւ ամբարտավան զինվորականի համար հիրավի արժանի պատիժ էր:

3. Նժդեհի ռազմական անկարողության պարագան:

Այս հարցը քննվեց «հիմնավորապես»: Ընդ որում, զավեշտականն այն է, որ նման մեղադրանք ներկայացնողները ռազմական գործից ընդհանրապես անտեղյակ էին եւ թշնամու դեմ մի փամփուշտ անգամ չէին արձակել: Ըստ նախկին փոխվարչապետ Ա.Յովհաննիսյանի «Նժդեհը ստրատեգիա միանգամայն չգիտի, այնպես էլ՝ չէր կարող անձամբ ղեկավարել ռազմական գործողությունները»:⁵ Յովհաննիսյանը հավանաբար իր իմացած ստրատեգիայի համաձայն էր մինչ այդ 50 միլիոն ստանալով Մինքեմոյի 3000 զինված թուրք քոչվորներին թույլատրել մտնել Սիսիան:

Իսկ Տեր-Յակոբյանը բոլորին գերազանցեց. «Նժդեհը չի ղեկավարել կռիվները, վախկոտ մարդ է, ընդհանրապես

¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 31:

² Անդ, գ. 37, թ. 32:

³ Անդ, գ. 10, թ. 60:

⁴ Անդ, թ. 31:

⁵ Դատական գործ, էջ 9:

կռիվներից միշտ հեռու է փախչում»:¹ Կարծես թե ինքն էր մինչ այդ ղեկավարել Լեռնահայաստանի պայքարը:

Նման անարդարացի եւ զրպարտչական ցուցմունքներ են տվել նաեւ ռազմական գործի «վարպետներ» Գեդեոն Տեր-Մինասյանը, Եգոր Չարությունյանը եւ Վայոց Չորում «աչքի» ընկած Կուռո Թարխանյանը:²

Ռուբենն էլ նշում էր, որ Ձանգեզուրում «կուսակցական ոչ մի գործունեություն եւ մարմին չտեսա», իսկ ժողովուրդը համախմբվել էր երկու հիմնական հարցերի շուրջ. «1. պաշտպանվել թշնամիներից, 2. միանալ Չայաստանին»: 1920թ. հայ-թուրքական պատերազմի (որն ավարտվեց Կարսի անկռիվ հանձնման դավաճանությամբ ու դրան հետեւած խայտառակ պարտությամբ) ժամանակ ՉՉ զինվորական նախարար Ռուբենի կարծիքով «Սյունիքի հրամանատարությունը *մաքսիմուսն* էր Նժդեհի ուժերի»: Միաժամանակ, նա նշում, որ ժողովուրդը «*զանգվածաբար Նժդեհին սիրում էր եւ զնում հետեւից*»:³

Չենց ժողովրդի կողմից իր ղեկավարների նկատմամբ սերն էր, որ բացակայում էր ՉՉ գոյության ընթացքում:

Բոլոր ցուցմունքներից իր անաչառությամբ հարկ է նշել Չ.Յ.Դ. անհատ գործիչ Է.Խանադաբյանի՝ Չ.Յ.Դ. Բյուրոյին ուղղած նամակը: Նրա համոզմամբ, Նժդեհի շուրջ վեճերը, մեղադրանքները բխում են նրանից, որ շատերը «*անձնական շահ* ունեն՝ այստեղ (Պարսկաստանում - Ա. Չ.) մնալու, Չայաստան վերադառնալու կամ արտասահման անցնելու մեջ»: Արդյունքում, որպես կուսակցական, խորհուրդ էր տալիս «*ոչ թե Նժդեհին դատել-քննել-հարցաքննել, այլ՝ լավ կլիներ թողնելին պատմությանն, որովհետեւ Նժդեհը պատմական անձ է*»:⁴

Այս ամենից հետո, հիմնական գծերով անդրադառնանք Նժդեհի ցուցմունքներին: Դեռ դատից առաջ նա Չ.Յ.Դ. Չայաստանի կոմիտեին հուլիսի 16-ին ուղղած նամակում պատասխաններ տվեց: Հիշատակելով ստեղծված անառողջ

¹ Դատական գործ, էջ 13-20:

² Անդ, էջեր 55-59, 71-76, 232-234, 341:

³ Անդ, էջեր 283-296:

⁴ Անդ, էջեր 401-403:

մթնոլորտի մասին, նա շեշտում էր. «Դեռ երեկ իմ երկրի հերոսական ազատամարտով էր հիանում եւ հպարտանում համայն հայությունն եւ ծափ տալիս իմ ամեն մի հաջողության առթիվ: Դեռ երեկ ե՛լ Հայաստանի կառավարութիւնը ե՛լ Յ.Յ.Դ. Բյուրոն սրբազան ու հերոսական էին անվանում իմ դիմադրական պայքարը Հայաստանի անկախութեանը, նրա աշխատավորութեանը սպառնացող բուլշեւիզմի դէմ: Իսկ այսօր շատերը, որոնք իրենց ամբողջ գոյությամբ պարտական են ինձ եւ Սյունիքին՝ ցեխոտ արշավանք են սկսել իմ եւ Լեռնահայաստանի հերոսական ժողովրդի հասցեին: Նրանք, որոնք կարմիր կացնից ահաբեկված ու հալածական եկան անցան Թավրիզ, բոլորը եթէ կացնահար չեղան երեւանյան սպանդանոցներում, եթէ գերեզման չգտան Ադիմի ձորերում եւ խուճապորեն չթափվեցին Արաքսը, բոլորը պարտական են միայն ինձ եւ իմ ստեղծած Լեռնահայաստանին»:¹

Հիրավի, Լեռնահայաստանից հետո առնվազն անբարո ապերախտություն եւ ապազգային տհաս քաղաքական հաշվարկ էր Նժդեհի հանդեպ դատական գործի ձեռնարկումը: Ավելին, այն սրբապիղծ վիրավորանք էր Սյունաց լեռներում հերոսաբար նահատակվածների արյան հիշատակի նկատմամբ:

Առանձին հարցերի պատասխանելուց զատ Նժդեհը օգոստոսի 18-ին եւ 28-ին Յ.Յ.Դ. Գերագույն Դատական Ատյանին էր ուղղել երկու ծավալուն ցուցմունք. 1. «Իմ բացատրությունը Լեռնահայաստանի անկման պատճառների մասին», 2. «Մի քանի խոսք եւս Լեռնահայաստանի մասին»:²

Նկատի առնելով, որ դրանք հրապարակվում են թող ընթերցողն ինքն անհրաժեշտ եզրակացությունները կատարի: Բացատրություններում Նժդեհը փաստացի հարուստ տվյալներով ու անաչառ հերքում է բոլոր մեղադրանքները:

Բացատրությունների օրգանական շարունակությունն էր սեպտեմբերի 4-ին հարցաքննության ժամանակ Նժդեհի տված պատասխանները: Նա որպես «կուսակցական ներկայացուցիչ» ենթարկվել է «կուսակցական մարմնի եւ կուս-

¹ Դատական գործ, էջեր 88-90:

² Դատական գործ, էջեր 108-162, 213-230; «Նորք», Երեւան, 1923, գիրք 3, էջ 329-363:

ակցական ընկերների բարոյական ճնշմանը» ու համաձայնվել Լեռնահայաստանի կառավարությունում Երեւանից եկածների մասնակցությանը: Դեմ լինելով Հայաստանի եւ Լեռնահայաստանի կառավարությունների միավորմանը՝ հաշտվել է այդ մտքի հետ, քանզի «կուսակցության գերագույն մարմինը այդ էր հրամայում»:¹

Նժդեհի ներկայացրած բացատրություններն անպատասխան չմնացին: Դրանց դէմ, «ամմիջապես իր կամ իր մոտիկ գործակից-ընկերների հետ կապված» փաստերի առթիվ հանդես եկավ Վրացյանը:² Դեպքերին լրիվ անտեղյակ մեկը Վրացյանի դիտողությունների ընթերցումից ակամայից կարող է հանգել այն եզրակացության, որ Սյունիքում կատարված բոլոր սխալների պատասխանատուն Նժդեհն է:

Մոտ երեք ամիս տեւած «դատավարությունից» հետո Յ.Յ.Դ. Գերագույն Դատական Ատյանը 1921թ. սեպտեմբերի 29-ին «ընկեր Գարեգին Նժդեհի մասին» վճիռ ընդունեց:³

Այդտեղ ներկայացվում են ութ կետերից բաղկացած մեղադրանքներ եւ եզրակացվում, որ Նժդեհը եղել է «նպատողներից մեկը Լեռնահայաստանի արագ անկման»:

Ատյանի որոշմամբ Նժդեհը հեռացվեց Յ.Յ.Դ.-ից եւ նրա դատը ներկայացվեց Յ.Յ.Դ. 10-րդ Ընդհանուր ժողովի վճռին: Դե ինչ, Նժդեհն իր գործն արել էր, Լեռնահայաստանով փրկել էր Հայաստանը, մտավորականությունը եւ Յ.Յ.Դ.-ն: Կարելոն արդեն կատարված էր, այնպես որ՝ կարելի էր նույնիսկ դատել: Դատական ատյանի այս որոշումը չեղյալ համարվեց Յ.Յ.Դ. 10-րդ Ընդհանուր ժողովում: Իսկ հետագայում, 13-րդ Ընդհանուր ժողովը 1938թ., արդեն այլ պատճառներով, Նժդեհին արտաքսեց:

Յ.Յ.Դ. Դատական Ատյանն անգոր էր իշխող ազդեցությունից ձեռքազատվել եւ կուսակցական վարկի-պատվի թյուր ըմբռնումով առաջնորդվեց: Մինչ, Ատյանը կուսակցական խղճի առհավատչյա լինելու պատասխանատու գործին էր կոչված: Սակայն, Յ.Յ.Դ. 10-րդ Ընդհանուր ժողովը (1924 նոյեմբեր-1925թ. հունվար) ատյանի մասին ընդունեց սույն

¹ Դատական գործ, էջեր 321-339:

² Անդ, էջեր 386-399:

³ Անդ, էջեր 375-378:

բանաձեւը. «Ատեանը գործած է բարոյական այնպիսի հեղինակութեամբ, որ պատկառանք ազդած է ո՛չ միայն կուսակցական շարքերու, այլեւ՝ չեզոք տարրերու»:¹

Արժե նշել, որ ժամանակին մի շարք բողոքներ եղան Զ.Յ.Դ. որոշ ղեկավարների գործունեության վերաբերյալ, սակայն դրանք սովորաբար կամ քննեցվում էին, կամ էլ՝ ուղղվում հենց բողոքողների դեմ:

Հետաքրքիր է Զ.Յ.Դ. կառույցների եւ գործիչների վիճակը Պարսկաստանում: ՀՀ եւ Լեռնահայաստանի անկման ողբերգականն ապրած կուսակցական զանգվածների մոտ բողոքի եւ հուսալքման տրամադրություն էր ստեղծվել: Կուսակցական մարմիններն ամբողջովին Ռուբենի հսկողության եւ ղեկավարության ներքո գտնվում էին: Նման վիճակի դեմ ցանկացած ընդվզում եւ ըմբոստացում վերջին հաշվով ո՛չ մի օգուտ չէր տալիս: Ամեն ինչ վճռում էր դրանը՝ ամենակուլ ծանր նյութական պայմաններին դեմ հանդիման: *Որոշողը նպաստն էր.* հնազանդ խմբապետներին, ուսանողներին եւ կուսակցականներին տրվում էր ամիսը *6 թուման*, կառավարության անդամներին՝ *18 թուման*:²

Թավրիզից հեռանալու հնարավորություն չստացածների վիճակը հետագայում հեռու էր բարվոք համարվելուց: Հատկապես դժվարին կացության մեջ էր հայտնվել Զ.Տեր-Հակոբյանը: Զ.Յ.Դ. Պատասխանատու մարմնին, Վրացյանին, Ռուբեն Դարբինյանին, Վահան Նավասարդյանին գրած մի շարք նամակներում նա բազմիցս ընդգծում էր, որ հագիվ «յուլա է գնում եւ թաղված է պարտքերի մեջ»: Ըստ այդմ, նա բոլորից ֆինանսական օգնություն ու եվրոպա անցնելու հնարավորություն էր խնդրում: Նրա հանդեպ առանձնակի հոգատարություն էր ցուցաբերում Աստվածատուրյանը:³ Ավելին, Տեր-Հակոբյանը 1923թ. նույնիսկ ծեծի էր ենթարկվել դեռեւս Թավրիզում գտնվող ու անիրականանալի խոստումներով «կերակրվելու» անկարող գաղթականների կողմից:⁴

¹ *Տասնապետեան* Հ., Հ.Յ.Դ. կազմակերպչական կառույցի հոլովոյթը, Պէյրուբ, 1985, էջ 145:

² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 63:

³ Անդ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 97, 105, 123-124, 137-138:

⁴ Անդ, ֆ. 113, ց. 3, գ. 148, թ. 52-54:

Անմխիթար էր Զ.Յ.Դ. վաստակաշատ գործիչ Հայր Աբրահամի (Սահակյան) վիճակը, որի միակ օգնողը Պրագայում սովորող որդին էր: Պարսկաստանում մնացածների մեջ հաջողակը Գեղեոն Տեր-Մինասյանն էր, որը կարողացել էր ստանալ Ղարադաղում (Պարսկահայք) Թումանյանցի կալվածքների կառավարչի պաշտոնը:¹

Բուլղարիա եւ Ռումինիա անցածների դրությունն եւս բարվոք չէր: Կուսակցական գործունեությունը խաթարված էր, իսկ կազմակերպչական վատ աշխատանքի պատճառով շրջանային ժողովներին ներկա էին լինում ամենաշատը 15 պատգամավորներ: Նոր անդամակցողներ գրեթե չկային: Երանելի չէր նաեւ գործիչների վիճակը: Օրինակ, Աբրահամ Գյուլխանդանյանը մնացել էր առանց պաշտոնի եւ աշխատանքի ու «ամենից անմխիթար վիճակում»: Համեմատաբար լավ էր Սարգիս Արարատյանի դրությունը՝ օճառի գործարանի փայտեր, Հովհաննես Քաջագունին՝ բանկի պաշտոնյա: Այս պատկերում շատ լավ էր Դրոյի վիճակը՝ կառավարիչ նավթահանքերում:²

Չնայած Նժդեհի հանդեպ կատարված դատական հաշվեհարդարին, այնուամենայնիվ, Լեռնահայաստանի հերոսամարտի գնահատման հարցում հետագայում որդեգրվեց ընդհանուր առմամբ անաչառ դիրքորոշում: Այսպես, 1923թ. կայացած Զ.Յ.Դ. Վիեննայի խորհրդածողովը ընդունեց, որ «Ձանգեզուրի ապստամբ շարժումները եւ անոնց շարունակությունն ունեցած են արտակարգ նշանակություն:

Ա. Մեծամասնականները զգաստացնելու, անոնց բռնությանց եռանդը չափավորելու,

Բ. Փետրվարյան հեղափոխությունից հետո նահանջող ընկերների, բանակի ու գաղթականության թիկունքը ապահովելու եւ անոնց Պարսկաստան անցնելը դյուրացնելու,

Գ. Ձանգեզուրի ամբողջ գավառը ՀՀ-ին միացնելու,

Դ. Աշխարհի մեջ մեր հարցի քաղաքական դիրքը ամրացնելու տեսակետից»:³

¹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 148, թ. 52-54:

² Անդ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 151, 169-170:

³ *Քիւրքէտան* 3., նշվ. աշխ., էջ 74:

Իսկ այս ամենը, առարկայաբար, շնորհիվ միայն Լեռնահայաստանի ղեկավար Նժդեհի եւ Սյունեցու հերոսականի: Այս կապակցությամբ, միանգամայն օրինաչափ է Հայկ Ասատրյանի գնահատականը. «Ցեղի ոգու տարերքն էր, որ Նժդեհին Ձանգեզուրում դարձրեց հզոր անհատականություն»:¹

Հենց նման տեսանկյունից է անհրաժեշտ դիտարկել Հայաստանում եւ նրա շուրջ տեղի ունեցած աշխարհաքաղաքական անցուդարձը եւ ազատագրական պայքարը:

ՀՀ կռվի հարկավոր ոգի չցուցաբերելով, ցավալիորեն, տեղի տվեց: Եվ, այդ պարագայում, տեղատվության գլխավոր մեղքաբաժինն ընկնում է նրանց ղեկավարելու կոչվածների ուսերին: Հայն ամենուրեք նույնն է, սակայն ցեղահաղորդ ղեկավարման դեպքում նա անճանաչելիորեն ոգեփոխվում է, քանզի շարժվում է իր ցեղի անհաղթելիության հրամայականով: Կյանքի պարտավորեցնող օրենքն է այդպիսին. «Միեւնույն ժողովուրդը, բանակը՝ նայած իր ղեկավարներին, կարող է եւ հրաշագործություններ կատարել եւ խայտառակորեն ծունկի գալ հակառակորդի առաջ»:²

Եւ օրինաչափ է, որ միմիայն Գարեգին Նժդեհի՝ կատարյալ ղեկավարի, սուրն էր ի զորու Սյունիքի հայությանն առաջնորդել հրաշքի, քանզի առարկայաբար եւ հրամայաբար այդ էր վտանգալից ժամանակի պահանջն ու կարիքը: Փրկելով Սյունիքը՝ դրանով նաեւ ՀՀ-ը ու Հ.Յ.Դ.-ն, Նժդեհն այն բացառիկն էր, որ ի զորու եղավ ընկալել Հայ Ցեղի անսահմանափակ կարելիությունների ներուժը:

Լեռնահայաստանում Գարեգին Նժդեհը ապացուցեց, որ *իսկական Առաջնորդը* հայտնվում է վտանգի ժամանակ:

¹ *Նժդեհ Ա.*, Ցեղի ոգու շարժը, Սոֆիա, 1932, էջ 4:

² *Նժդեհ Ա.*, էջեր իմ օրագրեն, Երեւան, 1998, էջ 48:

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ն Ժ Դ Ե Հ Ի Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Ը

Թիվ 1

(Գ. Նժդեհի նամակը Հ.Յ.Դ. Արեւելյան Բյուրոյին)

Հ.Յ.Դ. Արեւելյան Բյուրոյին

Սիրելի ընկերներ

Շատ եմ ցավում, որ ժամանակին իմ բոլոր զեկուցումների պատճեններն ուղղված այս կամ այն պարոնին, որոնց թույլտվությամբ միայն ես կարող էի սկսել այս կամ այն ռազմական գործողությունը հանուն Ղափանի, Գեմվազի, Բաղաբերդի եւ Գողթանի փրկության չեմ ուղարկել Ձեզ:

Այսու ուղարկում եմ Ձեզ մի քանի պատճեններ, որոնցից դուք կտեսնեք, թե ո՞վ է անսխալ ըմբռնել Ձանգեզուրի ակտիվ ինքնապաշտպանության գործը եւ անշեղ եւ համառորեն ձգտել այդ բանին: Դուք կտեսնեք եւ կհամոզվեք, որ Օխչու եւ Գեղվա ձորերի 36 գյուղերը գրավելուց հետո, երբ Օրդուբադը՝ տարերային խուճապի մատնված իր հարստություններն էր փոխադրում պարսկական ափը, եթե իմ ղեկտեմբերի 9-ին արած դիմումը չմնար «ծայն բարբառո անապատի», այժմ՝ մեր ձեռքին կլինեք ոչ թե միայն Օրդուբադը, այլեւ՝ Ջուլֆան:

Այսօր էլ, երբ հրեշավոր չափերի հասած սովի եւ թշնամու գերադաս ուժերի դեմ մարտնչող Գողթանի մի բուռ ժողովուրդը «գաղթ կամ կռիվ» է պահանջում, նրանք, որոնք չլսեցին ինձ եւ պատճառ դարձան Ազուլիսների կոտորածին, թեթեւ սրտով պատասխանում են. «Հրամայված չէ մեզ... Առանց Երեւանի թույլտվության չենք կարող, պատասխանատվության հարց կա» եւ այլն:

Ձանձրացնելու չափ դիմումներ եմ արել, խնդրել, սպառնացել, որ կհեռանան Ձանգեզուրից, եթե թույլ չտան ինձ գրավելու Օրդուբադն ու Բարթազը, բայց միշտ էլ հազար անհիմն պատճառաբանություններով արգելել են ինձ:

Եվ Գողթանը, ավելի քան երկու տարի հավատարիմ պահակի պես ամենադժնդակ պայմաններում, Ձանգեզուրի ամրություններն ու նախադուռը պաշտպանող Գողթանը, աչքերը Ղափուջուղի բարձունքներին հառած, սպասում է, անվերջ սպասում: Գողթանցիների համագումարը ընկեր Աշոտի

(Աշոտ Մելիք-Մուսյան-Յ.Ա.) նախագահությամբ կայացրել է հետեւյալ որոշումը. «կամ գաղթ, կամ կռիվ»:

Պատրաստվում են, եթե Ղարաբաղի անցքերը չխանգարեցին, թեթև ուժերով անցնել Գողթան, գուցե ինձ հաջողվի մեռնող Գողթանի աննախընթաց դրությունը մի քիչ բարելավել:

1920թ. հունվար Ջերմ բարեւներով՝
Ղափան-Գենվագ-Գողթանի ռազմական ուժերի
հրամանատար *Նժդեհ*
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, ք. 2:

Թիվ 2

(Գ. Նժդեհի նամակը Հ.Յ.Դ. Բյուրոյին)

Հ.Յ. Ղազնակցության Բյուրոյին

Սիրելի ընկերներ

Գողթանում ստեղծված գերսպառնական դրությունը ստիպում է մեզ մի անգամ էլ հարայ կանչել, խնդրել, որ դուք անհնարինը հնարավոր դարձնեք, որ արագացնեք 500 զինվորներից բաղկացած զորամասի մեկնումը Ղափան, որտեղից անմիջապես կշարժեն դեպ Գողթան, եւ այսպիսով սովի կատարած ավերածություններից եւ թշնամու գերադաս ուժերից ահաբեկված ժողովուրդը կդադարեցնի կորստաբեր գաղթը եւ կմնա իր հայրենի հողին կպած:

Ձեզ համար անշուշտ գաղտնիք չէ, որ Գողթանն էղիֆների եւ խալիլների Կարթագենն է դառել: «Պիտ կործանվի Գողթանը», - ահա տաճկա-ադրբեջանական հրամանատարության կատեգորիկ որոշումը, որի իրականացման համար թշնամին նորանոր ուժեր է կենտրոնացնում Օրդուբադում: Ձեզ համար պարզ է եւ այն, որ Գողթանի տեղահանությամբ թշնամին տեր է դառնում Արաքսի ափից (Կարճեւան) մինչեւ Ջուլ ձգվող լեռնաշղթաների բոլոր կարելուր ռազմագիտական բարձունքներին եւ կետերին եւ իր մշտական կրակի ու ահաբեկման տակ է պահելու Ջանգեզուրի հարավ-արեւմուտքը:

Ընկերներ, մի տարվա տաժանակիր գործունեության արգասիքի ապահովման մտահոգությունը չէ, որ թելադրում է

մեզ օգնություն խնդրել, ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ընդունեք որպես ապացուցման կարիք չունեցող, որ առանց Գողթանի Ջանգեզուր-Ղարաբաղ լինել չի կարող, եւ որ Գողթանի անկման հետ գերեզման կդրվի եւ Նախիջեւան-Շարուրի վերագրվման հույսն, եւ մեր ջահել հանրապետության համար կստեղծվի մի աննախընթաց սպառնական դրություն:

Ջանգեզուր-Ղարաբաղը միշտ մերն են, եթե ժամանակավորապես վտանգվում են անգամ, եթե Գողթանի մի բուռն հերոսական ժողովուրդը չլքի իր Քրիստափորի եւ Ռոստոմի նվիրական ծննդավայրը:

Արագացրե՛ք, ժամը, վայրկյանը ճակատագրական մշանակություն ունի, արագացրե՛ք օգնությունը:

Ղափանի Հանքեր
1920թ. հունիս
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, ք. 7:

Նժդեհ

Թիվ 3

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

ՀՀ Ձինվորական նախարարին
Պատճենը ՀՀ արտաքին եւ ներքին գործոց նախարարներին,
պառլամենտի նախագահին եւ Հ.Յ.Դ. Բյուրոյին

Ադրբեջանը գործում է: Նրա հարյուրավոր ազենտները՝ իրենց տարած այլուրոսյան հաղթությամբ արբեցած՝ օրնիբուն չափչվում են բուն Ջանգեզուրի եւ Սիսիանի գյուղերը եւ համոզում, հավատացնում ժողովրդին, որ «սովետական Ռուսաստանը ստիպել է Հայաստանի կառավարության ձեռք բաշելու Ջանգեզուրից, որ այդ երկիրը արդեն տրված է Ադրբեջանին» եւ այլն ...

Գլխատված ու ահաբեկված ժողովուրդը լսում է այդ բոլորը ու անգոր կատաղությամբ անիծում եւ թշնամու կողմն անցած, իր տականքը կազմող մի բուռն կաշառված դավաճաններին եւ իր ղեկավարներին, որոնք այնքան հանցավոր հեշտությամբ տեղի տվեցին թշնամու ողորմելի ուժերի առաջ:

Չնայած այդ բոլորին Ձանգեզուրի հայությունը դեռ չէ դադարել իր հարազատ գործերին սպասելուց եւ դեռ ջերմորեն հավատում է, որ շուտով, շատ շուտով Բազարչայից կգոռան մեր թնդանոթները եւ երկրիս հայությանը կավետեն մեր գործերի մուտքը Ձանգեզուր:

Գիտեմ, դուք ընդմիշտ լքել չեք կարող Ձանգեզուրը, որովհետեւ դրանով դուք երիցս ուժեղացրած կլինեք Ադրբեջանը և լայն հնարավորություն տված կլինեք նրան իրագործելու իր վաղեմի երազը - միանալ Տաճկաստանին:

Ձեռքից թողնելով Ձանգեզուրը, դուք կվտանգեք ոչ թե միայն տրագիկ Գողթանը, այլեւ կվիժեցնեք Նախիջեւանի օպերացիան: Ստեղծված պայմաններում ես դժվարանում եմ հավատալ այդ օպերացիայի հաջողությանը: Թշնամին իր ձեռքին պահելով Միսիանը լայն հնարավորություն ունի Յաջիսանլուի եւ Մինքենդի (իսկ ով չգիտե, որ այդ շրջանները կենդանի ուժերի անսպառ ռեզերվ են) իր ուժերի մեծագույն մասը կարիքի դեպքում փոխադրելու Նախիջեւան:

Բաքվի մի քանի տասնյակ կաշառված հայերով Ադրբեջանը տեր դարձավ Ղարաբաղին: Սովետականացած Ղարաբաղը վարակեց բուն Ձանգեզուրի որոշ գյուղերը եւ թշնամու՝ թալանի տենչով խելագարված սրիկայախմբերը, գրեթե առանց կռվի մտան Գորիս: Վերջինս իր հերթին արագացրեց Միսիանի անկումը: Ու այսօր այդ բոլորը՝ եւ Ադրբեջան, եւ Ղարաբաղ, եւ բուն Ձանգեզուր ոտքի հանած իրենց բովանդակ ուժերը՝ եւ գործ, եւ տեռոր, եւ թղթադրամների դեզեր, կաշվից դուրս են գալիս ընկճելու իրենց դեմ ծառացած Ղափանը, Գենվազը, Բաղաբերդը եւ Գողթանը:

Այդ շրջանների ապստամբ ժողովուրդը, որ Ադրբեջանի հետ մեկից ավելի անգամ է չափվել եւ միշտ էլ հաղթել, ջերմ հավատով սպասում է Հայաստանի գործերի շուտափույթ երեւալուն իր երկրի սահմաններում:

Ուշացնել օգնությունը նշանակում է թուլացնել սպասող ազգաբնակչության մարտական կորովն ու հավատը եւ հեշտացնել թշնամու գործը, որն աննախընթաց արագությամբ առաջ է տանում բռնությամբ խորհրդայնացած հայ տարրի զինաթափումը, գլխատումն ու տնտեսական քայքայումը:

Արագացրեք գործերի մեկնումը: Սպասում ենք:

Ղափ-Գենգողթ-Բաղաբերդի Ռազմական ուժերի դիկտատոր
Հրամանատար *Նժդեհ*

Ղափանի Հանքեր
1920թ. օգոստոսի 25
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 17:

ԹԻՎ 4

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

*ՀՀ զինվորական նախարարին,
Պատճենը սպարապետ Նազարբեկյանին եւ Հ.Յ.Դ. Բյուրոյին*

Ես չգիտեմ, թե ինչով կվերջանան մեր Հանրապետության եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ սկսված բանակցությունները, սակայն քաջ գիտեմ այն, որ Ադրբեջանին զիջել ապստամբ Կապարգողթը, նշանակում է՝ մեծապես դժվարացնել մեր ժողովրդի ինքնապաշտպանության գործը:

Մեզ պետք է կառչել մեր երկրի ամեն մի բարձունքին, բնական ամեն մի ամրությանը, անգամ բլուրին, որ մեր անհաշտ թշնամին հնարավորություն չունենա իր մշտական կրակի ու ահաբեկման տակ պահելու մեր երկիրը:

Ձեռքից տալով Ղափանի, Գենվազի, Գեղվաձորի ու Գողթանի բնական ամրությունները, Արարատյան հարթավայրում մենք հեշտությամբ չպետք է կարողանանք կազմակերպել ու վարել մեր ժողովրդի ինքնապաշտպանության դժվարին գործը:

Թշնամուն զիջել մի երկրամաս (հիմա՝ Ձանգեզուրը, մասնավորապես՝ ապստամբ Կապարգողթը), որն ամենաարդի բերդերի դերն է կատարում մեր հանրապետության համար, իր վրա քաշելով ու զբաղեցնելով թշնամու ուժերի գրեթե կեսը, նշանակում է ոչ միայն զգալիորեն վտանգել մեր երկրի դրությունը, այլեւ՝ մահվան դատապարտել Կապարգողթի ու Բաղաբերդի ազգաբնակչությունը, որովհետեւ *ղափանցիներ ենք մենք*, եւ դա նշանակում է, որ էն *մեր խենթ հարվածներից* ընկան Օխչու ու Գեղվա անառիկ ձորերը, որ էն *մեր գոռ ուռռան* մաքրեց Որոտանի եւ Հաքյարուի ափերը, որ էն *մենք ենք*, որ յոթն անգամ ուժեղ, մահից էլ ուժեղ

գիտենք. ատել մեր դարավոր թշնամուն եւ յոթն անգամ, չէ, *կյանքից ավելի ուժեղ՝ սիրել մեր հայրենի հողը*.

Ղափանցիներ ենք մենք, եւ դա նշանակում է, որ էն մենք էինք, որ մահաշունչ ձմեռվա կեսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մոտենում Ղափուջուղին՝ Ղափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ծյուները, մեղմացրինք բնության արհավիրքը, բուքն ու բորանը եւ Գողթան իջանք, հանուն Քրիստափորի սրտից զարնված նվիրական ծննդավայրի՝ թշնամու գյուղերի սեւ ու թանձր ծուխը բարձրացնելու:

Ղափանցիներ ենք մենք, եւ դա նշանակում է, որ մեր հպարտ ու փառքի մեջ կորած դրոշակի վրա հարյուրից շատ ավելի ավերված թշնամու գյուղերի անուններ կան, որ մեր կռիվները՝ կանոնավոր, թե անկանոն ուժերի դեմ, մի ձեւ, միայն մի ձեւ են ունեցել՝ «ուռռա՛, հառա՛ջ, հրդե՛հ»:

Ու այդ բոլորին ծանոթ թշնամին այսօր իր սուրն է սրում Կապարգողթի ազգաբնակչության համար: Բուն Ջանգեզուրի եւ Սիսիանի գրավումը քիչ է ուրախացնում, որովհետեւ նա լավ գիտե, որ այդ շրջանների նվաճումով դեռ տեր չէ դառնում Ջանգեզուրին:

Նրան՝ մեր թշնամուն, Ղափան՝ Խալիլ եւ Նուրի փաշաների ուժերը ջարդող հաղթական Ղափանն է պետք, սրա Խուստուպը, Գեղվաձորի բերդերն ու բարձունքները, Գողթանի Ղափուջուղը, Գեմվազի Այիչանգորը, Կապարգողթի այդ փոքր Մասիսներն են պետք, որոնց տիրելով՝ նա ընդմիջտ տեր է դառնալու Ղարաբաղ-Ջանգեզուրին:

Մի՛, մի՛ լքեք այս՝ գերազանցորեն հերոս ու հայրենասեր ժողովրդին, մի՛ զիջեք նրա սրբազան երկիրը, որը իր ծոցի մեջ տեղ է տվել մեր պատմությունը զարդարող հերոսներից ամենամեծերին՝ Դավիթ Բեկին, Թորոս իշխանին:

Ո՛չ մի զիջում: Ջիջումը գերություն է, կոտորած ու մահ մեզ համար: Եթե չպետք է տեր կանգնեք մեզ, միացած պահեք մեզ մեր յոթն անգամ սիրած Յայաստանին, թողեք մեզ բախտի կամքին, մենակ, անկախ:

Մենք, որ ապրել ենք ազատ ու հաղթական կյանքով, հպարտ ու հերոսական մահով մեռնել գիտենք:

Աստված եւ իմ սերը իմ Յանրապետության հետ.

Յանքեր
1920թ. օգոստոսի 30

Ղափանի-Գեմվազի, Գողթանի ու Բաղաբերդի ռազմական ուժերի դիկտատոր-հրամանատար *Նժդեհ*

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 21-22:

Թիվ 5

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Սիմայանին)

*ՀՀ Ջիմվորական նախարարին
Պատճենը Սպարապետ Նազարբեկյանին եւ Գ.Յ.Դ. Բյուրոյին*

Աշխարհից կտրված հերոսական Ղափանը իր 70 օրվա կռիվներում վառելով իր վերջին փամփուշտը ռազմական ուժերի մի մասով քաշվեց լեռները:

Թշնամին ինձ վրա հարձակվեց միաժամանակ և Ձեյվայից, Ինջաբեյից, Գեղվաձորից և Գյազբեյից:

Մեծամասնականները ոտքի էին հանել Բարգուշատի, Յագարուի, Այրիզայի և Գեղվաձորի բովանդակ ուժերը. օգնական ուժեր էին բերել և Ջիբրայելից: Առաջնորդի դեր էր կատարում Ջանգեզուրի ժողովրդի տականքը՝ հայ դավաճանների մի ամբողջ լեգեոն:

Ձեյվայի կատաղի կռիվներում, որտեղ Ղափանցի ռազմիկը դրսևորեց իր անվիճելի հոգու ամբողջ տափը, թշնամին կրեց մեծ կորուստ: Մեպտեմբերի 3-ի կռվում Ջալինգյուլի մոտ ոչնչացրել ենք մեծամասնականների մի ամբողջ դիվիզիոն: Թշնամին առաջանում է թղթադրամների դեզեր ցրելով, կաշառելով բոլոր տեսակի թափփուկներին: Թշնամու զորքերի շարքերը խտացնում են պրոֆեսիոնալ դավաճանները, լրտեսները, գողերը, ավազակները, շանտաժիստները, գրպանահատները, սեղմ ասած՝ հայ ցեղի բոլոր տեսակի տականքներն ու քրեական տիպերը:

Թշնամին չի ճանաչում ոչ մի սրբություն, ոչ սկզբունք: Կնոջը ձերբակալում են, որպեսզի մատնի ամուսնուն, որդուն ահաբեկում, որ հոր տեղն ասի: Գյուղերը կտրված են իրարից: Չրեզվիչայկանները (արտակարգ հանձնաժողով-Ա.Յ.), որոնց առաջ նսեմանում են ցարական ու սուլթանական ժանդարմական տիսրահոջակ վարչությունները, մութ սպանու-

թյունները, թալանն ու կողոպուտը դարձրել են սովորական երևույթ:

Գյուղացիները վրեժով ու զզվանքով լցված, անկոչ հյուրերի երեսը տեսնել չեն ուզում, բայց և այնպես «մեծամասնական» կոչված քաղաքական շառլատանները շարունակում են խոսել հենց նույն այդ գյուղացիության անունից: Թշնամու գործողություններին տոն տվողը մեր պատմության ամոթը կազմող տխրահոշակ Մելիք-Ֆռանգուլների և Մելիք-Շահնազարների շառավիղներն են:

Ժողովուրդը՝ իր զզվանքն ու զայրույթը արտահայտելու համար, փորձեր է կատարել պղծանքի ենթարկելու Մելիք-Ֆռանգուլի գերեզմանը, որի մոտ այժմ պահակում է թուրք «մեծամասնական» զինվորը:

Մեր ապստամբ զինվորությունը գիշերները իջնում է լեռներից, ահաբեկում հայ դավաճաններին, ծաղիկներով զարդարում Դավիթ-բեկի և Թորոս իշխանի գերեզմաններն ու նորեն քաշվում լեռները:

Պատմությունը կրկնվում է:

Հերոսական Ղափանը, իր տականքի բացառությամբ, որն ապրել է ազատ ու հաղթական կյանքով, ուխտել է մեռնել հպարտ ու հերոսական մահով:

Իմ ձեռքին են առ այժմ Գեմվազն ու Գողթանը: Վճռել են՝ հանուն «մեծամասնականների» կողմից պղծված ու այլ-անդակված սոցիալիզմի և մեր ժողովրդի անկապտելի իրավունքների, շարունակել կռիվը մինչև վերջին փամփուշտը:

Սպասում են մեր զորքերի առաջխաղացմանը:

Արագացրեք:

Հրամանատար՝ *Նժդեհ*

Խուստուկի լեռներ
1920թ. սեպտեմբերի 11
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 23-24:

Թիվ 6

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

ՀՀ Զինվորական նախարարին
Պատճենը՝ Սպարապետ Նազարբեկյանին եւ Հ.Յ.Ղ. Բյուրոյին

Մեծամասնականները բռնաբար խորհրդայնացված Ղափանի գյուղացիությանը հայտարարել են, «որ իրենք կռվում են ոչ թե Հայաստանի Հանրապետության դեմ, որը վաղուց է ձեռք քաշել Զանգեզուրից և որը հայտնել է Լեզրանին, որը այս շրջաններում ոչ թեգուլյար (կանոնավոր) ուժեր ունի, ոչ էլ ներկայացուցիչներ՝ այլ Նժդեհի դեմ, որը զենք է վերցրել Սովետական իշխանության և նրա զորքերի դեմ»:

Նման սադրանքներով թշնամին ձգտում է թուլացնել մարտնչող գյուղացիության ռազմական կորովը:

«Մեզ Նժդեհն է հարկավոր, ոչ թե ձեր երկիրը և եթե նրան մեզ չհանձնեք, ձեր գյուղերը կրակի կմատնվեն և կարմիր բանակը կշարունակի մնալ ձեր շրջաններում և ապրել ձեր հաշվով»:

Նման զենքերով կռվող թշնամին իմ դեմ է հանել բռնաբար սովետականացած շրջանների կաշառված ամբողջ տականքը: Կռվում են: Խփվել է ձիս: Վիրավորված են:

Կռվի ծանրության կենտրոնը փոխադրված է Արևիքի շրջանը (Մեղրի):

Երրորդ օրն է, ինչ հերոսաբար դիմադրում է Շիվանի-ձորը: Այս շրջանի գյուղացիությունը դեռ ինձ հետ է: Հույս ունեմ մի քանի օր ևս դիմագրավել, մինչև որ ձեզնից կստանամ օգնություն և որոշ հրահանգներ:

Աստված և իմ սիրտը իմ Հանրապետության հետ:

Մեղրի
1920թ. սեպտեմբերի 15
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 18:

Հրամանատար՝ *Նժդեհ*

Թիվ 7

(Գ.Նժդեհի նամակը Ա.Մելիք-Մուսյանին)

Ա.Մելիք-Մուսյանին

Սիրելի Աշոտ

Վախկոտները, սրիկաները և սրանց հար ու նման մեծամասնականները չէին հավատում, որ Նժդեհը կվերադառնա Ղափան՝ շարունակելու իր սիրած ժողովրդի ինքնապաշտպանության գործը: Բայց Նժդեհը անգամ վիրավոր հրաժարվեց Երևան գալուց և իր մի խումբ արծիվների հետ վերա-

դարձավ Ղափան: Թքել եմ այն ճակատին, որը խոնարհվել գիտե սրիկաների առաջ: Համբուրում եմ Ղափանի և աշխարհի բոլոր հպարտ ճակատները:

Համբույրներով *Նժդեհ*

P.S.

Դրոն Ջանգեզուր էր եկել մոտավորապես 200 հոգով: Այդ ուժերով կարելի էր քշել բոլշևիկներին, բայց ոչ պաշտպանել Ջաբուղի ձորը: Ժողովուրդը (բուն Ջանգեզուրի) վերջին րոպեին անցավ թշնամու կողմը: Դա վախի հետևանք էր և ոչ թե *большевизм* (մեծամասնականություն-Ա.Հ.):

Ոեալ ուժ՝ ահա՛ թե ինչ է հարկավոր ժողովրդին.

Ողջ եղիր!

Նույն

1920թ. սեպտեմբերի 18

ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 16, ք. 2:

Թիվ 8

(Գ. Նժդեհի նամակը Հ.Յ.Դ. Վրեժստանի Կենտկոմին)

Հ.Յ.Դ. Վրեժստանի Կենտրոնական Կոմիտեին

Սիրելի ընկերներ

Ուղարկում եմ Ձեզ մոտս եղած կարևոր դրույմենտների մի մասը, ընդունեք և պահեք:

Մեղրի

1920թ. սեպտեմբերի 18

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

Դաշնակցական ջերմ բարևներով՝

Ձեր Նժդեհ

Թիվ 9

(Գ. Նժդեհի նամակը Հ.Յ.Դ. Վրեժստանի Կենտկոմին)

Հ.Յ.Դ. Վրեժստանի Կենտրոնական Կոմիտեին

Իմ դրության ողբերգականությունը նրանում է, որ կտրված աշխարհից, զուրկ եմ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից: Հայաստանի Հանրապետությունը

ինձ դրել է ամենամեղ դրության մեջ: *Ո՛չ օգնություն, ո՛չ տեղեկատվություն, ո՛չ էլ՝ որոշ հրահանգներ եմ ստանում:*

Ես շարունակում եմ կռիվները եւ պիտ դիմադրեմ, քանի դեռ ժողովրդի մի մասն ինձ հետ է: Թշնամին որպես ռազմական ուժ՝ ինձ համար անարժեք է, արհամարհելի: Թշնամին ուժեղ է իր սադրիչ գործունեությամբ, իր հրաշագործ արտակարգ հանձնաժողովներով, լրտեսական ցանցով, ահաբեկիչներով եւ տարածած սադրիչ լուրերով:

Թշնամին Ջանգեզուրի բովանդակ թուրք ուժերը հանել է իմ դեմ: Ինձ՝ թշնամու փոխարեն, ընկճելու եմ ռազմաձեռքի ճգնաժամը եւ Ջանգեզուրի հայության տականքը: Քանի դեռ շարունակվում է կռիվը՝ արագացրեք օգնությունը: Ուշացնել օգնությունը՝ նշանակում է թուլացնել մարտնչող գյուղացիության մարտական կորովն ու հավատը: Տվեք ինձ լայն տեղեկատվություն: Սպասում եմ:

Մեղրի

1920թ. սեպտեմբերի 18

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

Ձերմ բարևներով՝

Ձեր Նժդեհ

Թիվ 10

(Գ. Նժդեհի նամակը Հ.Յ.Դ. Վրեժստանի Կենտկոմին)

Հ.Յ.Դ. Վրեժստանի Կենտրոնական Կոմիտեին

Ընկերներ

Դեպքերը Ղափանում և Գեմվազում աստիճանաբար զարգանում ու խիստ վտանգալից բնավորություն եմ ստանում ինչպես երկրիս հայության, նույնպես և ողջ Հայաստանի նկատմամբ:

Արտաքին աշխարհից կտրված ենք բառի ամենալայն իմաստով: Դրության անորոշությունը մեծ լքում է առաջացնում ժողովրդի մեջ: Ռազմաձեռքի ճգնաժամը կռվող ուժին դրել է անելանելի դրության մեջ: Եվ հերոսական Ղափանը կամաց առ կամաց տեղի է տալիս թշնամու աննշան ուժերի առաջ: Մի քանի հարյուր ռուս բոլշևիկներ միացած մի խումբ հայ դավաճանների և տեղական թուրք հորդանների հետ սիստեմատիկաբար ոչնչացնում են ողջ Ջանգեզուրը: Այլևս

գաղտնիք չէ, որ մենք գործ ունենք միայն և միայն Ադրբեյջանի հետ:

Կռվում ենք այժմ Գեմվազի սահմաններում: Հաջողություներ առայժմ մեր կողմն է: Շիրվանաձորի ճակատում թըշնամու առաջխաղացման բոլոր փորձերը հետ է մղված մեծամեծ կորուստներով: Ներկա պայմաններում մեր հաղթությունները, սակայն, մխիթարական համարել չի կարելի, ռազմամթերքի պաշարը անսպառ չէ եւ Գեմվազում: Անորոշությունը անհետեւանք չէ թողնելու Գեմվազը եւս:

Հայտնի պիտի լինի Ձեզ, որ Ղափանի եւ Գեմվազի դեպքերը, նախաձեռնված թշնամու կողմից, դավադրական մի ակտ է: Բոլշեւիկների եւ Հայաստանի կառավարության միջեւ զինադադար (1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված համաձայնագիրը - Ա.Հ.) է կնքված: Ձինադադարի խախտումով նա հույս ունի գրավել Ղափան-Գեմվազը, միանալ Օրդուբադ-Նախիջեւանին եւ այդպիսով Հայաստանի կառավարությանը դնել կատարված փաստի առաջ: Բոլոր նշաններից երեւում է, որ մեր կառավարությունը տեղյակ չէ, թե ինչ է կատարվում այստեղ՝ վարագույրի ետեւը: Հակառակ դեպքում նրա այս անփույթ, անարձագանք վերաբերմունքը դեպի յուրայինների ոչնչացումն ու մի երկրի բռնագրավումը բացատրել անկարելի է:

Ուրեմն, ընկերներ, կանգ չպիտի առնենք եւ ոչ մի միջոցի առաջ իրազեկ դարձնելու կառավարությանը այստեղի անցուդարձերի մասին: Կառավարության եւ մեր մեջ կապ պահել միայն եւ միայն դուք կարող եք՝ ուրիշ ճանապարհ չկա: Ընկնելով Ձանգեզուրը՝ վտանգվում է Նախիջեւանը, իսկ Նախիջեւանի անկումով մահացու հարված է տրվում Արարտյան դաշտին:

Ընկերներ, աշխատեք անդադրում:

Ձեզ վրա է մեր հույսը:

Ընկերական բարևներով՝ *Նժդեհ, Աշոտ, Գ. Աղայան*
Հ.Գ.

Իշխանին ուղղված հեռագիրը անմիջապես ուղարկել:

Մեղրի

1920թ. սեպտեմբերի 19

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, 316Ա 1-4:

ԹԻՎ 11

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Սիմասյանին)

*ՀՀ զինվորական նախարարին,
Պատճենը՝ Նազարբեկյանին, Դրոյին, Սիլիկյանին,
Հ.Յ.Դ. Բյուրոյին եւ Դարալագյազի հատուկ կոմիսար
Գերասիմ Բալայանին.*

Դրոն զինվորական նախարարի անունից հրամայում է ինձ, համաձայն կնքված զինադադարի, վերցնել իմ զորամասը եւ անցնել մեր տարածքը:

Ես չզիտեմ՝

1. Ի՞նչ պայմաններով, ո՞ւմ հետ (Ադրբեյջանի՞, թե՞ Խորհրդային Ռուսաստանի) եւ որքա՞ն ժամանակով է կնքված զինադադարը,

2. Եթե Կապարգողթի իմ ուժերը, համաձայն զինադադարի, պետք է թողնեն իրենց երկիրը եւ քաշվեն մեր տարածքը, ապա՝ մեծամասնականները եւ ադրբեյջանական ավազակախմբերը, ե՞րբ եւ ո՞ւր են քաշվելու,

3. Ըստ կնքված զինադադարի, ո՞ր օրը եւ ո՞ր ժամին պետք է Ձանգեզուրից քաշվեն, հեռանան մեր եւ թշնամու ուժերը,

4. Ո՞վ է կառավարելու զինադադարի ընթացքում երկիրը,

5. Ի՞նչ է լինելու Գողթանի դրությունը, որը վարչական տեսակետից չի մտնում Ձանգեզուրի մեջ,

6. Ձե՞ք կասկածում, որ թշնամին կարող է դավադրել, այն է, որ մեր դուրս գալուց հետո, հանկարծակի բերելով անտերացած ազգաբնակչությունը, կարող է տեր դառնալ Կապարգողթի չորս ապստամբ շրջաններին,

7. Մեր խոր հետախուզությունը պարզել է, որ Այրի-Չայում կուտակված են բավականին մեծ ուժեր (Շարուրի եւ Նախիջեւանի գաղթականությունը): Ձե՞ք ենթադրում, որ իմ Ձանգեզուրը թողնելուց հետո այդ ուժերը հեշտությամբ կարող են տեր դառնալ Գողթանին: Սա ի՞նչ զինադադար է, որի ժամանակ՝ մեծամասնականները շարունակում են իրենց շահատակությունները, թալանը եւ զինաթափությունը Սիսիանում եւ բուն Ձանգեզուրում,

8. Դուք գիտեք, որ ես, բացի ժողովրդական վաշտերը, ուրիշ կանոնավոր զորամասեր չունեմ: Կարող է այնպես լինել, եթե իսկապես կնքված է զինադադարը, որ հարկադրված լինեմ երկիրս 30 հոգով, գուցե եւ այնպես լինի, որ դուրս գամ 300 հոգով: Ընդունենք, որ մինչեւ թշնամին չքաշվի եւ մաքրի ամբողջ Սիսիանն, իմ դուրս գալը քանի հոգով էլ որ լինի, ոչ թե դժվար, այլ միանգամայն անկարելի կլինի: Մեր Դարալազյազի ուժերը պետք է առաջանան դեպի Սիսիան, որ մենք կապվելով նրանց հետ, հնարավորություն ունենանք անցնելու մեր տարածքը,

9. Ի՞նչ դրության մեջ է Նախիջեւանի հարցը: Խնդրում եմ հատուկ սուրհանդակով պատասխանել իմ բոլոր հարցերին տալով ինձ լայն տեղեկատվություն: Ավելացնեմ. ամսի 12-ին մեծամասնականները փորձեցին մոտենալ մեր դիրքերին, բայց հետ շարվեցին: Ժողովրդի ակտիվ մասը՝ թողած հունձ եւ այլ գյուղատնտեսական աշխատանքները, ամրացել է դիրքերում: Ժողովուրդը բարձր տրամադրությամբ սպասում է Հայաստանի զորքերի գալուն, որ միացյալ ուժերով քշե թշնամուն Ջանգեզուրից:

1920թ. սեպտեմբերի 29
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 9-10:

Դիկտատոր-հրամանատար
Նժդեհ

Թիվ 12

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

*ՀՀ Զինվորական նախարարին
Պատճենը՝ Հ.Յ.Դ. Բյուրոյին*

Գեներալգում կռիվները շարունակվում են նախկին թափով: Սղմում են մեզ երկու կողմից՝ Շիվանիձորի եւ Օրդուբադի: Կասկածից դուրս է, որ Ադրբեջանը որոշել է կապվել Նախիջեւանի հետ, վերացնելով մեջտեղից Գեներալը:

Թշնամին չթուլացնելով Շիվանաձորի զործողությունները, կրկնակի համառությամբ այժմ գործում է Օրդուբադի կողմից: Մեծամասնական կոչված խրտվիլակին մեծապես աջակցություն ու անմիջական մասնակցություն են ցույց տալիս տեղական թուրք մասսաները եւ տաճկական զորքերը՝

վերջինս Օրդուբադի ճակատում: Մենք թնդանոթներ չունենք: Թշնամու կողմից գործում են 4 թնդանոթ եւ մեծ քանակությամբ զնդացիրներ:

Գեներալը մի բուռ հայությանը հերոսության աննախընթաց օրինակներ է ցույց տալիս: Հաջողությունը մինչեւ օրս մեր կողմն է: Վերցրել ենք գերիներ եւ ավար, թշնամու կորուստները շատ մեծ են:

Իրպես առ րուպե սպասելով ձեզանից որոշ հրահանգներ, ցուցնումքներ մեր անելիքների մասին, ժամանակավորապես առաջնորդվում ենք հետեւյալ երկու հիմնական սկզբունքներով.

1. Արաքսի ակփը (Շիրվանիձոր-Մեղրի-Կարճեւան, որոնցից վերջինս գտնվում է Նախիջեւանի գավառում) ոչ մի զնով չզիջել թշնամուն, որովհետեւ դա միակ ճանապարհն է, որով նա կարող է եւ կամենում է ուժ մատակարարել Նախիջեւանին նախ՝ կանգնեցնելու հայկական առաջխաղացման վտանգը, ապա՝ իրագործելու Տաճկաստանի հետ միանալու իր նվիրական ծրագրերը:

2. Ժողովրդի ինքնապաշտպանությունը վերահաս կոտորածների հանդեպ:

Ձգում ու գիտակցում ենք, որ քաղաքական աշխարհում, իսկ մասնավորապես Նախիջեւանի գավառում, ինչ-որ կնճռոտ հարցեր են լուծվում. հասկանալի է նույնպես, որ այդ հարցերի այս կամ այն կերպ լուծման հետ սերտ կապ պիտի ունենալ եւ մեր բախտի տնօրինումը, սակայն թե ի՞նչ ձեւով որոշ կոորդինացիա ստեղծենք մեր եւ ձեր միջեւ. - չգիտեմք: Ինֆորմացիայի կատարյալ բացակայությունը մեզ դրել է ծանր կացության մեջ: Խոսում են զինադադարի (երբ ամսից ավել է, որ մեզնում կռիվ է) եւ հաշտության ինչ-որ պայմանների մասին: Աշխատում են հավատացնել, որ հայկական զորքերը արդեն մտել են Նախիջեւան եւ Ջուլֆա. Հուսադրում են, որ հայկական զորքերը մոտ օրերս Օրդուբադ հասնելով կմիանան մեզ հետ. պնդում են Նախիջեւանի գավառի թրջության պանիկական փախուստի մասին, այն ժամանակ, երբ այսօր 11-րդ օրն է, որ Օրդուբադը հսկայական ուժերով կռվում է մեզ հետ համառորեն: Խոսվում է վերջապես եւ այն մասին, որ Հայաստանին տրվում է միայն Ջուլֆա-Ուլուխան-

լու երկաթուղագիծը եւ որ մեզ մնում է կամ մեռնել անհավասար կռիւմ, կամ ստրկութեան անարգ լուծը շալակ առնել:

Եթէ Չայաստանի կառավարությունը արդեն հաշտվել է Ադրբեջանի եւ Նախիջեւանի միացման մտքի հետ, եթէ նրա համար այլեւս ռազմական կարելոթություն չունեն Գողթանի հսկա լեռնաշղթան ու Գենվազի անձնան (անառիկ) կիրճերը, ուրեմն մեր այս անվերջ ու միանգամայն անիմաստ զոհողություններին վերջ տալու հնարը պիտի գտնել: Չակառակ պարագային ինչո՞վ բացատրենք ձեր համառ լռությունը: Անմտություն է, իհարկե, ենթադրել, որ Չայաստանի կառավարությունը կարող է գիտակցորեն մի ժողովուրդ կորստի մատնել, կամ այնքան անճար կարող է գտնվել, որ չկարողանար անգամ հաղորդակցության կապ ստեղծել մեզ հետ: Միթե՞ հասկանալի չէ, որ որքան էլ նվիրական լինի Գենվազի անխախտ որոշումը՝ կռվել մինչեւ արյան վերջին կաթիլը, կամ՝ որքան էլ մենք անսասան մնալու լինենք մեր նախագծած սկզբունքների մեջ, այդուամենայնիվ կռիվներին, այս տարտամ դրության մեջ, բնականորեն՝ ծրագրված, նախամտածված լուրջ բնավորություն (ռազմագիտական) տալ անկարելի է, մանավանդ՝ երբ քո առաջ ծառայած ես տեսնում ռազմամթերքի սպառման անխուսափելի վտանգը իր հրեշափոր հասակով:

Թշնամին աննախընթաց եռանդ է գործադրում պատռելու (այսօր հոկտեմբերի 1-ին) մեր շղթան Օրդուբադի ճակատում: Մեր բոլոր դիրքերը ռմբակոծվում են. Սոյուխի (սար) վրա նկատվում են թշնամու նորանոր ուժերի կուտակումներ. բարձունքներից մերոնք հեռանում են:

Տղաները *փամփուշտ, փամփուշտ եւ փամփուշտ* են խնդրում:

Նժդեհ

Յ.Գ.

Երեկվա կռիվն էլ (Օրդուբադի ճակատում) լիկվիդացիայի ենթարկեց հերոսական Գենվազը: Ամբողջ օրը մենք աջ թելից նահանջելով մինչեւ հարեւան գյուղը, ձախով աստիճանաբար թեւանց էինք անում: Լուսաբացին (հոկտեմբերի 2-ին) մեր փոքրաթիվ տղաները արդեն շրջապատել էին թշնամուն: Խիտ մառախուղի շնորհիվ թշնամուն հաջողվեց ճողոպրել մեր ձեռքին թողնելով դիակներ, ուխտեր եւ բավա-

կան ավար: Թվում է լեռներում թողած պիտի լինեն գնդացիներ. թնդանոթները ըստ երեւութին ուղղակի ցած են գլորել, կամ փախցրած են եղել գիշերով:

Ստացած տեղեկությունների համաձայն կռիվը ղեկավարում էր տաճկական սպա Էդիֆ-բեգը: Օրդուբադում գտնվող մեծամասնականների և տաճկական հրամանատարության մեջ ինչ-որ թյուրիմացություններ են առաջացել: Զինվորական կոմիսար Վարդանյանը եւ մի քանի այլ հայեր ձերբակալված են որպես դավաճաններ:

Շիվանաձորի ճակատում, ինչպես արդեն գրված է ձեզ, կռիվները շարունակվում են իրենց նախկին թափով: Եթէ հաջողվի լիկվիդացիայի ենթարկել եւ այդ ճակատի գործողությունները, թիկունքն ապահովելու համար, ստիպված կլինեն ձեռնարկելու Ղափանի վերագրավման գործը:

Մի ավելորդ անգամ եւս խնդրում են արագացնել ձեր օգնությունը: Ոչ մի կերպ չեն կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ դուք կարող եք անտես առնել Ղափանի, Գենվազի եւ Գողթանի ռազմական խոշոր նշանակությունը մանուկ Չայաստանի համար, ինչպես եւ այդ շրջանների հերոսական ժողովրդի ֆիզիկական գոյության կարելոր խնդիրը:

Կարճևան *Աշոտ, Նժդեհ*
1920թ. հոկտեմբերի 1-2
ՉԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 11-13:

Թիվ 13

(Գ.Նժդեհի նամակը Յ.Յ.Գ. Վրեժստանի Կենտկոմին)

Յ.Յ.Գ. Վրեժստանի Կենտրոնական Կոմիտեին

Խնդրում են ընկ. Աշոտին (Աշոտ Մելիք-Մուսայան-Ա.Յ.) ցույց տալ լայն աջակցություն՝ կապ ստեղծելու Չայաստանի Չանրապետության հետ: Ընկերոջը իրավունք է տրվում ստորագրելու Ամիր Արշադին ուղղված նամակի տակ:

Կարճևան Կուսակցական ջերմ բարևներով՝
1920թ. հոկտեմբերի 2 *Նժդեհ*
Յ.Յ.Գ. Կենտրոնական Արխիվ, 316Ա1-7:

Թիվ 14
ՎԿԱՅԱՎԱՆ Ա. ՄԵԼԻՔ-ՄՈՒՄՅԱՆԻՆ

Վկայականս տրվում է ընկեր Աշոտ Մելիք-Մուսյանին առ այն, որ նա Ղափանի, Գենվազի, Գողթանի եւ Բաղաբերդի ռազմական ուժերի հրամանատարի առանձին հանձնարարություններով անցնում է Պարսկաստան: Ընկերը կարիքի դեպքում անցնելու է նաեւ Հայաստան: Խնդրում եմ կուսակցական մարմիններին ու անհատ ընկերներին ցույց տալ ընկերոջը լայն աջակցություն:

Կարճևան Ղափան-Գենվազ -Գողթանի ռազմական ուժերի
1920թ. հոկտեմբերի 2 հրամանատար *Նժդեհ*
ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 15, ք. 1:

Թիվ 15
(Գ. Նժդեհի նամակը Ա. Մելիք-Եոլչյանին)

Ա. Մելիք-Եոլչյանին

Ընկեր Սերգեյ

Զգիտեմ ինչ և ինչպե՞ս գրեմ, որ մեր ընկերները հասկանան ինձ:

Մտավորապես 100 օր է, որ, կտրված Հանրապետությունից, կռվում եմ թշնամու գերադաս ուժերի դեմ, առանց դրսի օգնության: Միայն իմ զինակիցները գիտեն, թե ի՞նչ ռազմադավերի, թշնամու համար անձանոթ, տակտիկական ձեւերի, ինչ՞ երբեմն խենթության հասնող, խիզախ քայլերի եմ դիմել՝ ռազմամթերքի ծախսը ամենամիմիմալ չափերի հասցնելու համար: Կռվել եմ ուժանակով, պայթուցիկ տակառներով, տեղումս պատրաստած սվիններով: Ցերեկները ակամայից դիմել եմ պաշտպանողականի, գիշերները՝ **БОЛЧЬЯ** (գայլային՝ գիշերային մարտերի վարում-Ա.Հ.) տակտիկայի: Կռիվներին նման ձեւ տալով հանդերձ՝ այսօր կանգնած եմ ռազմամթերքի սուր ճգնաժամի առաջ:

Կատաստրոֆան անխուսափելի է, եթե հանրապետությունը շուտափույթ կերպով օգնության չհասնի ինձ:

Ընկեր, մի ավելնորդ անգամ էլ խնդրում եմ արագացնել օգնությունը: Այս շրջանները իրենց անչափելի ռազմագի-

տական նշանակությամբ եւ գերազանցորեն մարտունակ ժողովրդով մեր հանրապետությանը շատ, շատ են պետք:

Աստված և իմ սերը իմ Հանրապետության հետ:

Ջերմ բարևներս ձեզ եւ կուսակցական բոլոր ընկերներին:

Նժդեհ

P.S.

Նամակս կարդալ Մինիստրական խորհրդում եւ ֆրակցիայում:

Նույնը

Գենվազ
1920թ. հոկտեմբերի 3
ՀԱԱ, ֆ. 499, ց. 1, գ. 19, ք. 1:

Թիվ 16
(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

ՀՀ Զինվորական նախարարին
Պատճենը ՀՀԴ բյուրոյին

Մեկից ավելի անգամ մեծ կորուստներով հետ չարտված Օրդուբադն ու Բարթազը միացած մեծամասնականներին սեպտեմբեր 28-ին կրկնեցին իրենց հարձակումը ավելի մեծ ուժերով ու մասշտաբով:

Կռիվը շարունակվում է երկու ճակատների վրա էլ: Գործ են տեսնում նրա հրաշագործ թղթադրամների դեզերը եւ սադրանքը: Շիրվանձորի զինվորությունը Բաքվից եկած մեկ-երկու կաշառված հայերի սադրանքով մերկացրել են դիրքերը եւ առաջ քաշել թշնամուն: Այդ գյուղն էլ կարելի է ժամանակավորապես կորած համարել, բայց եւ այնպես դրությունը անհույս չեմ համարում: Շարունակելով կռիվը՝ սպասում եմ *deus ex machina*-ին(աստվածային գործիք-Ա.Հ.):

Աբկեզ
1920թ. հոկտեմբերի 5
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, ք. 3:

Հրամանատար՝ Նժդեհ

Թիվ 17

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

*ՀՀ Զինվորական նախարարին
Պատճենը Հ.Յ.Դ. Բյուրոյին*

Հոկտեմբերի 10-ին Ղափանի ապստամբության օրը, խալիլ փաշան, որը նոր էր վերադարձել Բաքվից, ինձ Գենվազ քաշելու եւ Ղափանի վերագրավման փորձը վիժեցնելու նպատակով, Օրդուբադից սկսեց իր ուժեղ հարձակումը Կարճեւան-Կաքավաբերդի վրա: Կռիվը տեսեց երեք օր ու վերջացավ թշնամու կատարյալ պարտությամբ: Թշնամին հետապնդվեց մինչեւ Օրդուբադի դաշտերը:

Այդ կռվում վերցրել ենք երեք գնդացի, հեռախոսային ապարատներ, հրացաններ ու զրաստներ:

Թշնամին այժմ սկսել է իր հարձակումները Ինջաբեկ-Ղալղաշ ճակատից (Ղափանի հյուսիսը): Հասցրեք ինձ երկու թնդանոթ եւ ռազմամթերք: Կարգադրեք, որ Միսիանի զորամասը լինի ավելի ակտիվ:

Հրամանատար՝ *Նժդեհ*

Մեղրի
1920թ. հոկտեմբերի 14
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 8:

Թիվ 18

(Գ. Նժդեհի նամակը Հ.Յ.Դ. Վրեժստանի Կենտկոմին)

Հ.Յ.Դ. Վրեժստանի Կենտրոնական Կոմիտեին

Սիրելի ընկերներ

Մոտավորապես 100 օր է, որ, կտրված Հանրապետությունից, կռվում եմ թշնամու գերադաս ուժերի դեմ: Միայն իմ զինակիցները գիտեն, թե ինչպիսի ռազմադավերի, ինչ՝ թշնամու համար անժանոթ, տակտիկական ծեւերի, ինչ՝ երբեմն խենթության հասնող խիզախ քայլերի եմ դիմել ռազմամթերքի ծախսումը ամենամիմիմալ չափերի հասցնելու համար:

Կռվել եմ ուժանակով, պայթուցիկ տակառներով, սվիններով: Ցերեկները ակամայից դիմել եմ պաշտպանողա-

կանի, գիշերները՝ *ВОЛЧЬЯ* տակտիկայի: Կռիվներին նման բնույթ տալով հանդերձ՝ այսօր կանգնած եմ ռազմամթերքի սուր կրիզիսի առաջ:

Մի ավելորդ անգամ էլ խնդրում եմ խթանել, հասկացնել մերոնց՝ արագացնելու օգնությունը: Մի՞թե մինչեւ օրս երեւանը չհասկացավ, որ այս շրջանները իրենց անչափելի ռազմագիտական նշանակությամբ եւ գերազանցորեն մարտունակ ազգաբնակությամբ մեր հանրապետությանը շատ շատ են պետք:

Ձերն բարևներով՝ *Նժդեհ*

P.S.

Անշուշտ լսած կլինեք իմ վերջին մեծ հաջողության մասին: Վերագրավել եմ Ղափանը՝ վերցնելով 300-ից ավելի զերիներ, 400-ի չափ հրացան, 16 գնդացի, զանազան սիստեմների 100-ից ավելի ծիւր, 17 սպա եւ այլն: Օրդուբադ-Ալանոյազի ճակատում ունեցանք նույնպես մեծ հաջողություն: Թշնամին իր երրորդ փորձի ժամանակ թողել է երեք գնդացի, հրացաններ եւ այլն:

Մեղրի
1920թ. հոկտեմբերի 15
Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, 361 Ա1-8:

Նույնը

Թիվ 19

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

*ՀՀ Զինվորական նախարարին
Պատճենը Սպարապետ Նազարբեկյանին,
պառլամենտի Նախագահին եւ Հ.Յ.Դ. Բյուրոյին*

Օրդուբադն ու Ջանգելանը նորից սկսեցին իրենց հարձակումը հերոսական Գենվազի մի բուռն ժողովրդի վրա:

Թշնամու ուժերը հասնում են մի քանի հազարի:

Հարձակվողների 70% թուրք է: Օրդուբադի ճակատից հարձակվողների մեջ կան նաեւ օսմանցիներ: Կասկածից դուրս է, որ թշնամին վճռել է գրավել Գենվազը եւ սրի քաշել նրա գերազանցորեն մարտունակ ու քաջանուն ժողովրդին:

Պարսկական ափից հաղորդում են ինձ, որ թշնամին դեպ Գենվազ է շարժում նաեւ մի մեծ խուժան՝ թալանի ու կոտորածի նպատակով: Ի սեր Գենվազի, Գողթանի եւ Ղափանի մարտնչող ժողովրդի, որը ոչինչ չխնայեց Հայաստանի նախադուռն ու ամրությունները պաշտպանելու համար, որը չորրորդ ամիսն է, ինչ հանուն իր հարազատ Հանրապետության իր լավագույն մարտիկների ազնիվ արյունն է զոհի սեղան հանում, օգնություն հասցրեք ինձ գործով, թնդանոթով և ռազմամթերքով:

Կռիվները շարունակվում են եւ Ղափանում: Այսօր մի խենթ գրոհով մեզ հաջողվեց Ինջաբեւի ճակատում մասամբ ջարդել, մասամբ էլ գերի վերցնել ութ գնդացիների հետ թշնամու 250-րդ հեծելազունը:

Թշնամին կռիվների ծանրության կենտրոնը փոխադրեց Ղափանի հյուսիս-արևելյան ճակատը: Նա կռվում է գերադաս ուժերով: Ռազմամթերքի սուր ճգնաժամը եւ թնդանոթների բացակայությունը կարող է պատճառ դառնալ Ղափան գեմգողթի հերոս ժողովրդի ոչնչացմանը: Սա չորրորդ հարձակումն է Օրդուբադի կողմից: Օսմանյան հայակեր անարխիստներին Գենվազի ժողովրդի ազնիվ արյուն է պետք:

Ի սեր Աստծո եւ իմ թափած գերմարդկային աշխատանքների՝ արագացրեք օգնությունը:

Ըստ իս Կապարգողթը փրկելու համար պետք է կամ անմիջապես գրավել Նախիջեւանը, կամ թե Լեգրանի միջոցով (լավ կլիներ Նախիջեւան-Օրդուբադ մի խառը հանձնաժողով ուղարկել) դադարեցնել Օրդուբադի եւ Գորիսի անվերջ հարձակումները՝ Ջանգեզուրի այս կամ այն շրջանի վրա:

Օգնություն, օգնություն, օգնություն իր վերջին փանփուշտը կրակող Ղափան-Գենվազին.

Հրամանատար՝ Նժդեհ

Ղափանի հանքեր
1920թ. հոկտեմբերի 19
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 15-16:

ԹԻՎ 20

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

ՀՀ զինվորական նախարարին, Պատճենը՝ Նազարբեկյանին, պառլամենտին, Գ.Յ.Դ. Բյուրոյին, Ջանգեզուր-Ղարաբաղի հեղափոխական կոմիտեին եւ «Հառաջ» թերթին

Էլ լռել չեմ կարող: Բայց ինչ արժե անվերջ, անհավասար կռիվներում արնաքամ եւ ուժասպառ եղած մի ժողովրդի մեռնող ղեկավարի ճիչը, ցավը, հարայը: Ես մեռնում եմ, գիտե՞ք ինչ է նշանակում սա: Այն, որ ինձ հետ մեռնում է նաեւ իր ռազմական խոյանքներով մեր վերջին երկու տարվա պատմությունը զարդարող Ղափան-Գենվազ-Գողթանի հերոսական ժողովուրդը:

Ես հաղթում եմ, ջարդում թշնամու գնդերը, հարյուրներով գերի վերցնում, զինաթափում, բայց եւ այնպես՝ ինձ պարտված եմ զգում եւ մեռնում: Գիտե՞ք՞ ինչ է նշանակում սա: Այն, որ տեսնում եմ, որ վերջ չկա թշնամու հարձակումներին, որ ես իմ թոքերի վերջին կտորն եմ մաշում, իսկ ժողովուրդը՝ վերջին փամփուշտ է վառում: Հաղթել եւ իրեն պարտված զգալ: Այդ ողբերգությունը զգալու համար պետք է սիրտ ունենալ, սիրտ: Այսօր, Կապարգողթն օղակող թշնամին խորհրդայնացնելու տեղ միայն կոտորում է եւ թալանում:

Մեծամասնականների տեղ այժմ արյան տենչով խելագարված թուրք կանոնավոր ուժերն ու հսկայական խուժաններն են պաշարել իմ շրջանները: Իհարկե, պարոն Լեգրանը գիտե այդ եւ դիվանագիտորեն լռում է: Մինչ այդ, մարդը կասե յուր խորհրդավոր խոսքը, Կապարգողթի տրագիկ ժողովուրդը կարող է սրի քաշված լինել:

Արագացրե՛ք, *արագացրե՛ք օգնությունը*, եթե ձեզ պետք է այդ՝ *գերազանցորեն հայրենասեր եւ քաջագործ* ժողովուրդը: Գիտե՞ք, չէ՞, որ այդ ժողովուրդը զոհ է գնում իր՝ դեպ *երեւանն ունեցած ջերմ հավատին.*

Օգնություն, օգնություն.

Ղափանի հանքեր
1920թ. հոկտեմբերի 20
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ.

Հրամանատար Նժդեհ

Թիվ 21

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

*ՀՀ Զինվորական նախարարին
Պատճենը Սպարապետ Նազարբեկյանին եւ Յ.Յ.Դ. Բյուրոյին*

Հոկտեմբերի 20-ից թշնամու ուժեղ հարձակումները Գողթանի վրա շարունակվում են:

Լեզրանի քթի տակ կարմիր կոչված սվոլոչը (սրիկա-Ա.Յ.) թուրք ասկյարների եւ խուժանի հետ Խալիլի եւ Էդիֆի ղեկավարությամբ պաշարել է քաղցից ուժասպառ եղած Գողթանը: Այլեւս ի՞նչ գինադադար, ի՞նչ բանակցություններ: Թշնամին ձգտում է լայնացնել իր բազան եւ ամրացնել Նախիջեւանի թիկունքը:

Կրկնում եմ Գողթանին տիրելով թշնամին կդառնա գրեթե անպարտելի եւ անզուսպ:

Ղափաջուղը, մեր ձեռքին եղած միակ ճանապարհը, որը միացնում է Ղափան-Գենվազը Գողթանի հետ, փակ է: Այսօր չորրորդ օրն է, ինչ Գողթան ուղարկածս օգնական ուժերը գերմարդկային ճիգեր են թափում անցնելու Գողթան եւ միշտ էլ մարդկային զոհերով հետ էին գալիս:

Բուք ու բորանը ձյունապատ Ղափաջուղի՝ Կապարգողթի այդ փոքր Մասիսի վրա կտրել է մեր ճանապարհը:

Արագացրեք Նախիջեւանի գրավումը, եթե չեք ուզում ընդմիշտ կորցրած լինել Գողթանը, գուցե եւ Նախիջեւանը:

Ղափանի Հանքեր
1920թ. հոկտեմբերի 25
ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 6:

Հրամանատար՝ *Նժդեհ*

Թիվ 22

(Գ. Նժդեհի նամակը Յ.Յ.Դ. Բյուրոյին)

Յ.Յ.Դ. Բյուրոյին

Սիրելի ընկերներ

Կապարգողթի ժողովրդի այս վերջին մի տարու կյանքը, ապրումները եղել են ամբողջապես պատերազմական: Նա կռվել է անդադրում, կռվել է գիշեր, ցերեկ, ձմեռ ու ամառ:

Նա հանգիստ չի ունեցել, ժամանակ չի ունեցել, չի կարողացել իր առօրյա պահանջների հոգացման ծայրը գտնի, իր ցավը հասկանա: Բայց եւ այնպես նա ապրել է, ապրել է, որովհետեւ ունեցել է վեհ հավատ, ունեցել է փայփայած տենչանք, որ մի օր իր դուռն է ծեծելու իր հարազատ կառավարությունը, մի օր իր Հանրապետության զորքն է տեսնելու կանգնած այս սահմանագծի վրա, որտեղ իր զավակներից ամենալավագույններին կորցրեց, որտեղ գոռ գրոհամարտում իր անկրկնելի հոգու թափն ու ավյունը դրսեւորեց:

Եվ օրերը հաջորդեցին օրերին, ամիսները՝ ամիսներին ու լրացավ ամբողջ տարին եւ էլ ավելին, սակայն իր երազած, իր փայփայած կառավարությունը, իր սպասած զորքը չեկավ: Ժողովուրդը լքվեց, ժողովուրդը հուսահատվեց, նրա սպասումների շարանը վերջացավ ու սկսեց ենթարկվել պատահականությունների, ամբոխավարական մանյովրների, ավանտյուրիստական քաղաքականության, մինչ այն աստիճան, որ ի վերջո նետվեց իրեն խայտառակած բուլշեիզմի գիրկը:

Բայց հայ ժողովուրդը եւ բուլշեիզմը, հայ ժողովուրդը եւ ցինիկ հասկացողությունների, սոսկումի, զգվանքի, ոճրագործության եւ մարդկության տականքների կառավարություն: Սա հասկացողությունների, ըմբռնումների տիաս վիժվածք էր, սա տարօրինակության գագաթնակետ էր: Հայ ժողովուրդը, էն մաքուր վարք ու բարքերի, ընտանեկան սրբությունների պաշտամունքով ապրող ժողովուրդը, դեռ շատ առաջ վսեմ հասկացողություններով ու սկզբունքներով սնված, ապրած ժողովուրդը, չէր կարող հանդուրժել բուլշեիկական կառավարությունը:

Եւ մի գեղեցիկ առավոտ, երբ բուլշեիկական իշխանությունը արթնանում էր իր մրափից վերսկսելու իր ճիվաղային գործը, Խուստուփի, Ինջաբելի, Երիցվանքի բարձրունքներում ապստամբության դրոշակներն էին ծածանվում ու ժողովուրդը, երեկվա են ստորացած, ստրկացած ժողովուրդը, մի հոգի, մի շունչ եղած՝ հերոսական մի թռիչքով, ապստամբության մի ծփանքով իր ալիքների մեջ խեղդեց խայտառակությունը, մաքրեց իր սրբությունները ու վերածնված էլ ավելի վեհությամբ, էլ ավելի վառ հույսերով քան առաջ էր, տիրացած իր երկրին, փարվեց հայկական սովո-

րություններին, հայու կարգ ու կանոնին: Ու այսօր անդադրում դարբնում է նա իր դիմադրական կորովը, հերոսական գրոհամարտով զարդարում իր պատմությունը եւ ապրում այն ոսկի երազներով, որ ահա իր հարազատ Հանրապետությունը, միացյալ անկախ Հայաստանի Կառավարությունն է գալիս եւ որ շուտով, շատ շուտով վերջ է դրվելու իր կրած բոլոր տառապանքներին:

Եւ մի ժողովրդից, որ այս վեհ հավատով է շնչում, ապրում, մի ժողովուրդ, որ արել է, զոհել ամեն ինչ իր անկախության ճանապարհին, իր փայփայանքների իրագործման հավատամքին, էլ ավելին պահանջելը անկարելի է: Այո, անկարելի է եւ բավական նրանից պահանջել, որ նա շարունակ դիրքերում մնա, կուրծք տա թշնամու գերազանց ուժերի դեմ, բավական է զանազան ծանրաբեռնումներով նրա հավատարմությունը, նրա բարձր հայրենասիրությունը շահագործել, նրան սին խոսքերով կերակրել: Եվ որպեսզի ավելի սուսկալի դրություն, քան բռնելիզմն էր, չգա, չհեղեղի նրա հավատամքը, հուսախաբության ծովը չնետի այն բոլոր լավագույն հատկանիշները, որ վտանգի թոպեին ցուցադրեց նա, պետք է վերջ տալ քաղաքական տատանումներին, պետք է լինել վճռական, պետք է ժողովրդին կենդանի գործ ցույց տալ, տաք խոսքի հետեւանքն ապացուցել:

Այս բոլորն ասելուց հետո՝ կարելուր եմ համարում կոնկրետացնելու իմ եւ ժողովրդի պահանջները:

1. Նախիջեւանը եւ Օրդուբադը այսօրվանից պիտի համարվի մեր ստրատեգիայի ալֆան եւ օմեգան:

2. Բուն Ջանգեզուրի գրավումը, կանոնավոր զորքերով մոտ օրերում:

3. Առանձին ուշադրություն Ջանգեզուրի վրա, նկատի առնելով նրա տնտեսական քայքայված, անզեն եւ հասարակայնորեն գլխատված վիճակը:

4. Հաշվեհարդար ժողովրդի հետ :

5. Նախաբոլշեիկական Ջանգեզուրի պաշտոնությունը եւ հրամանատարությունը ենթարկել դատի հանուն արդարության եւ Հանրապետության շահերի:

6. Վարձատրություն եւ պատիժ: Ավելի քան մի տարվա ընթացքում համայն Ջանգեզուրում տեղի չի ունեցել վարձատրություն եւ պատիժ ոչ մի դեպք: Վատերը անարգիչ շա-

րունակել են իրենց կործանարար դերը, իսկ լավերը մասսայնության մատնված, աստիճանաբար հուսալքվելով՝ քաշվել, հեռացել են ասպարեզից:

7. Ուժեղ հրամանատարություն եւ պաշտոնություն ապստամբ Ջանգեզուրում:

8. Ժողովրդական վաշտապետության դրության օրինականացումը:

9. Տաթեւը - ռեզիդենցիա (նստավայր-Ա.Հ.):

10. Ինձ արձակուրդ, վերականգնելու միանգամայն քայքայված առողջությունս:

Հարցերից ամենաւեականը դա Նախիջեւան-Օրդուբադի գրավումն է, որը պետք է Հանրապետությունը իրագործի մոտ օրերում, որպեսզի միանգամ ընդմիշտ վերջ դրված լինի տաճկա-ադրբեջանական անարգել հարձակումներին եւ ոտնձգություններին եւ հնարավորություն Ջանգեզուրը կապելու մայր երկրին:

Մնացած հարցերի դրական լուծումը ինձ եւ իմ խնամքին հանձնած շրջանների ժողովրդի համար, կրկնում եմ, նշանակություն կունենա այն ժամանակ, երբ ամենամեծ զոհաբերությամբ անգամ Հանրապետությունը անհապաղորեն կլուծի Նախիջեւան-Օրդուբադի խնդիրը, այլապես, ինչ էլ որ արվի, առանց առաջին հարցի լուծմանը, դրությունը մի նշանախեց անգամ չի փոխվելու:

Արևիք
1920թ. նոյեմբերի 3

Ընկերական բարևներով՝
Նժդեհ

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 19-20:

Թիվ 23

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

Ռ. Տեր-Մինասյանին

Սիրելի ընկեր Գևորգ

Դրոյի եւ Հեկկերի (XI զորաբանակի հրամանատար) կողմից ամսիս 3-ին Գորիս հասավ մի պատվիրակություն, բաղկացած 5 հոգուց, որոնցից 3-ը Դրոյի սպաներից, մի տաճկահայ եւ մի զանգեզուրցի: Չորսին ընդունեցի, իսկ հինգերորդին՝ ոչ: Ջանգեզուրցի կոմունիստը (Սամսոն Թյունիս -

Ա.Յ.) Ձանգեզուրում մի ժամ անգամ ազատ ապրելու իրավունքը չունի: Դրոյից բերել են նամակ, որից պարզվում է, որ Դրոն մեկնել է Մոսկվա մասնակցելու կայանալիք կոնֆերանսին: Այդ կոնֆերանսին մասնակցելու են Սովետական Հայաստանի, Ադրբեջանի, Տաճկաստանի (իմա՝ Քեմալի) եւ Ռուսաստանի ներկայացուցիչները: Կոնֆերանսը զբաղվելու է Սովետական Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանների որոշմամբ: Տաճիկները Սովետական Հայաստան չեն ճանաչում, պատճառաբանելով, որ այդ Հայաստանի 3/4-ը գտնվում է իրենց ձեռքին, իսկ Սյունիքը եւ Ղարաբաղը իրենց հայտարարել են անկախ-ինքնավար: Դրոն խնդրում է աջակցություն ցույց տալ սովետական ուժերին՝ Քեմալին քշելու Արեւելյան Հայաստանից: Բոլշեւիկներն իրենց շատ վատ են զգում: Նոտաների փոխանակումը Չիչերինի եւ Կարաբեքիրի միջեւ պարզորեն մատնում է Քեմալի բռնած դիրքը: Քեմալը թշնամի է Սովետական Ռուսաստանի համար: Փաստորեն Հայաստանի Յեղկոմը հանդիսանում է Երեւանի եւ մի քանի գյուղերի իշխանությունը եւ ոչ ավելի: «Воина между Турцией и Советскоу Россией и роль Нждеу в этоу воине» - (Թուրքիայի եւ Խորհրդային Ռուսաստանի միջեւ պատերազմը եւ Նժդեհի դերը այդ պատերազմում -Ա.Յ.) ահա սովետական հրամանատարությանը զբաղեցնող հարցը: Կարմիր հրամանատարությունը, հանձինս Յեկկերի, ձգտում է բարեկամանալու ինձ հետ: Կարմիր պարոնները այժմ չեն թաքցնում, որ Սովետական Ադրբեջան ասելով հասկացվում է միայն Բաքուն եւ մի փոքրիկ տարածություն այդ քաղաքի շուրջը: Մուսաֆաթն ավելի քան ակտիվ է դառել: Տեւական, մասնավոր բնույթ կրող ապստամբություններն անվերջ են Ադրբեջանում: Կասկածից դուրս է (խոստովանում են իրենք պատվիրակները), որ բոլշեւիկները իրենց շատ վատ են զգում: Շատ լավ կլիներ, եթե մի քանի օրով ընկ. Գերասիմի (Գերասիմ Աթաջանյան՝ Ղափանի զինուժի հրամանատար-Ա.Յ.) հետ անցնեիր Գորիս: Շատ կարելու հարցեր կան, որոնց այս կամ այն կերպ լուծումից կախված է Հայաստանի բաղդը:

Չուշանաս, մեկնիր անմիջապես: Սպասում են:

Գորիս
1921թ. փետրվարի 4
Յ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

Ջերմ բարևներով՝
քո Նժդեհ

Թիվ 24

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

Ռ. Տեր-Մինասյանին

Սիրելի ընկեր

Յենց նոր ստացա վերջին հեռախոսագիրը, որով հնքնավար Սյունիքի արեւմտյան ճակատի հակահետախուզության պետը տեղեկացնում է Երեւանի՝ մեր ապստամբ ուժերի կողմից, վերագրավման մասին: Յեռախոսագրի համաձայն դեպքն այսպես է տեղի ունեցել: Հայաստանում եղած ուժերը մեծամասնականները փոխադրել են վրացական ճակատները: Բաշ-Գառնիի շրջանը, օգտվելով առիթից, պարզել է ապստամբության դրոշակը եւ քշել հատուկոր կարմիրներին: Ապստամբության ակիքն անցել է մնացած շրջանների վրայով եւ Երեւանը ընկել է մեր ձեռքը: Յենց այս բուպեիս մեկնում են Վայոց Ձոր ստուգելու վերջին լուրերը: Չգիտեմ, ինչն է ես տատանվում եւ հապաղում: Լավ կլիներ, որ գայիր Գորիս: Ես կվերադառնամ տեղս ոչ շուտ քան մարտի 5-7-ը: Վերցրել ենք Արփայում 71.000.000 թուրքի չեկերով, 12.000 արշին մանուֆակտուրա եւ 100 փութ աղ:

Գորիս
1921թ. փետրվարի 26
Յ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

Ջերմ բարևներով՝
քո Նժդեհ

Թիվ 25

(Գ. Նժդեհի նամակը Սյունիքի կառավարության դիվանին)

Ինքնավար Սյունիքի կառավարության դիվանին

Դուք չորս ամսվա ընթացքում արել եք այն, ինչ որ չպետք է անեիք, իսկ այն՝ ինչ որ պահանջում էր մեր երկրի ֆիզիկական ինքնապաշտպանությունը եւ շահը, դուք՝ չեք արել:

1. Դուք իմ անունից հրամայել-սպառնացել եք Տաթևի գավառակապետին, եւ Տաթևի ու Շնհերի պահեստներում եղած հացահատիկը փոխադրել Գորիս ու Չեր գիտցած

ծելով սպառել-հալեցրել, չնայած իմ հրամանին՝ այդ պահեստներում եղածը թողնել անձեռնմխելի:

2. Դուք թույլ եք տվել պետական պարենավորման պահեստից որոշ քանակությամբ հացահատիկ բաց թողնելու այս կամ այն դիվանի անդամին եւ նման ընթացքով մեռցրել ժողովրդի հավատը դեպ Ձեր շիտակությունը:

3. Դուք հրամայել եք Ձեր գեներալ-կոմիսարին դիվանի անդամների համար էժան գնով հացահատիկ գնել ու փոխադրել Գորիս: Ավելորդ եմ համարում որակելու Ձեր այդ քայլը, որովհետեւ ժողովուրդն արդեն ասել է իր խոսքը:

4. Ձեր անդամներից մի քանիսն իրենց այս կամ այն պաշտոնական շրջագայությունների ժամանակ կատարած գնումներով վարկաբեկել են եւ իրենց երկրի կառավարությունը:

5. Դուք ամիսների ընթացքում Ձեր մեռելային գրասենյակամուկությամբ մեռցրել եք Ձեր բոլոր պաշտոնյաների մեջ նախաձեռնության ոգին: «Անտառային», «Ղատաստանական» եւ «սինոդային» օրենքներ եք մշակել (իմա՝ մի քիչ մեծամասնականներից, մի քիչ էլ՝ Նիկոլայ 2-րդից մնացած օրինագրքից թարգմանել եւ հրատարակել):

6. Այդ բոլորի հետ կարելի էր ժամանակավորապես հաշտվել, բայց Ձեր վերջին հակաժողովրդական ակտը լցրել է եւ ժողովրդի եւ իմ համբերության բաժակը: Դուք, չնայած իմ հազար անգամ Ձեզ ասածներին ու կրկնածներին, առանց խղճի խայթի, իմ բացակայության ժամանակ, չտեսնված ու չլսված տուրքեր եք նշանակում ժողովրդի վրա եւ հրամայում գավառապետներին՝ «շուտափույթ» կերպով պահանջված գումարները գանձել եւ մտցնել Սյունիքի գանձարանը:

Այդ բոլորը գալիս են համոզելու ինձ, որ եթե ոչ դիվանդ՝ ըստ էության, բայց նրա որոշ անդամները ձգտել են եւ ձգտում են ամեն կերպ որոշ դժգոհություն ստեղծել աշխատավոր գյուղացիության մեջ եւ այսպիսով արագացնել թըշնամու ներխուժումը մեր՝ մի անգամ կարմիր սրիկաների ձեռքով ավերված երկիրը: Դիվանիդ բոլոր հակաժողովրդական որոշումները կայացված են Ձեր անդամների մի մասի համառոտ ցանկության եւ մյուս մասի՝ անտարբերության շնորհիվ:

- «Պիտ կործանել Սյունիքը», - ասել է մի կողմը:
- «Թող լինի, ինչ լինելու է», - ասել է մյուս կողմը:

Այսպե՛ս եք կառավարել, առանց հասկանալու, որ դատապարտելի է ամեն ձեւի կառավարություն (լինի դա՝ միապետական, հանրապետական, թե ավազակապետական, ինչպիսին էր՝ խորհրդայինը), եթե դա ժողովրդից պահանջում է ավելին, քան՝ դա կարող է տալ, որը չի բարեհաճում ժողովրդի դրության մեջ մտնել:

Այսպե՛ս եք կառավարել, եւ նրա հավատը ջերմացնելու փոխարեն՝ բորբոքել եք նրա դժգոհությունը: Եթե այդ բոլորից հետո գուցե եւ գտնվի ձեզանից մեկը, որ առանց խղճի խայթի դեռ հայիոյի էլ մեր ժողովրդին՝ թե նա դժվարությամբ է տալիս կամ ոչինչ չի տալիս: Շատ, շատ է տվել, եւ տալիս է այդ նահատակ ժողովուրդը: Նա իր լավագույն զավակների սրբազան արյունն է տվել անկախ, ինքնավար երկիր ու կառավարություն ստեղծելու համար:

Են դուք եք, անբախտ Սյունիքի կառավարության դիվանը, որ բացի այն, որ ոչինչ չէ տվել, այլեւ՝ խլել է ժողովրդից նրա կուռ հավատն ու վստահությունը դեպի իր կառավարությունը: Թողնում են, որ դուք նախ *Ձեր խղճին հաշիվ տաք ու դատեք-դատապարտեք Ձեզ*:

Հանքեր	Լեռնային Հայաստանի սպարապետ՝
1921թ. ապրիլի 5	<i>Նժդեհ</i>
Դատական գործ, թ. 69-70:	

Թիվ 26
(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

Ռ. Տեր-Մինասյանին

Սիրելի ընկեր Ռուբեն

Եթե Վրաստանի անկումը ճիշտ է՝ ապա Հայաստանի ռազմական դրությունը պետք է վտանգված համարել: Կարմիրները Վրաստանը գրավելուց հետո կարող են Երեւանը վերցնել «в клещи», «в nepenлem» («Աքցանի մեջ», «մեղ դրության մեջ» - Ա.Հ.): Ես դեռ չեմ ուզում հավատալ կարմիրների վերջնական-ստրատեգիզական հաջողությանը Վրաստանում: Ըստ իմ ունեցած տեղեկությունների կարմիրները լոկալ հաջողություն ունեցել են Վրաստանում: Թե ինչպե՛ս,

ի՞նչ ուղղությամբ եւ ի՞նչ մաշտաբով են օգտագործել- գարգացրել այդ հաջողությունը՝ չգիտեմ: Ինչ որ է, լինեմ սեղմ:

Յապոնի (Արտաշես Պարոնյան - 1920թ. եղել է Բագարչայի պարետ, հակահետախուզության պետ: 1924թ. հուլիսին ձերբակալվել է Ջանգեզուրում և դատապարտվել գնդակահարության-Ա.Յ.) հաղորդագրությունները Գյուննուֆի եւ Ջաֆարլուի անկման մասին ինձ ենթադրել են տալիս երկու բան, այն է՝ կամ թշնամին նոր օժանդակ ուժեր է ստացել, որ այժմ այդ աստիճան ագրեսիվ է, կամ էլ ստեղծված ռազմագիտական мешок (պարկ-Ա.Յ.)-ից ազատվելու համար ձգտում է Ջղինով միանալ Նոր Բայազետին: Հրամանագրել են Յապոնին վերագրավելու այդ երկու գյուղերը եւ ապահովելու մեր կենդանի կապը Արարատյան Հայաստանի ռազմական ուժերի հետ: Այժմ չափազանց զգույշ պետք է լինել, թշնամին կարող է մեր Երեւանի ապստամբ ուժերին հավաքել мешок-ի մեջ եւ խեղդել:

Վատ չէր լինի, եթե մեր կուսակցական ուժերի մի խոշոր մասը առայժմ անցներ Դարալագյազ: Ո՞վ գիտե, անտեր մնա կռիվը, թե ինչ-ով կվերջանա Հայաստանի ապստամբությունը: Խոստովանում են, որ քո հեռախոսագիրը Վրաստանի կատաստրոֆայի մասին ինձ խելագարվելու աստիճան ջղայնացրել է: Վրաստանի անկումով Հայաստանի համար ստեղծվում է նույն սպառնական դրությունը, որը գոյություն ուներ տաճիկների առաջխաղացման օրերին, որը վերջացավ մեր պարտությամբ:

Խորապես խնդրում եմ ինձ լայնորեն ինֆորմե՝ անել Երեւանի եւ Վրաստանի դրության մասին:

Ձերն բարեւներով՝ քո *Նժդեհ*

P.S.

Ղարաբաղում ժողովրդի տրամադրությունն ընկած է: Ինձ անվերջ հաղորդագրում են Վրաստանի անկման մասին: Հայերն այլեւս չեն հավատում Ադրբեյջանի ապստամբությանը: Լեռնային Ղարաբաղում եղել են տեղեր, ուր թուրքերը հարձակվել են հայ գյուղերի վրա: Կարմիրները բաժանում են, որ տիրեն: Մերոնք թողել են Հաղորթը: Շուշիում եւ Կարեազիցում նոր ուժեր են երեւացել: Վազվում են շրջանե շրջան, ճակատե ճակատ: Հացի պակասությունը մեզ նեղել է:

Ղափանի հանքեր
1921թ. ապրիլի 11
Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Թիվ 27

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

Ռ. Տեր-Մինասյանին

Սիրելի Ռուբեն

Գալիս է Արտաշեսը (Յապոն-Ա.Յ.) մի շարք հարցերով, որոնց պատասխանը խնդրում են տալ եւ ճանապարհ դնել: Խնդրում են գրել նաեւ տեղիդ դրության եւ զորքերի տրամադրության մասին: Եթե Գենվազի համար պետք է ուժեր ուղարկեք՝ գիտցեք, որ ամենավստահելի տարրը պետք է լինի դա: Ցանկալի կլիներ ուղարկել տաճկահայերին կամ բաշգառնեցիներին: Ղարաբաղում դրությունը անփոփոխ է:

Սյունիքի ժողովուրդը հատ ու կենտ փախած եկածներից Երեւանի մասին գիտեն: Վատ է ազդել: Հացի պակասություն է:

Բարեւներով՝ *Նժդեհ*

Գորիս
1921թ. ապրիլի 14
Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Թիվ 28

(Գ. Նժդեհի նամակը Ա. Վրացյանին)

Սիմոն Վրացյանին

Սիրելի ընկեր Սիմոն

Ինչո՞վ վերջացավ Ձեր այսօրվա ժողովը: Ի՞նչ որոշում կայացվեց Արարատյան ռազմական ուժերի եւ սպարապետության մասին:

Խնդրում են երկխոսքով հայտնել ինձ, որ, հիմք ունենալով Ձեր որոշումները, անցնեմ գործի:

Բարեւներով՝ *Նժդեհ*

Տաթև
1921թ. ապրիլի 21
Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ: ՍՎ. 5-5:

Թիվ 29

(Գ. Նժդեհի նամակը Մուքազիր խան Սահրադին)

Պարսից Մուքազիր խան Սահրադին

Տաճկական միսիայի հետ բանակցելու նպատակով Թավրիզ է անցնում Ս.Վրացյանը երկու ընկերներով: Խնդրում են Ձեր լայն աջակցությունը՝ վերջիններիս ապահով տեղ հասնելու:

Գորիս 1921թ. ապրիլի 22
Ղեկնահայաստանի սպարապետ *Նժդեհ*
Յ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Թիվ 30

(Գ. Նժդեհի նամակը Լեռնահայաստանի իշխանություններին)

Լեռնահայաստանի բոլոր իշխանություններին

Կարելոր գործով Գենվազ են անցնում Հայաստանի Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանը, Հովհաննես Քաջագունին, Հանո Օհանջանյանը եւ ուրիշները:

Հրամայում են ցույց տալ նրանց ամենապարտ ու պատշաճ աջակցություն:

Գորիս 1921թ. ապրիլի 22
Սպարապետ *Նժդեհ*
Յ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ: ՍՎ 10-45:

Թիվ 31

(Գ.Նժդեհի նամակը Ամիր Արշադին)

Ամիր Արշադին

Սիրելի բարեկամ Ամիր Արշադ

Շատ կարելոր գործով տեղդ են գալիս Հայաստանի Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ պ-ն Ս.Վրաց-

յանը, 5 ընկերներով: Խնդրում են Ձեր լայն աջակցությունը սրանց իրենց միսսիան հաջողությամբ կատարելու համար:

Գորիս 1921թ. ապրիլի 22
Միշտ ձեր բարեկամը՝ Սպարապետ *Նժդեհ*
Յ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ: ՍՎ. 5-8:

Թիվ 32

(Գ.Նժդեհի նամակը Ն.Մելիք-Թանգյանին)

Արքեպիսկոպոս Ն.Մելիք-Թանգյանին

Սիրելի Սրբազան

Խնդրում են վալեաթին եւ միսսիաներին ուղղած գրությունները անձամբ (մեր ընկերներից մեկի հետ՝ Քաջագունին, Վրացյան, Շանթ) ներկայացնել իրենց: Հիվանդանալու չափ մտահոգված են հայ ինտելիգենցիայի ողբերգական վիճակով: Անիծվի աշխարհը:

Տաթև 1921թ. ապրիլի 26
Ձերն բարևներով *Ձեր Նժդեհ*
Յ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ: Ս.Վ. 5-12:

Թիվ 33

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Սիմասյանին)

Սիրելի ընկեր Ռուբեն

Մեր մտավորականությունը սրից եւ սովից փրկելու մտահոգությունն ինձ հիվանդացնելու չափ լարել է: Գրիր, տեսնենք, ով անցավ, ով մնաց: Տաճկահայ ուժերը մի մեծ չարիք են, որն որքան շուտ հեռանա Լեռնահայաստանից՝ այնքան լավ է մեզ համար: Նրանց ալան թալանը, գյուղերում թույլ տված բաշխողությունները զգվանքով ու թշնամանքով են լցրել Լեռնահայաստանցիներիս:

Տաթև 1921թ. ապրիլի 26
Ձերն բարևներով *քո Նժդեհ*
Յ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Թիվ 34

(Գ.Նժդեհի նամակը Ռ.Տեր-Մինասյանին)

Ռ.Տեր-Մինասյանին

Սիրելի Ռուբեն

Էլի կրկնում եմ՝ Ամիր Արշաղի մոտ մարդ ուղարկեք եւ հասկացրեք, որ «Թորփաղ փուլի» կոչված խայտառակութունը միանգամայն անտեղին է եւ անարդար: Պարսկաստան անցնողները ոչ առեւտրականներ են, ոչ էլ սովորական ճամբորդներ: Ապստամբներ, որոնք կռվել են ընդհանուր թշնամու դեմ, այսօր հացի պակասության պատճառով անցնում են Պարսկաստան: Հասկացնել տվեք, որ Թորփաղ փուլին մի մեծ վիրավորանք է, որը Պարսկաստանը հասցնում է ինձ, իր երկրի հյուսիսը ամբողջ մի տարի պաշտպանողին: Թորփաղ փուլին դժվարացնում է գաղթականների անցը Պարսկաստան եւ խորացնում-սրում Լեռնահայաստանի պարենավորման ճգնաժամը: Հազար ու մի միջոցի դիմեք արագացնելու անցը: Մշեցիներից ֆալաշիներ գտիր եւ կազմակերպիր անցի գործը: Գործի դրեք լաստանավը: Գրեք եպիսկոպոսին (Ն.Մելիք-Թանգյանին-Ա.Յ.), որ միջամտի անցի համար:

Սեղմ՝ անկարելին կարելի դարձրեք, որ օր առաջ ազատվենք գաղթականությունից:

Բարեւ՝ Նժդեհ

1921թ. ապրիլի վերջ
Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Թիվ 35

(Գ.Նժդեհի նամակը Ա.Վրացյանին)

Սիրելի Սիմեոն

Դու գիտես ինձ: Ես ուխտած եմ, ես դատապարտված եմ հանուն մեծ գաղափարի, Հայ Հայրենիքի տղամարդավարի մեռնելու իմ սիրած Լեռնահայաստանում: Խնդրում եմ լայն նյութական ու քաղաքական աջակցությամբ հնարավորություն տալ ինձ երկար կռվելու եւ լավ մեռնելու:

Սեղրի
1921թ. մայիսի 3
Դատական գործ, ք. 96:

*Ջերմ բարեւներով՝
քո Նժդեհ*



Ա.Վրացյան




Արշ. Հովհաննիսյան



Հ.Տեր-Հակոբյան



Ա.Աստվածատրյան



Հ.Քաջազնունի



Ն.Աղբալյան



Գ.Տեղ-Մինասյան



Ա.Մեղք-Մուսյան



Վ.Խորենի



Գ.Բալայան



Ս.Մեղք -Յուլյան



Պ.Տեղ-Դավթյան



Ռուբեն



Յապոն



Դրո



Կուռո

Թիվ 36

(Գ. Նժդեհի նամակը Ա. Վրացյանին)

Սիմոն Վրացյանին

Սիրելի Սիմոն

Դու գիտես ինձ: Ես ուխտած եմ, ես դատապարտված եմ հանուն մեծ գաղափարի, Հայ Հայրենիքի՝ տղամարդավարի մեռնելու իմ սիրած Լեռնահայաստանում: Խնդրում եմ լայն նյութական ու քաղաքական աջակցությամբ հնարավորություն տալ ինձ երկար կռվելու եւ լավ մեռնելու:

Մեղրի
1921թ. մայիսի 3
Դատական գործ, ք. 96:

Ձերն բարեւներով՝ քո *Նժդեհ*

Թիվ 37

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Սինասյանին)

Ռ. Տեր-Սինասյանին

Տաճկահայ զորամասի արած վերջին խայտառակությունը, այն է՝ մի ամբողջ խմբակի թշնամու կողմն անցնելը կիսով չափ կոտրել է եւ իմ, եւ Լեռնահայաստանի մեջքը: Այն, որ դու քիչ կարելություն ես տալիս այդ անչափելի դավաճանությանը՝ ինձ կատաղեցնում է:

Գիտեմ, խեղդվողը իրեն հետ դեպ անդունդն է քաշում եւ իրեն օգնության ձեռք մեկնողին, բայց չէ որ այդպիսով ինքը չէ փրկվում:

Ես մեկնում եմ Գորիս: Ցտեսություն:

Մեղրի
1921թ. մայիսի 13
Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Բարեւներով՝ *Նժդեհ*

Թիվ 38

(Գ. Նժդեհի նամակը Ռ. Տեր-Սինասյանին)

Սիրելի Ռուբեն

Տաճկահայ զորամասի կատարած վերջին խայտառակությունը, այն է՝ մի ամբողջ խմբակի թշնամու կողմն անց-

նելը՝ կիսով չափ կոտրել է եւ իմ եւ Լեռնահայաստանի մեջքը: Այն, որ դու քիչ կարեւորություն ես տալիս այդ անցափեշի դավաճանությանը՝ ինձ կատաղեցնում է:

Գիտեմ, խեղդվողն իրեն հետ դեպ անդունդը քաշում է եւ իրեն օգնության ձեռք մեկնողին, բայց չէ որ՝ այդպիսով ինքը չէ փրկվում: Ես մեկնում եմ Գորիս: Ցտեսություն:

Մեղրի
1921թ. մայիսի 13
Յ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Բարեւներով՝ *Նժդեհ*

ԹԻՎ 39

(Գ. Նժդեհի նամակը Յ.Յ.Դ. Ատրպատականի կենտրոնին)

Յ.Յ.Դ. Ատրպատականի կենտրոնական կոմիտեին

Սիրելի ընկերներ

Գալիս է ընկեր Յամոն (Յամո Օհանջանյան-Յ. Ա.), որը Ձեզ տեղեկատվություն կանե Լեռնահայաստանի, Արարատյան Ղայաստանի եւ Ռուսաստանի դրության մասին: Բոլոր դրություններից, որքան էլ որ նրանք հուսահատական լինեն, ըստ իս, *վճռական եւ ուժեղ ցանկության դեպքում* միշտ էլ կարելի է պատվով դուրս գալ:

Մենք եւ մեր կուսակցությունը փրկեցինք մեր մեր ցեղի մտավորականությունը կարմիր կացինից: Դա ինքնին մի *մեծ, պատմական* ծառայություն է: Եթե երեւանյան ապստամբությունը տարերային բնույթ չունենար, եթե դա առաջացրած ու վարած լիներ միայն եւ միմիայն մեր կուսակցությունը՝ գուցե եւ աղետը տեղի չունենար: Ինչ որ է. փաստը կատարված է: Երեւանն ընկած:

Լարինք մեր բովանդակ ուժերը, ջրցեղենք մեր թուլացած կամքն ու ցանկությունը եւ պատրաստվենք Ռուսաստանն ու Անդրկովկասը ցցնող ժողովուրդների հետ ընդհանուր գրոհի:

Յամքեր
1921թ. մայիսի 15
Դատական գործ, էջ 93:

Դաշնակցական ջերմ բարեւներով՝
Նժդեհ

ԹԻՎ 40

(Գ. Նժդեհի նամակը Ս. Վրացյանին)

ՅՅ Կառավարության նախագահ Ս.Վրացյանին

Կառավարությունը, ծանոթանալով Ձեր՝ սպարապետին ուղղած նամակի բովանդակությանը, անհրաժեշտ կնկատե հայտնելու Ձեզ, որ նա եւս կարեւոր կդատե մի լեզու գտնել Ղայ եւ Թուրք վեճի շուրջ գոնե ժամանակավորապես մի հասկացողության գալու համար:

Մեր կառավարությունը այն կարծիքին է, որ երկուստեք պետք է համանման զիջումներ լինեն. մի կողմից Ղարաբաղի նկատմամբ, մյուս կողմից Շարուր-Նախիջեւանի, առաջինը, որոշ պայմաններով, ենթարկելով Ազրբեյջանին, երկրորդը՝ Ղայաստանին:

Կարեւոր նկատելով թուրք ներկայացուցիչների հետ վարվելիք բանակցությունները, Լեռնահայաստանի կառավարությունը այդ բանակցությանց մասնակցելու համար իր կողմից պաշտոնական ներկայացուցիչ է նշանակում արդարադատության եւ լուսավորության նախարար ընկեր Յովհաննես Տեւեճյանին, որը լինելու է մեր կառավարության տեսակետների արտահայտողը եւ միաժամանակ Ղայաստանի Ղանրապետության կառավարության եւ Լեռնահայաստանի կառավարության միջեւ գոյություն ունեցող մի շարք խնդիրների մասին աշխատելու է գալ որոշ հասկացողության:

Գորիս
1921թ. մայիս 20
Յ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ: Ս.Վ. 5-9:

Լեռնահայաստանի նախարարապետ
Նժդեհ

ԹԻՎ 41

(Գ. Նժդեհի նամակը Ս. Վրացյանին)

Թավրիզ

Ղարգելի ընկեր Սիմոն Վրացյան

Այսու անհրաժեշտ ենք գտնում սոսկ իբրեւ ընկերոջ հաղորդակից անել Ձեզ այն խնդրին, որ այսպես, թե այնպես՝ զբաղեցնում է մեզ եւ կարող է դժվարությունների եւ թյուրիմացությանց դուռ բանալ: Ապրիլ 27-ին Տաթեւում ընտրվեց

Լեռնահայաստանի կառավարությունը, որին հանձնվեցին թե երեւանի գործառնաւերը եւ թե Յայաստանի Յանրապետութեան փոքրաթիվ գույքը եւ դրամական արժեքների մի փոքր մասը: Լեռնահայաստանի կառավարության համար, այսպիսով, բարոյական եւ շոշափելի պատճառներ ստեղծվեցին դառնալ փաստական եւ իրավական ժառանգորդը Յայաստանի Յանրապետության կառավարության, գործնականում կատարելով նրա բոլոր իրավասությունները:

Այժմ, ուրեմն, Գորիսում գործում է մի կառավարություն, որի տրամադրության տակ են մեր երկրի բոլոր հնարավոր իրական ուժերը: Այդ կառավարությունը ունենալու է իհարկե իր արտահայտությունը՝ ինչպես երկրում, նույնպես եւ՝ արտասահմանում:

Այդ կառավարության հետ գրեթե միաժամանակ նշանակվել է ձեր կողմից Յայաստանի կառավարությունը, որի անդամներից մի մասը գտնվում է երկրում, իսկ մյուս մասը՝ արդեն անցել է Պարսկաստան: Շնորհիվ այն հանգամանքին, որ ձեր կառավարությունը ներկայացնում է իբրեւ Յայաստանի կառավարություն, երեւանյան գործառնաւերը եւ մանավանդ իրանց ղեկավարները՝ միշտ իրանց ակնարկն ուղղում էին դեպի այդ կառավարությունը եւ բարոյապես թեքվում դեպի նա, եւ այն՝ ինչ պետք է սպասեին Լեռնահայաստանի կառավարությունից՝ կարծեք կապում են ձեր կազմի հետ եւ իրանց մեջ ստեղծվում է արտաերկրային հոգեբանություն: Տաճկահայ գործառնաւերն արդեն գրեթե ամբողջությամբ զինաթափ եղան ինքնական կերպով՝ չուզելով մասնակցել ոչ մի զինվորական գործողության: Այդ գորքերի հոգեկան վիճակի նկատմամբ ասում են պատասխանատուին, նույնիսկ այնպիսի անձինք, որոնցից ոմանք անդամ են ձեր կառավարության, ինչ որ ասկե հետո՝ անհասկանալի պետք է լինի:

Մեզ դեռեւս հայտնի չէ, թե դուք արտասահմանում ինչ անուևով եք գործում, բայց այսու հարկ ենք համարում անդրադառնալ այդ խնդրին եւ հասկացողության գալ՝ տեղի չտալու համար ավելորդ եւ վտանգավոր թյուրիմացությանց եւ չղնելու համար արտաքին աշխարհը Յայաստանի անուևով խոսող երկու կառավարության առաջ՝ եթե չհաշվենք մեծամասնականներին:

Արտասահմանյան հայ թե օտար շրջանակները մինչ այժմ երկու Յայաստանի միայն ծանոթ են, ավելի ճիշտ՝ երկու տեսակի կառավարության՝ *ազգային-դաշնակցական իշխանության եւ խորհրդային*: Յայաստանը դարձել է այդ երկու ճակատամարտ ուժերի թատերաբեմ եւ երկիրը բաժանվել է այժմ երկուքի միջեւ, որոնք շարունակում են պայքարը: Այդ կռիվը վարում են երկու կառավարությունները, որոնք գտնվում են Յայաստանի հողամասում, մին՝ Լեռնավայրում, մյուսը՝ դաշտավայրում:

Այժմ, արտասահմանի համար բոլորովին անհասկանալի պիտի լինի, եթե իմանա, որ մեծամասնական կառավարությանը հակընդդեմ կա երկու կառավարություն, ստեղծված միեւնույն նպատակի համար՝ ինչ որ անհեթեթ է, մանավանդ, որ կուսակցական խտրությամբ էլ բաժանված չեն վերջիններս:

Այդ պարագան կարող է գաղութներում հակառակորդ տարրերի կողմից չարամիտ մեկնաբանությունների դուռ բանալ եւ պղտորել ժողովրդական զանգվածներին:

Մենք՝ *իբր ընկերներ*, այնպես ենք կարծում, որ լավ կլիներ արտաքին աշխարհի առաջ ներկայանալ միայն մի անուևով եւ իբրեւ մի կառավարություն կատարել ամեն դիմում: Այդ իրականացնելու համար մենք գտնում ենք երկու ելք.

1. Այն, որ դուք լինեք մեր կառավարության լիազոր ներկայացուցիչը Պարսկաստանում կամ այլուր, արտաքին աշխարհի ու մեր գաղութների հետ կապվելու եւ հարաբերություն պահպանելու համար: Այդ դեպքում մեր կառավարությունը կարող է անվանվել՝ եթե պետք լինի, Յայաստանի կառավարություն՝ փոխանակ Լեռնահայաստանի:

2. Առաջինը հարմար չնկատվելու դեպքում, այն ատեն, մեր կարծիքով զոնե անհրաժեշտ է, որ դուք ներկայանաք ոչ թե իբրեւ «Յայաստանի Յանրապետության նախարարապետի», այլ իբրեւ «Փրկության կոմիտեի նախագահի»: Կարելու ենք գտնում հայտնելու ձեզ, որ փրկության կոմիտեի լուծումն ու նոր կառավարության ընտրությունը չի եղել փրկության կոմիտեի անդամների գոնե պարզ մեծամասնության գիտությամբ եւ մասնակցությամբ: Այս մեր նամակով շոշափած խնդրի եւ այլ հարցերի շուրջ խորհրդակցելու համար

ամսիս վերջին Գորիս են հրավիրվել Հայաստանի Հանրապետության կառավարության՝ երկրում գտնվող անդամները:

Փափագելով այս մասին ունենալ ձեր կարծիքը՝ ցանկալի կլիներ, ինչքան հնար է շուտ՝ պատասխանեցեք մեր նամակին, ձեր կողմից ցույց տալով հարցը լուծելու համար նպատակահարմար որեւէ ձեւ:

Գորիս Ընկերական բարեւներով՝
1921թ. մայիսի 20 Զորավար *Նժդեհ*, Ա. Մելիք-Եղլջան,
Յովհաննես Տեւեճյան, Սմբատ Եղիազարյան

Դատական գործ, ք. 96-98:

ԹԻՎ 42

(Գ. Նժդեհի նամակը Ա. Վրացյանին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության
նախագահ պ. Ա. Վրացյանին*

Հարգելի ընկեր Ա. Վրացյան

Լեռնահայաստանի կառավարությունը եւ սպարապետությունը այսու անհրաժեշտ է նկատում վճռապես հայտնելու Ձեզ հետեւյալը.

Երեւանի զորամասերը, որ Ձեր կառավարության կողմից դրվել էին մեր զորահրամանատարության տրամադրության տակ, իրանց ղեկավարներով միասին դարձել են մի գործիք քայքայման եւ դասալքության:

Այն շրջաններում, ուր նրանք գտնվում են՝ տիրում է կազմակերպված թալանն ու սադրանքը: Ձորամասի մեջ բացարձակապես բացակայում է կարգապահության ու կռվի տրամադրությունը, ընդհակառակը, օրեցօր տարածվում է դասալիքի հոգեբանությունը՝ շնորհիվ Կուռոյի եւ այլոց ընթացքին: Վերջինս մինչեւ այսօր չի կատարել իմ՝ քանիցս կրկնած հրամաններս եւ այդ բոլորը այսպես թե այնպես կապվում է Ձեր կառավարության հետ:

Այսու հայտնում ենք Ձեզ, որ Ձեր նախարարությունը կան պետք է գա իր զորքի մոտ եւ տեր լինի նրան ու աշխատի օգտագործել, կան գրավոր կերպով հայտնի մեզ,

թե նա հրաժարվում է այդ զորքի հետ որեւէ կապ ունենալու եւ չի հետաքրքրվում նրա ճակատագրով:

Այս բոլորը տանում է դեպի Լեռնահայաստանի կործանումը, որի ամբողջ պատասխանատվությունն ընկնելու է Հայաստանի Հանրապետության կառավարության եւ երեւանյան զորամասի հրամանատարության վրա:

Սպասում են Ձեր շուտափույթ պատասխանին:

Թավրիզ Լեռնահայաստանի վարչապետ՝
1921թ. մայիսի 21 Զորավար *Նժդեհ*
Դատական գործ, ք. 99-100:

ԹԻՎ 43

(Գ. Նժդեհի նամակը Ա. Յովհաննիսյանին)

*ՀՀ կառավարության փոխվարչապետ
Արշակ Յովհաննիսյանին*

Արեւմտյան ճակատում տեղի ունեցող վերջին դեպքերն ինքնապատճառ չեն. նրանք հարազատ ծնունդ են այն պարտվողական քաղաքականության եւ մարտավարության, որոնցից դժվարանում են հրաժարվել երեւանյան զորամասի ղեկավարները եւ կառավարության անդամներից շատերը: Օրեր առաջ, երեւանյան աղետից հետո միակ չարիքը համարվում էր արեւմտահայ զորամասը, սակայն այսօր ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ պակաս չարիք չեն եւ ուրիշները՝ շնորհիվ իրենց ղեկավարների: Ձինվորը զորամասում միշտ լավ է, մարտունակ, հաղթական, եթե այդպիսին է՝ նրա հրամանատարությունը: Ես շատ բան չեմ պահանջել այդ զորամասից, եթե Լեռնահայաստանի զորքերի եւ ժողովրդի կողմից ցույց տված օժանդակության փոխարեն նրանք ամեն կերպ չաշխատեն թուլացնել մեր ճակատները եւ քայքայել մեր թիկունքը: Ես բացի շնորհակալությունից՝ ոչինչ չեի ունենա հայտնելու այդ զորամասին եւ նրա հրամանատարությանը: Արեւմտյան ճակատում կանգնած զորամասերը պետք է գիտենան, որ Լեռնահայաստանի ժողովուրդը 7000-ի

չափ գաղթականություն է կերակրում՝ ինքը քաղցած լինելով հանդերձ:

Նույն զորամասը պետք է խորապես գիտակցի ու գնահատի Ղափանի, Գենվազի եւ այլ շրջանների ժողովրդական վաշտերի այն ջերմ ու գաղափարական վերաբերմունքը, որի շնորհիվ միմիայն սովից եւ սրից փրկվեց հայ մտավորականությունը: Թող գիտենան եւ այն, որ հայ ժողովուրդը եւ պատմությունը անեծքով պիտի խոսեն այն զորամասերի եւ ղեկավարների մասին, որոնց մի մասը նամարդորեն կոխկրտելով Լեռնահայաստանի ժողովրդին՝ անցավ Պարսկաստան, մյուս մասը՝ սպառնում է արագացնել հայ ժողովրդի սեւ օրվա հայրենիք Լեռնահայաստանի անկումը:

Շինել չէ՞ս կարող՝ գոմե մի՛ քանդիր - ահա՛ իմ պահանջն երեւանյան զորամասից եւ նրա ղեկավարներից: Ցանկության դեպքում՝ այդպես վարվել կարելի է: Այդ ուղղությամբ է, որ պետք է աշխատի Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

1921թ. մայիսի 21
Դատական գործ, ք. 100-101:

Հարգանք՝ Ջորավար *Նժդեհ*

Թիվ 44

(Գ. Նժդեհի նամակը Ս. Վրացյանին)

ՀՀ կառավարության վարչապետ Ս. Վրացյանին

Լեռնահայաստանը ինձ համար եղել է ու կմնա ինքնապատակ եւ Հայաստան ասելով ես հասկացել եմ նախ եւ առաջ մեծ Սյունիքը եւ հենց սրանով պետք է բացատրել իմ որոշումը, ինչ գնով էլ որ լինի, ձեռքից չտալ այս երկիրը:

Ես կուզեի, որ իմ բոլոր ընկերները բաժանեին իմ կարծիքը եւ Լեռնահայաստանի ինքնապաշտպանության գործում առաջնորդվեին իմ տեսակետով: Առանց Մեծ Սյունիքի Միացյալ եւ Անկախ Հայաստան լինել չի կարող: Ահա այն մեծ ճշմարտությունը, որի մոռացումով մենք կկորցնենք ամեն ինչ:

Առաջարկում եմ.

1. Ամեն կերպ աշխատել մեր ապստամբական շարժումը վերածել համաանդրկովկասյան շարժման, նոր ռազմաքաղաքական բազաներ ստեղծելով Ադրբեջանում եւ Վրաստանում:

2. Չբավականանալ Եւրոպայում ստեղծված կոմիտեով («Պրոմեթևս» կոմիտե- Ա.Հ.) եւ ամենակարճ ժամանակամիջոցում հայերից, թուրքերից եւ վրացիներից խառն կոմիտեներ ստեղծել նաեւ Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում: Այդ առթիվ հրահանգել մեր դիվանագիտական ներկայացուցչությանը:

3. Ոչ մի միջոց չխնայել ռազմամթերք ներմուծելու Հայաստան (Լեռնահայաստան):

ՀՀ Ջինվորական նախարար Սպարապետ՝

Ղափանի հանքեր

Ջորավար՝ *Նժդեհ*

1921թ. հունիսի 17

Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Թիվ 45

(Գ. Նժդեհի նամակը ՀՀ Մինիստրների խորհրդին)

ՀՀ Մինիստրների խորհրդին

Պատճենը՝ վարչապետ Վրացյանին

Այժմ, կուզեմ երկու խոսք ասել ստեղծված կացությունից դուրս գալու միջոցների մասին: *Չկա մի դրություն, որից վճռականության դեպքում՝ որքան էլ որ նա օրհասական լինի, կարելի չլինե՞ր պատվով դուրս գալ:* Ուրեմն, նախ պետք է վճռականորեն մեր դիմադրական կռիվը շարունակել մինչեւ վերջին հնարավորությունը, մինչեւ՝ վերջին զինվորն ու փամփուշտը:

Չպետք է ստեղծել այնպիսի մի հոգեբանական մթնոլորտ, որը հնարավորություն տար մեր կուսակցությանը, զորքին, հասարակական ու քաղաքական ուժերի գլուխն անցած ղեկավարներին, առանց ջղայնության, խուճապի ու կորստաբեր հարայիրոցի սառնասրտորեն շարունակելու իրենց տրված գործը:

Երեք օրվա ընթացքում, ուժերի այդ աստիճան լարուծով, պետք է աշխատել 24 ժամ, ու հավատը, որ ինչ էլ լինի,

հաղթելու ենք մենք, հաղթելու ենք, բարոյապես անգամ, անգամ՝ վերջնական ռազմական պարտության դեպքում:

Հանքեր ՀՀ զինվորական նախարար
1921թ. հունիսի 26 Սպարապետ Ջորավար *Նժդեհ*
Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, ՍՎ 516:

Թիվ 46

(Գ. Նժդեհի նամակը ՀՀ Մինիստրական խորհրդին)

*ՀՀ Մինիստրական խորհրդին
Պատճենը վարչապետ Ս.Վրացյանին*

Իմ 707 գրությամբ ես ցանկացել եմ տալ Ձեզ ստեղծված դրության իրականության մոտ պատկերը: Այժմ կուզեի երկու խոսք ասել ստեղծված կացությունից դուրս գալու միջոցների մասին:

Չկա մի դրություն, որից, վճռականության դեպքում, որքան էլ որ նա կրիտիկական լինի, կարելի չլինեի պատվով դուրս գալ: Ուրեմն, նախ պետք է վճռականություն մեր դիմադրական կռիվը շարունակել մինչև վերջին հնարավորություն, մինչև վերջին զինվորն ու փամփուշտը:

Երկրորդը՝ պետք է ստեղծել այնպիսի մի հոգեբանական մթնոլորտ, որը հնարավորություն տար մեր կառավարությանը, զորքին, հասարակական ու քաղաքական ուժերի գլուխն անցած ղեկավարներին, առանց ջղայնության, խուճապի ու կորստաբեր հարայիրոցի անձնվերորեն շարունակելու իրանց տրված գործը:

Երրորդը՝ օրվա ընթացքում, ուժերի ծայրաստիճան լարումով, պետք է աշխատել 24 ժամ ու հավատալ, որ, ինչ էլ լինի, հաղթելու ենք մենք, հաղթելու ենք էթիկապես անգամ, անգամ վերջնական ռազմական պարտության դեպքում:

Ղափանի Հանքեր ՀՀ Ջինվորական նախարար Սպարապետ՝
1921թ. հունիս 26 Ջորավար՝ *Նժդեհ*
Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ:

Թիվ 47

(Գ. Նժդեհի նամակը Ս. Վրացյանին)

*Հայաստանի վարչապետ Սիմոն Վրացյանին
Սիրելի ընկեր*

Մինչևի հոգուս խորքը խոցված եմ, վիրավորված երեւանյան զորքերի եւ հրամանատարության կատարած անլուր դավաճանությունից:

Ես Լեոնիդայան կիրճեր, հրաշագործություններ չեմ սպասում երեւանյան զորամասերից, որովհետեւ քաջ ծանոթ էի նրա *հրամանատարների 90%-ի պարտվողական հոգեբանության* հետ, բայց չէի սպասում նաեւ, որ այդպես անաստվածորեն կապտակեն իմ հպարտությունը, առանց դանակի կնորթեն իմ հավատը:

Սեւ լինեի այդ օրը, երբ այդ թունավորված զորամասերը հայտարարվեցին Դավիթբեգյան ժողովրդական բանակի շարքերում: 3000-ի հասնող զորամասը Վայոց Ձորի մեր հաջողությունից հետո, բացառությամբ Խնկոյի եւ Մուկուչի հեծյալ խմբերի, մի մարդու պես թշնամու խաշնարածների հարձակումներից ահաբեկված, անցնում է կարմիրների կողմը: Կուռոն, որին հրամայված էր անցնել մնալ Վայոց Ձորում եւ արթուն հսկել ու սատարել, ամենակարճ ժամանակում կազմակերպել ժողովրդական վաշտեր եւ ուժեղ վարչակազմ, չգիտեմ ինչո՞ւ, վերադառնում է Բազարչայ, եւ Արշակ Յովհաննիսյանին վերջնագրի ձեւով չորս օր ժամանակ տալիս՝ ընդունելու իր հրաժարականը: Արշակը չի ընդունում հրաժարականը՝ պատճառաբանելով, որ այդ առթիվ պետք է դիմել զինվորական նախարար-սպարապետին: Կուռոն մնում է Բազարչայում, իսկ Յովհաննիսյանը գալիս է Գորիս՝ գեկուցելու իրերի դրության մասին: Ընդամենը մի օր անց, Կուռոն հաղորդագրում է ինձ, թե թշնամին գործողություններ է սկսել: Հրամայում եմ ամրանալ եւ ինքնապաշտպանվել: Երկրորդ օրը կատարվում է անլուր խայտառակությունը: Պատճառները մեկից, երկուսից ավելի են: Չգիտեմ, Ձեր Կուռոն, առանց իմ թույլտվության, գերված մի քանի հարյուր հոգու (խորհրդային զորքից-Հ. Ա.) զինում է եւ խառնում իր զորքերին, որոնք կռվի ժամանակ անցնում են թշնամու կողմը եւ իր հետ քաշում հազարավորների:

Ձորքը եղել է անդեկավար եւ առանց հսկողության ու հեշտությամբ բարոյալքվել է, ենթարկվել այդ աղետին: Այսօր, Երեւանի հեծելախումբն ինքնագլուխ թողնում գալիս է Ղուշչի-Բիլագ եւ մերկացնում Գնդեվազի աջ թելը: Սիսիանի զորամասը, թողնելով Խաչիկը, ամրանում է հարավային Դարալագյազում, մինչեւ որ Նախիջեւանն ու Սինքենդը երկու կողմից սկսում են իրենց հարձակումը Սիսիանի վրա եւ աղետի չորրորդ օրը ստիպում կառավարությանը՝ հրահանգելու սիսիանցիներին քաշվելու եւ ամրանալու Սիսիանի սահմաններում: Այժմ կռիվը Սիսիանի վրա է: Ժողովուրդը պաշտպանվում է հերոսաբար: Ջգացվում է եռագծանի փամփուշտի կարիք:

Ամեն կերպ աշխատեք գոնե հարյուր հազար հատ հասցնել ամենակարճ ժամանակամիջոցում:

Հանքեր
1921թ. հունիս

Բարեւներով՝
Ձորավար Նժդեհ

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, ՍՎ 5-17:

ԹԻՎ 48

(Գ. Նժդեհի նամակը Ս. Վրացյանին)

*ՀՀ կառավարության վարչապետ Ս. Վրացյանին եւ
Հ.Յ.Դ. Գերագույն կոմիտեին*

Ստացա Ձեր երկտողը: Չգարմացա: Այսպես է աշխարհը: Գիտեմ եւ չեմ ցավում, որ շուտով, շատ շուտով գուցե *մնամ մենակ՝ իմ մի քանի հին զինակիցներով*: Թո՛ղ այդպես լինի: Ինձ նմանների ճակատագիրն է՝ *լինել մենակ*: Ինչպիսի *ապերախտություն*:

Դեռ երեկ՝ իմ երկրի հերոսական ազատամարտով էր հիանում եւ հպարտանում համայն հայությունն եւ ծափ տալիս ամեն մի հաջողության առթիվ:

Դեռ երեկ՝ մեր հարեւան ազգերն, անգամ՝ բազմիցս ծեծված ու քարոզված թշնամին, կարմիր Մոսկվան, թե սեւ Բաքուն, ռուսը, թե թաթարը՝ դառնությանը խոստովանում էին, որ իմ վարած կռիվն էլ հերոսական է, եւ՛ զարմանք չարժող:

Դեռ երեկ՝ եւ՛ Հայաստանի կառավարությունն, եւ՛ Հ.Յ.Դ. Բյուրոն սրբազան ու հերոսական էին անվանում իմ դիմադրական պայքարը Հայաստանի անկախությանը, նրա աշխատավորությանը սպառնացող բոլշևիզմի դեմ:

Իսկ այսօր, երբ մի խումբ պաշտոնատարների, հայ սպայության պարտվողական տականքի դավաճանությամբ՝ երեկվա անկախ ու անհաղթ Սյունիքը ստիպված տեղի է տալիս թշնամուն: Այսօր, շատերը, որոնք իրենց ամբողջ գոյությանը պարտական են ինձ եւ Սյունիքին՝ պարսկական չարչիխանաներից տմարդաբար ցեխոտ արշավանք են սկսել իմ եւ Լեռնահայաստանի հերոս ժողովրդի հասցեին:

Նրանք, որոնք կարմիր կացնից ահաբեկված ու հալածական եկան անցան *Թավրիզ՝ հոգնածների ու լքվածների երանության կղզին*, նրանք, բոլորը եւ՛ սպա, եւ՛ մտավորական, եւ՛ գաղթական, բոլորը, որոնք այսօր կան եւ ապրում են Թավրիզում, բոլորը եթե կացնահարված չեղան Երեւանյան սպանդանոցներում, եթե գերեզման չգտան Ադիսի ձորերում եւ խուճապորեն չթափվեցին Արաքսը, կրկնում են՝ *բոլորը պարտական են միայն ինձ եւ իմ ստեղծած Լեռնահայաստանին*:

Այո՛, բոլորը, եւ՛ հայ մտավորականության էն գաղափարական մասը, որը թվում է՝ բացի ջերմ խոսքն ու բարի ցանկությունը չպետք է ունենա իմ եւ Սյունյաց երկրի նկատմամբ, *եւ՛ էն պարտվողական սպայությունը*, որը թյուրիմացությամբ Հայրենիքի փրկության կոմիտեի կողմից ռազմագերիներ չեն համարվել եւ չեզոքացվել, որ իր ոչնչությամբ հանդուրժելի էին համարվել մեծամասնականների կողմից եւ թողնվել Հայաստանում եւ որի մեծագույն մասը հավատարիմ իր քաղաքական լրբության՝ մեր վերջին ռազմական գործողության ժամանակ երեք հազարի հասնող զորամասով անցավ թշնամու կողմը, եւ գաղթականության էն քաղաքականապես դիմազուրկ մասը, որը ընչազրկվելով չարացած է բոլորի դեմ, դառնացած բոլորից, *կրկնում են, որ փրկված են իմ եւ Լեռնահայաստանի միջոցով*:

Այդ բոլորը պատմական փաստեր են, բացարձակ ճշմարտություններ, որոնց ոչ ոքի չի հաջողվի «կացնահար» անել, սպանել, հողին հանձնել:

Գիտեմ, որ իմ ստեղծած երկիրը խեղդվեց իր փառքի ծովում ու այդ երկրի անբախտությունը հենց իր ծով փառքի մեջ է: որ այդ *հերոսական երկրի դափնիները հանգիստ չէին տալիս շատերին*:

Չկա, ինձ համար քաղաքականապես մեռած է Լեռնահայաստանը, բայց կա եւ քանի դեռ կա հայ ժողովուրդը՝ կմնա նրա փառքը, նրա հերոսական պատմությունը, նրա *անմահությունը մարմնացնող խուստուկը*:

Թորերիս եւ արյանս գնով ստեղծած երկիրը քաղաքականապես սպանելուց հետո պարսկական չարչիխանաների անմեկին հյուրերից շատերը սեւ նախանձից խթանված ձգտում են սպանել նաեւ իմ եւ իմ զինակիցների ստեղծած մեծ գործը: Ջանգիբասարներ, Բազարչայներ եւ նման Արշակավաններ ստեղծելու ընդունակ հայ սպայության տականքը, որն իր դավաճանական արարքների համար պիտ խստագույնս պատժված լիներ Հայաստանի կառավարության կողմից՝ այսօր նույն կառավարության քթի տակ սադրանքներով ու դավադրությամբ է պարապում ու դարձյալ մնում է անպատիժ:

Մեր կառավարության անդամներից (Ձեր եւ երկու ուրիշի բացառությամբ) մեկը լռում է վախից, մյուսը՝ որովհետեւ իր շահն է պահանջում լռել ու թույլ տալ սրիկաներին սպանելու ճշմարտությունը, երրորդը՝ վտանգավոր բան է համարում Նժդեհի եւ ճշմարտության բարեկամը մնալ եւ պիղատոսաբար լվանում է ձեռները:

Ես, սիրելի ընկերներ, որ անգիտանալ գիտեմ վտանգը, արհամարհել մահը, այդ ես վերջին տարիների ընթացքում եւ ապացուցել եմ եւ այդ գիտե հայ ժողովուրդը: Մահից ստրուկներն են դողում, ես չեմ վախում, երբ էլ գա՝ պատրաստ եմ ընդունելու, միայն՝ ոչ շատերի պես:

Ասում են՝ Արաքսն անցնողներից շատերն *իմաստուն* են դարձել, իրենց *քաղաքական անմեղներ, կույսեր, հրեշտակներ* հայտարարել եւ մեծամասնականների դեմ դուրս գալու ամբողջ պատասխանատվությունը թողել սպարապետ Նժդեհի վրա: Թող այդպես լինի, չեմ ցավում, չեմ ափսոսում, որովհետեւ մեր պատմությունը շատ լավ գիտեմ:

Թավրիզում թող նրանք հանգիստ առնեն, որոնք հոգնել են շանտաժելու, դավադրելու, գողանալու գործում:

Ես Թավրիզ չեմ գա, որպեսզի ճշմարտությունն էլ ինձ հետ չժամանի Թավրիզ, ճշմարտությունը, որ շատերի համար (անգամ մեր մինիստրներից մեկի-երկուսի համար) ավելի սարսափելի բան է, քան մարդկանց կացնահար անող մեծամասնականը:

Հարգանք՝ Ջորավար *Նժդեհ*

Հ.Գ. Ի՞նչ, կառավարությունը, կուսակցությունը, մտավորականությունը անհետ կորած են համարում Հայաստանը, թե դեռ հույսեր ունեն: Եթե այո, արդյոք գիտեմ, որ *Հայաստանի անկախությունը միայն մի ճանապարհ ունի*, որ անցնում է *Սյունիքով*, մի երկիր՝ առանց որի, *Հայաստան՝ իսկապես առանց ինձ եւ իմ սյունեցի զինակիցների, Ազատ Սյունիք՝ լինել չի կարող*:

Մուժունբար

Նույնը

1921թ. հուլիսի 16

Դատական գործ, ք. 88-90:

ԹԻՎ 49

(Գ. Նժդեհի նամակը ՀՀ կառավարությանը)

Հայաստանի կառավարության

Մի երկիր, ուր կարելի է ամեն բան անել, չարաշահել, սաքոտաժով զբաղվել, դասալքել, դավաճանել, ակնհայտնի կերպով պարտվողականություն քարոզել, սեղմ ասած՝ մի երկիր, ուր չի գործադրվում պատժի սկզբունքը՝ երկար ապրել չի կարող, կքանդվի:

Հայաստանից գատ ես չգիտեմ մի երկիր, որի զինվորականն ինքնագլուխ կերպով թողներ ճակատը, շտաբը, իրեն հանձնված պատասխանատու պաշտոնը, դասալքեր եւ անպատիժ մնար:

Հայաստանի հրետանու պետ կապիտան Խաչիկյանը նախորոք թունավորելով իր թնդանոթածիզ սպաներին եւ զինվորներին, որ այլեւս չմնան ու չկռվեն Լեռնահայաստանում, թողնում եւ փախչում է Պարսկաստան ու անպատիժ մնում:

Փոխգնդապետ Թարխանյանն իր մի շարք ակնհայտ-
նի դավաճանությունների համար, որոնք առաջացրին վեր-
ջին աղետը, իմ կողմից հեռացված ու հանձնված էր զինվո-
րական դատարանին, որը նույնպես մինչեւ օրս ոչ թե
պատժված, այլ հնարավորություն է ստացել ղեկավարելու
(այն էլ՝ կառավարության քթի տակ) մի փողոցային սաղորիչ
շարժում:

Փախել են շտաբի պետ, ճակատի պետեր, գետափն-
յա պահակի պետեր եւ շատ-շատերը ու այդ բոլորը անպա-
տիժ հովանավորվում են Թավրիզում: Կուզեի մի բան իմա-
նալ, Չայաստանի կառավարությունը մտադի՞ր է բոլոր
տեսակի դավաճաններին եւ սրիկաներին պատժելու, թե՞ ոչ:
Կխնդրեի պատասխանել ինձ, եթե այո՝ ե՞րբ, իսկ եթե ոչ՝
ինչո՞ւ:

1921թ. հուլիսի 20
Դատական գործ, թ. 86-87:

Ջորավար *Նժդեհ*

ԹԻՎ 50

(Գ. Նժդեհի նամակը Ա. Վրացյանին)

Սիրելի Սիմոն

Ամիր Արշադը թնդանոթ եւ երկու գնդացիո՞ր է խնդրել
մի քանի օրով: Վերջինիս խնդիրը պետք է հարգել, որով-
հետեւ նրա հաջողությունը թե պարտությունը՝ մերը պետք է
համարել: Ամիրը հանուն մեր երկրի եւ Գործի պետք է ուժեղ
լինի Ատրպատականում: Կխնդրեի այդ բանը միշտ ի նկատի
ունենալ:

1921թ. հուլիսի 21
Յ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, ՍՎ 5-14:

Բարեւներով՝ *Նժդեհ*

ԹԻՎ 51

(Գ. Նժդեհի նամակը Ա. Վրացյանին)

Աճճնական

Ընկեր Սիմոն

Ընդունիր, որ եթե ես իմանայի, որ Լեռնահայաստանը
Չայաստանը հայտարարելով՝ երկու կառավարությունները

մեքենայաբար կմիացնես եւ 11 նախարարներից 4-5 անպա-
տիժ թողնելով ու փոխվարչապետ կնշանակես Արշակ Յով-
հաննիսյանին, կրկնում եմ, որ եթե այդ բոլորը ենթադրեի
անգամ, ես կխնդրեի քեզ, Չայաստանի կառավարությանը,
Չայաստանի կոմիտեին չանել այդ քայլը:

Երկիրը Չայաստան հայտարարելն ոճիր էր, տասն եւ
մեկ նախարարներից կառավարություն կազմելն առնվազն
ժողովրդին խորապես դժգոհելու առիթ տալ էր, իսկ Արշակ
Յովհաննիսյանին, մեկին, որը ոչ երկրին էր ծանոթ, ոչ ժողո-
վրդին եւ ոչ էլ այդ ժողովրդի ու հարեւան թրքության փոխ-
հարաբերություններին, առնվազը վիրավորանք էր՝ ուղղված
Տաթևի համագումարի միջոցով իր կամքն առանց վերապա-
հության որոշ ուղղությամբ արտահայտած ժողովրդին:

*Դու միայն մի քանի ժամ մնացիր նորաստեղծ Չայաս-
տանում եւ բախտավոր էիր, որ գտնվելով Թավրիզում, չէիր
լսում զայրացած ժողովրդի քննադատությունը.*

Ընդամենը մի քանի օր առաջ՝ այդ ժողովուրդն իր
սպարապետին դիկտատոր է հայտարարում եւ հանկարծ
Լեռնահայաստանը՝ Չայաստան, Լեռնահայաստանի կառա-
վարությունը՝ Չայաստանի կառավարություն, 6 նախարար-
ներ 11 են դառնում եւ այլն եւ այլն:

Ո՞վ իրավունք տվեց սպարապետին, քննադատում էր
հանկարծակի եկած ժողովուրդը, որ իր դիկտատորական
լիազորությունները զիջի յուր ավագ ընկերոջը:

Ո՞վ ընտրեց եւ հաստատեց ՅՅ կառավարության
կաբինետը, այն էլ՝ 11 հոգուց բաղկացած:

Այդ ո՞ր համագումարի միջոցով Լեռնահայաստանը՝
Չայաստան հայտարարվեց:

Այդ ի՞նչ կառավարություն է, որ նախարարներից մի
մասը գտնվում է Պարսկաստանում, 2-3-ը պարապ-սարապ
ժամանակ են անցկացնում Չանքերում, իսկ փոխվարչապե-
տը՝ հակառակ ժողովրդի եւ սպարապետի կամքի, բանակ-
ցություններ է սկսում Սինքենդի երկու հազարի հասնող զին-
ված թուրք քոչվորների հետ եւ 50 միլիոն հայկական չեկե-
րով Սիսիանի ամենակարեւոր ճակատը, որպես արոտա-
տեղեր եւ յայլաղներ՝ հանձնում է թշնամուն եւ այսպիսով
լայն հնարավորություն տալիս նրան կապվելու Նախիջևեանի
թրքության հետ եւ արագացնելու Սիսիանի ու Դարալագյա-

զի անկունը, մի պարագա, որ մեծապես վտանգեց Լեռնահայաստանի ռազմական ընդհանուր դրությունը:

Ինչնեղի՞ս է պետք միայն Գորիսում 200-ից ավելի պաշտոնեությունը, որի մի մասը սկսել է գողանալ (կան փաստեր, զիտն պետական վերահսկիչը), որն անգործությունից անբողջ օրը նարդիով ու թղթախաղով է զբաղված:

Այդ ի՞նչ երկիշխանություն է՝ նայած որ իբր թե մի կառավարություն գոյություն ունի, ինչո՞ւ սպարապետի հրամանները չեն կատարվում երեւանյան զորամասերի պետի կողմից, ինչո՞ւ է ձգձգվում Դարալազյազի ռազմական գործողությունը, երբ երկու մալական գյուղերում հացը վերջանալու վրա է, ինչո՞ւ չեն տեղահանվում մալականները, որոնք հարմար առիթի են սպասում մեր զորքերին թիկունքից հարվածելու, չնայած որ հրամանը վաղուց է տրված:

Ինչո՞ւ իշխանությունը վերջ չի տալիս Բազարչայում, Բորիսովկայում ստեղծված այդ նոր Զանգիբասարին, ուր են սպայության են զինվորության են գաղթականության կողմից կազմակերպված է մի կատարյալ վակիսանալիա, ուր թալանում են, ծախում, արտարժույթ ստեղծում են 1000-որ մարդիկ, ուր հազար խայտառակությունների հետ կատարվել են մալական կանանց բռնաբարության դեպքեր եւ մեղավորներն անպատիժ են մնացել:

Ինչո՞ւ են նախարարների մի մասը եւ նրանց մոտիկ մարդիկ խորհրդային թղթադրամ, որոշ տեղերում էլ՝ ոսկի ծախսում, իսկ ստորին ծառայողների եւ սպայության ռոճիկը՝ տրվում է հայկական թղթե անարժեքացած չեկերով:

Ինչո՞ւ Լեռնահայաստանի զորքի եւ ժողովրդի համար Պարսկաստանում գնված ցորենը տրվեց գաղթականության:

Ինչո՞ւ եպիսկոպոսի (Ն.Մելիք-Թանգյան-Յ.Ա.) գնած 20000 փուֆ ցորենը չի փոխադրվում, ինչո՞ւ ցորենի փոխարեն՝ մեզ հող ու ավազ տվողները չեն պատժվում, ապա ի՞նչ եղավ 50.000 ռուբլու ոսկին, որի համար Տաթևի համագումարում հայտարարեց սպարապետը, որն իբրեւ թե Հայաստանի փրկության կոմիտեն դնելու էր Լեռնահայաստանի կառավարության տրամադրության տակ, մեր ժողովրդի ու զորքի կարիքները հոգալու:

Մեր երկիրը Հայաստան հայտարարելով՝ Հայաստանի օրին կընկնի, պետք է երկիրը վերստին հայտարարել Լեռ-

նահայաստան, անվստահություն հայտնել Հայաստանի կառավարությանը, փոխել կառավարությունը եւ այլն, եւ այլն:

Ահա թե ինչեր են ասում, խոսում, անվերջ քննադատում եւ դառնություն եւ դժգոհություն ստեղծում շատ շատերը: Ստեղծվել էր անվստահության, կասկածանքի եւ սառնության մի մթնոլորտ, կառավարությունը կամ ոչինչ չզիտի կամ շատ քիչ բան գիտեր, որովհետեւ ոչ գյուղերն էր անցնում, ոչ ճակատները, որ լսեր լայն զանգվածների ձայնը:

Հասել էր վայրկյանը, որ երկիրը կարող էր ամեն րոպե պայթել, բայց ժողովուրդը վախենալով դրսի թշնամուց՝ դեռ լռում էր: Ղափանն ու Գենվազը, ուր ժողովուրդն ու զինվորությունն ականատես էին նախարարներից մի քանիսի պարապ-սարապությանն եւ Արաքսի ափին ցորենի հետ տեղի ունեցող խորհրդավոր խաղերին, տոն տվեցին հակակառավարական շարժմանը:

Առաջինը Ղափանը եղավ, որ անվստահություն հայտնեց Հայաստանի կառավարությանը եւ պահանջեց երկիրը հայտարարել Լեռնահայաստան եւ այլն:

Իմ դրությունն ավելի քան ծանր էր, ես տեսնում էի՝ թե ինչպես երկիրը քանդվում է, բայց ելք, փրկություն չէի գտնում, ես կանգնած էի մի երկընտրանքի առաջ:

Ժողովրդի կողմն անցնելով՝ 90 հնարավորություն ունեի որոշ ժամանակով, քանի դեռ երկրում չնչին քանակությամբ ռազմամթերք կար, փրկել դրությունը, բայց կառավարությունը, ճիշտ մեր կուսակցությունը՝ կստանար մի ծանր հարված:

Ես դիմեցի պալիատիվների, բայց ոչինչ դուրս չեկավ:
Դու չկայիր, դու որ երկու կառավարությունների խառն միատուն այնքան հաջող մարզարեացար. «Թողնենք Նժդեհին իր պաշտոնում: Նա ծանոթ է ժողովրդին, ժողովուրդը կապված է նրան, մենք պարտված երկրի կառավարություն ենք, մեզ ժողովուրդը չի ճանաչում, մեզ չէ կապված, երկիրը կարող է վտանգվել»:

Դու չկայիր, դու քո բանակցություններով տարված երջանիկ էիր, որ չապրեցիր այն ողբերգությունն, որ բաժին ընկավ ինձ եւ Լեռնահայաստանի ժողովրդին. Ահա, ընկեր Սիմեոն, բացարձակ ճշմարտությունը Լեռնահայաստանի մասին.

Այն բոլորը, ինչ որ քեզ ասել են եւ ասում են՝ մութ եւ անցողական ստերի ծնունդ քաղաքական մոցիբուլներ, հուշարարներ՝ ստոր զրպարտություններ են:

Տաթևի համագումարից մինչեւ Սյունիք՝ Հայաստան հայտարարվելը շատ կարճ ժամանակ է:

Միայն մի քանի օրվա ընթացքում իր սպարապետին անսահման վստահությամբ ու հավատով դիկտատոր հայտարարող ժողովրդի վերաբերմունքը դեպի նույն սպարապետը չէր կարող փոխվել:

Պարզ է՝ ժողովուրդն իրեն խաբված զգաց, խորապես դժգոհեց, որի հետեւանքը եղավ այն, ինչ որ եղավ:

Մուժումբար
1921 թ. հուլիսի 21
Դատական գործ, թ. 92-96:

Ընկերական բարեւներով՝
Զորավար Նժդեհ

Թիվ 52

(Գ. Նժդեհի նամակը Ա. Վրացյանին)

ՀՀ կառավարության վարչապետ Ա. Վրացյանին

Գրությունս ներկայացնող Գուրգեն Աղայանը իմ կողմից ուղարկվում է ներկայացուցիչ, որին լիազորվում է մասնակցելու կառավարական բոլոր նիստերին վճռական ձայնի իրավունքով:

1921թ. հուլիս 26
Զինվորական նախարար՝
Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ: Ա.Վ. 5-20: Զորավար՝ Նժդեհ

Թիվ 53

(Գ. Նժդեհի նամակը Հ.Յ.Դ. Ատրպատականի Կենտկոմին)

*Հ.Յ.Դ. Ատրպատականի Կենտրոնական կոմիտեին
Պատճենը՝ Հայաստանի կոմիտեին
խիստ գաղտնի*

Լեռնահայաստանում ես թողել եմ մի լուրջ ընդատակյա կազմակերպություն՝ տեխնիկական եւ այլ միջոցներով:

Այդ երկրից ես չէի դուրս գա, չնայած որ՝ Հայաստանի կառավարության փոխվարչապետ Արշակ Հովհաննիսյանը Ղափանում կառավարության եւ Հ.Յ.Դ. անունից պահանջեց՝ որ ես չմնամ այդ երկրում, եթե այդ երկրի գինված գյուղացիությունը կանգնած չլիներ հաց

Հավատացած, որ Լեռնահայաստանի ժողովուրդն իր հունձն անելուց եւ հացը հավաքելու եւ ռազմամթերքի ճգնաժամի առաջ: Լուց հետո պետք չէ կարմիր դառնա ես 200-ի չափ գնդացիների եւ թնդանոթների կեսից ավելին թողնելով երկրի ապահով թաքստոցներում, երկու թնդանոթ եւ մի քանի գնդացի՝ իմ ապագա անելիքների համար, ինձ հետ անցկացրի Արաքսի պարսկական ափը: Այդ թնդանոթներն այժմ «մեռած» անմարտունակ վիճակի մեջ իմ մի սպայի եւ 7 զինվորների հսկողությամբ թողեցի Դուզալում, իսկ գնդացիների կեսից ավելին՝ թվով հինգ հատ, հասցրել եմ Մուժումբար գյուղը: Բացի գնդացիները՝ այստեղ եմ բերել նաեւ անմարտունակ դարձած երկու թնդանոթների ամենակարելորդ մասերը:

Խնդրում եմ կոմիտեիդ կողմից ուղարկել հատուկ մարդ, որ գա ընդունի այդ բոլորը եւ հոգա սրանց ապահով պահելու մասին:

1921թ. հուլիս
Դատական գործ, թ.115:

Ընկերական բարեւներով՝
Զորավար Նժդեհ

Թիվ 54

(Գ. Նժդեհի նամակը Ա. Վրացյանին)

Ա. Վրացյանին

Ընդունիր, որ եթե ես իմանայի, որ, Լեռնահայաստանը Հայաստան հայտարարելով, երկու կառավարությունները մեքենայաբար կմիացվեն եւ 11 նախարարներից 4-5 անպորտֆել ու անգործ կմնային, փոխվարչապետությունն էլ կտրվեր ուրիշին, կրկնում եմ, որ, եթե այդ բոլորն անգամ ենթադրեի, ես կխնդրեի քեզ եւ Հայաստանի կառավարության թողնել Լեռնահայաստանը իր հին քաղաքական վիճակում:

Սյունիքը Հայաստան հայտարարելը մի քաղաքական ոճիր էր: Խոստովանենք, այդ 11 նախարարներից կաթինետ կազմելը, գոնե փոխվարչապետությունը Լեռնահայաստանի ժողովրդի *միակ ընտրյալին* չթողնելը առնվազն ժողովրդին դժգոհելու առիթ տալ էր: Դու, ինչպես գիտես, *միայն մի քանի ժամ* մնացիր նորաստեղծ Հայաստանում եւ բախտավոր էիր, որ, գտնվելով Թավրիզում, չէիր լսում հանկարծակիի եկած ու զայրացած ժողովրդի քննադատությունը: Ընդամենը մի քանի օր առաջ այդ ժողովուրդը Տաթևի համագումարում իր Սպարապետին դիկտատոր էր հայտարարել եւ հանկարծ Լեռնահայաստանը՝ Հայաստան, կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն. 6 նախարարների փոխարեն 11, երկու տասնյակի հասնող պաշտոնեության փոխարեն միայն Գորիսում 200 չափ եւ այլն, եւ այլն:

«Ո՞վ իրավունք տվեց Սպարապետին, որ իր դիկտատորական լիազորությունները զիջի իր կուսակցական ավագ ընկերոջը: Ո՞վ ընտրեց ու հաստատեց Հայաստանի հանրապետական կառավարությունը, այն էլ 11 նախարարներից բաղկացած: Այդ ո՞ր համագումարի միջոցով մեր երկիրը Հայաստան հայտարարվեց: Այդ ի՞նչ կառավարություն է, որի փոխվարչապետն, առանց Սպարապետի կարծիքն իմանալու, բանակցություններ է սկսում Մինքենդի 2000-ի հասնող զինված քոչվորների հետ եւ 50.000.000ռ. հայկական չեկերով Սիսիանի ամենակարևոր ռազմագիտական կետեր հանձնում թշնամուն եւ, այսպիսով, լայն հնարավորություն տալիս նրան մալականների վրայով կապվելու Նախիջեւանի թրքության հետ, արագացնելու Դարալագյազի եւ Սիսիանի անկումը եւ վտանգելու Լեռնահայաստանի ընդհանուր ռազմական դրությունը: Ինչնեղի՞ս է պետք 200 հասնող պաշտոնեությունը, որի մի մասը սկսել է գողանալ, յուրացնել (կան փաստեր, գիտի պետական վերահսկիչը) եւ անգործությունից ամբողջ օրը նարդիով ու թղթախաղով է զբաղված: Այդ ի՞նչ երկիշխանություն է, չնայած որ իբր թե մի կառավարություն գոյություն ունի: Ինչո՞ւ Սպարապետի հրամանները չեն կատարվում Արարատյան զորամասի հրամանատարության կողմից: Ինչո՞ւ է ձգձգվում Դարալագյազի գործողություն, երբ երկու մալական գյուղերում հացը վերջանալու վրա է: Ինչո՞ւ չեն տեղահանվում մալականները, երբ հրամանն արդեն տրված

է: Ինչո՞ւ իշխանությունը վերջ չի տալիս այդ նոր Ձանգիբասարին, ուր ե՛ւ սպայության, ե՛ւ զինվորության կողմից կատարվում է մի կատարյալ վակիխանալիա, որ գողանում են, ծախում, վալյուտա ստեղծում հազարավոր մարդիկ, ուր տեղի են ունեցել անգամ մալական կանանց բռնաբարության դեպքեր եւ սրիկաները անպատիժ են մնացել, չնայած Սպարապետի կողմից հրամայված է եղել գնդակահարել մեկին, երկուսին: Ինչո՞ւ են որոշ մարդիկ (բարձր պաշտոնյաներ) ներքին շուկայում սովետական թղթադրամ, որոշ տեղերում էլ ոսկի ծախսում, իսկ ստորին ծառայողներին որպես ռոճիկ տալիս հայկական գրեթե անարժեքացած չեկեր: Ինչո՞ւ Լեռնահայաստանի զորքի եւ ժողովրդի համար Պարսկաստանում գնված ցորենը տրվեց գաղթականության: Ինչո՞ւ եպիսկոպոսի գնած 20.000 փութ ցորենը չի փոխադրվում: Այդ ո՞վ է մեզ ցորենի փոխարեն հող ու ավագ տալիս եւ անպատիժ մնում: Հապա ի՞նչ եղավ 30.000ռ. ոսկին, որի մասին Տաթևի համագումարում հայտարարեց Սպարապետը: Մեր երկիրը, Հայաստան հայտարարելով, Հայաստանի օրին կընկնի: Պետք է երկիրը վերստին հայտարարել Լեռնահայաստան, փոխել կառավարությունը, Սպարապետից բացատրություն պահանջել ժողովրդի վստահությունն ու հավատը ի չարը գործ դնելու համար եւ այլն, եւ այլն»:

Ահա թե ինչ էին ասում-խոսում, թե ինչպես քննադատում եւ դառնություն ու դժգոհություն ստեղծում շատերը: Երկիրը Հայաստան հայտարարելուց ընդամենը մի շաբաթ հետո ստեղծվեց անվստահություն, սառնություն ու կասկածանքի մի ծանր մթնոլորտ: Կառավարությունն այդ առթիվ ոչ-ինչ չգիտեր կամ շատ քիչ բան գիտեր, որովհետև նա անգործ մնալով Գորիսում, լայն մասսաների հետ կապ չուներ: Միայն ես, հրամանատարները, կոմիսարները եւ որոշ գործիչներ գիտեինք: Այդ բոլորը ստեղծել էր մի կացություն, երբ երկիրն ամեն րոպե կարող էր պայթել, բայց ժողովուրդը, վախենալով դրսի թշնամուց, բռնաբարներից, դեռ լռում էր: Ղափանը եւ Գենվազը, ուր ժողովուրդն ու զինվորությունը ակամատես էին մեր նախարարներից մի քանիսի պարապարապությանը, Արաքսի ափում ցորենի հետ տեղի ունեցող խաղերին, տոն տվեցին հակակառավարական շարժման: Առաջինն այդ երկու շրջանները անվստահություն հայտնեցին կառավարու-

թյան, պահանջեցին երկիրը հայտարարել Լեռնահայաստան, ստեղծել նոր կառավարություն եւ այլն եւ այլն:

Իմ դրությունն ավելի քան ծանր էր: Ես տեսնում էի, թե ինչպես էր երկիրը կործանվում: Բայց ես ելք, փրկություն չէի գտնում: Ես կանգնած էի մի երկրնտրանքի առաջ՝ ժողովուրդ կամ կառավարություն: Ժողովրդի կողմն անցնելով, 90 շանս կունենայի, որ ժամանակով, քանի դեռ երկրում չեն չին քանակությամբ ռազմամթերք կար, փրկել դրությունը: Բայց կառավարությունը՝ ճիշտ է: Մեր կուսակցությունը կարող էր մի ծանր հարված ստանալ եւ ստիպված ես դիմեցի պալեատիվների եւ ոչինչ դուրս չեկավ: Դու չկայիր, դու, որ Գորիսում երկու կառավարությունների խառը նիստում այնքան հաջող մարզարեացար. «*Թողնենք Նժդեհին վարչապետ, նա ծանոթ է ժողովրդին, ժողովուրդը կապված է նրան: Մենք պարտված երկրի կառավարություն ենք: Ժողովուրդը մեզ չի ճանաչում, կարող ենք երկիրը վտանգել*»:

Դու չկայիր, դու, քո բանակցություններով տարված, չապրեցիր այն սրտապատառ ողբերգությունը, որը բաժին ընկավ ինձ: Ահա, ընկեր Սիմեոն, բացարձակ ճշմարտությունը Լեռնահայաստանի մասին: Այն բոլորը, ինչ որ քեզ ասել են եւ շարունակում են ասել՝ մութ եւ անցողական օրերի ծնունդ, այդ քաղաքական մոցիբուլիներն ու հուշարարները, սուտ գրպարտություններ են, անսահման վստահությամբ ու հավատով իր Սպարապետին դիկտատոր հայտարարող ժողովրդի վերաբերմունքը չէր կարող փոխվել: Պարզ է՝ ժողովուրդն իրեն խաբված զգաց, դժգոհեց եւ որի հետեւանքը եղավ այն, ինչ որ եղավ: Ես չեմ արտահայտում ժողովրդի վերաբերմունքը եւ չեմ մեղադրում անհատ այս կամ այն միմիստրին, քավ լիցի, բայց որ կատաստրոֆիկ սխալներ եղել են, այդ անուրանալի է:

Ընկերական բարեւներով՝ *Նժդեհ*

Յ.Գ.

Ընկեր Սիմեոն

Քո բարեկամական նամակի որոշ տեղերն ինձ անասելիորեն դառնացրին: Այդ երբ եւ որտեղ է եղել, որ ես անկորեկտ վերաբերմունք եմ ցույց տվել Հայաստանի կառավարությանը ինկորպորե (լատ. in corpore՝ ամբողջ կազմով-Ա.Յ.): Ինձ գրպարտող պարոնը եթե քաղաքացիական քաջություն

ունի, թող հրապարակ գա: Քո՛ ինձ գրած անձնական բարեկամական նամակ մեղադրականը մեծ հաճույքով կարդացի: Շնորհակալություն քո ընկերական խորհուրդների համար եւ այն բանի համար, որ դու կուզեիր չհիասթափվել իմ նկատմամբ, որ իմ անվան հետ որոշ հույսեր ես կապել եւ այլն եւ այլն: Բայց եւ այնպես ընդունիր, որ որոշ խնդիրներում շատ ես շտապել, առանց ինձ լսելու եւ լուրջ քննությամբ որոշ բաներ լուսաբանելու: Հանիրավի ինձ վիրավորանք ես հասցրել եւ անարդար որոշում կայացրել:

Նույն

Մուժամբար

1921թ. օգոստոսի 2

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ: Ս.Վ. 5-21:

Թիվ 55

(Գ. Նժդեհի նամակը Ս. Վրացյանին)

Ս. Վրացյանին

Ընկեր Վրացյան

Պլատոնից մեծ բարեկամս ճշմարտությունն է, ասում են լատիները: Ես դեռ հավատում եմ (չնայած Հ.Տեր-Հակոբյանին արդարացնելու նպատակով «Այգ»-ում Ձեր գրած երկտողը թեթեւ հարվածել է իմ հավատը), որ Ձեր բարեկամներից ամենաբարձրն ու ամենամոտիկն է ու կմնա ճշմարտությունը: Լինել նախարար, ընկեր Վրացյան, այն էլ մեր օրերում, այն էլ մեր երկրում, ուր գրեթե մարդ չմնաց, որ այս կամ այն պորտֆելին չարժանանար,- մեր կուսակցության ու մասսաների համար այնքան էլ անհրաժեշտ ու փրկարար բան չէ: Նախարարներ չկային, բայց դեռ նահատակորեն ապրում ու գործում էին Ռոստոմն ու Ջավարյանը եւ այնքա՛ն հին էր թվում Գաղափարի ծանր խաչը, այնքա՛ն ցանկալի մահը կախաղանների վրա, բանտերի խորքերում, տունդրայում... Չկային նախարարներ, բայց կար ՄԱՐԴԸ, Աստծու պես անես ու աննախանձ, Աստծու պես ճշմարիտ ու բարի, կային Ռոստոմն ու Ջավարյանը, եւ անձնական սերն այնքա՛ն զուսպ, եսերը կաշկանդված էին... Նրանք կային եւ կուսակցության հմայքը ծով էր, անունը փառքի մեջ կորած: Երանելի՛ օրեր:

Ընկեր Վրացյան, Մարդը, Գաղափարի Աստվածաշունչ մարդն է մեռել, մարդն է պակասում մեզ եսականության ու մաղձի, նյութապաշտության ու շահի այս անփառունակ ու կոշմարային օրերում:

Ինտելիգենցիայից պակաս աստվածախույզներ չենք եւ մենք, մտավորականներս: Առանց Ռոստոմների եւ Ջավարյանների, առանց մարդ-աստվածների դժվարանում ենք ապրել, ոգեւորվել եւ ստեղծագործել: Ես, ինչպես գիտեմ, եւ շատ ընկերներ վերջին տարիներում, Ձեզ ընդունել ենք Ռոստոմին փոխարինողի եւ հավատացել Ձեզ: Դեռ իմ այս անսահման հավատն էր, որ դրդեց ինձ առանց տատանումի երկրի վարչապետության պորտֆելը ուրախությամբ հանձնելու Ձեզ եւ ինձ համար ստեղծելու *de jure* (իրավաբանորեն-Ա.Յ.) մի ծանր եւ արտերդային վիճակ:

Սակայն այսօր, երբ ինչ-ինչ պատճառներով դուրս ենք գտնվում երկրից եւ իմ ու ճշմարտության տմարդ թշնամիները դաշույն են կազմակերպում ու հանում իմ դեմ (իսկ այդ անում են, որ իրենց ստեղծած ժխտում կարողանան իրենց կաշին ու անունը փրկել) դուք շարունակում եք լուռ մնալ:

Հասկանալի պատճառներով մինչև օրս լուռ եմ մնացել եւ ես: Կոնսպիրատիվ կյանք վարելուս եւ հիվանդությանս պատճառով ես զրկված եմ հասարակությանը ճշմարտությունն ասելու եւ վրա ազդելու հնարավորությունից, իսկ երեկվա իմ կուսակցական «բարեկամները» քուն ու դադար կորցրած հասարակական կարծիք ու տրամադրություն են ստեղծում, զրպարտում, դավադրում եւ այլն:

Եւ Դուք, իրագել այդ բոլորին, շարունակում եք լռել: Այս կամ այն նկատառումներով Դուք, որպես նախարար, կարող եք լռել, բայց, որպես Գաղափարի մարդ, Դուք պետք է խոսեք ու փողոցի երեսին շարտեք ճշմարտությունը: Առանց ինձ կամ իմ խոսքը լսելու Դուք Հայաստանի կառավարության որոշ անդամների՝ իմ թշնամիների (որոնք քաջ գիտեն, որ ես եւ Լեռնահայաստանի ժողովուրդը իրենց չենք ների Մինքենդի ցուսիման (Ցուսիմայի մեղուցում 1904թ. ճապոնիայից ռուսական նավատորմի կրած ջախջախիչ պարտությունը-Ա.Յ.) եւ Արաքս գետի պանաման (Քաղաքական եւ ֆինանսական խարդախություն, խոշոր պաշտոնյաների կաշա-

ռում՝ Պանամայի ջրանցքի կառուցման ժամանակ-Ա.Յ.) զըրպարտանքի հիման վրա որոշումներ եք կայացնել տալիս իմ նկատմամբ: Ի՞նչ լեռնահայաստանցիների մասին է Ձեր խոսքը: Ո՞վ ասեց Ձեզ, որ Լեռնահայաստանից, բացառությամբ հազիվ մի տասնյակի հասնող գենվագիների, Ղափանի մի վաշտապետի ու մի քանի սպաների, շիտակ մարդ են դուրս եկել: Դուք գիտե՞ք, ով պիտ ասեր Ձեզ, որոշ տեղում ուղղակի զինու ուժով եմ ցրել այն ժողովրդական վաշտերը, որոնք հրաժարվում էին մնալ Սյունիքում եւ ուզում էին հետեւել:

Բացառությամբ մի քանի հոգու, Լեռնահայաստանից դուրս են եկել մութ ուժեր՝ մեծամասնականների տները ապստամբության շրջանում թալանածները, անձնական հողի վրա քրեական սպանություններ կատարածները, թայֆայականները, ցարական, հին պաշտոնյաները, որոնց ես հասարակական եւ վարչական պաշտոններից շատ հեռու էի պահում, կեղծ ու պատիր, անմաքուր դաշնակցականները, որոնցից մեկը պետական տրանսպորտից ցորեն գողանալու համար էր ձերբակալվել, մյուսին՝ Գորիսում խուճապ ստեղծելու եւ բոլորից առաջ փախչելու համար սպառնացել բանտարկությամբ, երրորդին՝ *ударный наек* (հարվածային բաժին-Ա.Յ.) պահանջելու համար շշպրել, չորրորդին՝ գյուղերում (Շահինյանի հրահանգով) դասակարգային շերտավորում առաջացնելու համար վռնդել Հանքերից, հինգերորդին՝ գողին ազատելու նպատակով իր միջամտության համար հանդիմանել, վեցերորդին (պետական կոնտրոլ Տեր-Մինասյանին) մալականներից 2 ձիեր վերցնելու եւ Գորիս բերելու համար թքել, յոթերորդին (մինիստր Մինասին)՝ (Մինաս Տեր-Մինասյան-Ա.Յ.) մալականի ձին յուրացնելու համար զգվանք հայտնել եւ պահանջ տվել վերջին երկուսին էլ հեռացնելու եւ այլն ...

Այն լեռնահայաստանցին եւ Հայաստանի կառավարության անդամներից մի քանիսը, որոնք շուտով կտեսնեք թե ի՞նչ չափով են մեղանչել ժողովրդի եւ ճշմարտության դեմ, որ հավատացնում են Ձեզ, որ իմ վերաբերմունքը եղել է անկորեկտ Հայաստանի կառավարության նկատմամբ *in corpore*: Ինչո՞ւ անունները չեք տալիս, ինչո՞ւ չեք ստուգում: Ինչպե՞ս հաստատեցիք այդ զրպարտությունը, երբ գիտեք, որ այդ կառավարության մեջ կան անհատներ, որոնց ես չէի կարող չհարգել: Մի՞թե Տեր-Հակոբյանի ով լինելը չպարզվեց

Ձեզ համար, երբ նրա գրպանից ոսկիների քսակը դուրս եկավ, երբ դա խաբուժում էր եւ ինձ, եւ իր կողմնակից 3 նախարարներին (Յովհաննիսյան, Տերտերյան, Խոնդկարյան), որոնց նույնպէս հայտարարում է, որ ոչինչ չկա մտոր: Երբ սեփական փողը (ինչպէս ինքը հայտարարեց զորքի առաջ և տվեց իր ստորագրությունը) հանկարծ թավրիզում դարձավ պետական: Եթե դա պետական էր՝ ինչո՞ւ էին պետական թղթադրամները գրավ դնում այդ պարոնին: Ես Մեղրիում ճանաչեցի եւ փոշմանեցի նրան միմիստր Նշանակելուս համար: Խոստովանում եմ, որ եթե նա կամ ես կուսակցական չլինեինք, ես նրան 3 անգամ չէի փրկիլ լինչի դատաստանից: Այդ պարոնը, ինչպէս եւ երկու հոգի ուրիշները *թող դուրբան լինեն Դաշնակցությանը, որի խաչը փակել էր բերանս եւ կաշկանդել ձեռքերս:*

Ո՞վ էր ճշմարտության բարեկամը: Եփրեմ Սարգսյանը - դա չէր կարող անաչառ լինել իմ նկատմամբ, պատճառների մասին շուտով կիմանաք: Արշալույս Աստվածատրյանը, որը թյուրիմացությամբ խուզարկվել էր եւ իրեն վիրավորված էր զգում: Արշակ Յովհաննիսյանը, այդ երկդիմի քաղաքականություն վարողը, որին ես եւ Լեռնահայաստանի ժողովուրդը դատապարտում ենք Մինքեմի աղետաբեր ցուսիմայի մեջ:

Երցո (հետեւաբար-Ա.Յ.), մնում էր, որ Դու ասեիր՝ Եմոն (կանգ առ-Ա.Յ.), ընկերներ, բայց Դուք այդ էլ չարեցիք: Է՛հ, եղիցի կամք քո: Թող այդպէս լինի: Թող, որ իմ եւ ճշմարտության բարեկամները, որ գտնվում են Արաքսի էն ափում, Լեռնահայաստանում, եւ այսօր *քաղաքական հնարավորություն* չունին խոսելու, ասելու ճշմարտությունը: Բայց այն, որ ամեն բան մեռնում է աշխարհում, բացի *ճշմարտությունը*, ինձ հաշտեցնում է իմ դրության հետ:

Ես, ընկեր Վրացյան, այն սեւ ապերախտությունից, որը ես տեսա Ձեր կառավարության եւ Հայաստանի փրկության կոմիտեի որոշ անդամների կողմից, հետո հոգեբանորեն անհնար եմ համարում իմ այստեղ կամ թեհրանում մնալը: Ուստի խնդրում եմ Ձեզ, որպէս Բյուրոյի անդամի, թույլ տալ ինձ անլեզալ ճանապարհով իմ զինակիցների հետ անցնելու Լեռնահայաստան եւ մնալու այնտեղ անլեզալ հողի վրա: Ժողովրդի տրամադրությունը. մեր մարդիկ նոր են

վերադարձել երկրից: Ապստամբական ոչ մի փորձ չեն անի, մինչեւ որ հարևան երկրներում այդ բանը տեղի չունենա:

Լիահույս եմ, որ դժվարություններ չեք հարուցի որոշումն իրագործելու: Սպասում եմ Ձեր պատասխանին:

Բարեւներով՝ *Նժդեհ*

Թավրիզ

1921թ. օգոստոսի 18

Յ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ: Ա.Վ. 5-22:

**Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ն Ժ Դ Ե Յ Ի
Բ Ա Ց Ա Տ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը**

Յ.Յ.Դ. Գերագույն Ղատական Աստանին

Այսու ներկայացնում եմ Ձեզ ընկեր Եղիշե Իշխան-
յանի միջոցով իմ բացատրությունները: Խնդրում եմ ցույց
տված վկաներին հարցաքննելուց հետո իմ հակառակորդ-
ների հարուցած ինձ անժանոթ հարցերի լուսաբանության
համար ընկերներից մեկին ուղարկել լսելու եւ ինձ: Ավելաց-
նում եմ, որ բացատրություններիս ամփոփումը կներկայաց-
նեմ շատ շուտով:

Թավրիզ
1921թ. օգոստոսի 19

Ձեր Նժդեհ

**Ի Մ Բ Ա Ց Ա Տ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը
Լ Ե Ռ Ն Ա Յ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Ա Ն Կ Մ Ա Ն Պ Ա Տ Ճ Ա Ռ Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն**

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ*

Սրտի անհուն կսկիծով, հակառակ իմ անհատական
կամքի եւ ձգտումների, անխուսափելի հանգամանքներից
ստիպված թողնելով Լեռնահայաստանը, որն իր բախտը մի
քանի տարի շարունակ հավատացել էր ինձ, ես իմ քաղա-
քացիական եւ բարոյական պարտքն եմ համարում հետա-
դարձ մի հայացք ձգել ինձ վստահած երկրի վերջին դեպքե-
րին, եւ փաստերի վրա հիմնված՝ ձեզ իրազեկ դարձնել այն
բոլոր պատճառների մասին, որոնք գլխավոր հիմք ծառայե-
ցին այդ երկրի անկմանը:

Անհատական հեղինակության խնդիրը չէ, որ ստի-
պում է ինձ բաց անել թարմ վերքերը, անձնական փառքի
ձգտումը, որ մղում է ինձ դեպի այդ ծանր քայլը, այլ՝ ճշմար-
տությունը, սոսկ ճշմարտությունը՝ յուր ամբողջ մերկությամբ,
որ բոլորի համար պարզ լինի, թե ինչպես ամենակարճ ժա-

մանակամիջոցում ստեղծվեց Լեռնահայաստանի ժողովրդի
ողբերգությունը, որը գերազանցորեն ազդեց նրա քայքայ-
մանը եւ ի վերջո անկմանը:

Մի երկիր՝ ինչպիսին Լեռնահայաստանն է, որը կարո-
ղացել էր մեն-մենակ մի քանի տարի անընդհատ ազգայնա-
կան եւ քաղաքացիական կռիվների ընթացքում յուր հուժկու
կամքն արտահայտել եւ յուր ինքնուրույնությունը պահպա-
նել, անշուշտ՝ նա ընդունակ էր եւ կարող կլիներ պաշտպա-
նել նաեւ յուր իրավունքները եւ ազատությունը, եթե քաղա-
քական ծանր կացությունը, որն առաջացել էր 1921թ. ապրիլ
ամսից, Երեւանից ելած գաղթականության շնորհիվ, չըներ
նրան քաղաքական ավելի ծանր եւ միանգամայն անել
կացության մեջ:

Ձեզ բոլորիդ պարզ հայտնի է, որ Հայաստանի Հան-
րապետության անկախության հայտարարությունից հետո, թե
Սյունյաց երկրի, եւ թե Ղարաբաղի հայ ժողովրդի միակ
ձգտումն էր՝ ինչ գնով ուզում է լինի միանալ Մայր Հայաս-
տանին:

Բայց, ցավոք սրտի, պիտի խոստովանել, որ մեր պե-
տական պատասխանատու գործիչներից շատ շատերը չկա-
րողացան ըմբռնել մեր ժողովրդի այդ հոգեբանությունն ու
նպաստել իրագործելու նրա փայլալայած գաղափարները:
Նոքա՝ մինչեւ իսկ իրենց գործելակերպով, Հայաստանի Հան-
թապետությունից հեռու վանեցին ծայրագավառների հոծ
հայությունը եւ պատճառ դարձան նրա տնտեսական քայքայ-
մանը ու ֆիզիկական կործանմանը:

Սկսած 1919 թվից, երբ Հայաստանի Հանրապետու-
թյան կառավարությունը յուր ներկայացուցիչներն ունեցավ
Ջանգեզուրում, եւ հետագա տարիներին էլ զինական աջակ-
ցություն կամեցավ ցույց տալ Սյունյաց երկրին եւ Ղարաբա-
ղին, այդ գործն առաջ տարվեց այնպիսի անհեռատեսու-
թյամբ եւ միանգամայն աննպատակ եղանակով, որ ժողո-
վուրդը հուսալքվեց:

Ղարաբաղը բացի վնասից՝ ոչ բարոյական եւ ոչ իրա-
կան օգնություն չստանալով մայր Հայաստանից հեռացավ,
կտրվեց նրանից:

Սյունյաց երկիրը մենակ մնաց՝ ինքն իրեն բախտի
կամքին հանձնված, եւ ստեղծվեց մի նոր քաղաքական դրու-

թյուն՝ ավելի ծանր եւ ավելի տաժանելի յուր հետեւանքներով, քան առաջ էր, որովհետեւ ազգայնական հողի վրա վարած կռիվը, որի շուրջը խմբված էր բոլոր հայությունը, տեղի է տալիս սոցիալական պայքարի, որի անվան տակ գործում է Այունյաց երկրի ժողովրդի դեմ՝ ոչ միայն Ադրբեջանի հոծ մահմեդականությունը:

Դրոյի եւ Հայաստանից եկած զորամասերի՝ համարյա առանց կռվի մեծամասնականների առաջ կրկին անգամ տեղի տալն ու ժողովրդին յուր բախտի կամքին թողնելը, ինքընստինքյան հասկանալի է, որ միմիայն լքում եւ քայքայում պիտի առաջ բերեր հասարակության ընդարձակ խավերում եւ սառցներ նրանց Հայաստանի Հանրապետությունից, որը եւ իսկապես տեղի ունեցավ:

Ահա թե ի՞նչ է գրում այդ առթիվ Ղափանի գյուղական ներկայացուցչական խորհրդի նախագահ Աշոտ Մելիք-Մուսյանը 1920թ. հոկտեմբերի 22-ին Հ.Յ.Դ. Բյուրոյին, Արտաքին գործերի եւ Զինվորական նախարարություններին. «Երկրորդ անգամն է, ինչ Ղափանը, Գենվազը, Բաղաբերդն ու Գողթանը պարոն Դրոյի ռազմական անմիտ խաղերի շնորհիվ մնում են մենակ, պաշարված, կտրված աշխարհից: Մեր մտքով անգամ չէր անցնում, որ տեղի կունենա մի վտանգավոր խաղ, անմիտ փախուստ, կվտանգի մեր դրությունը եւ երրորդ օրը վերստին կլքի Ջանգեզուրն ու կքաշվի Դարալագյազ»:

Զգալով Լեռնահայաստանի կատարած եւ կատարելիք դերը մայր երկրի նկատմամբ՝ ես մի քանի մարդկանց հետ ամրացա Գենվազում, առանց կանոնավոր զորամասերի, առանց ռազմամթերքի, *իբրեւ Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից ուղարկած մի զինվորական գործիչ եւ իբրեւ հարազատ զավակը հայ ժողովրդի*:

Ինձ համար *բարոյական մահ* կլիներ թողնել մի երկիր, որի ապահովությունն ինձ էր հանձնված, եւ թույլ տալ մեր թշնամուն հայ բնակչության դիակների վրայով միանալ Նախիջեւանի հետ եւ այդպիսով սպառնալ մեր Հանրապետության անսասանությունը:

Տեղական ժողովրդի մարտունակությունը ու հոգեբանությունը ինձ պարզ հայտնի էր: Գիտեի, որ նա յուր երկրի ազատության համար պատրաստ է զոհվելու:

Այդ է պատճառը, որ ես դեռ 1920թ. օգոստոս ամսից սկսած, երբ ամեն կողմից շրջապատված էի թշնամիներով, սուրհանդակների միջոցով անդադար դիմելով ՀՀ Զինվորական նախարարին, Արտաքին գործոց եւ Ներքին գործոց նախարարություններին, պարլամենտի նախագահին եւ Հ.Յ.Դ. Բյուրոյին, անվերջ բախում էի նրանց դռներն ու օգնություն եւ ռազմամթերք էի խնդրում...

«Գլխատված եւ ահաբեկված ժողովուրդն անգոր կատաղությամբ անիծում է թշնամու կողմն անցած իր տականքը կազմող մի բուռն կաշառակեր դավաճաններին եւ յուր դեկավարներին, որոնք այնքան հանցավոր հեշտությամբ տեղի տվեցին թշնամու ողորմելի ուժերի առաջ: Չնայելով այդ բոլորին, Ջանգեզուրի հայությունը դեռ չի դադարել յուր հարազատ զորքերին սպասելուց եւ դեռ ջերմորեն հավատում է, որ շուտով, շատ շուտով Բազարչայից կգոռան մեր թնդանոթները եւ երկրիս հայությանը կավետեն մեր զորքերի մուտքը Ջանգեզուր» (1920թ. օգոստոսի 25-ին):

«Ընկերներ, մի ավելորդ անգամ էլ խնդրում եմ արագացնել օգնությունը: Այս շրջապատներն իրենց անչափելի ռազմագիտական նշանակությամբ եւ գերազանցորեն մարտունակ ժողովրդով մեր հանրապետությանը շատ-շատ են պետք» (1920թ. սեպտեմբերի 18-ին):

«Ի սեր Գենվազի, Գողթանի եւ Ղափանի մարտնչող ժողովրդի, որը ոչինչ չխնայեց Հայաստանի նախադուռն ու ամրությունները պաշտպանելու համար, որը չորրորդ ամիսն ամրությունները պաշտպանելու համար, որը չորրորդ ամիսն է, ինչ հանուն յուր հարազատ հանրապետության յուր լավաէ, ինչ հանուն յուր հարազատ հանրապետության յուր լավաէ, գույն մարտիկների ազնիվ արյունն է զոհի սեղան հանում, օգնություն հասցրեք ինձ զորքով, թնդանոթներով եւ ռազմաօգնություն հասցրեք ինձ զորքով, թնդանոթներով եւ ռազմաօգնություն, օգնություն, օգնություն յուր վերջին մթերքով ... օգնություն, օգնություն յուր վերջին փամփուշտը կրակող Ղափան-Գենվազին» (1920թ. նոյեմբերի 19-ին):

«Գիտեք, չէ՞, որ այդ ժողովուրդը զոհ է գնում յուր դեպ երեւանն ունեցած ջերմ հավատին» (1920թ. հոկտեմբերի 20):

Եվ ի՞նչ է լինում այդքան դիմումներին հետեւանքը՝ քար լռություն եւ կամ մերժում՝ որեւէ իրական օգնություն հասցնելու:

Ինչ ինչ քաղաքագիտական նկատառումներով (հեռախոսագիր զինվորական սպայակույտի պետ Պրիտոմանովի

ընկեր Ռուբենը ինչ գնով էլ ուզում է լինի, առաջ շարժվել ու միանալ Ղանարլուի եւ Չիմանքենդի մեր զորամասերին, գրավել մինչեւ Քիրալու եւ ապահովել նահանջի ճանապարհը, իսկ իմ մյուս կարգադրությունը, որ օրեցօր ուշացնում են, մինչեւ որ ապրիլի 2-ին Երեւանի ապստամբ զորամասերը, քաղաքական գործիչները, մտավորականությունը՝ թվով մոտ 8-10.000 հոգի հնարավորություն չունենալով Երեւանը պաշտպանել, անցան մեր զորքով ապահովված գծով՝ դեպի Դարալագյազ: Կրկին անգամ վտանգվում է Լեռնահայաստանի Արեւմտյան ճակատը, կրկին անգամ՝ նա շրջապատված է զգում իրեն բոլոր կողմերից:

Ահա այն քաղաքական վիճակը, որի մեջ գտնվում էր Լեռնահայաստանը ապրիլի 15-ից սկսած: Այսքանը բավական համարելով Լեռնահայաստանի շուրջը ստեղծված քաղաքական դրությունը պատկերացնելու, այժմ ես կանցնեմ այդ երկրի ժողովրդի հոգեբանական կողմը հանդես բերելու, որի վրա ամենասոսկալի եւ մահու չափ ազդեցություն ունեցավ Երեւանի գաղթն յուր տխուր հետեւանքներով:

Հայաստանի Հանրապետության զինվորների եւ պետական գործիչների գաղթը, եւ ոչ նահանջը, երբ զինվորները սարսափի եւ ահաբեկման ենթարկված՝ մինչեւ իսկ կանգ չառան Դարալագյազում՝ մեր զորամասերի հետ պաշտպանելու սահմանները, երբ կարծեք ամեն մեկն իր համար գլուխը վերցրած առաջ էր փախչում՝ առանց հետ նայելու, որ հեղեղի պես ողողել էր Դարալագյազի եւ Սիսիանի ճանապարհին ընկած համարյա բոլոր գյուղերը, յուր հերթին կատարյալ լքման եւ հոգեկան քայքայման են ենթարկում մեր թվով փոքրիկ զորամասերն եւ բնազդորեն ստիպում նրան եւս հետ քաշվելու յուր սահմանները:

Ահա թե ի՞նչ պատճառներից եւ ո՞ւմ ազդեցության տակ առաջին անգամ մենք թողեցինք Դարալագյազը եւ ամրացանք միայն Գնդեվազում: Ինձ վստահած ժողովրդական վաշտերի՝ առանց կռվի թշնամուն տեղի տալը խիստ վշտացնում եւ առիթ է տալիս ինձ ապրիլի 16-ին հետեւյալ հեռախոսագիրն ուղղելու Արեւմտյան ճակատի պետ Յապոնին. «Այդ ի՞նչ էք անում, մինչեւ ե՞րբ պետք է շարունակվի ձեր նահանջը, նստել եւ թշնամուն սպասել սխալ, կորստաբեր մարտավարություն է: Անմիջապես անցեք հարձակողականի: Աշխա-

տեք նախածեռնությունը խլել թշնամուց եւ միշտ լինել ակտիվ: Այդ առթիվ խոսեք Արարատյան զորամասերի պետերի հետ եւ գիտցեք, որ *անվերջ նահանջներով դուք վտանգում եք նաեւ Լեռնահայաստանի դրությունը*»:

Բայց բարոյական հարվածն արդեն հասցված էր, զորամասերի մեջ արդեն խուճապային տրամադրություն էր տիրում: Այդ դրությունն ինչպես ինձ, նույնպես եւ ձեզ համար պիտի շատ պարզ լինի, որովհետեւ երբ 5000-ից ավելի զինվորությունը տարերային շարժումով Սիսիան է անցնում, մի քանի հարյուր լեռնահայաստանցիները չէին կարող Դարալագյազի սահմանագծերը պաշտպանել:

Չափազանց ճիշտ ըմբռնելով ինձ հանձնված երկրի, ժողովրդի եւ զինվորների հոգեբանությունը, ես դեռ ապրիլի 24-ին թ. 297 գրությամբ Յապոնին եւ Կուռոյին հրահանգում էի. «Երեւանից մինչեւ Գեմվազ տեղի ունեցած նահանջներն եղել են խուճապային, անկազմակերպ եւ բարոյալքող: Նկատի ունեցեք, որ այսուհետեւ այս երկրի ամեն մի թիզ հողը պիտի պաշտպանենք ամենակատաղի կերպով, եթե անգամ փամփուշտներ չլինեին, ապա՝ պետք է կռվել ատամներով»:

Զնայելով իմ այդ գրությանց եւ մի քանի անգամ ռազմաճակատն այցելելուն՝ ոգի ու եռանդ ներշնչելու ժողովրդին ու զինվորությանը, դրությունը մի նշանախեց անգամ չի փոխվում, որովհետեւ ոչ թե միայն Երեւանից եկած զինվորությունն էր հուսալքվել, թուլացել, անմարտունակ դարձել, այլ եւ անգամ՝ նրանց սպաներն ու գործիչները համարյա թե քիչ բացառությամբ նույն հոգեկան դրությունն ու ապրումներն ունեին, նույն պարտվողական վիճակի մեջ էին: Էլ ո՞վ պիտի նրանց առաջնորդեր դեպի հաղթություն:

Երեւանի շրջաններում ապստամբական ձգձգվող կռիվներն արդեն հոգնեցրել էին եւ միանգամայն անմարտունակ էին դարձրել այդ զորամասերը, որոնց մասին վկայում է Ելենովկայի ճակատի կռիվներին ականատես ընկեր Համո Օհանջանյանը, որը դեռ մարտի 10-ին Ախտայից գրում էր ինձ. «Մեծ հույսեր ունեմ, որ ձեր գալուստը պիտի ոգեւորի եւ քաջություն ներշնչի այդտեղի եւ այստեղի ուժերին, որոնք, պիտի խոստովանեմ, ինձ բավական վիատեցրել են իրենց խուճապային տրամադրությամբ: Ամոթ մեզ, երեք անգամ

հարձակում գործեցինք Ելենովկայի վրա եւ չկարողացանք վերցնել: Վաղը չորրորդ անգամն ենք հարձակվում»:

Ահա մի բնորոշ գիծ երեւանյան մեր գորամասերի եւ նրա հրամանատարության: Ես կարող էի բազմաթիվ փաստեր բերել հենց նույնիսկ Երեւանից ժամանած գործիչների ու սպաների՝ ինձ գրած նամակներից, ցույց տալու, թե հոգեպես եւ թե բարոյապես որքան լքված եւ որքան ընկճված էր Երեւանի գորամասը եւ նրա սպայությունը, եւ թե ինչպիսի բացասական ազդեցություն էր թողնում նրանց այդ տրամադրությունը Լեռնահայաստանի զինվորության վրա:

Բայց, որովհետեւ նրանց այդ վիճակը հանրածանոթ է եւ չի կարելի գտնել գործին մոտ մի անհատ անգամ, որը բացասեր այդ հանգամանքը, ուստի ես կբավականանամ միայն փոխվարչապետ Արշակ Յովհաննիսյանի եւ Ներքին գործոց նախարար Ս.Մելիք-Յուլյանի գրություններից մի քանի փաստեր բերելով: Փոխվարչապետը յուր սույն թվի մայիսի 11-ին հանուն Ս.Մելիք-Յուլյանի ի միջ այլոց յուր հեղինակավոր կարծիքն է հայտնում իմ օգնական նշանակված Կուռոյի մասին, որին հանձնված էր ամբողջ Արեւմտյան ճակատը. «Երկրորդը Դարալագյազի ռազմական գործողության հարցն է: Կուռոյի հետ երկար, շատ երկար եւ կտրուկ ու պարզ խոսեցի այդ մասին: Նա դժգոհ է եւ Փրկության կոմիտեից, եւ իր մեծ ընկերներից, եւ քեզանից, եւ ձեր կառավարությունից, եւ Նժդեհից, եւ բոլորից, որ իրեն չեն գնահատել: Իմ վճռական հարցին՝ ի՞նչ է քո ուզածդ, նա պատասխանեց .- *այդպիսի պայմաններում չեն կարող, չեն ուզում աշխատել*: Ես նրան պատասխանեցի, որ մեր կյանքի, մեր կառավարության եւ ընկերների պայմաններն այդ են, եւ ես քեզ համար չեն կարող ստեղծել այնպիսի պայմաններ, որ գոհ լինես. բոլորս դժգոհ ենք, բայց ժողովրդին թողնել չենք կարող: Նա պատասխանեց, որ.- *ես կուսակցական մարդ չեմ, ես էլ ինձ համար մի մարդ եմ հո*: Իմ վերջին խոսքն եղավ, որ ինչպես երեւում է՝ չես ուզում աշխատել: Նա պատասխանեց .- *այո, չեմ ուզում աշխատել եւ չպետք է աշխատեմ, խնդրեմ ինձ ազատեք*: Այս հայտնելով, քեզ մնում է առաջինը՝ Նժդեհին հայտնես, որ իմ կարծիքով անպայման պիտի ազատել այդ մարդուն պաշտոնից, երկրորդ՝ դրա համար թող Նժդեհը կանչի նրան զեկուցման յուր մոտ եւ ազատ կացուցանե յուր

պաշտոնից: Իմ վերջնական եզրակացությունն է՝ Կուռոյին *բոլորովին ազատել պաշտոններից* եւ հայտնել՝ ուր ուզում է, կարող է գնալ, որ այդ մարդը հասկանա իրեն էլ, ուրիշներին էլ: Այս բոլորն որքան շուտ կատարվի, այնքան լավ: Չորքի տրամադրությունը բարձր է, նա ուզում է կռվել, բայց ինչպես ժողովուրդն է ասում՝ կռվեցնող չկա: Ես այս խնդրի առթիվ երկար չեմ գրում՝ Կուռոն ինքը մի շարք պատճառաբանություններով չի կատարել Նժդեհի հրամանը եւ այդ մասին, ինչպես ինքը հայտնեց, պատրաստ է բացատրություններ տալու Նժդեհին»:

Այս երկտողն որակում է Երեւանից եկած հրամանատարությանը, երբ Կուռոն ինքն իմ հրամանը չի կատարում եւ առհասարակ հրաժարվում է աշխատելուց, նրա սպայությունն էլ՝ այլ կերպ լինել չէր կարող:

Յետեւապես, ո՞ւմ առաջնորդությամբ գործը պիտի կռվի ելներ, ո՞վ պիտի նրան ոգի ու եռանդ ներշնչեր, երբ հրամանատարն ինքը չի ուզում աշխատել այդ ժողովրդի հետ միասին, որի մոտ գաղթելով՝ նա կարողացել էր յուր գլուխը փրկել:

Ներքին գործոց նախարար Ս.Մելիք-Յուլյանը մայիսի 12-ին յուր ինձ ուղղած նամակի մեջ նույն խնդրի մասին գրում է. «Դարալագյազի հարցը եւ այնտեղի մեր ճակատների պաշտպանության խնդիրը շատ խախուտ հիմքերի վրա է դրված, Կուռոն միանգամայն լքված է եւ նա չի կարողանում գործել: Նրան կամ պետք է հեռացնել կամ պետք է փոխել ուրիշ ճակատ, կամ արձակուրդ տալ: Ես բացարձակապես կասկածում եմ, որ որեւէ դեպքի ժամանակ նա կարող լինի պաշտպանել այն ճակատը, թեկուզ՝ այնտեղ կան ավելի, քան պետք են ուժեր»:

Ես ինքս ուրախությամբ եւ Լեռնահայաստանի բնակչությունն ընդհանրապես բարի ճանապարհ կմաղթեինք այդպիսի սպայությանը եւ գորամասերին դեպի Պարսկաստան, եթե Փրկության կոմիտեի 1921թ. ապրիլի 21-ի Տաթևի որոշումը չլիներ, որի մասին ընկեր վրացյանը թիվ 14 թղթով գրում է ինձ. «Որոշվեց Յայաստանի բոլոր ռազմական ուժերն եւ գույքերը հանձնել Լեռնահայաստանի կառավարությանը: Այդպիսով, ուրեմն, մեր սպարապետն էլ ենթարկվում է Սյունյաց սպարապետությանը: Կարծեմ, լավագույն կլինի

նշանակել Կուռոյին քեզ օգնական եւ Արեւմտյան ճակատի հրամանատար»:

Ես այդ որոշմանը ենթարկվում եմ *իրեն կուսակցական ընկեր*, մտածելով՝ թե Երեւանից եկած զինվորությունը հանգստանալուց եւ ապաքինվելուց հետո գոնե քիչ ու շատ ընդունակ կլինի նույնիսկ յուր շահի տեսակետից այս կամ այն ռազմական խնդիրը կատարելու:

Բայց ի՞նչ դրություն է ստեղծվում այդ ձեւական խնդիրը կատարելուց հետո: Սպաներ, խմբապետներ, զինվորներ եւ երիտասարդ մարդիկ ու պետական գործիչներ՝ առանց ուշք դարձնելու այս կամ այն կարգադրության, վազում շտապում են դեպի Արաքսի ափը, օր առաջ իրենց գլուխը փրկելու եւ անցնելով Ղափանի եւ Արեւիքի շրջաններով՝ նույն խուճապը, նույն հուսալքումն են տարածում գյուղացիության լայն շրջաններում, որի մասին ընկեր Վրացյանը ապրիլի 26-ին Մեղրիից գրում է ինձ. «Ամբողջ ճանապարհին լավ տրամադրություն տեսանք, բայց գաղթականության միջի երիտասարդները լավ չեն ազդում, հարկավոր է երիտասարդներին առայժմս թույլ չտալ անցնել»:

Իսկ թե այդ ժամանակ գաղթն ինչ տպավորություն էր թողել Լեռնահայաստանի ժողովրդի եւ զինված ուժերի վրա, ես կբավականանամ բերելով այստեղ Լեռնահայաստանի ժողովրդական վաշտապետների՝ Ատրպատականի առաջնորդին (Ներսես Մելիք-Թանգյան - Յ.Ա.), պատճենը՝ Յ.Յ.Դ. Ատրպատականի կենտրոնական կոմիտեին, Յ.Յ.Դ. լիազորներ՝ Յան օհանջանյանին եւ ընկերներին, եւ «Այգ»-ի խմբագրությանն ուղղած նամակը. «Երեւանն ընկնելուց հետո Յայաստանի ամբողջ մտավորականությունը եւ զինված ուժերն անցան Լեռնահայաստան: Մեր Յայաստանի Յանրապետության կառավարության համաձայնությամբ այդ ամբողջ մտավորականությունն ուղարկվեց Պարսկաստան, որտեղ նա պիտի հնարավորություն ունենար կազդուրվելու, հանգստանալու, որպեսզի Յայաստանը վերագրավելուց հետո կարողանա շինարարական աշխատանքի լծվել, իսկ Յայաստանից եկած ամբողջ զինական ուժը պիտի մնար Լեռնահայաստանում, որտեղ մեզ հետ միասին պիտի պայքարեր ընդհանուր թշնամու դեմ, պաշտպաներ իր հայրենիքն եւ ապա՝ անցնեինք բուն Յայաստան: Սակայն, առանց թույլտվության՝ զանազան

խմբապետներ իրենց զինվորներով անցնում են Արաքսի ափը եւ անկարգություններ անում: Նրանք լքում են Լեռնահայաստանը ճիշտ այնպես, ինչպես որ լքեցին Յայաստանը: Ուստի եւ նրանք միայն անարգանքի են արժանի եւ պետք է, որ ստանան իրենց վարմունքի համար արդարացի հատուցում: Լիահույս ենք, որ հնարավորին չափ լայն աջակցություն կտրվի Յայաստանից եկած մտավորականությանը, որն ապագայում մեծ աշխատանք ունի կատարելու Յայաստանում: Միաժամանակ, խնդրում ենք ամենաբացասական վերաբերմունք ցույց տալ բոլոր այն զանազան խմբապետներին, սպաներին եւ նման անձնավորություններին, որոնք լքել են Լեռնահայաստանը» (10 ստորագրություն):

Մտավորական գաղթականության ապահովության խնդիրն եղել է միշտ իմ մտահոգության միակ առարկան՝ նրա դեռեւս Դարալագյազ ուտք դրած օրից սկսած, որի համար էլ ապրիլի 17-ին հեռախոսագիր ուղղելով Գեմվազի հրամանատարությանը, զինվորներին, գործադիր մարմիններին եւ ժողովրդին, գրել եմ. «Երեւանի շուրջը տեղի ունեցած կռիվների պատճառով կառավարությունը քաղաքից դուրս է բերել անգեն եւ կռվի անընդունակ հասարակության մի մասը: Դուրս եկածների մեջ են *հայ մտավորականության 90%-ը*, հարյուրներով ուսուցիչներ, ինժեներներ, բժիշկներ, տեխնիկներ, փաստաբաններ, ուսանողներ, քաղաքական գործիչներ եւ այլն: Ամիսներ առաջ հերոսական Գեմվազը *փրկեց հայ ցեղի եւ պատմության հեղինակությունը*: Այսօր, նա պետք է *փրկի հայ ժողովրդի հոգին, նրա սիրտը եւ ուղեղը՝ նրա մտավորականությունը*: Այդ պատմական եւ վեհ խնդիրը՝ մտավորականությանը սովից եւ թշնամու սրից փրկելու *սրբազան գործը*, ձեզ է տրվում»:

Միաժամանակ, ես պաշտոնական թղթեր եմ գրել Ատրպատականի փոխարքային, Ղարաղաղի կառավարիչ Ամիր Արշադին, օտարազգի հյուպատոսներին՝ թույլ տալու հայ մտավորականությանը Պարսկաստանի հողն անցնելու եւ նրանց հովանավորելու:

Ինձ համար անհասկանալի է, որ եթե ես յուր ժամանակին բարեկամական կապեր չհաստատեի պարսից իշխանության հետ, ո՞ւր պիտի պատսպարվեր Երեւանից եկած գաղթականությունը, որից շատ շատերը շահագործելով իմ

անունը եւ իմ տված վկայականները, իրենց կյանքն ապահովեցին, ապա՝ *ապերախտի* նման նիզակներ սկսեցին ճոճել իմ դեմ, մոռացության տալով մի րոպե, որ համենայն դեպս մի որոշ ծառայություն մատուցել եմ նրանց՝ իրենց կյանքի *ամենատրտալից, ամենատղբերգական րոպեին*։

Տաճկահայ զինվորությունը, որ Հայաստանի Հանրապետության ամենառազմունակ զորամասն էր կազմում, չկամենալով Դարալագյազի ճակատում մնալ, նա էլ էր ձգտում դեպի Արաքս։ Ոստի, որոշվում է ականա այդ զորամասն ամբողջովին փոխադրվել Գողթան, թե այս շրջանն ապահովելու զանազան անակնկալներից եւ թե ապագա գործողությանց համար ձեռքի տակ պատրաստի ուժ ունենալու համար։ Գուցե հետո կարողանան աջակցություն ցույց տալ։ Այդ զորամասը, որ թվով մոտ 2500 հոգուց էր բաղկացած, ճանապարհվում է Սիսիանի, Չանգեզուրի, Ղափանի եւ Արեւիքի հայկական գյուղերով դեպի իբրեւ թե Գողթան եւ ամենուրեք, ուր գիշերում էր՝ վիատություն, լքում եւ հուսաբեկություն էր առաջ բերում, թե յուր անկազմակերպ խուճապային արշավով եւ թե վարվեցողությամբ (թալանում էին գյուղացու վերջին կտոր հացը, մորթում նրա ոչխարը, այծը, հավերը, մի խոսքով՝ կատարյալ ավերի էին ենթարկում գյուղացու ունեցածը, այդ է պատճառը, որ շատ տեղ գյուղացիք դուրս էին փախչում իրենց տներից, չկարողանալով բավարարել նրանց անտեղի պահանջները)։

Եիշտ է, տաճկահայ զինվորությունը կիսաքաղց էր, բայց չէ՞ որ նույն եւ ավելի վատթար վիճակումն էր նաեւ Լեռնահայաստանի զինվորը, որը պետական պահեստներից չէր հաց ստանում, այլ՝ կամավոր նվեր բերված հացի փշրանքներից, եւ ոչ թե 5 օր, 10 օր, այլ՝ ամբողջ ամիսներ շարունակ։ Տաճկահայ զինվորի այդ վարմունքը պետք է քայքայում առաջ բերեր գյուղացիության լայն խավերում՝ սկսած Դարալագյազից մինչեւ Մեղրի եւ Արաքսի ափը, որը եւ տեղի ունեցավ։ Այդ զորամասն այնքան ահաբեկված էր, կարգապահությունը նրա շարքերում այնքան խախտված էր, որ չէր կամենում հրամանատարության կարգադրությունը կատարել։

«Խորապես կցավեմ, որ հնարավոր չէղավ մեզ իրագործելու ձեր հրամանը՝ Ղափուջուղի վրայով դեպի Գողթան։ Մոտ 1000 հոգով մեկնեցանք Քաջարան, ուրկե ճամբա պետք

է ելնելինք։ Դժբախտաբար, զինվորությունը լեռան առջեւ մեկ կողմեն անձամբ լսելով տեղացի ազգաբնակչության լեռան եւ անցքի մասին տված դժվարալուր տեղեկությունները, մյուս կողմէ՝ պատճառաբանելով յուր հոգնածությունը, մերկ, բոկոտն ու քաղցած վիճակը, մերժեց այդ ուղղությամբ շարժվել՝ բանավոր եւ գրավոր, որոնց օրինակները եւ պատճենները կմնան այժմ մեր տրամադրության տակ», - գրում է ինձ նրանց հրամանատար Սմբատը մայիսի 3-ին։

Այդ զինվորությունը ցանկանում է ավելի հեռու գնալ, բոլորից առաջ Պարսկաստան անցնել, միայն թե՛ չմնալ Հայաստան կոչված երկրի որեւէ մասում, միայն թե՛ չմասնակցել որեւէ կռվի։ Ահա թե ճանապարհից ինչ է գրում ինձ նրանց հրամանատար Սմբատը մայիսի 3-ին. «Բայց հիմա կարող եմ ձեզ հայտնել, որ շնորհիվ 20 օրվա անցնող կյանքին այդ զինական ուժը դարձած է մի անընդունակ զանգված, որի զինական ուժը կարելի դնել։ Բոլորը գրավոր կերպով մերժեցին իմ՝ գլխավոր հրամանատարի հրամաններ կատարելն, որով այսօր նրանց բոլորին դարձնում եմ ձեր կողմը»։

Նոքա չեն վերադառնում ինձ մոտ, զենքերը չեն հանձնում եւ ինքնագլուխ անցնում են Արաքսը, եւ այս բոլորը կատարվում է գյուղացու աչքի առաջ։ Տաճկահայ զինվորության այդ արարքն անմիջապես արձագանք է գտնում Խորհրդային Հայաստանում, որն եւ չի վարանում շահագործելու թերթերի մեջ, մինչեւ անգամ՝ առանձին հիշատակություն է արժանանում այդ դեպքը եւ ծառայում ի վնաս Լեռնահայաստանի ինքնապաշտպանության գործին։

Մի՞թե այդպիսի զորամասը կարող է որեւէ երկրի պաշտպանության նեցուկը լինել, մի՞թե նա մինչեւ իսկ յուր ներկայությամբ, յուր պարտվողական հոգեբանությամբ չի թուլացնի, չի ընկճի կանոնավոր կարգապահության ենթարկված զորամասն անգամ։

Գնդեվազում եւ Բազարչայում զետեղված երեւանյան մոտ 3000 զինվորությունը հեռու էր մարտունակ լինելուց։ Ժամանակի ընթացքում նկատելի դարձավ, որ նա էլ է հոգնած եւ օր առաջ կամենում է՝ ինչ ձեւով ուզում է լինի, անցնել Երեւանի շրջանը։ Ինձ համար եւս շատ պարզ էր, որ այդ զորամասը Ղամարլուի եւ Ախտայի շրջաններում մոտ ամիս

ու կես կռվել էր մեծամասնականների դեմ, անցել էր Խոսրովի լեռնանցքով, ջարդված եւ քայքայված էր:

Բայց, ինձ համար միանգամայն անսպասելի էր, թե ինչպես այդ զինվորությունն ապահով եւ տաքուկ անկյուն գտնելով Լեռնահայաստանում, ամսից ավելի հանգստանալով եւ կազդուրվելով այնտեղ, յուր ուժերը հավաքելով, չկարողացավ կամ ճիշտ կլիճի ասել՝ չկամեցավ ընդհանուր գործին ամենափոքր չափով անգամ աջակցություն ցույց տալ, կամ գոնե չաշխատեց յուր պարտավորական բժավոր ախտով չվարակել նաեւ Լեռնահայաստանի զինվորությունը:

Այդ զինվորության, ինչպես նաեւ նրա սպայության համար՝ ի բացառյալ հիշատակության արժանի ընկերներ Խնկոյի եւ Մուկուչի, որոնք իրենց զորամասերով մինչեւ վերջին րոպեն մնացին երկրում եւ ամենայն սրբությանը կատարեցին իրենց պարտականությունները, մինչդեռ՝ աչքի ընկնող մյուս խմբապետներն առաջին գաղթականության հետ անցան Պարսկաստան:

Չկար հայրենիքի գաղափար, այլ կար՝ մի ինչ որ բնազդորեն նրա մեջ առաջ եկած ձգտում՝ դեպի տուն, դեպի մի խաղաղ անկյուն: Դա նույնն էր, ինչ որ 1918թ. ռուսական պարտավորական հոսանքն առաջ բերեց բոլոր ռազմաճակատներում եւ պատճառ դարձավ ռուսական զորքերին՝ խուճապի ենթարկված դեպի տուն փախչելու: Դա նույն երեւանյան զորամասներիցն էր, որոնք Երեւանից դեպի Ղամարլուի կամ Ախտայի ճակատը գնալուց հալվում չքանում էին եւ հազիվ հազ մի երրորդ մասն էր տեղ հասնում, որոնք հարյուրներով թշնամու կողմն էին անցնում: Նույն խայտառակ անպատվաբեր արարքը կրկնվում էր նաեւ այստեղ: Մինչեւ իսկ նախքան Դարալագյազի ռազմական գործողության սկսելը մի վաշտ (Նոր Բայազետի) եւ մի կիսավաշտ (Կոտայքի) Գնդեվազից գաղտագողի անցնում են թշնամու կողմը:

Լեռնահայաստանի զինվորությունն յուր վարած բոլոր կռիվների ընթացքում չի հիշում այդպիսի դավաճանական արարք եւ մինչեւ վերջին րոպեն էլ՝ նա հավատարիմ մնաց հայրենասեր եւ ազնիվ զինվորի սուրբ պարտականությանց:

Երեւանի զինվորության, մանավանդ՝ նրա սպայության, հոգեկան այդ ապրումները բնական էին՝ Լեռնահայաստանը չորս կողմից շրջապատված էր, ամեն ճակատից էլ

նա պիտի կռվեր, ո՞ր զինվորականն իրեն թույլ կտար մնալու այդպիսի օղակի մեջ, որտեղից ոչ մի փրկություն չկար, բացի պարտավորական գործողությունից, որը կարող է արագացնել այդ սոսկալի հանգույցի լուծումը: Եվ նոքա անշեղ ընթացան իրենց այդ ոլորապտույտ ուղիով:

Մեծամասնականների հետ մի ամբողջ տարուց ավելի գործ ունենալուց հետո մենք պետք է փոքր ի շատե ծանոթ լինեինք նրանց վարժ քաղաքականությանն ու մարտավարությանը, պետք է բոլորիս համար պարզ լիներ, որ ոչ թե նրանք ամեն տեղ զենքի ուժով են հաղթանակներ տանում, այլ՝ քարոզչությամբ, խորամանկ քաղաքականությամբ եւ լքում առաջ բերելով զորամասերի մեջ, որով միանգամայն անմարտունակ եւ անվստահելի են կացուցանում հակառակորդների ուժերը:

Գաղթականությունը Սիսիանի եւ Դարալագյազի վերջին երկու գյուղերն անցնելուց հետո, նոցա հետեւող մեծամասնական զորամասերն ու գործիչները, մտնելով Դարալագյազ, անմիջական թռուցիկներ են թողնում, դեկրետ հրատարակում, որով ներում են շնորհում երեւանյան ապստամբներին եւ նրանց խրախուսում վերադառնալ իրենց տեղերը՝ խոստանալով ոչ ոքի ձեռք չտալ, հայտնելով մինչեւ իսկ, որ նախկին մեծամասնական գործիչներից հեռացված են Երեւանից եւ այլն: Այդ թռուցիկներն ընկնում են ռազմաճակատի մեր զինվորների ձեռքը:

Այնուհետեւ, հասկանալի է, թե ինչ հետեւանք դա կարող էր ունենալ մի զորամասի վրա, որ առանց այդ թռուցիկների էլ միշտ ձգտում էր Երեւան վերադառնալ: Մեծամասնականների այդ ուղղությամբ առաջ տարած քարոզչությունն այնքան ուժեղ էր եւ գրավիչ, որ մինչեւ իսկ դեպի Գորիս եւ այլ շրջաններ պաշտոնական գործով գնացող զինվորների միջոցով տարածվում է Լեռնահայաստանի բոլոր ծայրերն եւ հասկանալի հոգեկան բեկում առաջ բերում գաղթականության եւ երեւանյան զինվորության լայն շրջաններում: Սկսվում է ուժեղ քարոզչություն մեր Արեւմտյան զորաճակատում:

Ոչ հրամանատարությունը, ոչ սպայությունը եւ ոչ մինչեւ իսկ կառավարության ներկայացուցիչները, որ այդ ճակատ

տում էին գտնվում, ոչ մի միջոց ձեռք չէին առնում այդ այլանդակ գործողությանը վերջ տալու:

Բայց այդ դեռ բոլորը չէ, մեր թշնամիների կողմից տեղի է ունենում մի նոր քաղաքակսուն խաղ, մեր զինվորների ռազմական թափն իջեցնելու ու նրանց իրենց կողմը գրավելու, որն էլ կատարելապես հաջողվում է:

Մեծամասնականները մարդիկ են ուղարկում Թավրիզ էլ հայտնում գաղթականությանը վերադառնալ, խոստանալով նատարյալ ազատություն տալ նրանց Երեւանում ապրելու, այն հեռատեսությամբ, որ եթե այդ լուրը տարածվի նաեւ Լեռնահայաստանում՝ այն ժամանակ կատարյալ լքում առաջ կգա այնտեղի զորամասերի մեջ, որովհետեւ երեւանցիք իմանալով, որ իրենց ընկերներն արդեն վերադարձել են Երեւան, եւ նրանց ոչ ոք ոչ թե ձեռք չի տալիս, այլ՝ մինչեւ իսկ պաշտոններ են առաջարկում, իրանք եւս ամեն կերպ կաշխատեն խուսափել մեծամասնականների հետ կռվելուց եւ անցնել նրանց կողմը, որպեսզի օր առաջ իրենց երկիրը վերադառնան:

Երեւանի գաղթականությունն ընդառաջ է գնում մեծամասնականների աջակցությանը եւ խմբերով Երեւան ճանապարհվում: Նոքա մինչեւ իսկ չեն էլ սպասում, որ մեր սկսելիք զինվորական գործողությունները որոշ կետի հանգեն:

Եվ ահա, Թավրիզից գալիս են նամակներ Լեռնահայաստանի բոլոր շրջաններն, որոնց մեջ մեր ընկեր գաղթականները գրում են. «Հայ մեծամասնականների մարտավարությունը փոխվել է, մեր կոմիսարներն ավելի ազգային հողի վրա են կանգնած, ինչպես՝ Վրաստանում եւ Ադրբեջանում: Գաղթականներին մեծ հոգածությամբ նոքա տանում են Երեւան, ոչ մի հալածանք եւ ձերբակալում չկա այնտեղ, բացի մի քանի անհատներից, որոնց անունները հայտնի են, մնացածները կարող են ազատ վերադառնալ եւ ծառայության մեջ մտնել»:

Ինչպիսի՞ տպավորություն կարող են թողնել այս բովանդակությամբ նամակները մի զորամասի վրա, որ հայրենիքի ազատության գաղափարը չունենալով՝ միմիայն մեծամասնականների հալածանքներից էր փախել Երեւանի շրջանից: Չէ՞ որ, այժմ վերանում են նրա՝ երկիր վերադառնալու,

երկյուղի բոլոր պատճառներն եւ նա իբրեւ ազատ քաղաքացի՝ կարող է առանց վախի գնալ, ուր որ ուզում է:

Ո՞ւմ համար նա պիտի կռվի՝ Երեւանը գրավելու համար: Առանց կռվի էլ՝ նրան թույլ են տալիս այնտեղ գնալու:

ՀՀ կառավարության համար՝: Նրա մեծ մասը վաղուց է թողել իրեն եւ օր առաջ անցել Թավրիզ:

Լեռնահայաստանի համար՝: Բայց դա յուր հայրենիքը չէ, եւ ինքը խորթ է այդ երկրին եւ ոչ մի բանով կապված չէ նրա հետ:

Ահա թե ինչ հետեւանքներ ունեցավ գաղթականների անժամանակ Երեւան վերադառնալը:

Երեւանյան զորամասի մի վաշտ ու կեսը թշնամու կողմն անցնելը, մնացածների մեջ տիրող հոգեկան այդ այլանդակությունը, Բազարչայի շրջանում նրանց ձեռքով կատարած ավանթալանը, ստիպում է ինձ մայիսի 21-ին թ.135 գրությունն ուղղել ՀՀ կառավարության նախագահ Վրացյանին, որին միայն հավատալով եւ մեր երկրի կառավարության գլխավոր ղեկը հանձնելով, պետք է իրագեկ դարձնեի բոլոր եղելությանց, որ նա անմիջապես վերադառնար եւ համապատասխան միջոցներ ձեռք առներ. «Լեռնահայաստանի կառավարությունը եւ սպարապետությունը այսու անհրաժեշտ է նկատում վճռապես հայտնելու ձեզ հետեւյալը. Երեւանի զորամասերը, որ ձեր կառավարության կողմից դրվել էին մեր զորահրամանատարության տակ, իրենց ղեկավարներով միասին դարձել են մի գործիք քայքայման եւ դասալքության: Այն շրջաններում, ուր նրանք գտնվում են, տիրում է կազմակերպված թալան եւ սադրանք, զորամասի մեջ բացարձակապես բացակայում է կարգապահությունն ու կռվի տրամադրությունը: Ընդհակառակն, օրեցօր տարածվում է դասալիքի հոգեբանությունը՝ շնորհիվ երեւանյան հրամանատարության ընթացքին: Վերջինս, մինչեւ այսօր չի կատարել իմ քանիցս կրկնված հրամանները, եւ այդ բոլորն այսպես թե այնպես կապվում է Ձեր կառավարության հետ: Այսու հայտնում ենք Ձեզ, որ Ձեր նախարարությունը կամ պետք է գա յուր զորքի մոտ եւ տեր լինի նրան ու աշխատի օգտագործել, կամ գրավոր կերպով պետք է հայտնի մեզ, թե նա հրաժարվում է այդ զորքի հետ որեւէ կապ ունենալուց եւ չի հետաքրքրվում նրա ճակատագրով: Այս բոլորը տանում է դեպի Լեռնահա-

յաստանի կործանումն, որի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի կառավարության եւ Երեւանի գործառնասերի հրամանատարության վրա: Սպասում են Ձեր շուտափույթ կարգադրությանը»:

Նույն ժամանակ, թ.1037 գրությունն ուղղելով Հայաստանի կառավարության փոխվարչապետ պարոն Արշակ Հովհաննիսյանին, գրում էի. «Արեւմտյան ճակատում տեղի ունեցող վերջին դեպքերն ինքնապատճառ չեն: Նրանք հարազատ ծնունդն են այն պարտվողական քաղաքականության եւ մարտավարության, որոնցից դժվարանում են հրաժարվել երեւանյան գործառնասերի ղեկավարներն եւ կառավարության անդամներից շատերը: Օրեր առաջ՝ երեւանյան աղետից հետո, միակ չարիքը համարվում էր արեւմտահայ գործասը, սակայն այսօր ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ պակաս չարիք չեն եւ ուրիշները՝ շնորհիվ իրենց ղեկավարների: Ջինվորը, գործասը միշտ լավ է, մարտունակ, հաղթական, եթե՝ այդպիսին է նրա հրամանատարությունը: Ես շատ բան չեմ պահանջել այդ գործառնասերից, եթե Լեռնահայաստանի գորքերի եւ ժողովրդի կողմից ցույց տրված օժանդակության փոխարեն նրանք ամեն կերպ չաշխատեն թուլացնել մեր ճակատներն եւ քայքայել մեր թիկունքը: Ես բացի շնորհակալությունը՝ ոչինչ չեի ունենա հայտնելու այդ գործառնասերի, նրա հրամանատարությանը: Արեւմտյան ճակատում կանգնած գործառնասերը պետք է գիտենան, որ Լեռնահայաստանի ժողովուրդը 7000-ի չափ երեւանյան գաղթականություն է կերակրում՝ ինքը քաղցած մնալով հանդերձ: Նույն գործառնասը պետք է խորապես գիտակցե ու գնահատե Ղափանի, Գենվազի եւ այլ շրջանների ժողովրդական վաշտերի այդ ջերմ եւ գաղափարական վերաբերմունքը, որի շնորհիվ միայն սրից եւ սովից փրկվեց հայ մտավորականությունը: Թող գիտենան եւ այն, որ ժողովուրդն ու պատմությունը անեծքով պիտի խոսեն այն գորավարների եւ ղեկավարների մի մասի մասին, որ նամարդորեն կոխկրտելով Լեռնահայաստանի ժողովրդին՝ անցան Պարսկաստան, օտարներից հացի փշրանքներ մուրալու, իրենց գոյությունը քարշ տալու համար, իսկ մյուս մասը՝ սպառնում է արագացնել հայ ժողովրդի սեւ օրվա հայրենիքի՝ Լեռնահայաստանի անկումը: Շինել չես կարո՞ղ, գոնե մի քանդիր՝ ահա իմ պահանջն երեւանյան գո-

րամասերից եւ նրա ղեկավարներից: Ցանկության դեպքում այդպես վարվել կարելի է: Այդ ուղղությամբ է, որ պիտի աշխատե ՀՀ կառավարությունը»:

Նախարարներից երեք հոգի ապրում են Հանքերում՝ առանց որեւէ իրական օգնություն ցույց տալու գործին, իսկ կառավարության մյուս անդամները՝ նույն եղանակով շարունակում են իրենց գործունեությունը, որի շնորհիվ էլ ոչ մի նշանախեց չի փոխվում եղած դրությունից:

Ես ստիպված եմ լինում ճակատից ճակատ թափառել, խոսել զինվորների եւ գյուղացիության հետ, նրանց մեջ վառ պահել անկախության ոգին: Մինչեւ իսկ կառավարության անդամները շատ անգամ գրում էին ինձ՝ այս կամ այն շրջանն անցնել եւ երեւալ ժողովրդի աչքին, որ նա չհուսահատվի, չվարանե:

Ես առանց դադարի Գորիսից Հանքերն էի անցնում, այնտեղից՝ Մեղրի, երկու օրից հետո՝ երեւում էի Տաթեւ, Բազարչայ եւ այսպես՝ անընդհատ:

Բայց ինչ է լինում այդքան ջանքերի հետեւանքը: Ընկեր Վրացյանը մի երկու օրով միայն վերադառնում է Գորիս եւ էլի իսկույն՝ հետ գնում Թավրիզ:

Լեռնահայաստանի Արեւմտյան ճակատում հացի միայն մի քանի օրվա պաշար էր մնացել, որից հետո երեւանյան գործառնասը կամ պիտի փախչեր թշնամու կողմը, եւ կամ ամենալավ դեպքում՝ պիտի արշավելով ցրվեր Սիսիանի գյուղերը՝ իբրեւ քաղցած, բայց զինյալ ամբոխ, եւ ավերեր գյուղացու տնտեսությունն, ինչպես վարվեց տաճկահայ զինվորությունը:

Ուրեմն, պետք է մի ելք գտնեինք՝ գոնե նրանց հացը մատակարարելու: Չունեինք նաեւ ռազմամթերք, մեր ձեռքի տակ եղածը հազիվ բավական լիներ մի օրվա թեթեւ կովի: Ուստի, որոշվում է գրավել Դարալագյազն եւ այնտեղի պարենով ապահովել մեր գործառնասերը, խլել թշնամուց նրա ունեցած ռազմամթերքն եւ ամրանալ Դարալագյազի սահմաններում:

Այդ մասին հրահանգելով իմ օգնական Կուռոյին՝ տալիս եմ նրան մանրամասն հրահանգ, որից ձեր ուշադրության առարկա եմ դարձնում հետեւյալը. «Հրամայում են Ձեզ տված մարտական խնդիրը՝ Վայոց Ձորի վերագրավումն,

իրագործել ոչ ուշ քան ամսույս 7-ին (հունիսի): Ամեն մի հաջողություն օգտագործել ամենայն մասշտաբով, որի համար թշնամու ուժերի հետապնդումը շարունակել այնքան ժամանակ, մինչև որ վերջինս կգրկվի այս կամ այն կարելուր ռազմական կետի վրա ամրանալու եւ ապա՝ հակահարձակողականի անցնելու ամենաթույլ հնարավորությունից: *Կռիվները ղեկավարել անձամբ եւ բոլոր զորամասերի պետերից պահանջել՝ մեռնել, բայց հաղթել»:*

Ինձ համար միանգամայն անհասկանալի պատճառներով Կուռոն իմ տված վճռական հրամանի իրագործումը հետաձգում է եւ քաշքշում մինչև հունիսի 15-ն եւ ապա, երբ Լեռնահայաստանի բոլոր մասերում կայծակի արագությամբ տարածվում է այն լուրը, թե գաղթական զինվորները Թավրիզից վերադառնում են Երեւան, հունիսի 16-ին գրավելով Վայոց Ձորն եւ թշնամու այնտեղ գտնված ուժերի համարյա երեք քառորդը գերելով կամ ոչնչացնելով՝ հասնում է մինչև Ռինդ եւ Արփա գյուղերի շրջանը:

Հարկավոր էր միայն գրավված վայրերի սահմաններն ամրացնել եւ դիմել ինքնապաշտպանության, իսկ եղած ուժերով՝ դա եւ հնարավոր էր եւ անհրաժեշտ, եթե միայն Կուռոն ինքն եւ յուր սպայակույտն իրենց պարտականությունը կատարեին այնպես, ինչպես հրամայված էր նրան իմ կողմից, իսկ սպայությունը պարտազանցությամբ կտրված չմնար զինվորությունից եւ հեռու պահեր նրան թշնամու քարոզչությունից: Բայց կատարվում է բոլորովին դրա հակառակը՝ Կուռոն առանց իմ գիտության եւ հակառակ իմ պարզ ու որոշ ցուցմունքների՝ «կռիվները ղեկավարել անձամբ», յուր սպայակույտն իսկույն վերադարձնում է Բազարչայ, թե ինչո՞ւ, ոչ ոք չգիտե: Ձորքը լսում է դրա մասին եւ կասկածում, թե վտանգ կա, որ սպայակույտը 50-60 վերստ հեռացել է իրենից: Ձորամասերի մեջ սկսվում է քարոզչությունն, որի մասին վկայում է հենց ինքը՝ Կուռոն յուր իմ անունով ուղարկած հետեւյալ հեռախոսագրով. «Արեւմտյան ճակատի հրամանատարը Քեշիշքենդից հետ քաշվելու ժամանակ, երբ կարգադրում է Երեւանի զինվորներին հետ նահանջել, նոքա չցանկացան հետ գալ, ինչպես պարզվեց, *քարոզչության միջոցով երկու օր առաջ վճռված է եղել անցնել կարմիրների կողմը*»:

Ամբողջ մի զորամաս, մոտ 3000 հոգուց բաղկացած, օրեր առաջ վճռում է թշնամու կողմն անցնել, որոշում է մի դավաճանական քայլ անել, որն ամենասարսափելին է զինվորական կարգապահության տեսակետից, եւ դժբախտաբար, ոչ հրամանատարությունն է իրագրել այդ տրամադրությանն եւ ոչ էլ՝ նրա սպայությունը: Իսկ եթե գիտեին այդ մասին եւ լռում էին կամ միջոցներ չէին ձեռք առնում դրա առաջն առնելու՝ կնշանակե իրենք եւս մասնակից էին այդ մեծ ոճրին: Բայց որտեղից առաջացավ այդ բացարձակ քարոզչությունը, որ կարողացավ ամենակարճ ժամանակամիջոցում հեղաշրջել այդ ահագին զինվորությունը: Գիտեինք, որ նա հուսալքված, քայքայված է, բայց որ նա ընդունակ է նաեւ դավաճանության՝ ենթադրել դժվար էր:

Այդ քարոզչությունը կատարվել է Երեւանյան զորամասերի շարքերում՝ թե թշնամու ձեռքով եւ թե արեւմտյան մեր բարձր հրամանատարության համարյա ձեռքով, զինվորական ոչ հատուկ անհեռատեսությամբ եւ հայրենիքի պաշտպանության գործին մանկամիտ վերաբերմունքով:

Հունիսի 15-17-ին Դարալագյազը գրավելու ժամանակ վերցրած գերիներից մոտ 800 հոգու արեւմտյան ճակատի հրամանատար Կուռոն փոխվարչապետ Արշակ Յովհաննիսյանի եւ այլ պատասխանատու գործիչների ներկայությամբ թույլ է տալիս յուր զենքով մտնելու մեր զորամասի շարքերն եւ կռվելու մեր թշնամու դեմ, որից նա մի քանի օր առաջ էր բաժանվել:

Ո՞վ եւ որտե՞ղ է տեսել, որ քաղաքացիական կռվի ժամանակ թշնամուց գերի վերցրած զորամասերն օգտագործելու նպատակով, իսկույն եւեթ մտցնի յուր՝ առանց այն էլ հոգով վարակված զորաշարքերի մեջ: Մի՞թե մենք այդ ճակատում այնքան քիչ զինվոր ունեինք (4000 հոգի), որ կարիք կար գերի վերցրած զինվորների օգնության դիմել: Մի՞թե այդ անհեռատես եւ մինչև իսկ ամենահասարակ զինվորականին ոչ հատուկ քայլը չէ՞, որ պատճառ դարձավ Լեռնահայաստանի համար անելանելի վիճակ ստեղծելուն:

Կարելի է պարզապես ասել, որ Արեւմտյան ճակատի հրամանատարությունն յուր այդ քայլով, գիտությամբ թե անգիտությամբ, պարտվողական ոգով առաջնորդվելով, միայն մի նպատակի էր ձգտում՝ արագացնել հանգույցի լուծումն

ինչ կերպ ուզում է լինի, պարտվել, եթե հնար չէ հաղթել, միայն շուտով վերջ տալ կռիվներին:

Որ դրա հետևանքը պիտի լիներ պարտությունը, դա կասկածից դուրս էր, որովհետև արեւմտյան ճակատի հետախուզականների գլխավորը՝ Մխիթարյանը, յուր պաշտոնական գրությամբ՝ դեռ այդ աղետից մի երկու օր առաջ, հունիսի 19-ին գրում է Լեռնահայաստանի հետախուզության պետ Նիկողայոսյանին՝ ինձ հայտնելու, թե. «Գերիներից 400 հոգու սպարապետի օգնականն առանց գտման եւ ընտրության վերցրել եւ մտցրել է մեր զորաշարքերը. դոքա քայքայիչ ազդեցություն պիտի ունենան մերոնց վրա: Մի առ ժամանակից հետո, մեր բոլոր զորամասերը կարող են լինել հեղափոխված: Հայտնեցեք այդ մասին սպարապետին»:

Բայց մինչ այդ զեկուցման ստանալն՝ աղետը տեղի է ունենում, թշնամու կողմից Դարալագյազի հարավային կողմից փոքր ուժերով մի թեթեւ շարժումը բավական է լինում, որ երեւանյան 3000-անոց բանակն եզակի բացառությամբ (մեր կողմն են անցնում միմիայն Խնկոյի եւ Մուկուչի հեծելազորի մարդիկ), նրա կողմն անցնի:

Ցանկության դեպքում նոքա շատ չնչին բացառությամբ կարող էին հետ նահանջել Գեմվազ-Ղուշչիի գիծը, որովհետև ռազմաճակատի կողմից մեծ վտանգ էր սպառնում նրանց: Սելիմի շրջանից բոլորովին փորձ չէր եղել հարձակվելու մեզ վրա, հետևապես նահանջի ճանապարհը միշտ բաց էր, որի համար էլ այդ զորամասի հրամանատարը կարգադրում է նահանջել, բայց Կուռոյի պաշտոնական հեռախոսագրից պարզվեց, որ այդ զորամասը չցանկացավ հետ նահանջել եւ թշնամու կողմն անցավ գիտությունը:

Ահա թե որտեղ պիտի որոնել Լեռնահայաստանի կործանման պատճառները: Մենք մի հարյուր հոգով գործ ենք ունեցել մեծամասնականների 9-12 հազարանոց մի բանակի հետ եւ առանց դրսի որեւէ օգնության կարողացել ենք հաղթել, որովհետև պարտվողական զորամաս չէ եղել մեր մեջ, իսկ 3000-4000-անոց բանակը գործ է ունենում իրենից թվով մի քանի անգամ քիչ զորքի հետ եւ ավելի գերի է տալիս, քան թե թշնամին ինքը զինվոր ուներ ամբողջ այդ շրջանում:

Հակառակ զինվորական ամենահասարակ մարտավարության ծանոթության՝ Կուռոն մնացած զորամասով փո-

խանակ Գեմվազ-Ղուշչիի բարձունքներում ամրանալու, որ ռազմագիտության տեսակետից միակ պաշտպանելու գիծն էր, ինքն առաջուց արդեն, յուր սպայակույտով Բազարչայ տեղափոխված լինելով, առիթ է տալիս Դարալագյազում մնացած զորքերին հետ փախչելու, այլ ոչ՝ նահանջելու նույնպես Բազարչայ, որի պատճառով միանգամից վտանգվում է Սիսիանի շրջանը:

Սպառնալից է դառնում նաեւ այդ շրջանի հյուսիսային կողմը Մինքենդի ուղղությամբ, ուր կառավարության թուլությունը մի քանի հազար թուրք քոչվորներ էին հավաքվել: Նկատվում է շարժում նաեւ Նախիջեւանի ուղղությամբ, եւ ստեղծվում է մի այնպիսի վտանգավոր դրություն, որ կառավարությունը հրահանգում է պաշտպանել Սիսիանի սահմանները:

Այդ բոլորն առիթ է տալիս ինձ հունիսի 27-ին վշտացած սրտով հետեւյալ գրությունն ուղղել ընկեր Վրացյանին. «Մինչեւ հոգուս խորքը խոցված եմ, վիրավորված, երեւանյան զորքերի եւ հրամանատարության կատարած անլուր դավաճանությունից: Ես Լեռնիդասյան կիրճերի հրաշագործություններ չէի սպասում երեւանյան զորքերից, որովհետև քաջ ծանոթ էի նրա *հրամանատարության 90%-ի պարտվողական հոգեբանության* հետ: Բայց չէի սպասում նաեւ, որ այդպես անաստվածորեն կապտակեին իմ հպարտությունն, առանց դանակի կմորթեին իմ հավատքը: Սեւ լինի այն օրն, որ այդ թունավորված զորամասերը հայտարարվեցին Դավիթ-Բեկյան ժողովրդական բանակի շարքերում: 3000-ի հասնող զորամասը Վայոց Ձորի մեր հաջողություններից հետո, բացառությամբ Խնկոյի եւ Մուկուչի հեծելազորի, մի մարդու պես թշնամու աննշան հակահարձակումից՝ ահաբեկված անցնում է կարմիրների կողմը: Կուռոն, որին հրամայված էր ամմեկին մնալ Վայոց Ձորում եւ արթուն հսկել ու սատարել, ամենակարճ ժամանակամիջոցում կազմակերպել ժողովրդական վաշտեր եւ ուժեղ վարչակազմ, չգիտեմ ինչու, ամբողջ սպայակույտով վերադառնում է Բազարչայ եւ Արշակ Յովհաննիսյանին վերջնագրի ձեւով չորս օր ժամանակ տալիս՝ ընդունելու իր հրաժարականը: Արշակը չի ընդունում հրաժարականը, պատճառաբանելով, որ այդ առթիվ պետք է դիմել զինվորական նախարար-սպարապետին: Կուռոն մնում

է Բազարչայուն, իսկ Արշակը գալիս է Գորիս զեկուցանելու իրերի դրության մասին: Ընդամենը մի օր անց՝ Կուռոն հաղորդագրում է ինձ, թե թշնամին գործողություններ է սկսում: Հրամայում են ամրանալ եւ ինքնապաշտպանության դիմել: Երկրորդ օրը կատարվում է անլուր խայտառակությունը: Պատճառները մեկից, երկուսից ավելի են: Չգիտեմ, Կուռոն ինչո՞ւ առանց իմ թույլատվության գերիներից մի քանի հարյուր հոգու զինում եւ խառնում է յուր զորքերին, որոնք կռվի ժամանակ անցնում են թշնամու կողմն եւ իրենց հետ տանում հազարավորներին: Ջորքն եղել է անդեկավար եւ անվերահսկելի ու հեշտությամբ բարոյալքման է ենթարկվել: Այդ աղետից հետո, երեւանյան հեծելախումբն ինքնագլուխ թողնում գալիս է Ղուշչիից եւ մերկացնում Գնդեւազի աջ թելը: Սիսիանի զորամասը թողնելով խաչիկն ամրանում է հարավային Դարալազյազում, մինչեւ որ Նախիջեւանն ու Մինքենդը երկու կողմից սկսում են իրենց հարձակումները Սիսիանի վրա եւ աղետի չորրորդ օրը ստիպում կառավարությանը հրահանգելու սիսիանցիներին քաշվելու եւ ամրանալու Սիսիանի սահմաններում: Այժմ, կռիվը Սիսիանի վրա է: Ժողովուրդը պաշտպանվում է հերոսաբար: Ջգացվում է եռագծանի փամփուշտների կարիք, ամեն կերպ աշխատեք գոնե 100000 հատ հասցնել ամենակարճ ժամանակում»:

Դարալազյազի կրած անհաջողության, երեւանյան 3000-անոց բանակի թշնամու կողմն անցնելու, այլ ոչ թե կռվելով գերվելու, սպայակույտի Բազարչայ տեղափոխվելու լուրը կայծակի արագությամբ տարածվում է Լեռնահայաստանի բոլոր կողմերը:

Երեւանյան գաղթականներից նրանք, որոնք մնացել էին Լեռնահայաստանի զանազան գյուղերում, սկսում են շարան-շարան դարձյալ դեպի Մեղրի եւ Պարսկաստան ճանապարհվել: Այս վերջին գաղթը, այն էլ Լեռնահայաստանից, բնական իրարանցում է առաջ բերում ժողովրդի մեջ, որովհետեւ նա տեսնում է, որ վտանգված է համարվում յուր երկիրը, քանի որ յուր մեջ դադար առած եւ բնակվող անձինք հապճեպով անցնում են դեպի Արաքսը:

Առանց որեւէ կարգադրության կամ մինչեւ իսկ կռվի մի երկու օրից հետո սպայակույտը Բազարչայից անհասկա-

նալի պատճառով տեղափոխվում է Ուզ՝ Սիսիանի հարավ արեւելյան ծայրի վերջին գյուղը:

Խուճապն եւ բարոյալքումն ավելի եւս ուժեղանում են եւ այս անգամ՝ առանց որեւէ իրավունքի եւ թույլտվության, ոչ թե մասնավոր մարդիկ են հեռանում Լեռնահայաստանից, այլ՝ Երեւանից եկած եւ այստեղ պատասխանատու պաշտոն վարող պարտվողական հոսանքի պատկանող սպաներ, Գորիսում զանազան նախարարությանց եւ ուրիշ շրջանների առաջին խմբում Երեւանից եկած պաշտոնյաներ:

Որպեսզի լոկ խոսքեր չլինեն իմ ասածները եւ ձեզ համար պարզ լինի, թե ինչպիսի պաշտոնյաներ են անժամանակ փախուստի ճանապարհը բռնել, ես կբերեմ մի քանի օրինակ:

Կապիտան Սյուտչյանը Ղափանից փախչում է դեպի Պարսկաստան, բայց ձերբակալվում է, շտաբս-կապիտան Սարգիս Բեկյանը՝ Արաքսի ափի պահակի պետը, Մեղրիից ճանապարհվում է Պարսկաստան՝ երբ դեռ կռիվը Սիսիանումն էր, Կարճեւանի ճակատապետ կապիտան Դիլանյանը, որը Ռուսաստանից իր գլուխն ազատելու համար պատսպարվել էր մեզ մոտ եւ որին զգեստից սկսած ամեն հարմարություն տրվել էր՝ մերկացնում է իրեն հանձնած ճակատն եւ տմարդորեն փախչում Պարսկաստան, չնայելով նրան, որ Կարճեւանի ճակատը համարյա Արաքսի ափին էր եւ նա միշտ հարմարություններ ուներ եւ պարտավոր էլ էր ամենավերջին մարդու հետ անցնելու Արաքսը:

ՀՀ ամբողջ հրետանու պետ կապիտան Խաչիկյանն յուր համարյա բոլոր ռմբածիզ զինվորներին թունավորելուց հետո Գորիսից ուղղակի փախչում է Պարսկաստան դեռ այն ժամանակ, երբ մեր հրետանու մի դասակ Քարահանքի գլխին էր, հրետանու մյուս մասը՝ Սիսիանի վերջին գյուղերի շրջանում, եւ Լեռնահայաստանի ամբողջ հրետանին մնում է առանց վարիչի, առանց ղեկավարի: Մեր միակ անթել հեռագրի պետը, կռիվը դեռ Դարաշամի շրջանում եղած ժամանակ, փախչում է Ղափանից:

Գորիսի զինագործարանի կառավարիչ կապիտան Հարությունյանը, նախօրոք անցաթուղթ ստանալով գլխավոր սպայակույտից, որ եթե վտանգ սպառնա, այն ժամանակ հեռանա Գորիսից, ազնիվ խոսք է տալիս մնալ Գորիսում եւ

սպայակույտը նահանջելիս նրա հետ միանալ, բայց հենց անցաթուղթը ստացած օրը փախչում է Գորիսից դեպի Պարսկաստան:

Դարալագյազից նահանջելուց հետո Կուռոն հրամայում է կորնետ Նավասարդյանին մնալ յուր դիվիզիոնով Ղուշչի Բիլագում, իսկ նա առանց ուշ դարձնելու յուր անմիջական հրամանատարի կարգադրությանը, յուր զինվորների հետ միասին փախչում է Բազարչայ եւ մերկացնում Գենվազի աջ թեւը (տես Կուռոյի իմ անունով ուղարկած հաղորդագրություն): Դրանց հետեւելով փախչում է նաեւ հեռախոսավարը, լաստանավը շարժման մեջ դնելու համար ուղարկված տեխնիկը, ինժեները, ուղեկցորդը եւ այլն: Եվ պաշտոնեության *արտաներկրային, տարերային* գաղթն օրստօրե շատանում էր, որովհետեւ փախչողներից ոչ ոք չէր հետապնդվում:

Եվ երբ իմ կարգադրությամբ Սիսիանը վերագրավելու համար Ղափանի զորամասն անցնում է Սիսիանի հարավային կողմից թշնամու թիկունքն եւ գրավում է Ախլաթյան գյուղը, նոր է նկատվում, որ Սիսիանի աջ թեւից մեր զորքերը քաշվել, թողել են մինչեւ իսկ Ուչթափալարն եւ ամբողջ այդ շրջանն արդեն թշնամու ձեռքն է, որի պատճառով էլ նա հետ է գալիս Տաթեւ: Նույն ժամանակ մեծամասնականներն ընդհանուր հարձակման են դիմում նաեւ Օրդուբադի կողմից Արեւիքի շրջանի Կարճեւան գյուղի վրա:

Այս ճակատում բախտի բերմամբ մենք չունեինք ոչ երեւանի զինվորությունն եւ ոչ էլ՝ սպայությունն: Արեւիքի զանազան գյուղերից Կարճեւան օգնություն գնացած ժողովրդական վաշտերը միացած գյուղացիների հետ դիմում են հակահարձակման, ջարդում են թշնամուն, խլում են նրանից զնդացիներ եւ հետապնդում նրան մինչեւ Օրդուբադ՝ մոտ 60-70 հոգի սպանելով նրանցից: Այդ հաղթական զինվորությունը գյուղերը վերադառնալիս միայն հուսաբեկ սրտով նկատում է, որ Սիսիանի կողմից մեր զինվորներն ու սպաները դարձյալ գաղթական դարձած դեպի Պարսկաստան են անցնում: Ահա այստեղ է, որ նա հուսահատվում, լքվում է:

Մերոնք առանց որեւէ լուրջ կռիվների թողնում են Սիսիանը հունիսի 27-28-ին: Այդ շրջանը թողնելու առթիվ Արշակ Դովհաննիսյանը հունիսի 29-ին հեռախոսագիրն ուղղելով ինձ՝ ի միջ այլոց գրում է հետեւյալ հակիրճ, բայց բնորոշ

տողերը. «Ինչպես ձեզ հայտնի է, մերոնք Սիսիանը թողել են, որով վտանգի է ենթարկվում բուն Ջանգեզուրը, թշնամու ուժերը չնչին են եւ մեր պարտությունը՝ զուտ հոգեբանական»:

Թշնամին մի կողմից, երբ մոտենում է Ուչթափալարին, մյուս կողմից՝ Ջաբուղի եւ Մինքենդի ուղղությամբ մոտ 2500 մեծամասնականներ ընդհանուր ուժեղ հարձակման են դիմում Կոռնիձորի, Տեղի, Խոզնավարի եւ Խանածախի վրա, ուր արյունահեղ ճակատամարտեր են լինում եւ թշնամին բավական սպանված է թողնում: Բայց Սիսիանի կողմից դրությունն արդեն վտանգված էր, Ջանգեզուրը պաշտպանել այլեւս դժվար էր եւ անհնարին, որի պատճառով էլ՝ Ջաբուղի ճակատի մեր կռվողները, տեսնելով որ Սիսիանի կողմից հրանց թիկունքը պաշտպանվում չէ՝ տեղի են տալիս:

Եվ այն ժամանակ, երբ Սիսիանը վերոհիշյալ հանգամանքներից ստիպված տեղի էր տալիս թշնամուն, Ջանգեզուրի ամենավտանգավոր ռազմաճակատից՝ Խնձորեսկից, հեռախոսագրով հուլիսի 1-ին դիմում են ինձ. «Սիսիանում պատահած վերջին դեպքերը մեզ, զինվորությանս վրա ոչ մի ազդեցություն չի թողել եւ նման բան չի էլ կարող մեր կյանքի մեջ պատահի, ուստի Խնձորեսկի զինվորությունն յուր շրջանով տալիս է յուր քաջերի վստահությունն յուր սպարապետին եւ թողաւ առ թողաւ սպասում է նրա կարգադրությանը՝ ցույց տալու իրենց հավատարմությունը»:

Եվ հավատարիմ յուր վճռականության՝ հուլիսի սկզբին, երբ թշնամին մոտ 3000 հոգով հարձակվում է միաժամանակ Խնձորեսկի, Կոռնիձորի, Խոզնավարի եւ Խանածախի վրա, նա հերոսաբար կռվում է, խլում է թշնամուց ահագին զոհեր եւ տեղի է տալիս միայն այն ժամանակ, երբ տեղեկություն է ստանում, թե թշնամին հակառակ կողմից, Սիսիանից առաջ անցնելով՝ մտել է Ջանգեզուրի շրջան եւ գրավել Ուչթափալարն, որը ստիպում է զենքը վայր դնել:

Եզրափակելով վերոհիշյալը, բոլորիդ համար պարզ պիտի լինի, որ երեւանյան 3000 հոգուց բաղկացած զորամասի դավաճանությամբ թշնամու կողմն անցնելը, պարտվողական հոգին, որ տիրապետում էր սպայության եւ զինվորության մեջ, Արեւմտյան ռազմաճակատի հրամանատարության յուր կոչման բարձրության վրա չկանգնելը, Բազարչայի շուրջը ստեղծված ամոթաբեր թալանն ու կողոպուտը, նոր

գաղթականների եւ սպաների առանց որեւէ իրավունքի ճակատներից դեպի Պարսկաստան փախչելն՝ առաջ բերին տեղացիների մեջ կատարյալ լքում, հոգեկան անկում, որի պատճառով էլ նա պետք է անմարտունակ դառնար եւ տեղի տար թշնամու փոքրաթիվ ուժերին, ինչպես եւ եղավ:

Դառնում են այժմ մի քանի խոսք ասելու նաեւ (երեւանյան գաղթականությունը Լեռնահայաստան գալուց հետո) պետական-վարչական մարմնի մասին, որ կազմվեց Լեռնահայաստանում ինչ-ինչ տեսակետներ ի նկատի ունենալով, որը միանգամայն անհարազատ էր երկրին եւ նրա ժողովրդին, եւ որը չկարողանալով սեր եւ համակրանք վայելել մնաց իբրեւ մեռած մարմին, բայց եւ այնպես՝ քիչ չափով չվնասեց մեր ընդհանուր գործին:

1921թ. ապրիլի 27-ին Տաթևի համագումարն յուր սպարապետին վստահանալով՝ նրան է հանձնում կազմելու Լեռնահայաստանի կառավարությունը: Ես այն կարծիքին էի, որ Հայաստանից եկած Փրկության Կոմիտեն կամ նախկին նախարարական կազմն որոշ տեսակետով առաջնորդվելով իրան հեռու կպահե այս նոր երկրի վարչական մեքենայից եւ կամ անհատական ընտրությամբ մի երկու հոգի միայն կտա, լրացնելու Լեռնահայաստանի կառավարության կազմը:

Այդ էր պահանջում թե ժողովրդի եւ թե հենց Երեւանից եկած պետական գործիչների շահը: Հոգեբան չափսի լինի մարդ՝ հասկանալու, որ երբ *մի երկիր քաղաքականապես եւ զենքի ուժով պարտվում է* ու ստիպված է լինում ժողովրդի մի մասով գաղթել մի այլ անկյուն, *այդպիսի երկրի պատասխանատու պետական գործիչները նոր երկրում այլեւս չեն կարող օգտվել որեւէ հեղինակությամբ*, որովհետեւ *ժողովուրդն* ինքը, գուցե եւ առանց խոհեմության, այդ *պարտության սկզբնապատճառ համարում է այդ գործիչներին*:

Բայց Լեռնահայաստանում կատարվեց ընդհակառակը: Փրկության կոմիտեն կամ նախկին նախարարները՝ փոխանակ կազմակերպելու գաղթականներին, Պարսկաստան տեղափոխելու, նրանցից պետական գներով ձիեր ու զենքերը հետ ստանալու ամենափափուկ խնդիրը լուծելու, այդ բոլորը համարյա քիչ բացառությամբ, թողնում են մեզ վրա, որ առանց այդ էլ զբաղմունքներով ծանրաբեռնված էինք, եւ իրենք կամ իսկույն հեռանում են Պարսկաստան կամ Լեռնա-

հայաստանի այս կամ այն անկյունում խաղաղ կյանքի նվիրվում, եւ կամ նորից փորձ են անում կառավարության մեջ մտնել:

Այնպես, որ Տաթևի համագումարում կազմված վարչական մարմնի յոթ նախարարներից միայն երկուսն էր տեղացի, մնացածը՝ Երեւանից էին եկած:

Բացի զինվորական նախարարի պաշտոնից՝ իմ ընկերներն ինձ են հանձնում նաեւ վարչապետի պաշտոնն այն պարզ հասկացողությամբ, որ ժողովուրդն երկար ժամանակ ինձ է միշտ վստահացել յուր բախտն ու յուր երկիրը: Բայց նախարարական այդ կազմն երկար չի տևում եւ մի քանի օրից հետո արձատական փոփոխության է ենթարկվում:

Ընկեր Վրացյանը Գորիս ժամանելով նախարարական ժողով է հրավիրում, ուր զանազան քաղաքական հանգամանքներ ի նկատի ունենալով որոշվում է. «Լեռնահայաստանը հայտարարել Հայաստանի Հանրապետություն, վարչապետի պաշտոնը հանձնել ընկեր Վրացյանին եւ նախարարների թիվը հասցնել 11-ի»: Դրանցից միայն երկուսն էին տեղացի:

Որո՞նք էին այն հիմնական պատճառներն, որ ստիպեցին նախարարական խորհրդին Լեռնահայաստանը ՀՀ կոչելուն, երկու կառավարությանց մեքենաբար միացնելուն եւ ներքին ու արտաքին մի շարք փոփոխությանց:

Այդ պատճառներից ամենազլխավորն արտաքին քաղաքական հանգամանքներն էին՝ հարկավոր էր ցույց տալ օտար պետություններին, նաեւ մեր հարեւաններին, թե ՀՀ դեռ գոյություն ունի յուր նախարարական կազմով, թե նա իրավունք ունի հայ ժողովրդի անունից բանակցությունների մեջ մտնել օտար պետությունների ներկայացուցիչների հետ եւ այս կամ այն որոշումը կայացնել, եւ ի վերջո՝ նա իրավունք ունի հայ ժողովուրդը պաշտպանել: Բայց այդ հայեցակետը միանգամայն զուրկ է քաղաքական որեւէ արժեքից, որովհետեւ նույն ժամանակ չէր կարող երկու Հայաստան գոյություն ունենալ՝ խորհրդային եւ հանրապետական:

Թե օտար պետությունները եւ թե մեր հարեւանները պարզ տեսնում էին, որ ՀՀ-ն զենքի ուժով գրավված է եւ տապալված, ապստամբությունը ճնշված է, մայրաքաղաքը մեծամասնականների ձեռքին է, իսկ դժգոհ տարրերը՝ անցել

են դեպի օտար մի երկիր, Պարսկաստան, եւ կամ պատու-
պարվել են մի ապստամբ երկրամասում, որ համենայնդեպս
ՀՀ չէր կարող կոչվել, քանի որ նա դեռ ամիսներ առաջ
Լեռնահայաստան անունով էր հայտնի բոլորին: Ուրեմն, քա-
ղաքական այդ տեսակետը չի կարող քննադատության դիմա-
նալ ակնհայտնի իրողության հանդեպ:

Բայց Լեռնահայաստանը Հայաստանի Հանրապե-
տություն անվանելն այն դժբախտ հետեւանքն ունեցավ, որ
առիթ տվավ խորհրդային իշխանության լարել յուր բոլոր
ուժերն եւ ամենակարճ ժամանակամիջոցում վերջ տալ այդ
ինքնակոչ հանրապետությանը:

Երկրի կոչման այդ փոփոխությանը քիչ չնպաստեցին
մեր ընկերներից նոքա, որոնք որոշ շահադիտական նպա-
տակ ունենալով՝ չէին կամենում իշխանությանը հրաժեշտ
տալ եւ ամենուրեք իրենց եսն էին առաջ տանում:

ՀՀ կառավարության ժամանակ Հ.Յ.Ղ. Արեւելյան
Բյուրոն՝ իբրեւ բարձր վերահսկիչ մարմին, որոշ ուղղություն
եւ ցուցմունքներ էր տալիս կառավարությանը:

Ամեն կերպ նպաստելով, որ Լեռնահայաստանը կոչ-
վի ՀՀ, այդ ընկերներն այն քաղաքական նպատակն ունեին,
որ իրենք եւս կկազմեն Հ.Յ.Ղ. գերագույն մարմին եւ հսկո-
ղություն կունենան կառավարության գործելակերպի վրա:

Լեռնահայաստանը ՀՀ հրապարակելով այդ ընկեր-
ները հասնում են իրենց նպատակին: Կազմվում է Հ.Յ.Ղ.
գերագույն մարմին, որն իբր թե կառավարության կից մի
երկրորդ եւ՝ ավելի բարձր կառավարություն էր, բայց իրոք
յուր գերագույնը չկարողացավ ցույց տալ եւ մնաց միայն՝ իր
կոչմամբ: Լեռնահայաստանի կառավարությունը մինչեւ երեւ-
անյան գաղթը կազմված էր մի տեսակ խառն մարմնից, *բաց-
արձակ կուսակցականներ դրա մեջ չկային, բացի ինձնից*:

Ժողովուրդը կուսակցությանց չէր բաժանված եւ նա
պարզ ընդունում էր, որ միայն խառն կառավարությունը
կարող է մոտ լինել նրա սրտին:

Բայց երբ մայիս ամսից կառավարությունը կոչվեց
Հայաստանի Հանրապետություն, երբ իշխանության գլխա-
վոր դեկն իմ ընկերները հետ խլեցին այն մարդուց, որին
միայն ժողովուրդը վստահացել էր իր *բախտի տնօրինումը*,
այն ժամանակ՝ նա չվարանեց յուր դժգոհությունն արտա-

հայտել ամենուրեք, տեսնելով, որ սպարապետը մինչեւ իսկ
իրենց հավատն ի չարն է գործ դնում, ժողովրդի՝ իրեն
վստահացած իրավունքը տալով դրսից եկած յուր ընկերնե-
րին, որոնց նա չի ճանաչում եւ չի էլ կարող յուր երկրի
կառավարության դեկը նրանց հանձնել:

Ես բազմիցս գանգատներ եմ լսել երկրի կառավարու-
թյան այս փոփոխության առթիվ: Ինձ մոտ մինչեւ իսկ հունի-
սի 15-ին պատգամավորներ են եկել Ղափանից՝ Ղավիթ
Ղավթյանի, Սամսոն բեկ Մելիք-Փարսաղանյանի, Միքայել
Էլչիբեկյանի, Արսեն Բարոցյանի եւ Իվան Պետրոսյանի
առաջնորդությամբ, որոնք կառավարական այդ ձեւի նկատ-
մամբ եւ Հայաստանի Հանրապետություն կոչվելուն իրենց
դժգոհությունը հայտնելով, մինչեւ իսկ բողոքելով, որ ես
իրենց հավատն ի չարն եմ գործ դրել, եթե համագումարից
ինձ վերապահված բոլոր իրավունքներն այժմ ի չիք են
դարձած, պահանջում են խառն կառավարություն կազմել եւ
երկրի անունը թողնել Լեռնահայաստան:

Ես թեւեւ միանգամայն դեմ էի երկրի Հայաստանի Հան-
րապետություն կոչվելուն եւ 11 հազուց բաղկացած նախա-
րարական կազմին, որոնցից երեքն առանց պաշտոնի էին, մի
տեսակետ, որ ես բացորոշ հայտնել եմ դեռ Տաթևի ժողով-
ում, որին մասնակից են եղել այդ բոլոր ընկերներն, որովհե-
տեւ ժողովուրդը պարզապես պիտի տեսներ, որ կառավարու-
թյան դեկն յուր վստահացած մարդկանց ձեռքին չի, բայց
իբրեւ ընկերներից կրտսերն եւ *իբրեւ կուսակցական կարգա-
պահության ենթակա մեկը*, ականայից լռում են, այն համոզ-
մամբ, որ զոնե եթե կառավարության ընդհանուր դեկը ինձա-
նից խլում են, բայց տալիս են մի մարդու՝ ընկեր Վրացյանին,
որը կարող կլինի *յուր փորձառությանը օգտակար լինել
երկրին, եթե միայն նա մնա եւ ձեռք-ձեռքի տված գործի մեզ
հետ*: Բայց, *շատ շուտով, ես հուսախաբվում եմ*:

Ընկեր Վրացյանը պաշտոնական գործով մեկնում է
Թավրիզ, ուր բավական ուշանում է: Փոխվարչապետի պաշ-
տոնն ինձ համար անհասկանալի պատճառով հանձնվում է
Արշակ Հովհաննիսյանին, մի մարդու, որին *ժողովուրդը բոլոր-
ովին չի ճանաչում* (եւ որի երեւանում մատուցած ծառա-
յությունը համենայն դեպս չէր կարող իրավունք տալ նրան

այդպիսի պատասխանատու պաշտոն իրեն համար անժանոթ մի երկրում):

Պետք է հասկանալ ժողովրդի *հոգեբանությունը*, պետք է *ապրել գյուղացիության մեջ*՝ ըմբռնելու համար, որ այդ ձեռով կազմված նախարարական խորհուրդը չէր կարող ժողովրդի վստահությունը վայելել, բայց եւ այնպես՝ փաստը կատարված էր եւ ինձ մնում էր առանց ղեկավարի դեր կատարելու՝ ճակատից ճակատ շրջել եւ զինվորական գործերով զբաղվել:

Նախարարական նոր խորհուրդն առանց շրջապատը լավ ճանաչելու, առանց խորն ուսումնասիրելու յուր խնամքին հանձնված ժողովրդի տնտեսական դրությունը, առանց մինչեւ իսկ այս կամ այն կարիքի ճիշտ ցանկն իմանալու, ստեղծում է Գորիսում ծառայողների մի հաստիք, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ սինեկուրաների եւ ձրիակերների մի ամբողջ խումբ, որոնցից շատ շատերն անգործությունից (որովհետեւ ոչ մի գործ չկար անելու) չզիտեին, թե ինչ անեն:

Մինչեւ երեւանյան գաղթականության գալն ամբողջ Լեռնահայաստանը կառավարում էին *միայն 28 հոգի*։ Նոր նախարարության կազմը *միմիայն Գորիսում* դոցա թիվը հասցրեց *մինչեւ 267-ի* (տես պետական պաշտոնյաների սպառողական ընկերության ցուցակ): Նշանակում են առանձին հանձնարարության պաշտոնյաներ, շրջանային կոմիսարների օգնականներ, կաշառակեր եւ վարկաբեկված անհատներ նորից պաշտոնի են անցնում, երեւանից եկածներից ոմանց տեղավորում են այս կամ այն տեղը միմիայն նրա համար, որ հաց եւ սնունդ ստանան:

Ամբողջ Լեռնահայաստանում միմիայն երեք տարրական դպրոց կար, բայց դրա համար հիմնվում է նախարարություն: Արդարադատության նախարարության հետ եւ առանձին առանձին շատերն են կազմվում, Հաղորդակցության նախարարությունն յուր ուրույն հաստիքն ուներ, որ Գորիսում նստած երեք ամսվա ընթացքում ոչ մի դրական գործ չկարողացավ կատարել, մինչեւ իսկ՝ չկարողացավ օգտվել մասնագետներից եւ լաստանավը շինել:

Ավելորդ համարելով մի առ մի թվել երեւանի ձեռով նոր հաստիքներ առաջ բերելը Լեռնահայաստանում եւ դրանցից շատ շատերի անկենսունակությունն եւ ավելորդ

բեռ լինելն, այսքանը միայն կարելոր եմ համարում հիշատակել, որ այդ ահագին պաշտոնությունը Գորիսում ստանում էր հաց, ռոճիկ, հետո ստացավ՝ նաեւ կերակուր:

Եվ այն ժամանակ, երբ բնիկ գորիսեցու եւ քարահանքեցու քաղցած, մերկ եւ վտիտ մարմնակազմով երեխաները խոտ էին արածում երեւանից եկած պաշտոնության աչքի առաջ, երբ Խնձորեսկում եւ Կոռնիձորում սովամահ էին լինում մարդիկ, Գորիսի պաշտոնությունը քիչ ու շատ բարվոք էր զգում իրեն, որովհետեւ հազար ու մի նեղությամբ զորքի սեւ օրվա հացի փոքրաթիվ պահեստները դատարկում էին օրեցօր, իսկ նոր ավազախառն ցորենը դրսից այնքան չէր ստացվում, որ այդ պաշտոնության օրվա պարենը բավարարեր, ուր մնաց՝ զորքի համար պաշար պատրաստեր:

Քանիցս ես վիճաբանություն եմ ունեցել Ներքին գործոց նախարար Մելիք-Յուլյանի հետ եւ առաջարկել կրճատելու պաշտոնության թիվը մինչ նվազագույնի, որպեսզի անգործ եւ ձրիակեր պաշտոնյաները հեռացվեն, զորքի նեղ օրվա համար հացի պաշար լինի, որովհետեւ զինվորը պիտի կուշտ լինի, որ երկար պաշտպանի:

Բայց իմ այս առաջարկություններին ի պատասխան միայն անհիմն առարկություններ եմ լսել եւ նախարարների հաստիքները մինչեւ վերջին օրը նույնությամբ մնացել են, որի պատճառով էլ՝ երբ Ջանգեզուրի շրջանում սկսվեցին կռիվները, պահեստում մի քանի գրվանքա ցորեն էլ չէր մնացել: Չնայելով այդքան պաշտոնության եւ 11 հոգուց բաղկացած նախարարական կազմին, ներքին կյանքի մեջ շահատակությունները կատարվում էին ամենուրեք:

Բազարչայը դարձել էր *թալանի, ավազակության, խայտառակ արարքների մի բուն*, եւ այդ բոլորը տեղի էր ունենում պաշտոնյաների ձեռքով: Մինչեւ իսկ պետության համար Բազարչայից Գորիս ուղարկած մթերքը ճանապարհին գոլորշիանում, չքանում էր եւ այդ առթիվ ոչ ոք չէր պատժվում:

Ունեինք Հաղորդակցության նախարար յուր առանձին հաստիքով, երեք նախարար առանց պաշտոնի, որոնք չզիտեմ ինչու, միշտ պտտում էին Հանքերի շրջանում, բայց երեւանի գաղթականությունն օրերով, շաբաթներով թափած մնաց Արաքսի ափին բացօդյա, քաղցած, ցրտի ու կեղտի

մեջ, սարսափի ազդեցության տակ եւ նրանցից ոչ ոք կտրուկ միջոցների չդիմեց մասնագետներին պահելու եւ ամենակարճ ժամանակամիջոցում լաստանավը շինելու, թե այդ թշվառ գաղթականությունը փրկելու յուր դժոխային վիճակից, թե Պարսկաստանի մյուս ասիի հետ մեր հաղորդակցությունը մշտական դարձնելու եւ թե պարսից հողում գնած ցորենը հեշտությամբ տեղափոխելու համար:

Բայց երբ դեռ Հայաստանի Հանրապետության նահարարության անդամները մեծավ մասամբ Տաթև կամ Հանքերունն էին, երբ դեռ նրանցից ոմանք նախարարական կազմի մեջ չէին մտել եւ պարտավոր էին իբրեւ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներ միշտ իրենց գաղթականների հետ լինել, նրանց դյուրություն տային անցնելու Պարսկաստան, նրանք գաղթականությունն իրենցից առաջ ուղարկում էին Արաքսի ասիը, թողնում էին անխնամ, իսկ իրենք թիկունքում Հանքերուն եւ Տաթևում դեռ կազդուրվում էին:

Ահա թե ինչ է գրում այդ առթիվ Թավրիզից մայիսի 12-ին թ.5 նամակում Վրացյանը Հայաստանի Հանրապետության կառավարությանը. «Ես կարծում էի, որ դուք արդեն կազմակերպել եք գաղթականության գործը, որն յուր ընթացքով շարունակվում է: Բուբենի նամակից պարզվում է, որ դուք *բնավ չեք մասնակցում գաղթականության գործին, որը շատ ողբալի վիճակի մեջ է*: Պարզվում է, որ դուք Հանքերուն եք, մինչդեռ ամբողջ ժողովուրդն Արաքսի ասիին է: Չէ՞ որ մենք պայմանավորվել ենք, որ դուք պիտի ժողովրդի՝ Տաթևից հեռանալուց հետո, անցնեք նրա հետ Մեղրի եւ վարեք գաղթականության փոխադրման գործը, մինչեւ ինձանից տեղեկություն ստանաք: *Ժողովուրդն Արաքսի ասիին ծայր աստիճան վատ դրության մեջ է՝ ենթակա սովի կամայականությունների, մինչդեռ՝ մեր բարոյական պարտքն էր մինչեւ վերջը դյուրացնել նրա անցքը*: Դուք պետք է անցնեք Մեղրի եւ դյուրացնեք ժողովրդի անցքն, որից հետո միայն կառավարությունն, որպես այդպիսին, կանցնի Պարսկաստան»:

Այդ նամակը բավական *պերճախոս մի վկա* է Փրկության կոմիտեի եւ ՀՀ կառավարության *անտարբեր եւ սառնասիրտ վերսլեքնունքին* դեպի յուր պատճառով երեսանից Լեռնահայ յստանի վրայով Արաքսի ասի հասած հազարավոր

գաղթականությունը: Հազար ու մի տանջանքով, մինչեւ իսկ բավական զոհեր տալով, գաղթականությունն անցնում է մյուս ասի եւ նույնիսկ նեղությամբ ու հագի շորերը վաճառելով՝ հասնում է Թավրիզ:

Դրանից հետո արդյո՞ք կառավարությունը զգաց լաստանավի կենսական նշանակությունը: Անհրաժեշտ միջոցների դիմում է ապագայում եւս գաղթականությանը չենթարկելու նույնպիսի տանջանքի: Ջգում է, այո, բայց կատարելու շնորհքից միանգամայն զուրկ է:

Կառավարությունը ծախսում է 100, եթե ոչ ավելի ոսկի, Արաքսի այս ու այն ասիին կառուցանել է տալիս լաստանավի հենարաններ, բայց ամբողջ երեք ամսվա ընթացքում չի կարողանում մետաղե թոկով միացնել այդ հենարանները, որի պատճառով երկրորդ գաղթականությունը նույնպիսի սոսկալի վիճակի է ենթարկվում: Խեղդվում են երեք մարդ, բավական թվով ձիեր, անասուններ, կորչում են մեծ քանակությամբ իրեր եւ այլ գրաստներ, եւ կառավարությունն ու գաղթականությունն ավելի մեծ վնասներ են կրում, քան լաստանավի համար ծախս կարող էր լինել: Շնորհիվ մի ինչ որ Ալեքսանի շահատակությունների՝ ժողովրդից բացարձակապես կորզում են (մինչեւ Մելիք-Յուլյանի Արաքսի ասիը գալը) ոսկի, արծաթ՝ առանց հերթի մյուս ասի անցկացնելու համար: Ֆալաշիներն (զետն անցկացնող պարսիկներ - Հ. Ա.) այդ նույն Ալեքսանի ներշնչմամբ երբեմն ճաշից հետո չէին գալիս մարդ տեղափոխելու եւ կամ փող էին պահանջում: Ալեքսանն այդ ժամանակ տեր եւ տնօրեն էր ամբողջ գաղթականության կյանքի եւ գույքի՝ ոչ ոք այդ ուրանալ չի կարող:

Կառավարությունը Հանքերուն որոշում է իր անդամներից մի քանիսին տալ լիազորություն գաղթականներին մյուս ասի անցկացնելու, բայց այդ լիազորները գալիս են, երբ երեք-չորս օր շարունակվում է այդ տեղափոխությունը, երբ սկսած գնդապետից մինչեւ հասարակ զինվորի կյանքը դարձել էր Ալեքսանի եւ նմանների համար խաղալիք: Ահա թե մեր կառավարության որպիսի գործերն են տեղիք տալիս դժգոհության եւ բողոքների:

ՀՀ կառավարությունը Լեռնահայաստանի յուր կարճատեւ գործունեության ընթացքում ժողովրդի եւ մինչեւ իսկ

ստորին պաշտոնյաների շրջաններում մեծ դժգոհության տեղիք է տալիս յուր արարքներով:

Պաշտոնապես հայտարարվում է, որ ներքին շուկայում պիտի գործածել միմիայն հայկական դրամ՝ զանցառուներից սպառնում են խիստ պատիժներ տալ, իսկ Արեւիքում, Հանքերի շրջանում, Տաթևում, Բազարչայում եւ այլուր մեր բարձր պաշտոնյաները՝ Փրկության կոմիտեի անդամներ եւ նախարարներ, ժողովրդի աչքի առաջ գործ են ածում խորհրդային դրամ ու ոսկի, գնում են ձի, խոտ եւ այլ իրեր եւ մթերքներ: Հայկական դրամը միանգամից գործաօժույթունից վերանում է, կյանքը սարսափելի թանկանում է եւ ժողովուրդն ու ստորին պաշտոնեությունը զրկվում են մթերք ձեռք բերելու հնարավորությունից, որն էլ առիթ է ծառայում դժգոհության:

Փաստ է, որ երբ ընկեր Վրացյանը վերջին անգամ Գորիս է ժամանում, Գորիսի ստորին պաշտոնյաները, որոնք ռոճիկ էին ստանում հայկական դրամով եւ զուրկ էին խորհրդայինից, ներկայանում են նրան եւ գանգատվում բարձր պաշտոնյաների այդ արարքի դեմ եւ խնդրում կամ իրենց էլ խորհրդային դրամով ռոճիկ տալ, կամ միջոցներ ձեռք առնել բարձր պաշտոնյաների այդ քայլի դեմն առնելու:

Կառավարությունը Հանքերի շրջանն է ուղարկում իր լիազորներին թուրքերից խորհրդային դրամով գնումներ անելու՝ մի քանի օրվա ընթացքում ցորենի, գարու, բրնձի, չամիչի արժեքն այնպիսի տոսկալի չափերի է հասնում, որ գյուղացիներից ոչ ոք չի համարձակվում որեւէ մթերք գնելու, թեկուզ խորհրդային դրամով: Ահա կառավարության տված օգուտը ժողովրդին:

Ֆինանսների նախարարն (Համբարձում Տերտերյան - Հ.Ա.), որ մեր կանոնավոր զորքերում տասն եւ մեկ ամիս շարունակ ծառայած Սիսիանի սպայությանն էլ զինվորներին խնայում է ռոճիկը տալ, որը մերժում է մինչեւ իսկ փոխվարչապետ Հովհաննիսյանի մակագրությամբ իրեն ներկայացած սիսիանցիներին երկու ամսվա ռոճիկը գոնե բաց թողնել գաղթից մի քանի ժամ առաջ, միլիարդներ է թողնում թաղված Հանքերում:

Հարկավոր է նաեւ մի նմուշ բերել մեր կառավարության արտաքին քաղաքականությունից, որից պարզ կարելի

է տեսնել, թե որքան է նա ճանաչում մեր եւ հարեւան ժողովրդներին եւ որքան իրագել է նրանց վերջին տարիների փոխադարձ հարաբերությանը:

Վերջին 4-5 տարվա ընթացքին թուրք քոչվորն իրան իրավունք չի համարել ոտք դնել Սիսիան եւ Ջանգեզուր, որովհետեւ նրանք խաղաղ պայմաններում միշտ վնաս են հասցրել հայի տնտեսությանը, ուր մնաց՝ կռիվների ընթացքում: Ջանգեզուրի վերջին տարիների անընդհատ կռիվը մեծ մասամբ այդ խնդրի շուրջն էր պտտվում, թեւէ իմ կարծիքով՝ խաղաղ ժամանակ կարելի է եւ պետք է այս կամ այն կերպ վճռել այդ կնճռոտ հարցը, բայց երբ մենք կռվում ենք մեծամասնականների հետ եւ համարյա թե շրջապատված ենք ամեն կողմից, կառավարությունը պիտի այնքան հեռատես լիներ, որ թույլ չտար մեր կողքին բնակվելու մի երկրորդ թշնամու: Բայց նա յուր անհեռատես քայլով, կամենալով իբր թե սիրաշահել այդ քոչվորներին, այնպիսի միջոցների դիմեց, որով միանգամայն վտանգի ենթարկեց մեր ժողովրդի անկախության խնդիրը:

Մինքենդի եւ առհասարակ Հաջի Սամլուի թրքությունը, որ տարիներ շարունակ անհաշտ թշնամի է եղել Ջանգեզուրի հայությանը, յուր այդ ընթացքը շարունակում է նաեւ այս տարի: Դեռ մայիսի վերջին նոքա այնքան համարձակություն են ձեռք բերում, որ գաղտագողի քշում են Վերին Շենի (Գորիսից 6-7 վերստի վրա) անասուններն եւ մի մարդ սպանում: Նույնպիսի թալան կատարում են նաեւ քոչվորները Մինքենդի կողմից հունիսի սկզբին՝ քշելով Շինուհայրի ոչխարն ու տավարը, Դարաբասի անասուններն եւ կողոպտում Դարաքիլիսայի խճուղում պետական տրանսպորտն, որ մի քանի օր հետո իրենց հեռավոր նպատակների համար բարվոք են համարում վերադարձնել:

Եվ այդ բոլոր դեպքերից հետո կառավարությունը փոխանակ զգուշության միջոցներ ձեռք առնելու, մանավանդ որ Դարալագյազի ռազմական գործողությունն որոշված է սկսել, չգիտեմ ինչ-ինչ շարժառիթներով ընդունում է 2000 զինված քոչվորների ներկայացուցիչների առաջարկը՝ գալ Գորիս եւ պայմանավորվել մեր կառավարության հետ:

Անհասկանալի է, թե ինչու կառավարությունը կույր հավատ ընծայելով նրանց այդ պատգամավորությանը,

ընդունում է Գորիսում եւ պահում յուր մոտ 4-5 օր, ինչպես եւ թույլ էր տալիս անընդհատ Հաջի Սամլուի թրքությանն անարգել մտնել Գորիս եւ շրջակա գյուղերը՝ իբր թե մթերքներ վաճառելու համար, երբ շատերն առանց որեւէ մթերքի էին գալիս կամ մի բեռ փայտ ու մի ֆունտ թամրաքու վերցրած մտնում էին մեր կենտրոնն՝ ավելի շուտ տեղեկություններ հավաքելու թշնամու համար, քան՝ ապրանք վաճառելու: Եվ կառավարությունն այդ բոլորի առաջ լուռ հանդիսատես էր:

Ինչ տեսակետով էր առաջնորդվում կառավարությունը համաձայնության գալով քոչվորների հետ եւ յուր երկրի ամենակարեւոր դիրքերը զիջելով նրանց:

Մեր կառավարությունը միամտությամբ առաջ է գնում քոչվորների հետեւյալ առաջարկներին. 1) զիջել նրանց հողերի եւ անասունների համար Ղարաքիլիսայի, Անգեղակոթի եւ Մուխաթարիայի (նույնն է թե ամբողջ Սիսիանի) հյուսիսարեւելյան բոլոր լեռնահովիտները, 2) թույլ տալ շուկա բանալու Սիսիանի որեւէ հարմար տեղում, 3) եթե մեծամասնականները մինչ աշուն չքաշվեն Ղարաբաղից՝ իրենց ճանապարհի տալ Նախիջեւան կամ Պարսկաստան անցնելու, 4) թույլ տալ Գորիսի վրայով իրենց տրանսպորտն անցնելու Բարգուշատից դեպի յայլաղները:

Կառավարությունը միանգամայն հավատացած լինելով (նոցա բացատրությանց հիման վրա), որ քոչվորները հակամեծամասնական տարր են ներկա հանգամանքներում, նույնանման են նրանց քաղաքական շահերը, ընդունում է նրանց պայմանները, չնայելով նույն ժողովին մասնակցող իմ փոխանորդ գլխավոր սպայակույտի պետ Նարինյանի բողոքներին, որ միանգամայն հակառակ էր այդ համաձայնությանն, ավելացնելով որ նոր զիջած արոտատեղիների համար նոքա պարտավոր են վճարել 50 միլիոն հայկական չեկերով, շուկան պիտի լինի Ղարաքիլիսիայի շուկայից 4 վերստ դեպի հյուսիս, Գորիսով անցկացրած մթերքի 3 տոկոսը տալ իրանց, որն եւ ընդունում են քոչվորները:

Կառավարությունը մինչեւ իսկ լուրջ ուշադրություն չի դարձնում նրանց առաջարկության 3-րդ կետին, ուր պարզ ասված է, որ նոքա կամենում են կապվել Նախիջեւանի հետ կամ իբր թե անցնել Պարսկաստան: Նախիջեւանը մի երկրորդ Հաջի Սամլու էր մեզ համար, հետեւապես, երբ քոչվոր-

ները կամենում են այնտեղ անցնել, դա նշանակում է միայն իրագործել կովկասյան մահմեդականության վաղուց ի վեր փայփայած ծրագիրն՝ ուժեղացնել այդ շրջանն եւ կապվել Ադրբեջանի եւ Տաճկաստանի հետ:

Մեր կառավարության ձեռքով երկրի համար ստեղծված այդ դրությունն առիթ է տալիս ինձ հունիսի 26-ին դիմել ՀՀ նախարարական խորհրդին, պատճենը՝ վարչապետ Վրացյանին, հետեւյալ գրությամբ. «Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կա՝ խորհրդային Արարատյան Հայաստանն իրեն ապահով զգալ չի կարող: Այսպես է մտածել եւ գործի անցել Երեւանի հեղկոմն, ինչպես վկայում է Հայիեղկոմի նախագահ Սարգիս Կասյանն յուր հեռագրով. «Քեշիշքենդ-Ղարալագյազի զինկոմին, պատճենը՝ Գավիեղկոմին. Հունվար 29: Քանի դեռ չի գրավվել Չանգեզուրը, քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կա, Նախիջեւանն ու Շարուրը չեն կարող կցվել Ադրբեջանին, Հայկական Ղարաբաղը չի ադրբեջանանա: Մեղմ լինենք, մեծ Ադրբեջանը չի ստեղծվելու Ղարալագյազում, որը կազմում է չգրաված մեր երկրամասի թիկունքը: Վարել ամենամեղմ քաղաքականություն: Արգելվում են աջից ձախ ձերբակալումներն ու բռնագրավումները: Դեպի քաղաքացիները ցույց տալ պատշաճ վերաբերմունք, ձերբակալել միայն նրանց, որոնք բացահայտ կերպով քարոզչություն են մղում իշխանության դեմ: Այն պաշտոնատար անձինք, որոնք կխուսափեն կատարել սույն հրամանը, կենթարկվեն հեղափոխական ամենախիստ պատասխանատվության: Նախագահ Հայիեղկոմի Ս. Կասյան»:

Այսպես է մտածել մեր կողքին ապրող մահմեդականությունը, եւ այսպես գործի անցել: Ինչպես տեսնում եք, կարմիրների եւ թրքության շահերը նույնանման են ու հենց այդ հողի վրա էլ տեղի է ունեցել երկու կողմերի մեր դեմ ուղղված լուրջ զինակցությունը: Ամսի 20-ից սկսած թրքությունն առայժմ Նախիջեւանից եւ Մինքենդից աշխույժ գործողությունների է դիմել: Հավանական են համարում, արդեն նշաններ էլ կան, Բարգուշատի եւ Հաքյարա-Խանլուի թրքության թշնամական գործողությունները մոտ օրերում: Տեղական թրքության եւ մեծամասնականների շարքերը խտացնում են նաեւ եկվոր թուրք քոչվորները: Այսպես, ուրեմն Մուսավաթի եւ Նարինյանովի (խորհրդային Ադրբեջանի ղեկավարը-Հ. Ա.)

միջեւ ստեղծված ռազմաքաղաքական կապը կատարյալ է ու ավելի քան հասկանալի: Թաթար հատվածների հավաքման եւ տարածք (Մեծ Ադրբեջան) ստեղծելու վառ ցանկությունն ամբողջ թրքությունն առանց կուսակցության եւ դասակարգերի խտրության զինել եւ հանել է մեր դեմ:

Այդ պարագան զգալիորեն դժվարացնում է մեր՝ կարմիրների դեմ մղած անհավասար կռիվը, բայց չի հուսահատեցնում ինձ, որ մենք ցանկության դեպքում, եթե շատ չնեղվենք ռազմամթերքի եւ հացի պակասությունից, կարող կլինենք շարունակելու մեր հերոսական դիմադրությունը, մինչեւ որ Անդրկովկասում բռնավոր կերպով խորհրդայնացված ազգերը կմիանան մի ընդհանուր ռազմահեղափոխական ճակատի վրա՝ մի դրոշի տակ՝ ընդդեմ կարմիրների:

Չգիտեմ, ի՞նչ արժեք ունեին հայկական չեկերը, որ մինչեւ իսկ իրանք՝ նախարարները չէին կարողանում գործածել, երբ այդ պայմանի շնորհիվ Սիսիանի մեր աջ թեւում հայտնի Սինքենդին կից գլխավոր խճուղուց 4 վերստ հեռու բնակություն է հաստատում մի նոր թշնամի, որն արդեն կազմակերպած թաւաններով ցույց էր տվել յուր վերաբերմունքը, որն եւ չուշացավ մեր ծանր պայմաններում ինքն եւս զենքի դիմելու, մեծամասնականների հետ միանալու եւ այդ կողմից մեզ հարվածելու, որն եւ արագացրեց Սիսիանի անկումը:

Չեմ կարող լռության տալ եւ չհիշատակել կառավարության եւ Արեւմտյան ճակատի հրամանատարության ներքին քաղաքականության վերաբերյալ մի անվճռական քայլ, որը չափազանց տխուր հետեւանքներ ունեցավ մեր գյուղացիության եւ մեր երկրի պաշտպանության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանը շատ լավ հայտնի է, թե ինչ տմարդի դեր խաղացին մալականներն Ախտայի, Ելենովկայի, Դիլիջանի շրջաններում եւ այլուր՝ մեծամասնականների դեմ վարած ամբողջ կռիվների ընթացքում: Բազարչայի երկու մալական գյուղերը գոյություն ունեն միայն Սիսիանի հայերի պաշտպանության շնորհիվ, որ սկսած 1918-20թթ. բազմիցս կրկնված թուրքական հարձակումներից ազատել է, բայց սկսած 1920 հուլիս ամսից այդ մալականներն երախտամոռությամբ մեծամասնականների կողմն անցնելով՝ միշտ մեր թիկունքին են խփել; միշտ թալանել եւ սպանել են մեր նահանջող զինվորներին կամ գյուղացիներին:

Թույլ տալ, որ Սիսիանի կենտրոնում այդպիսի մի դավաճան գյուղ գոյություն ունենա կամ հապաղել նրա տեղափոխությունը, դա միանգամայն հակապետական սկզբունք է: Այդ է պատճառը, որ վաղուց ի վեր որոշում է եղել հեռացնել այդ գյուղացիներին Լեռնահայաստանից եւ այդ որոշումը հակառակ իմ բացորոշ հրահանգներին՝ սկսում են աստիճանաբար կատարել մայիսի վերջերից: Թե ինչ խայտառակ ավազակություն, թալան եւ վաճառք է կատարվում այդ երկու գյուղերում պաշտոնյաների ձեռքով, նրանց ձիերը, կովերը եւ ցորենը բռնագրավելու միջոցին, դա բոլորիդ հայտնի է: Անթով եմ արձանագրում այս փաստը, բայց եւ անհրաժեշտ եմ գտնում ձեր ուշադրությունը դարձնել այն քստմնելի արարքի վրա, որ թույլ են տալիս իրենց նախարարության կազմի անհատներ, ուր մնաց հասարակ պաշտոնյաները:

Երբ հունիսի սկզբին Պետական Վերահսկիչ Գեղեոն Տեր-Սինասյանն եւ Խնամատարության նախարար բժիշկ Սինաս Տեր-Սինասյանը Ղալաջուղում մեծամասնականների հետ իրենց բանակցությունները վերջացնում են, Գորիսից նոքա մինչեւ իսկ չեն զլանում Բազարչայ գնալ եւ Գ.Տեր-Սինասյանը երկու ձիու քուռակ է վերցնում իրեն բաժին, իսկ բժիշկ Մ.Տեր-Սինասյանը՝ մի ձի:

Երբ Պետական Վերահսկիչն եւ Խնամատարության նախարարն թույլ են տալիս այդպիսի մի կեղտոտ արարք՝ փոխանակ դրա առաջն առնելու եւ մեղավորներին պատժելու, ի՞նչ կարելի է պահանջել մյուս պաշտոնյաներից, եւ երբ ժողովուրդը տեսնում է այս բոլորը, նա կարո՞ղ է հավատալ այդպիսի կառավարության կենսունակությանը:

Երբ մեր ռազմաճակատը մոտենում է այդ գյուղերի շրջաններին եւ ռազմական տեսակետից եւ վճռականորեն հրամայում եմ Կուռոյին՝ տեղահանել մալականներին, նա իմ կարգադրությունը չի կատարում, իսկ փոխվարչապետ Հովհաննիսյանն, որ այդ ժամանակ գտնվում էր Կուռոյի մոտ, պարտավոր էր նպաստելու՝ շուտափույթ լուծելու այդ հարցը: Նա յուր՝ Մելիք-Յուլյանի անունով գրած նամակում այն միտքն է արտահայտում, թե՝ «մարտավարական տեսակետից տեղահանությունը պիտի կատարվի աստիճանաբար, թեւ այդ գյուղը միշտ մեր թիկունքին է խփել»:

Եվ ի՞նչ հետեւանք է ունենում Կուռոյի եւ Զովհաննիս-
յանի այդ մարտավարությունը: Երբ տեղափոխվեց Սիսիանի
շրջանը, Բազարչայից դեպի Նախիջեւան փախած մալա-
կանները զինված եւ միացած մեծամասնականների հետ, մեր
ծախս թեւն են հարվածում, Սիմքենդի կողմից մեր աջ թեւին
են սպառնում, իսկ Բազարչայի գյուղերում մնացած մալա-
կաններն էլ՝ մեր ճակատի կողմից են խփում եւ նպաստում
Սիսիանի շուտամուտը անկմանը: Ահա մեր կառավարության
վարած ներքին քաղաքականության արդյունքը:

Ի՞նչ ռազմամթերք ունեինք մենք, որ ամեն կողմից
ողողված թշնամիներով՝ մենք ստիպված պարտավորվեինք
բավականանալ մեր ունեցածով եւ բոլոր ճակատներում կռիվ
վարեինք: Գյուղացիության հոծ մեծամասնությունը գործ էր
ածում ռուսական երեք գծանի հրացաններ: Չափազանց քիչ
էին լեքելներն ու ավելի քիչ՝ տաճկական հրացանները:

Երեւանից դեռ անցյալ տարվանից այդ տեսակի փամ-
փուշտ բոլորից քիչ էր ստացվում, որովհետեւ այնտեղ էլ այդ
փամփուշտը չափավոր քանակությամբ կար:

Դեռ անցյալ տարվա նոյեմբերից սկսած մենք ունե-
ինք այնքան փամփուշտ, որքան գրավել էինք մեծամասնա-
կաններից՝ մեր ունեցած ընդհարումների ընթացքում:

Թնդանոթներ համարյա թե չունեինք՝ շնորհիվ այն քա-
ղաքականության, որ վարում էր ԶԶ կառավարությունն անց-
յալ տարի, յուր մեծամասնականներին տեղի տալուց մի քա-
նի ամիս առաջ, երբ ինչ որ նուրբ նկատառումներով մերժում
էր Դարալագյազի հրետանին մինչեւ իսկ մեզ ուղարկելու,
պատճառաբանելով, թե մեծամասնականները կարող են
իմանալ եւ առավել, որ մենք ենք օգնում քեզ, որն էլ քա-
ղաքական տեսակետից վնաս է մեր գործին եւ ինձ համարում
էին մինչեւ իսկ իբր ապստամբ ԶԶ կառավարության դեմ, *ուս-
տի եւ չէին ուզում արտաքուստ որեւէ գործ ունենալ ինձ հետ*,
ուր մնաց հրետանի ուղարկել (վկայում է այդ մասին մեր
սպայակույտի պետ Պրիտոմանովի ծածկագիր երկու հեռա-
գրերը, որոնց մասին հիշատակություն եղավ վերը):

Դարալագյազը գրավելու գլխավոր շարժառիթներից
մեկը ռազմամթերք ձեռք բերելն էր մեր թշնամուց, բայց
դժբախտաբար նրանից էլ չկարողացանք հարկավոր չափով
օգտվել, նախ՝ տրանսպորտի անկանոնության եւ երկրորդ՝

Դարալագյազը շուտ ձեռքից տալու պատճառով: Հետեւա-
պես, մենք ունեինք այնպիսի փոքր քանակությամբ փամ-
փուշտ, որ տեւողական կռիվների ընթացքում մի քանի օր
անգամ չէր կարող բավականացնել:

Այդ է պատճառը, որ ես ամիսներ առաջ գրել էի ընկեր
Վրացյանին եւ Ատրպատականի Սրբազան Առաջնորդին՝ գնել
Պարսկաստանում 100000 մոսինի փամփուշտ, որի տեղն ու
արժեքը ցույց էի տվել նրանց: Բայց իմ խնդիրն ու արդար
դիմումը մնացին անպատասխան: Այս բոլորից պարզ կլինի
ձեզ համար, թե որքան չնչին ռազմանյութերի միջոց ունեինք
մենք եւ որքան ժամանակ կարող կլինեինք դիմադրել թշնա-
մուն:

Այժմ, ես կանցնեմ Լեռնահայաստանի զինվորության
եւ ժողովրդի ամենացավոտ կողմին՝ նրա պարենավորման
գործին: Լեռնահայաստանի մեծագույն մասն առհասարակ
զուրկ է եղել հացահատիկի բավարար պաշարից՝ թե խա-
ղաղ ժամանակ եւ թե՛ պատերազմների ընթացքում: Նա միշտ
ստիպված է եղել դրսից ներմուծելու: Այս տարի՝ նամանա-
վանդ, սոսկալի սով էր տիրում բուն Ջանգեզուրի բոլոր
գյուղերում, Ղափանում, Արեւիքում եւ Սիսիանի որոշ մասե-
րում՝ շնորհիվ մեծամասնականների բռնագրավումների:

Դեռ մարտ եւ ապրիլ ամիսներից սկսած ժողովուրդը
բույսերով եւ այլ հակամարտողական նյութերով էր կերա-
կրվում: Սովամահության դեպքեր էին տեղի ունենում հնձո-
րեսկ եւ Կոռնիձոր գյուղերում: Համեմայնդեպս, Լեռնահա-
յաստանի նոր կառավարությունն իրագեկ էր երկրի այդ դրու-
թյանը, որ յուր 1921թ. մայիսի 1-ին հրատարակած հռչակա-
գրում ի միջ այլոց խնդիրների՝ գլխավորապես շոշափում էր
նաեւ պարենավորման հարցը, ասելով. «Մեր զորամասերին,
պաշտոնությանը եւ եկած գաղթականությանը պարենավո-
րելու համար *Լեռնահայաստանի ժողովուրդը գոհաբերում է
յուր վերջին պաշարները*, սակայն մեծ կարիքը բավարարե-
լու համար կառավարությունը հարկադրված է նաեւ միջոց-
ներ ձեռք առնել շտապ կերպով մեր հարեւան երկրներից
պարենավորման մթերքներ գնել եւ փոխադրել մեր երկրի
ներսը»:

Նշանակվում է պարենավորման առանձին նախարար՝
յուր երկու ուրույն հաստիքներով, մեկը՝ Մեղրիի շրջանում,

իսկ մյուսը՝ Գորիսում: Որոշվում է Պարսկաստանում գնել եւ ամենակարճ ժամանակամիջոցում փոխադրել առնվազն 20000 փուֆ ցորեն (Ատրպատականի Առաջնորդի գրությունը 1921թ. մայիսի 10-ին): Քանի որ այդ որոշումը կար եւ առանձին նախարարի էր հանձնված այդ պատասխանատու եւ կենսական գործը, ես լիահույս էի, որ գնումների խնդիրը կդրվի կանոնավոր հիմքերի վրա եւ շուտափույթ կերպով կիրագործվի, որովհետեւ երեւանյան 8-10000 գաղթականությունն անցնելով Լեռնահայաստանով, բավական սպառել էր գյուղացիների մոտ եղած պաշարն, ուստի շատ շուտով քաղցած պիտի մնար նաեւ զինվորությունն, իսկ բոլորի համար պարզ էր, որ կռիվներն անխուսափելի են:

Բայց ի՞նչ է անում կառավարությունը՝ նախքան դրսից որեւէ հատիկ ցորեն ներս մուծելը մեր երկիրը: Նախքան գաղթականության գալն՝ իմ կարգադրությամբ Գորիսում, Տաթևում, միմիայն զինվորության պետքերի համար ամբարված մի քանի հարյուր փուֆ հացահատիկը գործադրվում է գաղթականության եւ պաշտոնեության պետքերի համար, օրեցօր դատարկվում են մեր խղճալի պահեստները, իսկ դրա փոխարեն՝ Արաքսի ափից եւ այլ տեղերից բավարար քանակությամբ հացահատիկ չի ստացվում, կամ երբեմն այնքան է ստացվում, որ պաշտոնեության օրվա հացին հազիվ է բավարարում:

Ես ամեն անգամ Գորիս գնալուց բողոքում, պահանջում եմ *կրճատել պաշտոնյաների թիվը*, որոնցից *շատ շատերը, բացի հաց սպառելուց՝ ուրիշ ոչ մի գործով չեն զբաղվում*, սեւ օրվա համար պաշար պահել, որ զինվորությունը քաղցած չմնա: Բայց ինձ միշտ կերակրում էին հույսերով, իսկ զինվորությունը մնում էր դիրքերում, օրը՝ մի գրվանքս սեւ հացի կարոտ:

Պարենավորման նախարարն ամբողջ երկու եւ կես ամսվա ընթացքում ոչ մի անգամ չբարեհաճեց կառավարության կենտրոնատեղին՝ Գորիս գալ, մասնակցել նախարարական խորհրդին, եւ առհասարակ պարենավորման գործի վերաբերյալ զեկուցում տալ, որ շատ թյուրիմացություններ կային պարզելու:

Նա մնաց անշարժ Մեղրի, իբր թե յուր անմիջական հսկողությամբ ու ձեռներեցությամբ ավելի լավ կազմակեր-

պելու հացահատիկների գնումներն ու փոխադրելը: Երկու եւ կես ամսվա ընթացքում հազիվ նա կարողացավ մոտ 3000 փուֆ հացահատիկ տեղափոխել:

Այդ պաշարի գնման եւ փոխադրության շուրջը ստեղծվեց մի նոր պանամա, Լեռնահայաստանի պանաման, որի հերոսներն հանդիսացան այդ նախարարության պաշտոնյաները, որի հետեւանքով էլ ՀՀ մեծմասամբ իզուր վատնեց յուր արտարժույթը, քանի որ զինվորությունն ու ժողովուրդը մինչեւ վերջը մնաց սոված: Գորիսի մնացած բոլոր նախարարներն էլ կարող են վկայել, որ կռվի հենց առաջին օրը Գորիսի պահեստում զինվորների համար մի օրվա հացի պաշար չէր մնացել, Բազարչայի պաշարը մի քանի հազար զինվորությունը վաղուց սպառել էր, էլ չեն խոսում Ջաբուղի ճակատի մեր զինվորների սոսկալի վիճակի մասին, երբ հացի տեղ խոտ էին ուտում:

Եվ ի՞նչ ամոթաբեր շահատակության աղբյուր դարձավ հացահատիկի գնման գործը: Ատրպատականի առաջնորդը դեռ մայիսի 10-ին գրում է ինձ. «Յորենի արժեքն Ամիր Արշադը բարձրացրեց 20-28 թումանի եւ դրա մեղքը Մեղրու մի քանի լրբերինն է, որ 28-ով են առել շահադիտական ձեռով»: Հետագայում, ավելի եւս բարձրացավ ցորենի արժեքը:

Իսկ ի՞նչ էր անում այդ ժամանակ պարենավորման նախարարն իր առանձին լիազորություններով (որի մասին քիչ հետո), ամենակարող պաշտոնյաներով, ի՞նչու կտրուկ միջոցների չէր դիմում Մեղրիում, ուր ինքն էր նստում եւ վերավաճառքի առաջն առնում, դա ինձ համար միանգամայն անհասկանալի էր: Պարենավորման նախարարի գնած ցորենին *40% ավագ* էր խառնված, այն էլ՝ Արաքսի ափի ավագ: Ղափանի, Տաթևի եւ Գորիսի շրջանների գյուղացիները Մեղրուց պետական այդ ցորենն իրանց գրաստներով տեղափոխելու համար պիտի ստանային իրենց բերած ցորենի կեսը, բայց հրաժարվում էին այդպիսի ցորեն ստանալու, պատճառաբանելով, թե իրանք ավագ ստանալու համար չեն գնացել Մեղրի: Գիտեին այդ կառավարության անդամները, բայց ոչ մի անգամ պատասխանատվության չկանչեցին այդ խայտառակ արարքի հերոսներին:

Ես թե Ամիր Արշադից եւ թե Դուզալի թուրք բնակիչներից ունեմ բազմաթիվ վնասներ, որոնք ցույց են տալիս, թե

իրանց Արաքսի մյուս ափը փոխադրած ցորենը մի քանի խտխալով անց են կացրել, մաքրել, որովհետեւ այդպես էր կարգադրել Ամիրը:

Յուր հունիսի 28-ին ինձ ուղղած նամակում ահա թե ինչ է գրում այդ խնդրի վերաբերյալ Ամիր Արշաղը. «Նմանապես խնդրել էիր ինձ քեզ գրելու, թե ինչ տեսակ ցորեն ենք տվել այստեղ, իմ կարգադրությամբ հանձնել են ամենալավ տեսակի ցորեն, մանր քարերից եւ ուրիշ կեղտոտությունից **երկու անգամ** մաքրելուց հետո»: Պարզ է ուրեմն, թե որտեղ կարող է ցորենն ավագի կերպարանափոխվել: Պարենավորման գործի պաշտոնյաների այդ արարքները հայտնի էին Մեղրիի շրջանի ժողովրդին եւ հրամանատարությանը:

Ես ինքս բազմիցս թե բերանացի եւ թե գրավոր բողոքներ են ստացել այդ առթիվ, մինչեւ իսկ իմ ընկերների մոտ կարողացել են գրավոր բողոքներից մի քանիսը, խույս տալով պաշտոնական կերպարանք տալուց, քանի որ նախարարական կազմի մեջ կային եւ ուրիշ հոսանքների պատկանող անհատներ, բայց իմ բոլոր դիմումներն ապարդյուն են եղել:

1921 թ. մայիսի 9-ին Կարճեւանի հասարակությունը, որը լավ իրազեկ էր հացահատիկի տեղափոխության գործին, դիմում է ինձ հետեւյալ գրությամբ. «Մենք ստիպված ենք ձեզ մի րոպե ծանձրացնել սույն գրության մեջ արժարժած հարցով, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարենավորման նախարար պարոն Տեր Հակոբյանը մեր պատգամավորներին «գոհացում» է տվել լավ ... հայիոյանքներով»: Կարճեւանն Արաքսի ափին ընկած Մեղրիի շրջանին ամենամոտ գյուղն է: Վաղուց հայտնի է, որ նրա ժողովուրդը սովի է մատնված եւ ի պատասխան յուր դիմումին՝ պարենավորման նախարարին հացահատիկ ձեռք բերելու, հայիոյանք է ձեռք բերում:

Մեղրեցի միանգամայն մի վստահելի անձնավորություն, Նիկոլա Մինասյան անունով, 1921թ. հունիսի 8-ին Արեւիքի հրամանատարության միջոցով ուղղել է ինձ հետեւյալ բողոքը. «Իբր անկեղծ ականատես եւ շահագրգռված դեպի իմ պետությունն ու պետական շահերը, բողոքում են կատարող անիրավությունների դեմ, շահագործությունների, որ կործանեց Երեւանի կառավարությունը: Նույն ուղղությամբ կարծես շահատակություն է կատարվել այստեղ: Անց է

կացվում պետական ցորեն, շրջապատել են մի խումբ խնամիներ, տերն իրենց հետ, գոնե մաքուր լինի, փոխանակ մաքուր եւ շիտակ ձեռքերով ամբարելու կենտրոնում, մի մաքուր տեղ, բայց չգիտենք ինչու՝ ամբարվեց Արազի ափում, բայց այդ ինչուն չուշացավ պարզվել՝ ցորենի մեծագույն մասը գոլորշիացավ՝ փոխարինելով ավագի: Ո՞վ է պատասխանատու եւ հացավոր: Ինչ որ մի Շմավոն զեղծման համար մի ժամ թե որքան բանտարկվեց եւ անցավ Թավրիզ, նորից մի ուրիշը՝ Մեղրակ է, ով է, չորս փութ 20 ֆունտ ցորեն, երկու խուրջին մեխ ուղարկել է իրանց տուն, տանողն եկել ու բողոքել է պ. նախարարին՝ չմոռանա՞մ ասելու, որ ցորեն տանողին պատվիրել է, որ Աջանը մի խախալ վերցնի ու գա, ինչո՞ւ, այդ էլ պարզ է՝ մեղրեցիները մինչ այդ Պարսկաստանից ստացել են ցորենը, քիչ քար եւ պուճ դուրս է եկել, բայց ավագ՝ ոչ, իսկ այժմ՝ տասը փթից երկու փութ ավագ է դուրս եկել: Բողոքելով կատարվող ավերումների դեմ, խնդրում ենք հաշվի առնել եւ զեկուցել՝ ուր պետքն է: Ինչ խոսք, լավ միջոց է, գալիս են կատարում շահատակություններ, ավերումներ, եւ անցնում Թավրիզ հանգստանալու եւ վայելելու ժողովրդից թալանած ոսկիները»:

Այս գրությունը, որ մտավորական մի կուսակցական ընկերի է պատկանում, որն անհատապես ոչ մի կերպ շահագրգռված չէ պետական ցորենի գնման գործով, բացի պետական շահը՝ պարզ վկայում է, որ այդ ձեռնարկության մեջ տեղի ունի եւ գողություն եւ ցորենի հետ ավագ խառնել եւ այլն: Մեղրիի ժողովուրդը, որն հենց գործի սկզբից տեսնելով յուր աչքի առաջ կատարվող ավազակությունն ու անբարեխղճությունը, ուժեղ կերպով բողոքում է դրա դեմ եւ պահանջում պարենավորման նախարարի հեռացումը:

Պր. Յ.Տեր-Հակոբյանը հակառակ յուր կամքի՝ ստիպված է լինում հրաժարական տալ կառավարության եւ երբ ՀՀ կառավարությունն որոշում է նրան հեռացնել պաշտոնից, որի մասին նա ինքը գիտեր, այնուամենայնիվ նա մինչեւ վերջը շարունակեց մնալ յուր պաշտոնում եւ ավելի եւս չարիքներ էր պատճառում պարենավորման գործին:

Մեղրիի շրջանի հրամանատար փոխգնդապետ Մելիք Օհանջանյանն՝ յուր ինձ ուղղած զեկուցման մեջ (1921 հունիսի 12-ին թ. 720) ի միջ այլոց պարենավորման խնդրի

առիթով գրում է. «Թնդանոթածիգ գինվորները՝ թվով 30 հոգի, երեք օր է, որ մի հատիկ ցորեն չեն ստանում պահեստից եւ ես ստիպված եմ տներից հաց հավաքել իմ գինվորների համար: Թեեւ ես իրավունք չունեմ խառնվելու պարենավորման նախարարի գործին, բայց իբրեւ գենվազցի՝ իմ պարտականությունն եմ համարում գեկուցանելու ձեզ այն խոսակցության եւ շշուկների մասին, որ տեղի ունի ժողովրդի գանազան խավերում եւ վախենում եմ, որ այս բոլորն աղետալի վերջավորություն ունենա: Օրինակ՝ Արաքսի ափի պահեստի տեր Շմավոն Մկրտչյանը, որը պարոն Տեր Չակոբյանի հետ երեւանից է եկել եւ նկատվելով գողության մեջ ձերբակալվել է, չգիտեմ ինչ ձեւով ազատվել է եւ անցել Պարսկաստան: Պահեստի այլ կառավարիչը նույնպիսի գողության համար ձերբակալվելով գինվորական կայազորապետի ձեռքով եւ հանձնվելով պարենավորման նախարարի ձեռքն արժանի պատիժ կրելու՝ առանց որեւէ պատժի շարունակում է մնալ ծառայության մեջ, գնելով Արաքսի ափին գինի, որ բերում են Կարճեւանից եւ գինարբուքներ է կազմակերպում դատարկախոսների խմբով: Այդպիսի քեֆերի համար կարճեւանցիներից մեզ հայտնի մի անձնավորություն ստանում է 9 փութ ցորեն: Մի խոսքով, գողությունը շարունակվում է, ստացվում է ցորեն, որն ամեն քննադատությունից ստոր է, չկա մի մարդ, որ կարողանա մեղավորներին սանձահարել: Ի վերջո, գեկուցում եմ, որ պետության ներսն ոսկի կամ արծաթ դրամ գործածելը կառավարության անդամների ձեռքով այն ժամանակ, երբ ոչ սպան, ոչ գինվորն եւ ոչ այլ ծառայողներ կանոնավոր եւ մշտապես չեն ստանում հայկական չեկեր, այնքան է փչացնում ժողովրդին, որ ամեն մի հասարակ իր գնելու համար ծառայողներից ոսկի կամ արծաթ են ուզում»:

Եվ երբ այս բոլոր խայտառակություններից հետո Արեւիքի հրամանատարը, ձեռքի տակ ունենալով ակնհայտնի փաստեր, եւ երկիրն էլ հայտարարված լինելով գինվորական դրության մեջ, իրան իրավունք է համարում պետական շահը պաշտպանելու տեսակետից՝ ձերբակալել գողության մեջ մեղադրվող պարենավորման նախարարության պաշտոնյա Ալեքսան Մովսիսյանին, ահա թե ինչ պաշտոնական գրություն է ուղղում ինձ պարենավորման նախարարը 1921թ հունիսի 14-ին թ.150. «Արեւիքի հրամանատարն յուր հունիսի 12

թ. 712 գրությամբ հայտնում է ինձ, որ նա «մի քանի պատճառներով» հրահանգել է ձերբակալել նախարարության պաշտոնյա Ալեքսան Մովսիսյանին, հայտնում եմ. 1) ինձ հայտնի չեն իմ պաշտոնյայի ձերբակալման պատճառներն եւ հետեւաբար պետական ծառայողի ձերբակալումն առանց նրա բարձր իշխանության գիտության համարում եմ վտանգավոր՝ երկրում կարգ հաստատելու եւ պետական շահերի տեսակետից, 2) չունենալով Մովսիսյանին փոխարինող մեկն Արաքսի ափում, նրան ձերբակալելու դեպքում *ես ստիպված կլինեմ հրահանգել դադարեցնելու հացահատիկի փոխադրությունը Պարսկաստանից, գործի ամբողջ պատասխանատվությունը թողնելով գինվորական իշխանության վրա*, 3) սրա հետ միասին ուղարկեցի հարկավոր կարգադրությունը դադարեցնելու ցորենի տեղափոխությունը՝ ցնոր կարգադրություն»:

Ենթադրենք մի րոպե, թե պարենավորման նախարարության պաշտոնյա Ալեքսան Մովսիսյանը կասկածով է միայն ձերբակալված եւ թյուրիմացությամբ այդ մասին նախօրոք հայտնած չէ եղել յուր անմիջական բարձր իշխանության, մի՞թե ինքն, այդ բարձր իշխանավորը, շահագրգռված չէ արդյոք նրա պատիվը պաշտպանելու համար զոհն ձեւական քննություն կատարելու յուր կամ գինվորական իշխանության ձեռքով՝ արդարությունը վերականգնելու համար, քանի որ նրա մասին վաղուց խոսակցություն կար ժողովրդի մեջ: Կամ ի՞նչ է ներկայացնում իրենից Ալեքսան Մովսիսյանը, որի ձերբակալումն առիթ պիտի ծառայեր պետական կարգը խանգարելուն եւ կամ շահը վնասելուն:

Առանց որեւէ այլ եւ այլության նա երեսի վրա է ձգում պետության եւ ժողովրդի շահն եւ պաշտպանում է յուր այն պաշտոնյային, որին ամբողջ գաղթականությունն է ճանաչում՝ այդ թշվառներին Արաքսի մյուս ափը տեղափոխելուն նրա տմարդի եւ կեղտոտ արարքներից:

Այդ օրհասական րոպեին անգամ նա մինչեւ Մելիք-Յուլյանի Արաքսի ափը գալը չի վարանել շահագործելու նույնիսկ կառավարությանը, ներկայացնելով առանց բացառության գետով անցած բոլոր գաղթականներին եւ դրանց համար փող ստանալու, չնայելով, որ մի քանի օր շարունակ

նա ոսկի եւ արծաթ էր ստանում այս կամ այն գաղթականից նրանց կամ նոցա ձիերն անցկացնելու պարսկական ափը:

Մյուս կողմից, ի՞նչ մի հայտնի եւ եզակի մասնագետ էր Ալեքսան Մովսիսյանը, որին փոխարինող ոչ ոք չկար եւ որի ձեռքակալումն առիթ պիտի ծառայեր պարոն նախարարին՝ կարգադրելու դադարեցնել ցորենի փոխադրությունն այն ժամանակ, երբ յուրաքանչյուր գրվանքա հացը մի կյանք կարող էր փրկել, երբ 100-120 վերստ հեռավորություն ունեցող տեղերից գյուղացիք գրաստներ էին բերում ցորեն տեղափոխելու:

Եվ պարենավորման նախարարը դեռ ինձանից չստացած յուր սպառնալից պաշտոնական գրության պատասխանն, առանց խղճի խայթ զգալու, առանց իրեն հաշիվ տալու, իսկույն հրամայում է դադարեցնել հացահատիկի փոխադրությունը, եւ սա կոչվում է պետական տեսակետ, ժողովրդի եւ պետության շահերի պաշտպանություն:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Ալանգյազի ռազմաճակատի վարիչ տեղակալ Դավթյանը 1921թ. 14-ին հունիսի ք.77 գրությունն ուղղելով Արեւիքի զորահրամանատար փոխգնդապետ Մելիք Օհանջանյանին՝ պարենավորման պաշտոնյաների եւ առհասարակ այդ գործի վերաբերյալ, հետեւեալն է գրում. «Վերջին 5 օրվա ընթացքում կարճեւանցի Սարգիս Ծատուրյանը, Վարդան Մովսիսյանն եւ Ծովակ Մովսիսյանը մոտ 25 փութ ցորեն են բերել Երասխի մեր ափի պետական պահեստից: Իմ հարցմունքին, թե ո՞վ է տվել նրանց այդ ցորենը եւ ինչի՞ համար, նրանք պատասխանեցին, որ ցորենը տվել են նրանց պահեստի ծառայողները զինու եւ այլ մթերքների փոխարեն: Սարգիս Ծատուրյանը մի անգամ կերակուր պատրաստելու համար ստացել է մի փութ ցորեն: Մեկ փութ զինուն տվել են վեց փութ ցորեն: Պահեստի ծառայողները բացառապես Ազեցի գաղթականներ են, որոնց կարճեւանցի զինվորները ճանաչում են որպես կեղտոտ եւ հազար ու մի ավազակություններ արած մարդկանց: Դրանք սեփական տնտեսություն չունեն, իսկ իրենց ռոճիկով չեն կարող այդպիսի ծախսեր անել, այդպես շռայլ կյանք վարել, հետեւապես՝ այդ ծախսերը նրանք անում են պահեստից գողացած ցորենով: Այդ բոլորը պարզ է զինվորության համար, որը շատ խիստ գրգռված է այդ ծառայողների եւ մանավանդ պարենա-

վորման նախարար պարոն Տեր-Յակոբյանի դեմ, որ նա չի պատժում զեղծարարներին, եւ այլ կերպ էլ չէին սպասում, որովհետեւ դրանք բոլորն էլ նրա բարեկամներն եւ համագյուղացիներն էին: Մեծ բողոք է առաջացրել նաեւ այն բանը, որ պարենավորման նախարարն յուր մոտ գտնված ձին նվիրել է Կարճեւանի քահանային եւ 25 ոսկի տալով նորից մի ձի գնել, որի համար ոսկով յոնջա է գնում եւ տալիս օրական 10 ֆունտ գարի, իսկ ձին կերակրելու համար՝ ամսեկան 5 փութ ցորենով հատուկ մի մարդ է պահում: Առհասարակ, ժողովրդի մեջ պարենավորման նախարարն անվստահություն է վայելում: Զինվորությունն այսօր ցուցադրական կերպով հայտնեց, որ պետք է պարոն նախարարից ձին խլել եւ դիրքապահության չզնալ, մինչեւ որ պարոն Տեր-Յակոբյանը չպատժվի եւ չհեռացվի պաշտոնից: Զինվորությունը պարզ ասաց, որ նա չի գնում դիրքապահության նրա համար, որպեսզի սոված ժողովրդին ցորենի փոխարեն ավազ բաժանեն, գաղթականությունը սովից կոտորվի Մեղրիում, իսկ պարոն Տեր-Յակոբյանի բարեկամները պետական ցորենով խնջույքներ սարքեն, եւ նրա ձին օրական 10 գրվանքա գարի ուտի: Ինձ հաջողվեց առ այժմ հանգստացնել զինվորությանը, խոստանալով, որ այդ բոլորը կհաղորդեմ սպարապետին, որն եւ վերջ կտա այդ բոլոր զեղծումներին: Ես արգելել եմ այսօրվանից որեւէ բան վաճառել պահեստի ծառայողներին»:

Սուքա փաստեր են, աղաղակող փաստեր, որոնց համար կառավարությունը պետք է ոչ միայն Ալեքսան Մովսիսյանին դատի տար եւ պարենավորման նախարարության բոլոր պաշտոնյաներին, բայց ոչ մի միջոց ձեռք չի առնվել վերջ տալու այդ այլանդակություններին, չնայելով որ ես քանիցս իմ կառավարության ընկեր անդամների մոտ բազմիցս խոսել եմ այդ մասին:

Ինձ համար միանգամայն անհասկանալի պատճառով պարոն նախարարն յուր ստացած պետական ցորենը կենտրոնացնում էր երբեմն այնտեղ, ուր բոլորովին կարիք չկար, կամ որի մասին կառավարությունն ոչ մի կարգադրություն չէր արել:

Ես զինվորական տեսակետից անհրաժեշտ եմ գտնում 1000 փութ ցորեն կենտրոնացնել փոխգնդապետ Մելիք

Օհանջանյանի տրամադրության տակ՝ զինվորների կարիքի համար եւ այդ բովանդակությամբ դիմում են անում պարենավորման նախարարին:

Բայց նա՝ փոխանակ իմ անհետաձգելի դիմումը կատարելու, 700 փութ ցորեն է տեղափոխում Շիրվանիձոր գյուղը: Քանի անգամ յուր ժամանակին ես խնդրել եմ նրան փոխադրել այդ ցորենը Մեղրու կենտրոնական գյուղերից մեկն, որ կարիքի դեպքում զորքն առանց հացի չմնա, բայց իմ այդ դիմումները մնում են անկատար:

Եվ երբ վերջին օրերը միայն նա կամենում է Շիրվանիձորից փոխադրել այդ ցորենը, երբ գաղթականական հոսանքն սկսվել էր եւ Շիրվանիձորից իրազեկ էին այդ դրությամբ, որ իշխանությունն այլեւս չկա, իսկ զորամասերը Մեղրի են գտնվում, նոքա մերժում են պարոն նախարարի կարգադրությունը կատարելու, առարկելով՝ թե սա էլ իրանց բաժինն է, եւ այդ ցորենն ընկնում է մեծամասնականների ձեռքը:

Չեմ կարող լռության տալ եւ պարենավորման նախարարության (գուցե եւ կառավարության) մի այլ վարմունքը: Լեռնահայաստանի գաղթականությունը՝ սկսած հունիսի 27-ից Դուզալ հասնելով՝ ոչ պարեն եւ ոչ նպաստ չի ստանում եւ մի քանի օր շարունակ գաղթականությունը շարնեշարան անցնում է դեպի Թավրիզ:

Երբ ընկեր Սմբատ Եղիազարյանը հասնում է Դուզալ (5-րդ օրը), այդ ժամանակվանից յուրաքանչյուր գաղթականի միանվագ տրվում է 2 դռան հացի փոխարեն: Վերջին երկու օրը, երբ շատ քիչ գաղթականություն էր մնացել Դուզալում (մեծավ մասամբ ձիավորներ էին), տեղեկություն է ստացվում, որ պարենավորման նախարարը պահեստից գարի եւ ցորեն է բաց թողնում 8 թե 10 գրվանքա՝ յուրաքանչյուր մարդու եւ ձիու առանձին առանձին:

Ներկայացվում են ցուցակներ, որոնց մեջ հիշված մարդկանցից շատերն արդեն Թավրիզ էին, եւ առանց ստուգման, առանց քննության անխտիր բոլոր ցուցակներով բաց են թողնվում պահեստից փութերով ցորեն եւ գարի, եւ որովհետեւ այլեւս ժամանակ չկար աղալու եւ հաց թխելու, ուստի գաղթականները մի փութ ցորեն էին տալիս թուրքին, փոխարենը՝ 10 գրվանքա հաց ստանում:

Բայց ինչո՞ւ այդ պահեստի դռներն առաջին օրվանից չբացվեցին երկրորդ գաղթականության համար, ինչո՞ւ միայն վերջին երկու օրն այդպիսի առատությամբ եւ անխնա ցորեն եւ գարի էին բաժանում գաղթականներին, կամ ինչո՞ւ էր պարենավորման նախարարը վերջին րոպեին առաջարկում զինվորական իշխանությանը՝ ցորենի եւ գարու պահեստի մնացած հացահատիկը ստանալ, քանի որ նա կարող էր եւ պարտավոր էլ էր ինձ հետ եկող զորամասի համար այդ նույն շտեմարանից հաց պատրաստել տալ եւ ոչ պահեստը հանձնել, որ նոքա քաղցած չմնային, ինչպես որ գրել էր ինձ Մեղրիից այդ մասին փոխվարչապետ Յովհաննիսյանը հուլիսի 9-ին. «Չայտնում եմ նաեւ, որ աշխատում ենք այստեղ քեզ հետ եկող զորամասերի 150-200 հոգու հաց պատրաստել, որ զորամասերը հաց վերցնեն»:

Այդ առաջարկության նպատակը շատ պարզ էր. վերջին գաղթականները թողնում էին Դուզալը, իսկ ցորենն ու գարին դեռ մնում էր պահեստում, որն յուր ժամանակին անփութության պատճառով չէին տվել ժողովրդին, այդ հացահատիկը ծախել կամ փոխադրել Թավրիզ այլեւս չէին կարող, իսկ պարենավորման նախարարին հարկավոր էին ստացականներ, փաստաթղթեր՝ յուր հաշիվները Թավրիզում կառավարությանը ներկայացնելու, եւ ոչ թե գաղթականների պարենավորման գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու կամ պետական շահը պաշտպանելու:

Ինքը՝ պարենավորման նախարարը, նույն օրն յուր պաշտոնյաներով պիտի հեռանար Դուզալից, հացահատիկը պիտի երեսի վրա ընկած մնար, իսկ զինվորական իշխանությունն էլ իրավունք չունեի ստանալու եւ դրա պատասխանատվությունն իր վրա վերցնելու, քանի որ այլեւս զինվորական իշխանություն չկար, այլ կային միայն գաղթականներ, որոնք նույն օրը պիտի թողնեին Դուզալը:

Ահա, այս ձեռով էին կատարում պարենավորման նախարարը եւ նրա պաշտոնյաներն իրենց պարտականությունները Լեռնահայաստանում, որը մի ամբողջ տարի առանց պարենավորման նախարարի գոյության ավելի մեղ հանգամանքներում պատվով է տարել զորքի պարենավորման գործը: Նոքա հազիվ հազ կարողանում են տեղափոխել խոստացած թվերով 20000 փութի դիմաց միայն 3000 փութ, մի

քանակություն, որ չէր կարող գործերին կերակրել մի քանի շաբաթ տեւողական կռվի ընթացքում, ուր մնաց դրանից բաժին հանել նաեւ հույսերով կերակրվող կմախքացած ժողովրդին: Այսպիսի հանգամանքերում հույս դնել գյուղացի զինվորության վրա՝ միանգամայն անստություն կլինէր, որովհետեւ ոչ միայն ինքը քաղցած չէր կարող կռվի դաշտ գնալ, այլեւ՝ յուր քաղցած ընտանիքի հոգսը թույլ չէր տալ նրանց զենք վերցնելու:

8-10000 գաղթականությունը մորեխի նման ուտելով, որքան կարողանում էր ձեռք բերել, անցավ Լեռնահայաստանով, սպառեց գյուղացու պաշարը, գորքի համար չմնաց շտեմարաններում մի քանի փուխ ցորեն անգամ, իսկ պարենավորման նախարարն յուր պաշտոնյաներով հանդերձ չկարողացավ այդ ամենաառաջնակարգ եւ կենսական խնդիրը կանոնավոր հիմքերի վրա դնել եւ քիչ ու շատ ապահովել կռվող ժողովրդի պարենի խնդիրը:

Կարելոր եմ համարում մի քանի խոսք ասել նաեւ պարենավորման նախարարի հակահետախուզական գործունեության մասին, որ չգիտեմ ի՞նչ տեսակետից նա իրեն լիազորված էր համարում խառնվել զինվորական գործին եւ այնպիսի կարգադրություններ անել, որ միանգամայն վնասաբեր էին մեր ինքնապաշտպանությանը:

Արեւիքի հրամանատար փոխգնդապետ Մելիք Օհանջանյանը յուր հունիսի 12-ի թ. 720 գրությամբ հայտնում է ինձ. «Ձեկուցանում եմ, որ պարենավորման նախարարի իմ սահմանը ժամանելու հենց առաջին օրից ամեն ինչ կերպարանափոխվել է, ստեղծվել է երկիշխանություն. մի կողմից ես՝ իբրեւ գորամասի պետ հրամաններ եմ տալիս ինձ ենթակա իշխանությանց, որոնք եւ կատարում են առանց որեւէ պատճառաբանության, մյուս կողմից՝ պարենավորման նախարարը չգիտեմ ինչո՞ւ յուր պարտականությունն է համարում հրամայել եւ խառնվել իմ գործերին: Երբ ես հայտարարել եմ իմ շրջանը զինվորական դրության մեջ, հրամայված է եղել ռազմաճակատների հրամանատարներին եւ զինվորական պետերին՝ առանց իմ գիտության ճակատի կողմից դեպի թշնամին ոչ ոքի բաց չթողնել: Իմ այդ կարգադրության հակառակ եւ իմ բացակայության ժամանակ պարենավորման նախարարը պահանջում է իմ փոխանորդ Մեղրիի պարենից

անցագիր տալ մի ինչ-որ Ավետիս Դաստակյանի, որն Ագուլիսեցի է եւ իբրեւ գաղթական ապրում է Մեղրիում, որը խիստ կասկածելի մի անձնավորություն է, որի որդի Արամ Դաստակյանը մինչեւ իսկ Օրդուբադի շրջանային հեղկոմի նախագահն է, իբրեւ թե՛ հետախուզություն կատարելու: Իմ փոխանորդը բացատրում է, որ նա կասկածելի ոմն է, որ օգտի փոխարեն նա մեզ արջի ծառայություն կմատուցանե եւ հրաժարվում է նրա հրամանը կատարելուց: Այն ժամանակ պարենավորման նախարարը վերոհիշյալ անձին առանց մեր գիտության ուղարկում է Դուզալ-Սիարով Օրդուբադ, որը չի էլ վերադառնում»:

Թողնել իր անմիջական պարտականությունները եւ խառնվել զինվորական գործին, իբր թե հակահետախուզական նպատակով, մի մարդու ուղարկել Օրդուբադ, որի մասին զինվորական իշխանությունն իր իրավացի կասկածն է հայտնում, դա բոլորովին անհասկանալի է. չգիտեմ ո՞րն է ավելի վնասակար պետական շահի տեսակետից՝ պարենավորման նախարարության պաշտոնյա Ալեքսան Մովսիսյանին ձերբակալելը, ով մեղադրվում է գողության մեջ, թե հեղկոմի նախագահի հորը՝ Դաստակյանին Օրդուբադ ուղարկելը, որ այլեւս այնտեղից չվերադառնա:

Պարենավորման նախարարը Մեղրիում հանդես է գալիս երբեմն դատավորի դերում: Նրա կարգադրությամբ ծեծի է ենթարկվում Մեղրիի հիսնապետ Արամ Դովհաննիսյանը միայն նրա համար, որ իր՝ նույն նախարարությանը, ամիս ու կես առաջ ներկայացրած 17 տիկերի փողն է ուզում ստանալ նախորդք որոշված պայմանով (յուրաքանչյուր տիկին մի ռուբլի արծաթ դրամ): Տիկերը ստանալուց եւ գործածության մեջ դնելուց հետո նախարարությունն երկար ձգձգելով ի վերջո կամենում է ազատվել նրանից, տալով մի տասանոց փոխարեն, երբ Արամը հրաժարվում է՝ ծեծի է արժանանում:

Եվ այս ամենը տեսնում է Լեռնահայաստանի ժողովուրդը, տեսնում է, որ առաջ նախարարներ չեն եղել իրա կառավարիչները, բայց եւ չեն եղել պանամաներ, չի եղել իշխանության մեքենայի կատարյալ քայքայում, չի եղել Բազարչայի թալանի եւ ավազակության ամոթաբեր արարքը, երկիրն ոչ մի արտարժույթ չի ունեցել եւ ժողովուրդը մի կերպ ապրել է, այժմ կա արտարժույթ, կան թվով ավելի շատ

գործիչներ, բայց դժբախտաբար այդ արտարժույթը չկարողացավ նպաստել ժողովրդի տնտեսության բարվոքմանը, այլ ընդհակառակը՝ դա ծառայեց ժողովրդի շահերին ի վնաս, հնչյուն եւ խորհրդային դրամի գործածությունը մտցնելով եւ մթերքների գները սոսկալի չափով բարձրացնելով: Ահա թե որտեղից է առաջանում ժողովրդի լքումը, հոգեկան անկումը եւ իշխանության հեղինակության վարկաբեկումը:

Վերջացնելով իմ ասելիքը ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ *Լեռնահայաստանը մինչ վերջին րոպեն մայր երկրի համար մնաց այն փարոսը, դեպի ուր դիմելով Հայաստանի մեր մտավորականությունը եւ գինվորությունը հնարավորություն ունեցավ յուր գոյությունը փրկել*, կարողացավ սոսկալի մղձավանջից յուր լքված ուժերը կազդուրել, կարողացավ իրեն զգալ յուր հարազատ մայր երկրի ծոցում, նա նույնիսկ յուր ապստամբությամբ եւ ժամանակավոր անկախությամբ նոր հույսեր ներշնչեց մայր երկրի ժողովրդին, իսկ յուր այդ նույն անկախությունը զոհ բերելով՝ Երեւանից դեպի իրեն դիմող գաղթականության կյանքն ապահովեց:

Մինչեւ վերջին րոպեն հավատարիմ մնաց յուր ընտրած հրամանատարությանը եւ կառավարիչներին, նա մնաց այն համոզմամբ, որ տարիների ընթացքում մենք խոսքով եւ գործով ներշնչել էինք նրան՝ երբեք չդավաճանել հայրենի երկրի անկախությանը, երբեք վիզ չթեքել Ադրբեջանին՝ ինչ անվան տակ էլ նա երեւան գալու լինի:

Սկսած Սիսիանի նահանջից, երբ ժողովուրդն ինքը նկատում էր, որ մենք հեռանում ենք, նա ոչ թե մեզ չվիրավորեց, մեր թիկունքից չխփեց, այլեւ՝ գինվորությունը հարյուրներով հետեւեց մեզ, չկամենալով բաժանվել մեզանից եւ մենք ահագին ջանք գործադրեցինք դրանց հետ դարձնելու իրենց գյուղերն եւ ի լրումն այդ բոլորի՝ Գեմվազի տարբեր շրջաններից Մեղրիում հավաքված գյուղացիները լացով ու արտասուներով հրաժեշտ տվավ մեզ՝ իբր իրա հարազատներին:

Լեռնահայաստանից հեռացել են միայն գործիչ անհատները, բայց հայրենի երկրի անկախության գաղափարը, նրա ներշնչած գաղափարն աննկուն մնացել է ժողովրդի մեջ:

Լեռնահայաստանը կատարեց յուր պատմական առաքելությունը.

Դա ՀՀ այն *միակ եւ եզակի* երկրամասն էր, որ գերծմնաց *կոտորածից եւ ավերումից*, ոչ թե միայն Ադրբեջանի հետ վարած բոլոր կռիվների ընթացքում, այլեւ մեծամասնականների սոսկումներից եւ սրածությունից:

Եզրափակելով իմ բերած բոլոր փաստերն եւ առարկություններն՝ հայտնում եմ, որ Լեռնահայաստանի գլխավոր անկման պատճառներն են.

1. Քաղաքական այն նոր իրավիճակն, որ ստեղծվեց Լեռնահայաստանում Երեւանից եկած գաղթականության շնորհիվ,

2. Բարոյական այն լքումն եւ հոգեկան անկումը, որ առաջ բերեցին նույն գաղթական սպայությունն ու գինվորությունն իրանց պարտվողական եւ խուճապային հոգեբանությամբ,

3. Մեր վարչական ներքին մեքենայի՝ ժողովրդի սրտին ու մտքին անհարազատ լինելը,

4. Ռազմամթերքի պակասությունը,

5. Պարենավորման խնդրի շուրջը ստեղծված պանաման, որին շատ մոտ իրազեկ էր գյուղացիությունը:

Թավրիզ
1921թ. օգոստոսի 18

Զորավար *Նժդեհ*

Դատական գրծ, թթ. 108-162: «Նորք», Երեւան, 1923, գիրք 3, էջ 329-63: Տպվում է ըստ Հ.Յ.Դ. Արխիվի օրինակի:

7.3.7. *Գերագույն Դատական Աստանին*

**Մ Ի Ք Ա Ն Ի Խ Ո Ս Ք Ե Վ Ս
Լ Ե Ռ Ն Ա Յ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Ա Ս Ի Ն**

Ա. Մի պատերազմող կողմի, մի ժողովրդի մասին ստեղծված բոլոր կարծիքներից ճշմարտության մոտիկն եւ ավելի անաչառն պիտ համարել այդ երկրի թշնամիների կարծիքն եւ այդ կարծիքով էլ պիտ որոշել նրա բարոյա-մարտական տոկունության աստիճանը:

Խոսում եմ Լեռնահայաստանի մասին եւ գիտակցորեն հայ մտավորականությունը ու նրա կարծիքը վկայության չեմ կանչում, որովհետեւ նրա մեծագույն մասն, ինչպես ամբողջ զինվորականությունը՝ ոչ բարեկամ էր, ոչ էլ՝ թշնամի, այլ՝ տոսկ կարմիր կացնից հալածական ու ահաբեկված ճամբորդներ, որոնց վիճակված էր գալու եւ անցնելու Լեռնահայաստանի վրայով դեպ օտար հորիզոններ:

«Լեռնահայաստանի մեր դեմ մղած կռիվները հերոսական են եւ զարմանալի, բայց քաղաքականապես անհեթեթ»։ Ամիսներ առաջ Թավրիզից Մոսկվայի այդ կարծիքի մասին գրում էր ընկեր Վրացյանը: Այլ կարծիք ունենալ չէր կարող Մոսկվան, որքան էլ իրան անհաշտ զգար դեպի մի ժողովուրդ, որ կտրված աշխարհից, առանց դրսի օգնության հույսերի, արհամարհելով թշնամու թվական ու տեխնիկ գերազանցությունը՝ նրա հետ չափվում է ամբողջ մի տարի եւ աննախընթաց հաջողությամբ ջարդում ու գերում է նրա ռուս, հայ, թաթար եւ օսման զորամասերը, խլելով նրանցից 12000-ի չափ զոհեր, 3-4000 գերիներ, 200-ից ավելի գնդացիորներ, թնդանոթներ, դրոշակներ, ռազմամթերք եւ այլ պատերազմական ավար:

Այլ կերպ խոսել չէր կարող Մոսկվան, որի՝ մասնավորապես ռուսական զորքերն, ահաբեկված ու շշմած Լեռնահայաստանի տարերային հարվածներից, անպարտելի համարելով այդ երկիրը, հրաժարվում էին կռվի դուրս գալ նրա դեմ եւ 100-ներով բանտարկվում եւ գնդակահարվում իրանց հրամանատարների կողմից, ինչպես այդ տեղի ունեցավ անցյալ տարի Գորիսում:

Մահմեդականությունը, թաթարները եւ օսմանցիք մի բան գիտեին Սյունիքի մասին, որ նա անպարտելի է, որ *Աստված է օգնում այդ երկրին*, որի համար ամեն ինչ կարելի է, որը հաղթում է ամենքին եւ նման լեգենդներ: Էդիֆներն ու Խալիլ փաշաները, Նուրին եւ պրինց Ղաջարները, զորավարներ Միրմանդարովներն ու Շիխլինսկին էին ստեղծել այդ կարծիքը Չանգեզուրի մասին: Այդ բոլոր փաշաներն ու զորավարներն իրանց բախտն էին փորձել, Սյունիքը գրավելու փորձն արել, բայց միշտ էլ իրենց զորքերի կեսից ավելին՝ կենդանի թե սպանված, մեր ձեռքին թողած՝ խուճապորեն Ադրամ ու Բաքու էին նահանջել:

Իսկ երբ մենք էինք հարձակվել՝ բախտը միշտ էլ ժպտացել էր մեզ եւ միշտ էլ հաղթել ու հաջողել էինք հռչակավոր Գեղվա-Չորն, երբեմնի Բաղաց երկիրը, որին Սյունիքի հայությունը յոթը գլխանի վիշապ էր անվանում, որովհետեւ այդ հանցավոր ծորը հայկական յոթը շրջանների (Գողթանի, Օխչիձորի, Գենվազի, Ղափանի, Տաթևի եւ Դարաբաթանի, Օխչիձորի, Գենվազի, Ղափանի, Տաթևի եւ Դարաբաթանի) հայությունը վերջին ութը տարիների ընթացքում ահ ու սարսափի տակ էր պահում, տեղի տվեց իմ պայթուցիկ տակառների եւ գործադրած լեռնային կռիվների տարերային ձեւերի առաջ: Այդ անսպասելի հաջողությունից հետո, երբ արդեն ինձ համար ստեղծվել էր ցանկալի հոգեբանական մթնոլորտը, մեկը մյուսի հետեւից մաքրում եմ Բարգուշատի, Յաքյառուի, Խանլի, Չավանդուրի եւ Գողթանի թրքական շրջանները՝ հրդեհի ու ավերածության մատնելով ավելի քան 160 գյուղ:

Ահա թե ինչպես ստեղծվեց Նոր Սյունիքն եւ թշնամիների կարծիքն այդ երկրի անպարտելիության մասին: Բայց միայն մեր թշնամիների՝ մեր երկրի մասին ունեցած կարծիքի մեջ չպետք է փնտրել Սյունիքի ռազմաբարոյական ուժը:

Մուսավաթական Ադրբեջանի դեմ տարած մեր նոր հաղթությունները մի *նոր դիմադրություն* էին ստեղծել, *նոր շունչ, նոր ոգի* ներշնչել այդ ժողովրդին, որն ավելի խրոխտ ու ավելի *անպարտելի* էր դարձրել Սյունիքը:

Լեռնահայաստանի բոլոր գյուղերում կազմակերպված էին Դավիթբեգյան ուխտեր, ժողովրդական վաշտեր, որի ամեն մի զինվորից պահանջվում էր՝ *բարձր հայրենասիրու-*

թյուն, անձնվիրություն, անշահասիրություն, խստաբարոյություն, ասպետականություն, քաջություն եւ հերոսական մահ :

Բոլոր գյուղերում կառուցված էին միջնաբերդեր, որոնք կոչվում էին այս կամ այն *ազգային հերոսի կամ նահատակի* անունով՝ Խեչոյաբերդ, Քեռիաբերդ ...

Երկրում գոյություն ուներ զինվորական դիկտատուրա: *Կռվի հրամանը վաշտերի կողմից ընդունվում էր որպես քեֆի ու խրախճանքի հրաման* եւ երկրի ռազմական ուժերն այս կամ այն ուղղությամբ շարժվում էին մի չտեսնված խանդավառությամբ: Կռվի եւ հաղթելու արվեստն իր նոր եւ տարերային ձեւերով յուրացված էր բոլորի կողմից: *Կռվի դուրս գալը՝ հաղթել էր նշանակում, որովհետեւ երկու տարվա ընթացքում Սյունեցին չէր տեսել եւ ոչ մի պարտություն:*

Անկարելիության հասնող դժվարինը գրեթե գոյություն չունէր այդ ժողովրդական բանակի համար: Մահաշունչ ծմեռվա կեսին նա Ղափուջուղով՝ Ղափանի այդ փոքր Մասիսով, որը մոտ 13000 ոտնաչափ բարձրություն ունի, անցնում է Գողթան եւ ավերում թշնամու 12 գյուղերը, որով եւ ռազմագիտական հնարավորություն է ստեղծում Գողթանի մի բուռ ժողովրդի համար՝ մնալու կպած իր հայրենի հողին: Նա հարյուր վերստերով կտրվում է իր բազայից, իր ծննդավայրից եւ օգնության հասնում եղբայրական Ղարաբաղին՝ ապահովում նրա ինքնապաշտպանության գործը եւ վերջին պահուն հեշտացնում արարատյան գորքերի նահանջը:

Վերջին երեք տարին արտաքին աշխարհի հետ կապ չունենալու պատճառով, Սյունիքի ժողովրդական վաշտերն, ինչպես եւ ամբողջ ժողովուրդը, ապրել է կիսաքաղց, կիսատկլոր եւ հաճախ բոքիկ, բայց եւ այնպես, տրտունջ եւ դժգոհություն չի լսվել այդ երկրում: Ձինված գյուղացիությունը շատ հեռու է եղել *կաստայական* գորք լինելուց, բայց գիտակցական կարգապահությունը նրա մեջ եղել է օրինակելի:

Վաշտապետն ու զինվորը կռվի ժամանակ եղել են հրամանատար եւ հրամայվող, իսկ խաղաղ պայմաններում՝ գաղափարակից ընկերներ:

Ձինվորն, ինչպես եւ ամբողջ ժողովուրդն, սիրել ու հարգել է իր ղեկավարներին, որովհետեւ տեսել է, որ նույն չարքաշ ու պարզ կյանքով են ապրել վերջիններս: Երկիրն արտարժույթ չի ունեցել:

Ռոճիկ չի եղել, նյութական վարձատրություն չի ստացել ո՛չ զինվորն եւ ո՛չ էլ վաշտապետն:

Չրամանատարության վարձատրությունն եղել է զուտ բարոյական՝ ժողովրդի եւ զինվորության սեր:

Երկիրը հայտարարված էր պատերազմական դրության մեջ: Սահմանված էր մահու պատիժ՝ դավաճանության, լրտեսության, սադրանքի եւ կաշառակերության համար: Երկիրն ունեցել է քաղաքացիական տարրականացած իշխանություն:

Եվ ո՛չ մի ավելորդ պաշտոն, որը կապված չէ եղել տքնության եւ ստեղծագործ աշխատանքի հետ:

Եվ ո՛չ մի պաշտոնյա, որը չի վայելել ժողովրդի վստահությունը:

Քաղաքական խիստ խաղաձեւող հոսանքներ չեն եղել: Ժողովրդի ֆիզիկական գոյության եւ նրա անկախության ապահովությունն՝ ահա՛ այն գերագույն նպատակը, որին այնքան համերաշխորեն փարած են եղել ազգաբնակչության բոլոր խավերը: Ահա՛ ընդհանուր գծերով, Ազատ ու Անկախ գծերով Սյունիքը՝ մինչեւ Արարատյան Հայաստանի երկրորդ անկումը եւ գաղթականության մուտքն այդ երկիրը:

Բ. Երկրորդ անգամ ընկավ Արարատյան Հայաստանը եւ դիրքերը փոխվեցին: Ապստամբ Սյունիքը, որ դեռ 1920թ. դեկտեմբերին Տաթևի համագումարում հայտարարված էր ինքնավար, եւ որպես այդպիսին պիտի մնար, մինչեւ որ քաղաքական հնարավորություն կունենար միանալու մայր երկրին՝ Արարատյան Հայաստանին, հանկարծակի եկած, իր սահմաններից ներս ընդունեց տասնյակ հազարի հասնող մի խուճապահար զանգված՝ *երեւանյան գաղթականությունն ու գորքը, որը անմարտունակ լինելուց զատ, իրենից ներկայացնում էր մի կատարյալ քառս՝ ընդունակ հեղեղի պես իր ճանապարհին քշելու, տանելու ամեն ինչ:*

Այդ զինված զանգվածը, որը ճանաչում էր մի քանի ղեկավարների կամ ճիշտը՝ ոչ ոքի, դեռ Սիսիանի սահմաններին չհասած արդեն կատարել էր իր առաջին տխուր գործը՝ *լքում ու խուճապ ստեղծելով Վայոց Ձորում, թշնամուն էր հանձնել այդ կարելուր շրջանը՝ Սյունիքի նախադուռը:*

Գաղթը կրում էր տարերային, անկազմակերպ բնույթ: Առանց Հայաստանի փրկության կոմիտեի կամ հրամանա-

տարության թուլությունը՝ որոշ զորամասեր ինքնագլուխ անցնում էին Սիսիան եւ շարժվում դեպ հեռուներ:

Աչքի ընկնող հրամանատարների մեջ չկար *կապ ու համերաշխություն*. Կար ընդհանուր հրամանատար, կար ընդհանուր ղեկավար, բայց նա *անվանական* էր, զորամասերը Բագարչայ հասնելուն պես, արեւմտահայերի հրամանատարությունը հայտնեց ինձ, որ նա Արեւմտյան Ճակատում մնալ չէ կարող՝ չցանկանալով աշխատել Կուռոյի եւ նմանների հետ: Մարտիրոսն՝ ինչպես եւ մի քանի ուրիշ խմբապետներ, նույնպես չուզեցին մնալ եւ հեռացան Երեւանյան զորքերի հրամանատարական կազմից:

Պակաս չափով քառսը չէր ուժեղացվում Փրկության կոմիտեի արեւմտահայ անդամների (որոնք միաժամանակ ինչ-որ զինվորական խորհրդի անդամներ էին) *անհաշտ վերաբերմունքը*՝ դեպ այդ կոլեկտիվը: Մխիթարական չէին եւ *մտավորական ուժերի* ինչպես եւ մեր *կուսակցական ընկերների* մի մասի փոխհարաբերությունները: *Դժգոհ էին բոլորը, քննդատում էին բոլորը, մեղադրում ու մեղադրում բոլորը*: Մեղմ ասած, *քառսն ու լքունը* կատարյալ էր: Մխիթարական ու հուսատու ոչինչ չկար այդ հազարների հասնող, տեղահան եղած գաղթականության մեջ, բացի այն, որ նա գտնվում էր վտանգի շրջանակից դուրս, որ նա փրկված էր:

Սյունիքն ունեցավ մի նոր ճակատ եւս՝ Արեւմտյան ճակատը: Սյունիքի շուրջը ստեղծվեց մի շրջագծային ռազմաճակատ, որի վրա նա պիտ պաշտպանվեր թշնամուց իր ներսում ունենալով տասնյակ հազարների հասնող տարերայնորեն խուճապային, բարոյալքված եւ բարոյալքող, մասամբ զինված, մասամբ անզեն մի զանգված:

Սպառնական լինելու չափ բարդացել էր Սյունիքի դրությունը: Այդ բանը տեսնում ու զգում էր գաղթ եւ խուճապ չտեսնող Սյունեցին եւ ազդվում էր: Գաղթականության խուճապ եւ լքուն առաջացնող ազդեցությունը պետք էր չեզոքացնել, տեղական զանգվածները պետք էր հեռու պահել այդ ազդեցությունից:

Բայց ինչպե՞ս:

Այդ երկիրը ո՛չ լիքը պահեստներ ուներ, ո՛չ միջոցներ: Դա ինքը կիսաքաղց կյանք էր քարշ տալիս, բայց եւ այնպես՝ պետք էր արարատյան ժողովրդի այդ տեղահան եղած մա-

սին մի կերպ կերակրել, տաքացնել, հնարավորություն տալ հանգստանալ եւ անցնելու Պարսկաստան:

Եվ յոթ հազարի հասնող գաղթականությունը տրվում է գյուղեր՝ պատսպարվելու եւ սնունդ ստանալու համար: Լեռնահայաստանի բոլոր շրջանները լցվում են գաղթականներով, եւ տեղացի ժողովուրդը լսում է դառնացած գաղթականության պատմությունն այն մասին, որ Երեւանը հանկարծ անասելիորեն թողնելու շնորհիվ չեն կարողացել հետներն ոչինչ վերցնել, որ բոլորը համոզված էին, որ Բաշ-Գառնիում զորքերը կվերակազմվեն, ուշքի կգան ու նորեն կվերադառնան Երեւան, որ *կովողներ կային*, բայց *կովեցնողներ՝ չկային*, որ այսինչն, այնինչն քանդեցին Երեւանն ու իրանց տներն, եւ այլն, եւ այլն...

Անզեն գաղթականությունը մնում էր եւ անցնում խաղաղ, իսկ զինված մասը՝ բացի *լքումն ու հուսահատությունը*, առաջացնում էր նաեւ *դժգոհություն*: Սկսվում է գետանցը:

Որպես հայ մարդ ամաչում եմ հիշատակել այն բոլորը, որ տեղի ունեցավ Արաքսի ափում:

Չմայած, որ իմ կողմից բազմիցս հայտարարված էր, որ նախ անցնելու են վիրավորները, հիվանդները, կանայք եւ ապա՝ ամբողջ գաղթականությունը, բայց ով որ ճարպիկ էր, ով որ արտարժույթ ուներ՝ անցնում էր հերթից դուրս, կաշառելով ֆալաշիներին: Որովհետեւ, լաստանավը շարժման մեջ դնել չկարողացան մեր ճարտարապետներն ու մասնագետները, ճիշտը՝ բարեխղճորեն չկրցան գործել՝ այդ փրկարար նավը գլուխ բերելու համար, գաղթականությունը ստիպված էր երկար մնալու Լեռնահայաստանում եւ իր մղձավանջի տակ երկար պահելու տեղական ազգաբնակչությանը:

Բացի այդ, գաղթականների որոշ մասի Արաքսն անցնելը մեզ զրկեց նաեւ Լեռնահայաստանի զորքի եւ սովամահության մատնված ժողովրդի համար Պարսկաստանից հացահատիկ փոխադրելու հնարավորությունից:

Ավելի քան 2 ամիս, Լեռնահայաստանի ամբողջ վարչակազմը, հրամանատարությունն, անգամ ես՝ թողած մեր անմիջական պարտականություններն, զբաղված էինք միայն եւ միմիայն գաղթականության փոխադրության գործով:

Միայն Հայաստանի փրկության կոմիտեի անդամներն էին, որոնց ընկեր Վրացյանն իր մի նամակում իրավացիորեն

նախատում է այդ առթիվ, եւ երեւանյան զորքի հրամանատարութեանը, որ հեռու էին այդ գործից:

Չերկարելու համար՝ վերջացնում են խոսքս Պարսկաստան անցնող գաղթականութեան եւ նրա բարոյալքող ազդեցութեան մասին, եւ անցնում Բազարչայում մնացող երեւանյան զորամասի խնդրին, որը, ճիշտը՝ որի ղեկավար տարրը, չնչին բացառութեամբ, ամենամեծ չարիքը, իսկ վերջը՝ Լեռնահայաստանի անկախութեան գերեզմանափորը դարձավ: Եշմարտությունը պահանջում է ասել, որ երեւանյան զորքը, որպէս այդպիսին, այսինքն որոշ տվյալներով եւ գիտակցական կարգապահութեամբ մի դրոշակի տակ միացած զինված ուժ չկար:

Դա թշնամուց պարտված, հալածական եւ իր հանապազորյա հացը ճարելու մտահոգութեամբ մի տեղ մեկի թելի տակ հավաքված մի զանգված էր, եւ ավելի կապված խմբապետներին՝ քան սպայութեանը, որովհետեւ մեծամասնականների տիրապետութեան օրոք խմբապետները հալածվելիս են եղել որպէս որոշ քաղաքական հոսանքի պատկանողներ, իսկ սպայութեան պատկանելի մի մասը մնացել էր ծառայութեան մեջ եւ քաղաքականապէս հանդուրժելի համարվել, որովհետեւ թշնամու շարքերում ապստամբ ժողովուրդը հայ սպաներ շատ էր տեսնում, իսկ խմբապետ՝ եւ ոչ մի հատ:

Եվ հենց այդ տեսակետից, Սմբատի կամ մի այլ խմբապետի ապստամբ ուժերի սպարապետ նշանակելը, ըստ իս, ավելի նպատակահարմար կլիներ, քան՝ Կուռոյին, որը ժողովրդական ուժեր չէր ղեկավարել, ծանոթ չէր պարտիզանական կռիվներին եւ ամենակարեւորը՝ ինչպէս Մարտիրոսը եւ շատերն են պնդում, որ ապստամբութեանը մասնակցել է ակամայից:

Փոխգնդապետ Կուռոն՝ դա ընկեր Դրոյի **քաղաքական հոգեզավակն** էր, որն այլ կողմնորոշում՝ քան ռուսականն, ունենալ չէր կարող: Այդ պարունը մեծամասնականների դեմ չկռվեց նաեւ Ղարաբաղում, Ձանգեզուրում 1920թ.:

Ինձ չէր զարմացնում այն, որ նրա քթի տակ՝ Բազարչայում, որ վերածված էր մի նոր Արշակապանի, հայ սպայութեան այլասերված ու ապագայնացած տականքը պարտվողականություն էր քարոզում ու արտարժույթ ստեղծում, որ նա այդ երկու մալական գյուղերը, որոնք մինչեւ այդ ենթարկ-

վում էին Սիսիանի վարչակազմին, որովհետեւ վարչական տեսակետից այդ շրջանի անբաժան մասն էին կազմում, միայն իր իրավասութեան տակ է հայտարարում եւ գիտակցորեն չէ կատարում իմ՝ այդ երկու գյուղերի տեղահանութեան հրամանը, մինչեւ որ այդ գյուղերից փախած մալականները՝ միացած մեծամասնականներին եւ թուրքերին, կաշարեին Դարալագյազն եւ կվտանգեին Սիսիանի դրությունը:

Ամփոփում են իմ ասածներս փոխսպարապետ Կուռոյի մասին.

1. Կուռոն պարտվողական քարոզչութեան միջոցով մինչեւ Վայոց Ձորի վերջին ռազմական գործողությունը՝ բարոյալքեց, թունավորեց երեւանյան զինվորությունը եւ արհեստականորեն ստեղծեց Դարալագյազի աղետը,

2. Դարալագյազն առաջին անգամ թողնելու պատճառը նույնպէս այդ պարունն էր, որովհետեւ նա զորքը գաղթականությունից չէր բարեհաճել գոնե 7-10 վերստ հետ պահել, մինչեւ որ գաղթականությունը կգար, կանցներ Սիսիան, որից հետո միայն՝ ինքը ռազմական կարգով կմտներ Դարալագյազ: Դարալագյազի ռազմական գործողությունը սկսվելու պէս նա օրվա ընթացքում մի քանի անգամ դիմում էր Ղափանի, Գեմվազի հրամանատարներին, որ իր կնոջն անմիջապէս փոխադրեն Պարսկաստան, եւ այսպիսով, արհեստականորեն խուճապ ստեղծում,

3. Նա իր սպայակույտը թշնամու հակագործողություններից ընդամենը մեկ օր առաջ քեշիշքենդից փոխադրում է Բազարչայ եւ անտեր ու անվերահսկելի թողնելով շրջանն ու զորքը՝ ստեղծվում է աղետը,

4. Գերի վերցրված մեծամասնականներից 400 հոգու զինում է առանց իմ թույլտվութեան եւ հակառակ Արեւմտյան ճակատի հակահետախուզութեան պետի կամքին, գրում է երեւանյան զորքի մեջ եւ թունավորում, ապաբարոյականացման ենթարկում վերջինը,

5. Նա միայն երկրորդ օրն է հայտնվում Այնաձորում, երբ նա ինքն իմ՝ իրեն տված հրամանի պետք է բոլոր կռիվները ղեկավարեր անձամբ,

6. Անտեղի ու դավադրական նահանջի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Կուռոյի վրա, որովհետեւ նա պիտի վարվեր իրեն տրված թիվ 12-ի ռազմական կար-

գաղիքի հիման վրա: Յապոնն իրավունք չպետք է ունենար նահանջի խայտառակ հրաման արձակելու, այն էլ այն ժամանակ, երբ գործերի մեջ կռվելու տրամադրություն կար, երբ հրամանատարական կազմի դավաճանությունից հետո զինվորությունը հրաժարվում էր Բազարչայ վերադառնալ, նահանջել,

7. Սիսիանի գործասից 100 հոգի վերադարձնելու եւ այսպիսով այդ գործասի թուլացնելու գործում մեղավորը նույնպես Կուռոն է,

8. Կուռոն չէ կազմակերպում կռիվը, չէ ոգետրվում կռվով եւ ոգետրում, չէ ղեկավարում, չէ կռվեցնում՝ ինչպես վկայում է իր նամակում Յովհաննիսյանը, այլ, մեքենաբար, հրամանագիրը ստանում եւ հանձնում է Արեւմտյան ճակատի պետին: Այս ձեւով միայն խայտառակորեն պարտվել կարելի էր, ինչպես եւ եղավ,

9. Կուռոն քանիցս հայտարարել է Արշակ Յովհաննիսյանին, որ ինքը կուսակցական չէ (որ ինքը դաշնակցական չէ), որ չի ուզում եւ չպետք է աշխատի (նամակ թ. 5, 1921թ., 12.05): Կուռոյի եւ սպաներից ոմանց վերաբերմունքն երբեմն ցինիկությանց էր հասնում: Կուռոն վերջնագրի ձեւով պահանջում է նախարար Յովհաննիսյանից ազատել իրեն, որ անցնի Պարսկաստան, սպառնալով պատասխանին սպասել չորս օր եւ այդ արվում էր կռվի շրջանում: Կռվի ամենավճռական պահին՝ կորնետ Նավասարդյանը հրաժարվում է օգնության հասնել սիսիանցիներին եւ պահանջում է մեկ ամսվա արձակուրդ ո՛չ թե իրեն համար, այլեւ՝ ամբողջ դիվիզիոնի, մի գործմաս, որ ամբողջ երեք ամիս երկու մալականների գյուղերում ապրել էր շառլոթյան մեջ: Այդ առթիվ, Յովհաննիսյանը դիմում է կառավարությանն, որ վերջինս հայտնի իր սպարապետին՝ այդ պարոնին հեռացնելու համար (նամակ թիվ 5, 1921թ., 12.05),

10. Դարալագյազի աղետից հետո՝ Յայաստանի կառավարության որոշմամբ, ես հեռացրել եմ Կուռոյին փոխսպարապետի պաշտոնից, նշանակելով քննություն Դարալագյազի դավաճանության առթիվ: Պատշաճ գրությունները Կուռոյին իր պաշտոնը հանձնելու պատրաստված ու տրված են եղել նախարարներ Եղիազարյանին եւ Մելիք-Յուլյանին: Սակայն, ինչ-ինչ պատճառներով, նա շարունակում է մնալ

Դարաբասում՝ Եղիազարյանի մոտ, մինչեւ Տաթևի տեղահանությունը, որից հետո գալիս է Ղափան եւ անցնում Պարսկաստան՝ առանց իմ թույլտվության: Այդ օրվանից նա հաշվվում է դասալիք,

11. Կուռոյի հրամանները չէին կատարվում: Կորնետ Նավասարդյանին հրամայվում է իր դիվիզիոնով մնալ Ղուշի-Բիլագում եւ ապահովել Գնդեվազի աջ թևը: Վերջինս, կարեւորություն չտալով այդ հրամանին, իր հեծելախմբով շարժվում է ուղղակի դեպի Բազարչայ՝ վտանգելով Գնդեվազի դրությունը եւ ստիպում մեր ուժերին թողնելու Սիսիանի նախադուռը կազմող այդ կարեւոր ռազմագիտական կետը,

12. Կուռոյին ես նշանակեցի ինձ օգնական՝ հակառակ իմ կամքի, որվիետեւ Լեռնահայաստանի ժողովրդի հիշողության մեջ դեռ թարմ էին Կուռոյի խուճապային նահանջները Դարաբաղից եւ Ջանգեզուրից՝ հարգած լինելու ընկ. Վրացյանի առաջարկը:

Գ. Թշնամու հացին պակաս յուղ չքսեց նաեւ Արշակ Յովհաննիսյանը՝ նորաստեղծ Յայաստանի կառավարության փոխվարչապետը, Մինքեմդի 2000-ի հասնող թուրք քոչվորներից զիջելով Լեռնահայաստանի ամենափափուկ եւ կարեւոր ճակատներից մեկը: Այդ ճակատը՝ որպես ռազմագիտական խոշոր նշանակություն ունեցող կետ, իմ կողմից ուսումնասիրված ու գնահատված է դեռ 1920թ. փետրվարին: Իմ զեկույցն այդ առթիվ գեներալ Ղազարովին թ. 7 հղել եմ, եթե այդ վտանգավոր եւ աղետալի քայլն արվում էր միայն նրա համար, որ ժողովուրդը հասկանա, որ այժմ Յայաստանի կառավարություն կա եւ ո՛չ թե Սյունիքի սպարապետություն՝ դա առնվազն ոճիր էր, հանցանք:

Որպես ի՞նչ էր 50 միլիոն ռուբլի հայկական չեկերով ծախսում այդ շրջանը: Ճակատ: Դա դավաճանություն կլիներ. Արոտատեղիներ՝ - այդ դեպքում հարկավոր էր հարցնել Սիսիանի ժողովրդին:

Պետք էր վերջինիս համաձայնությունը, որովիետեւ ամբողջ 3 տարի նա այդ արոտատեղիի, ճակատի համար էր կռվել: Փոխվարչապետը գիտեր, որ Լեռնահայաստանում ամեն մի թիզ հողը ճակատ էր մեզ համար, բայց եւ այնպես, չբարեհաճեց ծանոթանալու այդ վաճառելիք շրջանի հետ, որ իրեն համար պարզ լիներ, թե ի՞նչ է զիջում եւ կարելի՞ է այդ

քայլն անել առանց վտանգելու մեր երկրի ռազմագիտական դրությունը:

Փոխվարչապետի կատարած ծառայությունը թշնամու համար որքան հեշտացրեց թշնամու մարտական խնդրի կիրառումը, այնքան ծանր կացություն ստեղծվեց մեր երկրի համար: Միսիանի եւ Ջանգեզուրի ռազմագիտական բանալին հիսուն միլիոն ռուբլով իր ձեռքը ձգելուց հետո, թշնամին հերթով բանալ սկսեց Լեռնահայաստանի բոլոր դռները:

Մի անգամ միայն, մի անգամ էր հարկավոր վիճելի շրջանը տեսնել՝ համոզվելու համար, որ այդ շրջանի կորուստը հավասարազոր է Միսիանի եւ բուն Ջանգեզուրի կորստին:

Փաստը կատարված էր՝ Միսիանի եւ Գորիսի բախտը որոշված էր:

Դ. Թշնամին բախտավոր էր: Նրա ծրագիրները գիտակցորեն հեշտացնում էին պարենավորման նախարարի ավագակաբարո պաշտոնյաներն, որոնք Պարսկաստանից հացահատիկ էին փոխադրում զորքի եւ գաղթականության պետքերի համար:

Պարսկական Դուզալ գյուղում եւ Արաքսի մեր ափում պարենավորման նախարարի պաշտոնեության կողմից կազմակերպված պանաման Սյունիքի ժողովրդի համար կմնա մի դավաճանական ակտ, որը կարծես թշնամու ցանկությանը ամենահարմար ժամանակին եկավ հարվածելու Լեռնահայաստանի ժողովրդի դեպ իր նոր ստեղծված կառավարության հավատն եւ այդ կառավարության հեղինակությանը:

Եշմարտությունը միայն հարգած կլինեմ, եթե այդ խայտառակ պանաման անվանեմ՝ *խրախճանք ժանտախտի ժամանակ*: Այն ժամանակ, երբ *Լեռնահայաստանի ազգաբնակչության 90%* խոտով եւ արմտիքով էր կերակրվում, երբ սովամահությունն օրեցօր ընդունում էր զանգվածային բնույթ, երբ Ջանգեզուրցին՝ պետության համար փայտից Ձորից հրանոթներ եւ ականներ փոխադրելիս սովից մեռնում էր ճանապարհին, եւ հրանոթների փոխարեն տարաբախտ հայ գյուղացու սառը դիակն էր հասնում Գորիս, այդ ժամանակ, անհոգի սրիկաների մի խմբակ իր գրպանն էր հաստացնում ի հաշիվ սովի եւ կարմիր գորքերի դեմ կռվող Սյունեցիների:

Ալեքսան ու Գեւորգ՝ ահա՛ այն հրեշներն, որոնք ավելի քան երկու ամիս շահատակեցին այս եւ այն ափում: Ինչէ՛ր,

ինչէ՛ր ասեք, որ չկատարեցին պարենավորման նախարարի հովանավորությամբ այդ ամենակարող պաշտոնյաները: Գողանալ, խաբել ցորենը կշռելու քաշի մեջ, պետական ցորենով կենսամթերքներ ու խմիչքներ ձեռք բերել, վաճառել, թալանել Պարսկաստան անցնող գաղթականներին, թույլ տալ, որ մի շարք մութ անձնավորություններ անցնեն պարսկական ափը, հեշտացնել Օրդուբադի մեր թշնամու լայն տեղեկատվություն ստեղծելու գործը, գաղթականներին տրվելիք երկու դռանի փոխարեն շատերին մի դռան, ոմանց՝ կես դռան տալ, իսկ շատ-շատերին էլ՝ ոչինչ չտալ եւ ճանապարհ ձգել դեպ Թավրիզ, զանազան դասալիք սպաների եւ պաշտոնյաների կաշառքով անցկացնել Պարսկաստան, անցնող գաղթականներից վերցնել որպես թորփախ փուլի՝ ոսկի եւ արծաթ, երբ ինքը՝ կառավարությունը, վճարում էր անցնող ամեն մի գաղթականի համար, խաների հետ գործարքներ սարքել՝ բարձրացնելու ցորենի գինն, եւ նման հազար ու մի շառվատանություններ: Եվ այդ բոլորը *պարենավորման նախարարի քթի տակ*, նրա գիտությամբ եւ այդ բոլորը զայրացած ժողովրդի քննադատության առարկա:

Ժողովուրդը խոսում է, քննադատում, հալիոյում, սպառնում, վիրավորանք հասցնում նախարարին, ոչինչ, թող այդ այդպես լինի, միայն թե Ալեքսանը, Գեւորգ եւ ընկերությունը շարունակեն իրենց «պետական» գործը:

Վիրավորանք ստանալուց հետո պարոն նախարարը դիմում է կառավարության ընդունելու իր հրաժարականը կամ պատժելու իրան վիրավորողներին: Կառավարությունը կարգադրում է գործերը հանձնել մի ուրիշին եւ վերադառնալ Գորիս: Պարոն մինիստրն ինձ եւ շատերին հասկանալի պատճառով հալիոյվելուց եւ անպատվելուց հետո մնում է «ծառայելու»:

Ամփոփում եմ.

1. Նախարար Գեորգիանը *ներքին շուկայում ոսկի է ծախսում* եւ ժողովրդի մեջ *խոր դժգոհություն* ստեղծում: Նա հովանավորում է ակնհայտնի գողերին, ինչպիսիք էին՝ պաշտոնյաներ Ալեքսան, Գեւորգ եւ ուրիշներ: Ալեքսանին ձերբակալել փորձելու համար նա հրամայում է դադարեցնել ցորենի փոխադրությունն եւ դադարեցվում է, ու այդ այն ժամանակ՝ երբ ժողովուրդն ու զորքը սովամահ էին լինում,

2. Իմ կարգադրությունը՝ որպես Լեռնայայաստանի կառավարության վարչապետի, երկու օրվա ընթացքում Գենվազի հրամանատարի տրամադրության տակ դնել որպես անձեռնմխելի պաշար 1000 փութ հացահատիկ՝ նա չէ կատարում, որը մեր գործերին դնում է ամենածանր դրության մեջ: Նա 700 փութ ցորեն չգիտես ինչու փոխադրում է Շիրվանիձոր եւ թողնում է մեծամասնականներին, եւ այդ այն ժամանակ, երբ մեր գործերը 15 օրվա ընթացքում *մի պատահա՞հաց* չէին տեսել,

3. Հակառակ Գենվազի հրամանատարի եւ պարետի կամքին, օգտվելով ֆալաշներից, Օրդուբադ է ուղարկում մի կասկածելի գաղթականի, որի *որդին այնտեղի հեղկոմի փոխնախագահն է*, որն այլեւս հետ չի վերադառնում,

4. Անիրավի ծեծել է տալիս Մեղրիի վաշտի վաշտապետին, որով ամբողջ զինվորությունը գրգռում է իր եւ կառավարության դեմ: Հայհոյվում, վիրավորանք է ստանում Գենվազի ժողովրդից եւ որպես նախարար՝ չի թողնում անցնում այդ շրջանից,

5. Հայհոյում է Կարճեւանի հասարակության պատվիրակությանն եւ ժողովրդի մեջ առաջացնում է խոր թշնամանք: Չի բարեհաճում վճարել կարճեւանցիներին հեռախոսային սյուներ կանգնեցնելու վարձը, չնայած, որ մեկից ավելի անգամ դիմում են նրան,

6. Թշնամացած լինելով Գենվազի հրամանատարության հետ, հրաժարվում է կատարել նրա պահանջն, այն է՝ բաց թողնել Գողթան մեկնող զորամասերին 4-5 օրվա հաց, եւ այսպիսով, պատճառ դառնում այդ զորամասի Գողթան չանցնելուն,

7. Կառավարությունը հրամայում է գործերը հանձնել ու վերադառնալ Գորիս, սակայն իրեն հետ տեղի ունեցող այն բոլոր խայտառակություններից հետո հնարավոր է համարում մնալ Գենվազում,

8. Դու:գալում, ուր փախել էր գենվազցիների ցասումից, հրաժարվում է պարաններ գնելու՝ Մուժումբար հացահատիկ փոխադրելու համար, պատճառաբանելով, որ իրեն մոտ դրան չկա, բայց երբ խուզարկվում է գրգռված զինվորության կողմից՝ ինչպես իր, այնպես էլ որոշ պաշտոնյաների գրպաններից՝ դուրս է գալիս մեծ քանակությամբ ոսկի:

Ե. Լեռնահայաստանի քաղաքական վերամկրտությունը՝ Հայաստան հայտարարվելը տակնուվրա արեց ամեն ինչ: Երկիրը կորցրել էր համագումարի կողմից հաստատված օրինական կառավարությունը, իսկ նորաստեղծ Հայաստանի կառավարությունն, որն եւ կար եւ որն ապօրինի լինելուց զատ՝ քաղաքական մի կատարյալ ֆիկցիա էր, որն միայն Լեռնահայաստանի ժողովրդի համար էր Հայաստանի կառավարություն, իսկ արտաքին աշխարհի համար՝ չկար եւ լինել չէր կարող, որովհետեւ միաժամանակ երկու Հայաստաններ՝ խորհրդային եւ հանրապետական, գոյություն ունենալ չէին կարող: Ջգալով իր իրավականորեն աբսուրդային վիճակն, այդ նորաստեղծ կառավարությունը բոլոր հայտարարություններն ու դիմումները Լեռնահայաստանի անունից էր մեծամասնականներին անում: Երկրի օրինական կառավարությունը, որպես այդպիսին, դադարել էր գործելուց, իսկ նորաստեղծ Հայաստանի կառավարությունը ապօրինի համարվելով ժողովրդի կողմից՝ չէր ճանաչվում: Սկսվել էր ճգնաժամը, որը դժբախտաբար անցավ չեղավ:

Զ. Կուսակցական որոշ ընկերներ (Արշակ Հովհաննիսյան, Եփրեմ Սարգսյան, Հակոբ Տեր-Հակոբյան, Գառնիկ Շահինյան) այդ մասին առայժմ լռում են, բայց շատ լավ կլիներ, եթե նրանք մնացած չլինեին Լեռնահայաստանում:

Այսպես, *Կուռո՞ նոր Արշակավան, պարտվողական հոսանք, դավադրական նահանջ, աղետ.*

Արշակ Հովհաննիսյան՝ Սիսիանի կարելոր ճակատի գիջումը թուրք քոչվորներին, ներքին շուկաներ, թուրքերի երթվելություն, ինքնամատնություն, զանգվածների դժգոհություն, Սիսիանի անկումը:

Հակոբ Տեր-Հակոբյան՝ պանամա, ժողովրդական դժգոհություն, հակակառավարչական շարժում, եւ այլն եւ այլն:

Այդ բոլորին ավելացրեք նաեւ մի շարք բացասական երեւույթներ, որոնք առաջացան Արարատյան զորամասի ու գաղթականության Լեռնահայաստան անցնելուց հետո՝ ինչպես հայկական չեկերի կատարյալ անարժեքացումը պարենավորման եւ ֆինանսական նախարարների կողմից ներքին շուկաներում, խորհրդային եւ ոսկե դրամների գործածությունը, երբ սպայության ու քաղաքացիական պաշտոնեության ռոճիկները տրվում էին չեկերով, նոր պաշտոնեության ահռե-

լիությունը ու անհարազատությունը, իրական երկիշխանությունը՝ դրսեցիների եւ տեղացիների, սինեկուրաները, դրսեցիների գերիշխանությունը եւ արտաներկրային հոգեբանությունը, երեւանյան մասնագետների եւ սպաների պարբերական դասալքությունը, երեւութական կուսակցական դիկտատուրան, դասակարգային կռվի նոր, անհաջող ձեւերը եւ սրանցից առաջ եկած անվճռականությունը ու քաղաքական դուալիզմը, Հայաստանի կառավարության անդամներ Տերտերյանի եւ Յովհաննիսյանի եւ մեծամասնական որոշ գործիչների մեջ գոյություն ունեցող անձնական բարեկամությունը, Շահինյանի դավաճանությունը եւ այդ բոլորից առաջացած ծավալուն քննադատությունը եւ խորը դժգոհությունն ազգաբնակչության բոլոր խավերում եւ դուք կստանաք ապրիլյան Լեռնահայաստանի եւ ապա՝ նորաստեղծ Հայաստանի թույլ պատկերը:

Ե. Երկու բան անհասկանալի պիտ մնան՝ մեկը կարմիրների, մյուսը՝ ինձ համար: Թե ինչպե՞ս մեծամասնականները պիտ լուծեին անհաղթ Լեռնահայաստանի հարցը, եթե տասնյակ իսկապի հասնող, բարոյալքված ու խուճապային գաղթականությամբ ներսից չպայթեցնեին այդ երկիրը:

Կասկածից դուրս էր, որ զինու ուժով չպետք է փորձեին մոտենալ այդ երկրին, որովհետեւ շատ անգամ էին փորձել, բայց միշտ էլ՝ մի քանի հազար սպանվածներ ու գերիներ, հարյուրավոր գնդացիներ եւ այլ հարուստ ավար թողնելով՝ աննախընթացորեն պարտվել էին:

Եւ դժվար թե կյանքիս ամբողջ ընթացքում կարողանամ հասկանալ Արարատյան Հայաստանից հալածական այն բոլորի, լինի դա արիեստավոր, սպա, զինվոր, մտավորական, խմբապետ, նախարար թե պարզ գյուղացի, կրկնում եմ՝ *դժվար թե հասկանամ ռիսերիմ կարմիր կացնից հալածական արարատյան գաղթականության ապերախտությունը, որոնց փրկության համար, Լեռնահայաստանի սպարապետությունն արեց ամեն ինչ, անգամ զոհաբերեց իր երկրի անկախությունը, որ ձեռք էր բերված տարիների անհավասար կռիվներում թափված արյունով:*

Արդյո՞ք հազարների հասնող հայ մտավորականների, սպաների, խմբապետների ամենաչնչին մասը գոնե մի անգամ հաշվի նստե՞լ է իրա խղճի հետ, հարցրե՞լ է իրան, թե

ի՞նչ պիտի լիներ իր օրը, եթե ազատ ու անկախ Լեռնահայաստանը գոյություն չունենար:

Ի՞նչ, եթե հուսո բազա, որպիսին էր Սյունիքը, չունենային, ապստամբության չէի՞ն դիմի:

Այա բանտերում կացնահարվող հայ մտավորականության փրկության գործը:

Կապստամբեի՞ն, այն էլ Վրաստանի անկումից հետո՝ անհավանական է, բայց եթե նման գաղթ տեղի ունենար էլ ո՞վ չգիտե, որ բանտերից ազատվածներն ու շատ-շատերը գերեզման կգտնեին Խոսրովի եւ Աղինի ձորերում:

Բարեբախտաբար, կար *խրոխտ եւ հաղթական Սյունիքն*, որի վրայով, որպես *փրկության կամուրջի*, եկան ու անցան *հալածականների քարավանները*, եւ երբ (իմ երկտողը) իմ եւ պարսից իշխանության միջեւ գոյություն ունեցող բարեկամության շնորհիվ թավրիզ հիսսան՝ սրանց մի մասը, որ դավադրել էր Լեռնահայաստանի անկախության դեմ, ներսից պայթեցրել այդ *անպարտելի* երկիրը, *պարսկական չարչիխանաներից, ամենաստոր միտումներով* (շատերը ամենաստոր միջոցների էին դիմում, ինչպես՝ մատնության, դավադրության, որպեսզի մեծամասնականներից բարեհուսության վկայական ստանան՝ Երեւան վերադառնալու) մի *անզոր* արշավանք սկսեցին Լեռնահայաստանի եւ նրա *սրբությունների* հասցեին:

Փրկվածներն այսպես էին վարձատրում իրանց փրկչին: Սեւ, եզակի, անլուր, հայու ապերախտություն, որը, կրկնում եմ, կյանքիս ամբողջ ընթացքում չպետք է հասկանամ ու ներեմ:

28 օգոստոսի
Դատական գործ, թերթ 213-230:

Ջորավար Նժդեհ

**Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ն Ժ Դ Ե Յ Ի
Հ Ա Ր Ց Ա Ք Ն Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը**

**ԸՆԿԵՐ ՆԺԴԵՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՆ ԻՐ ԴԵՄ ՀԱՐՈՒՑՎԱԾ
ԱՄՔԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ**

Հարցում. Երեւանից փոխադրած բուշեիկ բանտարկյալներին Ձե՞ր կարգադրությամբ են սպանել Տաթեւում:

Պատասխան. Ինձ նոր է հայտնի լինում, որ Երեւանից Տաթեւ բանտարկյալներ են ուղարկված:

7. Ընկերներից պնդողներ կան, որ դուք Տաթեւում մտել եք բանտարկյալների մոտ, խոսել նրանց հետ, հարցաքննել նրանց:

Պ. Այդ գերիները բերվել են Նոր Բայազետից եւ ոչ՝ Երեւանից:

7. Ձեր կարգադրությամբ ռուս բուշեիկ բանտարկյալներ սպանվե՞լ են եւ առհասարակ սպանությունները Ձե՞ր հրահանգով են տեղի ունեցել՝ թե՞ այլ ճանապարհով:

Պ. Այդ բանտարկյալների մեջ ռուսներ չեն եղել: Ձանգեզուրի զանազան շրջաններում ցրված են եղել իշխանության կարգադրությամբ ռուս գերի զինվորներ, որոնց նկատմամբ իմ վերաբերմունքն եղել է միանգամայն բարյացակամ, որովհետեւ այդ զինվորներին ես մեծամասնական չեմ համարել, այլ՝ տգետ գյուղացիներ, որ մեծամասնական սվիններով մեր դեմ էին ուղարկված, եւ իմ այդ մարդասեր վերաբերմունքի հետեւանքով էր, որ ռուս զինվորներն իմ դեմ չէին կռվում: Ես ռուս ոչ մեկ զինվորի չեմ կարգադրել սպանել: Ինչ վերաբերում է այն խնդրին, թե ո՞ւմ կարգադրությամբ են սպանություններ կատարվել՝ պիտի ասեմ հետեւյալն. որ կազմված կար առանձին ռազմա-դաշտային դատարան, որի նախագահն էր իմ շտաբի պետ Ռուբեն Նարինյանը, քննիչն էր Արտաշես Պարոնյանը եւ երկու հոգի տեղի հասարակությունից: Բոլոր սպանությունները կատարված են այդ դատարանի վճռով: Ոչ միայն որեւէ սպանություն կատարելու հրահանգ չեմ տված, այլեւ՝ առհասարակ դատական գործերին ամենեւին չեմ մասնակցած: Առհասարակ, թե՛ ռուս գերիներ

րին եւ թե՛ Երեւանից բերված մեծամասնական բանտարկյալներին իմ կարգադրությամբ սպանելու սուտ լուրը տարածել է Տաթեւի շրջանի հրամանատար Վարդանը, որը մի քրեական տիպ է:

7. Ի՞նչ են եղել Երեւանի պարետ Քոթանջյանի կողմից Տաթեւ ուղարկված բուշեիկ ռուս 40 զինվորները:

Պ. Այդ 40 ռուս զինվորների մասին եւս ես որեւէ տեղեկություն չունեմ, այդպիսի զինվորներ՝ ինչպես առաջ էլ շեշտեցի, Տաթեւ չեն բերվել, ուրեմն եւ ես նրանց սպանել տալու հրաման տալ չէի կարող:

7. Գորիսում Ձեր կարգադրությամբ սպանվե՞լ է մի ռուս դատավոր իր ընտանիքով:

Պ. Ռուս դատավորի եւ ընտանիքի սպանությունը կատարվել է ժողովրդի ձեռքով, որպես հետեւանք այն բանի, որ խորհրդային իշխանության օրոք նա քաղաքական վատ դեր էր կատարել: Սպանության մանրամասնություններով, ինչպես նաեւ այն բանով՝ թե ինչո՞ւ են այդ արել, արդյո՞ք տեղին էր, թե՞ անտեղի, ես հնարավորություն չեմ ունեցել հետաքրքրվելու:

7. Արծվանիկ գյուղում Տեր-Հարությունյանին ո՞վ է սպանել եւ ինչո՞ւ:

Պ. Տեր-Հարությունյանն Արծվանիկ գյուղում կազմակերպել էր մեծամասնական երիտասարդական միություն: Սկզբնական շրջանում իշխանությունն էւ ես ուշադրություն չէինք դարձնում այդ բանի վրա, վստահ լինելով գյուղացիների՝ դեպի մեր կառավարությունն ունեցած վստահության վրա, բայց հետո, երբ Տեր-Հարությունյանը մարդ էր ուղարկել խորհրդային իշխանության մոտ՝ Գորիս եւ առաջարկել, որ գան ու իրենց շրջանը գրավեն եւ երբ այդ բանն իմացել էր վաշտապետ Գերասիմը՝ բարկացել ու ատրճանակով վիրավորել էր նրան, որից եւ մեռել էր Տեր-Հարությունյանը:

7. Ծի՞շտ է, որ վերջին նահանջին Արծվանիկ գյուղում առանց դիմադրության հանձնվել էր թշնամուն:

Պ. Այո՛, ճիշտ է, ոչ միայն Արծվանիկն, այլեւ ամբողջ Ղափանն առանց դիմադրելու հանձնվեց: Կռիվներից 15 օր առաջ Ղափանից պատվիրակներ էին գնացել թշնամու մոտ եւ հայտնել, որ ժողովուրդը նոր կազմված Լեռնահայաստա-

նի կառավարության (Հայաստանի կառավարության) հետ ոչ մի կապ չի գոում, եւ խնդրում է գալ ու տիրել երկրին:

7. Սմբատ Խոջամիրյանին սպանել են Գորիսում եւ ինչո՞ւ:

Պ. Սմբատ Խոջամիրյանը սպանվել է Գորիսում այն պատճառով, որ ռազմաճեղք է ծախել թուրքերին:

7. Սմբատ Խոջամիրյանը սպանել է 6 հոգու Գորիսում եւ ո՞ւմ կարգադրությամբ:

Պ. Այո, սպանել է 6 հոգու Գորիսում՝ դատական մարմնի վճռով:

7. Խոջամիրյանին դուք ուղարկել եք Ղարաբաղ:

Պ. Այո:

7. Արդյո՞ք այդ սպանված 6 հոգու սպանության պատասխանատվությունից զերծ պահելու համար չէ, որ նրան ուղարկել եք Ղարաբաղ:

Պ. Ոչ, ընդհակառակը, նա ուղարկված է եղել Ղարաբաղ, որպես այդ տեղին քաջածանոթ մարդ եւ առհասարակ ապստամբության սկզբի շրջանում լավ ապստամբներից էր եւ իրեն շատ լավ էր պահում:

7. Որքա՞ն հարմար էր, որ դուք Ձեր շտաբի պետին դատական մարմնի նախագահ էիք կարգել:

Պ. Ժողովրդի ներկայացուցիչներն էին ընտրել նրան՝ հիմնվելով այն բանի վրա, որ երկիրը ռազմական դրության մեջ էր հայտարարված:

7. Վաշտապետներն ինքնագլուխ, առանց դատական մարմնի քննության ու վճռի, սպանություններ չե՞ն կատարել:

Պ. Ոչ:

7. Հաջի Մարկոսին եւ իր որդուն ճանաչո՞ւմ եք:

Պ. Ոչ:

7. Նա դամարկվեցի է, նրա որդին բուլշեիկ է եղել եւ հակառակ ընկերների միջամտության, դուք երկուսին էլ սպանել եք տվել:

Պ. Ես ոչ ճանաչում եմ, ոչ էլ տեղեկություն ունեմ այդ մասին: Չեմ պնդում, կարող է պատահել, որ առանց իմ եւ դատարանի գիտության սպանված լինեն, որովհետեւ խառը ժամանակ էր: Թաջայական հողի վրա նրան խփել են, այդ մասին ցուցմունքներ կտան Նիկոլ Նիկողայոսյանը եւ Ղազար Քոչարյանը: (Այս հարցաքննության ժամանակ ընկեր

Նժդեհը հայտարարեց, որ իր մասին ցուցմունքներ տվողները մեծ մասամբ հակառակորդ կողմ են, առանձնապես մատնանշեց Եփրեմ Սարգսյանի վրա եւ հայտնեց, որ նա իրեն թալանել է հետեւյալ ձեւով. երբ Երեւանից ինքը Բյուրոյի կարգադրությամբ գալիս է Լեռնահայաստան, Բուլղարիայից բերած իր թանկագին իրերը (սուր, խանչալ) եւ արտարժույթը, թողել է Եփրեմ Սարգսյանի մոտ: Վերջինս Երեւանի նահանջից հետո գալիս է Լեռնահայաստան եւ հետը բերում Նժդեհի միայն մի տետրակն, իսկ մյուս իրերի մասին հայտնում է, որ մեծամասնականները խուզարկության ժամանակ տարել են, հետո երբ Նժդեհն ինքը հետաքրքրվում է այդ խնդրով, ընկերներն ասում են նրան, թե այդ իրերն ոչ թե մեծամասնականներն են տարել, այլ Եփրեմ Սարգսյանի կինն իրենց ասել է, որ նրանք թաղված են Եփրեմ Սարգսյանենց գյուղում: Ոչ միայն այս, այլեւ այն պատճառով, որ Շահինյանի վերջին գործողություններն անհայտ չէին կարող լինել Եփրեմ Սարգսյանին, եւ որ դեռ Գորիսի կուսակցական ժողովում նա հայտարարում էր, թե կռիվը մեծամասնականների դեմ չպիտի շարունակել, քանի որ նրանք էլ մեզ պես սոցիալիստներ են, այդ նպատակով նույնիսկ Եփրեմ Սարգսյանն եւ Գ.Շահինյանը մարդ էին ուղարկել դասակարգային շերտավորում առաջ բերելու Ձանգեզուրի գյուղացիների եւ զինվորության մեջ: Պետք է ամենեւին չհավատալ Եփրեմ Սարգսյանին):

7. Բուլշեիկներին Տաթևի ձորը գլորելուն մասնակցա՞ծ եք:

Պ. Կտրականորեն հայտարարում եմ, որ ոչ միայն մեզ գործառնությունների եւ սպանությունների մասնակցած չեմ ու հրաման չեմ տված, այլեւ՝ դատական մարմնի աշխատանքներին չեմ մասնակցել: Բացի կռիվների ժամանակ տեղի ունեցած սպանություններից, մյուս բոլոր սպանությունները տեղի են ունեցած դատական մարմնի վճռով:

7. Նոր Բայազետն ինչո՞ւ եք թողել:

Պ. Ես Նոր Բայազետի տերը չեմ, որ թողնեի, նա ընկնում էր Արարատյան իշխանության սահմաններում: Մեսրոպը եւ Շահինյանը գնում են Նոր Բայազետ եւ նամակ են գրում. գեթ 24 ժամով Բայազետ գնալ, որովհետեւ այդ 24 ժամն անգամ վճռական նշանակություն ուներ, նրանց կարծիքով Բայազետի ապստամբ ժողովուրդը կազմակերպելու, նրա

տրամադրությունը բարձրացնելու համար: Մինչև իմ գնալ՝ Աղաբեկն իրեն Բայազետի շրջանի դիկտատոր էր հայտարարել եւ կոլեգիալ աշխատանքներին դեմ էր, բոլոր փորձերն Աղաբեկին համոզելու, որ մյուս ապստամբ գավառների նման Բայազետում էլ ստեղծվի Հայրենիքի փրկության կոմիտե, ապարդյուն է անցնում: Իրեն շարունակ քեֆերի եւ հարբեցողության տված Աղաբեկը հարկավոր ուշադրություն չի դարձրել ռազմական ուժերի կազմակերպման եւ քաղաքից խուճապով փախած թշնամու հետապնդմանը: Բանտարկված մեծամասնականների եւ թշնամու ճակատի մեջ մշտական կապ է տեղի ունեցել՝ ժողովրդի տրամադրությունը միանգամայն բացասական էր դեպի մեզ: Երբ ես Բայազետ գնացի, իսկույն զգացի, որ այդտեղ հեղաշրջում չէր, որ տեղի էր ունեցել, քանի որ մեծամասնական ուժերը իշխանություն էլ չէր եղել: Չկար գինվորական կազմակերպություն, չկար ժողովրդի մեջ կռվելու տրամադրություն, ընդհակառակը, դավադրելու, դավաճանելու բազմաթիվ փաստեր ու տրամադրություն էին հանդես բերել: Ես զգում էի, որ այդ ճակատում մենք հաջողություն չենք կարող ունենալ, ստիպված պիտի նահանջեինք: Իրերի վիճակն այնպես էր, երբ Ախտայի ճակատից Համո Օհանջանյանի նամակն ստացվեց, վերջինս Ախտայի մեր զորամասերի կրած անհաջողությունների հետևանքով խնդրում ու պահանջում էր, որ ես մեծամասնականներին, թե՛ Բայազետի կողմից եւ թե՛ Չիմինքենդի ուղղությամբ հարվածեմ եւ երեւանյան զորամասերին օգնության հասնեմ: Ես մի վաշտ զորք եմ կանչում Նոր Բայազետ, ինքս վերադառնում Քեչիշքենդ՝ Չիմինքենդի վրայով կապ հաստատելու մերոնց հետ: Պարտք եմ համարում շեշտել, որ Աղաբեկի մղած կռիվը կազմակերպված հակամեծամասնական կռիվ չէր, այլ՝ թայֆայական. 200 միլիոն ռուբլու պատմություն կար (փողը բուլշեւիկներից էր խլված) եւ քաղաքը թողնելու վճռի վրա ճակատագրորեն ազդել է այդ, քանի որ քաղաքը թողնելով ավելի հեշտ էր յուրացնել այդ փողերը:

7. Նոր Բայազետից վերադառնալիս դուք ասա՞՞ծ եք՝ թե Նոր Բայազետներ շատ կծնվեն, Նժդեհներ՝ չեն ծնվի այլևս:

Պ. Դա կատարյալ սուտ է:

7. Նոր Բայազետի կռվին՝ իբր մերոնք թշնամուն են թողել չորս թնդանոթ, դուք ներկա եղե՞՞ք եք:

Պ. Ո՛չ, ես գնացել եմ այդ դեպքերից հետո:

7. Դուք մտադրություն չունեի՞ք Ելենովկայի վրայով Երեւան անցնել ու կապ ստեղծել:

Պ. Ո՛չ, ես մի վաշտով ինչպե՞ս կարող էի Երեւան անցնել, մանավանդ, որ Սիսիանի վաշտն ոչ մի գնով Երեւան չէր գնա. նրանց ես այդ նպատակով չէի բերել, այդ պայմաններում Սելիմից անցնելն արդեն սիսիանցիների կողմից մեծ զոհողություն էր:

7. Կան վկայություններ, որ դուք Նոր Բայազետի կռվին չէք մասնակցել:

Պ. Չի ենք նստել գնացել, որ տեսնենք թե ճակատում ստեղծված խուճապն ինչի՞՞ հետեւանք է: Երբ տեղ ենք հասնում՝ տեսնում ենք, որ սարսափելի խուճապով ամենքը փախչում են: Շնորհիվ իմ քսանեւիկնոց ձիավորների ու Մեսրոպի՝ հնարավոր եղավ գնդացիներն ազատել:

7. Վեղիի ուղղությամբ չէի՞ք կարող կապ հաստատել մերոնց հետ:

Պ. Յապոնը՝ որպես այդ ճակատի պետ, քանիցս տված հրամանները փոխանակ ի կատար ածելու՝ զբաղված էր իր ոչխարների պատմությամբ. զանազան դժվարություններ (ծյունի շատություն) պատճառ բռնելով դանդաղում էր ի կատար ածել առաջ շարժվելու իմ հրամանը: Չնայած այս կատար ածել առաջ շարժվելու իմ հրամանը՝ Զնայած այս բանին, ես Ռուբենի գիտությամբ կտրականորեն պահանջեցի եւ թեեւ ուշ՝ մերոնք սկսեցին ռազմական գործողությունցի եւ թեեւ ուշ՝ մերոնք սկսեցին ռազմական գործողությունցի եւ հասան մինչեւ Զանախչի: Այդ ժամանակ Գորիսի դիվանը, հիմնվելով մեր հետախուզական մարմնի տված այն սխալ տեղեկությունների վրա, որ մեծամասնականները 10000 զորք են կենտրոնացրել Զաբուղի ուղղությամբ, ինձ ստեպ հետ կանչեցին, ես վերադարձա Գորիս, ուր հասնելուցս երեք օր հետո Երեւանի գաղթականությունը երեւաց:

7. Յապոնին ինչո՞ւ ուրիշով չէիք փոխարինում:

Պ. Ուրիշ մարդ չկար եւ ոչ ոք էլ որեւէ արժանավոր թեկնածու չի մատնանշել:

7. Դուք դժգոհ եք եղել Կուռոյից ու իր զորամասերից, ինչո՞ւ չէք հեռացրել նրան ու ցրել զորքը:

7. Ես այդ կանեի եւ մի շարք փաստաթղթերով հաստատվող քայլեր եմ արել այդ ուղղությամբ: Եթե երեւանյան զորամասերի հրամանատարությունը հեռացվել եւ զորամասերն էլ զտման ենթարկվեին, այն ժամանակ կստեղծվեր մի ռազմունակ ուժ: Եթե չլիներ Հայաստանի կոմիտե՝ ես այդ կանեի:

7.Տեր-Հակոբյանի հետ ի՞նչ հարաբերության մեջ էիք:

7. Երբ Տաթևի համագումարի ժամանակ Լեռնահայաստանի կառավարության համար ընկերների ցանկ խնդրեցի՝ ի շարս այլ ընկերների տվեցին նաեւ Հ.Տեր-Հակոբյանի անունը:

7.Ինչո՞ւ Լեռնահայաստանի կառավարության համար գաղթական ընկերներից էիք թեկնածու ուզում:

7. Ես դեմ էի, բայց որպես կուսակցության ներկայացուցիչ ենթարկվեցի կուսակցական մարմնի կարգադրության, մանավանդ կուսակցական ընկերների բարոյական ճնշումը կար, որ անտեսել՝ անկարող էի:

7. Դուք ինչո՞ւ համաձայնեցիք Հայաստանի եւ Լեռնահայաստանի կառավարությունները միացնել:

7. Ես դեմ եմ եղել այդ բանին ու կարծիքս առանձին նամակով գրել եմ Հայաստանի կառավարության նախագահին: Այդ նամակով ես՝ ինչպես եւ առաջ, առաջարկում էի Հայաստանի կառավարության նախագահին հրաժարվել Լեռնահայաստանի կառավարության նախագահությունից, մնալ որպես Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ եւ որպես այդպիսին՝ ներկայանալ արտաքին աշխարհին եւ ընդհանրապես քարոզչության գործը դրսում տանել, սակայն հակառակ իմ համոզման՝ ես երկու կառավարությունների միացման հետ հաշտվեցի, որովհետեւ կուսակցական գերագույն մարմինն այդ էր հրամայում: Չնայած այն հանգամանքին, որ Տաթևի համագումարի միջոցով ժողովուրդն իր հավաքական կամքն էր արտահայտել հոգուտ իմ տեսակետի եւ մանավանդ թե ժողովրդի միջից էլ ձայներ էին լսվում, որ Հայաստանի կառավարությունը վստահություն չունի ժողովրդի մեջ, ես, այնուամենայնիվ, այդ երկվության հանդեպ կանգնած՝ վճռեցի ենթարկվել կուսակցական մարմնի վճռին: Երկու կառավարությունների միակ միացյալ ժողովում անգամ ընկեր Վրացյանն այն տեսակետն ուներ, որ Հայաստանի կառավար-

ությունն անծանոթ է ժողովրդին եւ առաջարկում էր երկրի եւ ժողովրդի շահերի տեսակետից Ձանգեզուրը թողնել Լեռնահայաստանի կառավարությանը կառավարելու: Բայց, որովհետեւ մատերն էին վճռում բոլոր խնդիրներն, այս խնդիրն էլ *մատներով վճռվեց* հակառակ իմ ու Վրացյանի տեսակետների:

7. Դուք 11 ծիերով Ձեր իրերն եւ Ձեր ծանոթ ու մտերիկ բարեկամներին ուզեցել եք փոխադրել Արաքսը պետական հաշվով եւ առանց հերթի, եւ Ձեր անունից այդպիսի պահանջ դրել եք Տեր-Հակոբյանին եւ նա մերժել է Ձեզ:

7. Ո՛չ, ես երեք վերստ հեռու եմ եղել:

7. Տիգրան Սազանդարյանի՝ առանց հերթի ու պետական հաշվով Ձեր անունով անցկացնելիք երեք բեռ իրերի մասին տեղեկություն ունե՞ք:

7. Այո՛, այդ իրերը Տաթևի հնություններն են եղել:

7. Գասպար Խաչատրյանը Ձեր տված թղթերի հիման վրա գնացել եւ խնդրել է Տեր-Հակոբյանին, որ իրեն հերթից դուրս թույլ տա գետն անցնելու:

7. Նա Լեռնահայաստանի կառավարության եւ իմ ներկայացուցիչն էր եւ որպես այդպիսին՝ ուներ պաշտոնական թուղթ, իսկ Հակոբ Տեր-Հակոբյանին նա դիմե՞լ է, թե՞ ոչ հերթից դուրս գետն անցնելու՝ չգիտեմ:

7. Ինչո՞ւ եք երկու թնդանոթ եւ երկու գնդացիր հանձնել Ամիր Արշադին:

7. Ես թնդանոթներ եւ գնդացիրներ չեմ տվել, Լեռնահայաստանի կառավարությունն է տվել մի թնդանոթ եւ մի սպա մի քանի զինվորներով: Իսկ նահանջի ժամանակ գետն անցկացրած թնդանոթների եւ գնդացիրների խնդիրն այսպես է եղել: Նախքան մեծամասնականների Գեմվազ մտնելը ժողովուրդը չգիտեր, թե ո՞վ է գալիս մեծամասնականի քղամիղով՝ թուրքե՞րն, թե՞ ռուս-հայկական զորամասերն, որպեսզի հնարավոր լիներ թուրքերի ներխուժման դեպքում Գեմվազին օգնության հասնել: Ես կարգադրեցի, որ երկու թնդավազներ եւ գնդացիրներ անցկացնեն Արաքսն եւ որոշված տեղում սպասեն կարգադրության, այս մասին հայտնված էր նաեւ Գեմվազի ժողովրդին: Թնդանոթներն ու գնդացիրները սպաների եւ զինվորների հսկողությամբ պահվում էին Քյուրդաշ գյուղում: Ամիր Արշադն այդ մասին իմանում է եւ առանց

հարցնելու մարդ է ուղարկում եւ տանում թե՛ թնդանոթներն եւ թե՛ գնդացիներն՝ առանց փականքների: Այնուհետեւ, Պոպովի տված տեղեկությունների հիման վրա ինձ մոտ եւս մարդ է ուղարկում ու փականքները պահանջում: Ես մերժում եմ պատճառաբանելով, որ փականքները թողնված եմ Մեղրիում: Ամիր Արշադն ուրիշ միջոցների փորձեց դիմել՝ Սուժումբարը սպառնաց քանդել, գաղթականության վերադարձը խանգարել, սակայն այդ միջոցներն էլ ապարդյուն անցան եւ փականքները ցարդ վերադարձրած չեն:

7. Երեւանի նահանջից հետո, երբ զորամասերն ու գաղթականությունը հասնում են Դարալագյազի սահմաններին, դիրքերում Յապոնի սահմանապահ զորամասերի փոխարեն հանդիպում են թուրքերի, ինչո՞վ էք բացատրում այս:

Պ. Դա Կուռոյի մեղքի հետեւանք է: Նա փոխանակ գաղթականության հետեւից ռազմական պատրաստությամբ գալու՝ ամենից առաջ էր եկել: Ընդունեցեք, որ եթե անգամ Դարալագյազի սահմանապահ զորամասերն երկաթե կարգապահություն ունենային, այդպիսի խուճապային ու քառսային նահանջը չէր կարող չանդրադառնալ սահմանապահ զորքերի տրամադրության վրա: Ընդհանրապես, մեր բոլոր նահանջների ժամանակ, մեր զորքի տրամադրության վրա խիստ բացասականորեն է ազդել գաղթականությունը:

7. Ձեզ մեղադրում են, որ ժամանակին Դարալագյազ Կուռոյի զորամասերին փամփուշտ չէք հասցրել, այնինչ՝ նա Ձեզ էր ենթարկվում եւ Դուք պարտավոր էիք նրա զորամասերն այդ տեսակետից բավարարել:

Պ. Նախ եւ առաջ, Կուռոն այդ ժամանակ ինձ չէր ենթարկվում, երկրորդ՝ այդ խնդրով Կուռոն պետք է դիմեր իմ Արեւմտյան ճակատի հրամանատար Յապոնին, որի Քեշիշքենդում ունեցած զինվորական պահեստներն անհամեմատ ավելի հարուստ էին փամփուշտով՝ քան Գորիսի պահեստները: Կուռոյի զորամասերը Քեշիշքենդում մնացել են ոչ թե ութ, այլ՝ մեկուկես օր, եւ այդ ժամանակում էլ Կուռոն փոխանակ ճակատով զբաղվելու՝ վիճելիս է եղել Յապոնի հետ, թե ո՞վ ո՞ւմ պիտի ենթարկվի:

7. Ձեզ մեղադրում են, որ Երեւանից եկած սպաներին Ձեր պաշտոնյաները, նույնիսկ սրանցից հիվանդներին, վիրավորներին ու զորամասերին Ձեր կարգադրությամբ զինա-

թափել, թալանել ու վիրավորել են, որի հետեւանքով անջրպետ է ստեղծվել Լեռնահայաստանի եւ Երեւանի սպայության, պաշտոնության եւ ժողովուրդների մեջ:

Պ. Դուք ցույց տվեք գեթ մի թուղթ, որով ես նման կարգադրություն եմ արել:

7. Խմբապետ Սմբատը նույնպես այդ առթիվ գանգատվել է:

Պ. Սմբատի ու առհասարակ ոչ ռազմական կարգով Լեռնահայաստանի սահմանները մտած սպաներին ու զորամասերին զինաթափ անելու հրամանը տվել են Ռուբենը, Կուռոն եւ Յապոնն՝ առանց իմ գիտության: Այն էլ՝ հենց որ ստանում եմ Կարո Սասունու հեռախոսագիրն այն մասին, որ զինաթափությունները թյուրիմացությունների տեղիք են տալիս՝ անհիմնապես կարգադրում եմ դադարեցնել, մինչեւ իմ Բազարչայ գնալու: Իմ մինչեւ Բազարչայ գնալս կամ այնտեղից վերադառնալուց հետո կարող է պատահել, որ սիսիանդից վերադառնալուց հետո կարող է պատահել, որ սիսիանդիցներն ինքնազուլիս զինաթափ արած լինեն այս ու այն անհատին: Առանձնապես Սմբատի եւ ընդհանրապես տաճկահայ զորամասերի զինաթափման կարգադրությունն արել ու քանիցս կրկնել են՝ Ռուբենը, Կուռոն եւ Յապոնը:

7. Ձեզ մեղադրում են, որ թեեւ խոստացել էք բռնագրավված զենքերը հետ վերադարձնել տերերին, այնուամենայնիվ, Ձեր խոստումը չէք կատարել եւ սոցա զենքերն ուղարկել էք Տաթեւ:

Պ. Այո՛, զենքերն ուղարկել են Տաթեւ, բայց հետ դարձնելու խոստում ես ոչ ոքի չեմ արել:

7. Ձեզ մեղադրում են, որ Դուք երեւանյան սպաներին մեղադրել էք այն բանի մեջ, որ իբր թե նրանք չեն ցանկանում Ջանգեզուրում ծառայել, որ ուզում են Պարսկաստան գնալ, այս պատճառով մոտ 60 սպա թողել են իրենց ծառայությունը եւ անցել Պարսկաստան:

Պ. Այդպիսի բան տեղի չի ունեցել, ես միայն երեւանյան զորամասերի թե՛ հրամանատարական կազմի եւ թե՛ զինվորների ռազմունակությունն ու որակը ցած համարելով ամեն քննադատությունից՝ գրել եմ իմ ընկեր Սիմոն Վրացյանին եւ Արշակ Հովհաննիսյանին, որ գան եւ իրենց զորքին տեր դառնան:

7. Դուք կարգադրել ու հետեւե՞լ եք, որ Երեւանի զորամասերը կանոնավոր զբաղմունքներ ունենան:

7. Այո՞, ես քանիցս կարգադրել, հրամայել եմ, որ ամենօրյա զբաղմունքներ տեղի ունենան, սակայն հրամանատարական կազմը պատճառաբանելով, թե զինվորները մերկ են, բոկոտն, նրանց իրենց ընտանիքներից հնարավոր չէ բաժանել, հետաձգում եւ ի կատար չէին ածում իմ հրամանները:

7. Բազարչայի տեղահանության հարցը ո՞վ է վճռել:

7. Լեռնահայաստանի կառավարությունը:

7. Եի՞շտ է, որ ռազմավարական տեսակետից Կուռուն դեմ է եղել Բազարչայի տեղահանությանը եւ այդ պատճառով ճի՞շտ է, որ առաջարկել է միայն ռազմունակ տղամարդկանց տեղահան անել, թողնելով կանանց, ծերերին ու երեխաներին տեղում: Սիսիանցիները Բազարչայի բնակիչներին թալանելու համար հարձակումներ գործել են եւ Կուռույի գիշերային պահակները նրանց հետ այդ պատճառով շարունակական ընդհարումներ ունեցե՞լ են:

7. Նախ ռազմագիտական տեսակետից՝ պետք էր այդ գյուղը տեղահան անել: Գիտական ռազմավարության տեսակետից՝ կանայք ու ծերերն էլ վտանգավոր են ճանաչված, երբ մանավանդ՝ նրանց համար կյանքն ամբողջապես թշնամու կողմն էր: Նրանք Բազարչայի թե՛ աջից եւ թե՛ ձախից, Նախիջեւանի ու Սինքենդի կողմերից ամեն տեսակ վտանգավոր քայլերի հող կարող էին պատրաստել եւ մեր թիկունքից խփել տալ թշնամուն: Բազարչայի տեղահանության հարցը դեռ Կուռույի գալուց շատ առաջ էր վճռված: Կուռուն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ շուտափույթ եւ միանգամից տեղահանության հետեւանքով բազմաթիվ ցորենի ու գարու հորեր կմնային անհայտ, որ արտարժույթային շատ արժեքներ հետները կարող էին տանել՝ առաջարկում էր աստիճանաբար, հետզհետե կատարել տեղահանությունը: Սպայությունը դեմ էր տեղահանության, որովհետեւ այդու՛նուքս զրկվում էին թալանելու եւ հարստանալու հնարավորությունից: Միայն կոռնետ Ս.Նավասարդյանը 70 գլուխ տավար էր գողացել եւ քշել լեռները: Սպայության եւ Կուռույի բռնած դիրքի հետեւանքով էր, որ ես կարգադրեցի 24 ժամվա

ընթացքում ի կատար ածել Բազարչայի տեղահանությունն, որն այնուամենայնիվ չիրականացավ:

7. Չնայած այն հանգամանքին, որ Կուռուն մի քանի անգամ ցանկացել է հեռանալ եւ այդ բանին իրենց համաձայնությունն են տվել կառավարության անդամներ (Մելիք-Յուլչյան, Արշակ Յովհաննիսյան - նամակները մայիս 11, 12), Դուք սրան ուրիշով չեք փոխարինել ու ազատել:

7. Ես Կուռույին այդ վտանգավոր պահին հեռացնել չէի կարող, որովհետեւ նրա հետ կա՛մ պիտի հեռանային եւ կա՛մ թշնամու կողմն անցնեին հրամանատարական կազմն եւ զորամասերն, մանավանդ, որ Կուռուն հրաժարականն ինձ՝ որպես սպարապետի, երբեք չի ներկայացրել: Վերջին կռիվներից, ես հրամայել էի, որ նա անձամբ ներկա գտնվի ճակատում եւ ղեկավարի ռազմական գործողությունները: Այս հրամանս մույնպես նա ի կատար չէր ածել, որի հետեւանքով արձակեցի եւ դատի տվի նրան: Մանավանդ, որ առանց իմ գիտության զորամասերի մեջ էր մուծել 400 գերի եւ բուլշեւիկ անռազմունակ տարրեր եւ այդու ավելի լքել ու պատճառ դառել, որ Երեւանի զորամասը թշնամու կողմն անցնի:

7. Ձեզ մեղադրում են այն բանի մեջ, որ աչառու վերաբերմունք եք ցույց տվել Ձեր պարետների եւ վաշտապետների նկատմամբ, օրինակ՝ Արմենակ Պարոնյանի եւ Մուշեղ Բաղդյանի նկատմամբ: Վերջինս՝ որպես թալանչի, եւ դատի է տրված եղել ու ենթարկվել վեց շաբաթվա տնային բանտարկության, իսկ Դուք՝ ներել եք նրան:

7. Մուշեղ Բաղդյանն իրոք զեղծումներ էր կատարել: Ես հրահանգել եմ, որ Կուռուն մի հանձնաժողով հրավիրի եւ նրա զեղծումները քննի: Կուռուն իր 3 սպաներից հանձնաժողով է նշանակում. այդ հանձնաժողովը գալիս է այն եզրակացության, որ Բաղդյանը ոչ թե թալան է արել, այլ իր պաշտոնը կատարելիս թույլ է եղել, այդ պատճառով էլ՝ գողություններ են տեղի ունեցել: Այդ հանձնաժողովի անդամները քանի որ անմիջական մասնակցություն էին ունեցել Բաղդյանի արած թալանին՝ շատ մեղմ վճիռ էին կայացրել, որոշում են Բաղդյանին վեց շաբաթով տնային բանտարկության ենթարկել: Ես երբ հետաքրքրվեցի եւ իմացա գործի ընթացքը, խիստ դժգոհ մնացի եւ կարգադրեցի Բաղդյանին ուղարկել Գորիս եւ գործը նորից վերաքննել: Բաղդյանին զանազան պատրվակներ

րով (հիվանդության, թուլության) դանդաղեցին ուղարկել Գորիս, որից հետո ռազմական գործողություններն սկսվեցին եւ գործը մնաց այդ վիճակի մեջ: Բաղրյանին պարետ էր նշանակել Կուռռն եւ նրա կատարած թալանների համար մեկ ու կես ամսվա ընթացքում պատասխանատվության չէր կանչել: Երբ ես Բազարչայ էի գնացել, մալականների բողոքների հիման վրա ես եմ Բաղրյանին դատի տվել եւ ոչ Կուռռն:

7. Եի՞շտ է, որ Դուք շատ անգամ արտահայտվել եք երեւանյան սպաների ու զորամասերի նկատմամբ, թե նոքա ժանտախտ են, խուլերա եւ ժողովուրդն էլ, հիմնվելով Ձեր ասածների վրա, նրանց շատ վատ վերաբերմունք է ցույց տվել:

7. Իմ թե Տաթևի համագումարում արտասանած ճառերի մեջ, թե շրջաններին ուղղած հեռախոսագրում, թե պարսից կառավարության եւ թե Մելիք-Թանգյանին ուղղած գրություններում ես ոչ միայն դատափետական խոսք չեմ ասել որեւէ մեկի հասցեին, այլ երեւանյան նահանջը համարել եմ իմ հաղթություն, ես ամենեւին չեմ վիրավորել ոչ սպաներին եւ ոչ զորամասերին: Կարող է պատահել, որ դասալիք սպաներին ու զինվորներին ծանր խոսքեր ասած լինեմ:

7. Ղափանում արտասանած Ձեր ճառերում Դուք ասե՞լ եք, թե ես փաշա չեմ, ես կառավարություն չեմ, ես երեւանի զինվորությունը չեմ, որ փախչեմ, ես Նժդեհն եմ:

7. Ղափանի ժողովրդի տրամադրությունը բարձրացնելու համար ես ասել եմ. կառավարությունը գնաց, զինվորներն էլ կարող են գնալ, բայց մենք պիտի կռվենք: Ուրիշ ոչինչ ասած չեմ իմ ճառում:

7. Հուլիս 23-ին, երբ Դուք, Մելիք-Յուլյանը եւ Եղիազարյանը Կուռռնից տեղեկություն եք ստանում, որ Դարալագյազը թողնված է ու զորքերից էլ ճակատում մի քանի հարյուր հոգի է մնացել, փոխանակ անձամբ գնալու եւ այդ շրջանի գործողությունները վարելու՝ Ձեր տեղը նշանակում եք այդ ուղղությամբ Մելիք-Յուլյանին ու Եղիազարյանին, որոնք ռազմական տեսակետից անհարմար անձինք են:

7. Եթե մի րոպե ընդունենք, որ Դարալագյազը թողնված էր եւ ճակատում էլ մի քանի հարյուր զինվորներ էին մնացել, այն ժամանակ ես իրոք պիտի մնայի կենտրոնում եւ ոչ թե գայի ճակատ: Միք մոռանա, որ մենք մի ճակատ չունեինք եւ բոլոր ճակատներում էլ՝ ես միաժամանակ լինել չէի

կարող: Ես պետք է կենտրոնում լինեի եւ կարգադրեի բոլոր ճակատների գործը, բայց որովհետեւ վերոհիշյալ պնդումը սխալ է, ես կներկայացնեմ իրողությունն իսկությամբ: Դարալագյազն այդ ժամանակ ընկած չէր, միայն զորամասերի մի մասն էր անցել թշնամու կողմը, ես նախապես թեեւ կարգադրել էի, որ Կուռռն անձամբ ներկա գտնվի ճակատում եւ վարի գործողությունները, նա կռիվները սկսելուց երկու օր հետո է միայն գնում Այնաջուր եւ երկրորդ օրը վերադառնում է այնտեղից շտաբ ու հետ փախչում: Երբ այս բոլորի մասին ինձ տեղեկացրեց՝ ես նրան գրեցի, թե դուք արհեստականորեն խուճապ եք ստեղծում ու հետ նահանջում: Ես ինքս ճակատ չեմ գնացել, այլ ուղարկել եմ վերոհիշյալ երկու ընկերոջն այն պատճառով, որ գտել եմ իմ ներկայությունը Ղափանում անհրաժեշտ կենտրոնի ուժերը հավաքելու եւ վտանգված ճակատներին այդ ուժերով օգնության հասնելու համար: Ղափանի շրջանում հավաքածու 300 հոգին ուղարկեցի Սիսիանի ճակատը: Ուղարկածու ուժերը թշնամուն սեղմելով Բռնակոթի ուղղությամբ հաջողությամբ առաջանում էին դեպի մեր նախկին դիրքերը, սակայն աջ թևից Նավասարդյանի հեծելազորի նահանջելու պատճառով ղափանցիներն էլ հարկադրված նահանջում են: Մանավանդ, որ ձախ թեւն էլ սկսել էր նահանջել:

7. Ձեզ մեղադրում են, որ կռիվներին անձամբ ներկա լինելուց, մասնակցելուց եւ ռազմական գործողությունները վարելուց խուսափել եք:

7. Նախ եւ առաջ, որեւէ կռիվ այս վերջին աղետի ժամանակ տեղի չի ունեցել, իսկ ամենալուրջ համարված ճակատներում ես ունեի Կուռռնի՝ որպես իմ օգնականի եւ Յապոնի՝ որպես ճակատապետի: Ես զբաղված էի կենտրոնի ուժերի հավաքումով եւ բոլոր ճակատների գործողությունները վարելով, այդ պատճառով էլ ճակատ չէի գնում:

7. Մելիք-Հուսեյնյանը պնդում է, որ դուք Մինքենդի դեմ 200 զինվոր եք ուղարկել, բայց ինքներդ՝ այդ զինվորների հետ չէք գնացել:

7. Այդ պնդումը միանգամայն սուտ է, քանի որ Մինքենդի դեմ առհասարակ մենք որեւէ գործողություն չենք սկսել:

7. Անցյալ տարվա Լեռնահայաստանի կառավարության անդամները գանգատվում են, որ Դուք շատ հաճախ իրենց վիրավորել ու արհամարհական վերաբերմունք եք ցույց տվել: Մանավանդ, Տաթևի համագումարի ժամանակ խիստ եւ անվայել արտահայտություններ եք թույլ տվել նրանց հասցեին:

Պ. Ես չեմ ուրանում այդ բանը, ուրիշ կերպ վարվել էլ չէի կարող, քանի որ նրանք *ինքնագլուխ իրենց ընտանիքների կարիքների համար* ցորենի ու գարու պարտադիր տուրք էին նշանակել գյուղերի վրա եւ պետական գներով հավաքել տվել: Բացի բժիշկ Մինասյանից, որն իրենից ոչինչ չի ներկայացնում, կառավարության մյուս անդամները *զեղծարարներ* են եղել: Օրինակ, Եզոր Հարությունյանն իր ինքնագլուխ կատարած պարենատուրքերի պատճառով հեռացվել էր Ղափանի եւ Գեներալի շրջաններից: Ս.Մաշուրյանն իր ընտանիքի կարիքների համար նույնը անում էր Ջանգեզուրում: Գեղեոն Տեր-Մինասյանը խաբեբայությամբ օգտագործելով իմ անունը՝ Շնհերում եղած անձեռնմխելի զինվորական պահեստի 300 փութ ցորենը փոխադրել է տալիս Գորիս՝ պաշտոնյաների կարիքների համար, փթերով փոխարինաբար բաց թողնում դիվանի անդամներին ու մի շարք խոսակցությունների տեղիք տալի: Այդ կառավարությունն այնքան վարկազուրկ էր, որ կես փութ ածուխ ստանալու համար անգամ դիմում էր իմ աջակցությանը: Մելիք-Հյուսեյնյանի նկատմամբ ես շարունակ կասկածներ եմ ունեցել, այդ պատճառով խուզարկել եմ տվել նրա տունը: Նա իր մոտ էր պահել իր ազգական բոլշեւիչկային (բոլշեւիկուհուն-Ա.Հ.), որ լրտեսության մեջ էր մեղադրվում: Մելիք-Հյուսեյնյանը մեծամասնականների օրոք հողային մասի վարիչ էր:

7. Ձեզ մեղադրում են այն բանի մեջ, որ ոչ մի օրենք ու իրավունք չէք ճանաչել՝ օրինակ կառավարությունն արգելել է անտառները կտրել, Դուք ասել եք. «Թողեք՝ թող կտրեն»:

Պ. *Իմ օրենքը ժողովրդի գոյության խնդիրն էր. ես կարգադրել էի ամեն բան գոհաբերել ինքնապաշտպանության գաղափարին*: Դիվանն ինձ համար մի ցուցանակ էր, որն իմ կարծիքով կազմված էր իմ հրահանգներն ի կատար ածելու: Եվ որովհետեւ կռվի ժամանակ նա զբաղված էր ինչ-

որ օրենքներ մշակելով, թարգմանություններով, իր ժամանակը վատնում էր տեղին ու հանգամանքներին անհարիր նախագծեր մշակելու վրա՝ ես բոլոր այդ ձեւի թղթ կարգադրություններն անուշադրության էի մատնում եւ առաջարկում գնալ գյուղերը՝ կազմակերպչական աշխատանքով զբաղվել:

7. Դուք Տաթևի համագումարում երբ հարց է լինում բոլոր քաղաքացիներին օրենքի առաջ հավասար ճանաչելու մասին, հայտարարել եք, թե ի՞նչ օրենք, ի՞նչ հավասարություն, օրենքն է՞ս եմ ու իմ վաշտապետներն:

Պ. Նման հայտարարություն չեմ արել, բայց եթե Լեռնահայաստանի դիվանի օրոք հայտարարած լինեի, որեւէ բանի դեմ մեղանշած չէի լինի:

7. Գեղեոն Տեր-Մինասյանին ինչպե՞ս համաձայնեցիք պետական վերահսկիչի պաշտոն տալ, քանի որ նա Ձեր կարծիքով անվստահելի ոմն էր:

Պ. Կառավարության բոլոր անդամները դրսից չէին կարող լինել: Վճռված էր երկու հոգի էլ տեղի մտավորականներից մուծել կազմի մեջ եւ որովհետեւ ուրիշ մարդ չկար՝ Գեղեոնը հրավիրվեց:

7. Երկրի ու ժողովրդի շահերի տեսակետից ի՞նչ անհրաժեշտություն էր ներկայացնում Ձեր սպարապետ օժվելը:

Պ. Այդ ժողովրդին պետք է հարցնել, քանի որ ժողովրդի ցանկությամբ է տեղի ունեցել օժուճը:

7. Ի՞նչ ձեւով է տեղի ունեցել օժուճը:

Պ. Լեռնահայաստանի կառավարությունը թե՛ ինձ որպես սպարապետի եւ թե՛ շրջանային հրամանատարներին, միմի դրոշակ օժեց եւ նվիրեց, դրոշակի օժման հետ օժեցին եւ ատրճանակս եւ մի գոտի ու կապեցին մեջքս: Բոլոր շարժումներն առհասարակ կրել են ազգային կրոնական բնույթ եւ օժման գործընթացն էլ տեղի ունեցավ՝ որպես այդպիսին:

7. «Արնոտ գիրքը» ո՞ւմ կարգադրությամբ է տպվել:

Պ. Թեւե այդ գիրքը հրատարակվել է Տաթևի համագումարից հետո, բայց այդպիսի գիրք հրատարակելու վճիռը կայացել էր առաջ՝ հին կառավարության օրոք: Տպագրական եւ այլ անհարմարությունների պատճառով գրքի հրատարակությունն ուշացավ: «Արնոտ գիրքը» շտապով հրատարակելու պատճառներից մեկն էլ այն էր, որ Համո Օհանջանյանն ու Արշակ Ղազարյանը Թավրիզից մեկնում էին ու այդ պատ-

ճառով փաստաթղթեր էին պահանջում, որ դրսի աշխարհում մղելիք քարոզչության նյութ ունենային:

7. Ձեզ մեղադրում էին այն բանի մեջ, որ երբ նախարարական խորհրդում տեղահանության հարց է լինում, Յանքերից պետական արժեքավոր գույքերի փոխադրությունը անհրաժեշտ համարվում Դուք հայտարարում եք, որ տեղահանության կարիք չի զգացվի, ռազմական գործողություններն ինքներդ պիտի վարեք եւ վճռել եք Յանքերն ու Ղափանն անձամբ պահել ու պաշտպանել: Երկու օրից հետո գալիս եք առավոտյան ժամը 9-ին, հրահանգում եք 10 րոպեում հեռանալ, որի հետեւանքով գույքը մնում է տեղում:

7. Փաստերը խեղաթյուրված են: Գորիսում ես դեմ եմ եղել Գորիսի տեղահանությանը, որովհետեւ խուճապ էր ստեղծվում եւ ստեղծողը կառավարությունն էր, որը ձիերը թամբել ու դուրս էր բերել փողոց եւ ժողովրդին էլ մատնել լքման: Յանքերում եղած խորհրդակցության ժամանակ վճռվել է դուրս տանել արտարժույթը, խորհրդային խոշոր թղթադրամները, հայկական 100 միլիոն դրամ: Կառավարությունը որոշման հետեւյալ օրը պետք է դուրս գար Յանքերից: Նախապես, ամեն մի նախարար իր իրավասության ենթարկված պետական արժեքավոր գույքն ու դրամներն, որ հետը վերցնել չէր կարող՝ գիշերով պիտի թաքցներ: Առանձնապես հայկական դրամները Սամսոն բեկի աջակցությամբ պիտի պահեր Յանքարծում Տերտերյանը, բայց որովհետեւ վերջինիս ընտանիքն ապրում էր Յանքերից 3 վերստ հեռավորության վրա, մինչեւ գնում է իր ընտանիքի մոտ եւ փոխադրության գործը կազմակերպում՝ լուսանում է: Առավոտյան կառավարությունը հեռանում է, Տերտերյանը չի կարողանում հայկական դրամները թաքցնել, մանավանդ, որ գույքերը թաքցնելու գիշերն Արշամ Խոնդկարյանն ու Տերտերյանը հարբած են լինում: Այս բանը վկայել կարող են՝ օրիորդ Սաթոն, գրագիր Վարդանյան Գարեգինը, Երվանդը, Սերգեյը (զեյվացի): Ես Յանքերում մնացել եմ մինչեւ երեկոյան ժամը ութ ու կեսը, թնդանոթներ եմ պայթեցրել, գնդացիներ (թվով 70 հատ) եմ փոխադրել գյուղերը պահելու համար: Ինձ հետ եղել են իմ սպայակույտի կազմում եւ Խնկոն 70 ձիավորներով:

7. Տերտերյանը Ձեզ առաջարկել է դրամը մաս-մաս բաժանել ձիավորների վրա եւ այդպես փոխադրել:

7. Տերտերյանը մնան առաջարկ չի արել: Ընդհակառակը, իմ ձիավորներն երբ հետո իմացան, որ Տերտերյանը դրամը թողել է Յանքերում, խիստ հուզվեցին ու սկսեցին հայհոյել նրան: Այս բոլորի մեջ ճշմարիտն այն է, որ նա փոխանակ դրամների փոխադրությամբ զբաղվելու՝ իր անձնական ընտանեկան գործերով էր զբաղված, որի հետեւանքով էլ դրամները մնացին Յանքերում:

7. Ձեզ մեղադրում են, որ բռնագրավված ձիերից տասը գործադրել եք Ձեր անձնական իրերն եւ բարեկամներն փոխադրելու համար:

7. Ես իրեր չեմ ունեցել, բացի մեկ խուրջինից՝ ուր մեծ մասով փաստաթղթերս էին տեղավորված: Ես ունեցել եմ երկու ձի եւ մի ջորի: Մյուս ձիերի պատմությունը ստեղծված սուտ է: Իմ անունով՝ Յապոնը, Ռուբեն Նարինյանը եւ այլք իրեր եւ ձիեր են անց կացրել գետն եւ այդ տեղիք է տվել մնան ասեկոսների:

7. Դուզալում հասարակության եւ ֆրանսիական սպայի ներկայությամբ ինչո՞ւ եք վիրավորել Օնիկ Մաճառյանին, անվանելով նրան սրիկա, դրամ յուրացնող, հագած շորերն յուրացրած դրամներով գնած:

7. Մաճառյանը Ռուբենի կարգադրությամբ ուղարկված էր Ղափանի սպայակույտի դրամադրության տակ: Երբ ես Ղափանից բացակա էի, նա Ձանգեզուրի սպաներին կարգադրություններ է ուղարկում եւ թղթերի տակ ստորագրում՝ որպես իմ տեղապահ: Սպաներից այդ առթիվ դժգոհություններ լսեցի եւ Ղափան վերադառնալիս իրեն ասացի, որ մնան բան այլեւս չանի: Նեղացած այս նկատողությունից՝ Մաճառյանը գնաց Գորիս, ապա՝ Երեւանի գաղթականության հետ անցավ Թավրիզ: Գասպար Խաչատրյանի միջոցով իմացա, որ նա Թավրիզի թե՛ հասարակության, թե՛ կուսակցական ընկերների մեջ զանազան ասեկոսներ է տարածում իմ ու վաշտարի պետներիս գործառնությունների մասին: Այդ բանից հուզված՝ ճառյանին: Ձիավորները Գեւորգ եւ Ալեքսան գեղծարարներին ծեծում էին, Մաճառյանը եկավ եւ միջամտեց: Ես այդտեղ էր, որ նրան ասացի. «Թողե՛ք սրիկայությունը, Ղափանում էլ Ձեզ ամենալավ վերաբերմունքը ցույց տվին, բայց դուք թողեցիք ու գնացիք Թավրիզ՝ բամբասանքներով զբաղվելու»:

7. Կառավարությունից ու կուսակցությունից ստացած գումարների հաշիվը ցարդ ինչո՞ւ չէք ներկայացրել:

Պ. Յ.Յ.Դ. Բյուրոյի թիվ 2074, 1920թ. նոյեմբերի 3-ի գրությամբ ինձ ուղարկված է դրամ՝ իմ անձնական կարիքները բավարարելու համար, որի մի մասը ծախսված է, մյուս մասը՝ մնում է, հաշվետվությունը կներկայացնեմ: Կառավարությունից ստացել եմ 100 միլիոն հայկական չեկերով սպանված կարիքավոր զինվորներիս ընտանիքներին բաժանելու: Այս գումարի մի քառորդը ծախսված է, իսկ մնացածը՝ դեռ Մուժումբարից Գենվազի փրկության կոմիտեի նախագահ Աղայանի միջոցով ուղարկել եմ Վրացյանին, որը հրաժարվել էր ընդունել: Այնուհետև, այդ դրամները տարել եմ Գեղեոն Տեր-Մինասյանին հանձնելու՝ ժամանակ չի ունեցել ընդունելու: Սմբատ Եղիազարյանը նույնպես հրաժարվել է ընդունել: Կարգադրել եմ, այդ դրամներն ուր հարկն է՝ շուտով կհանձնվեն:

7. Ասացեք խնդրեմ, 80 գլուխ տավար Լեռնահայաստանից բերե՞լ էք Մուժումբար:

Պ. Երկու ֆերմաների տավարը բերել է Սմբատ Եղիազարյանը մինչև Մուժումբար: Այդ տավարից մոտավորապես 15-20 հատ նվեր են տվել ֆալաշիներին ու խաներին: Մնացածը՝ մոտ 90 հատ, կառավարությունն իր մարդկանցով փոխադրել է Մուժումբար: Այդ տավարի վերահսկիչ էր նշանակված կառավարության կողմից Արմենակ Պարոնյանն իր զինվորներով: Մի քանի օր անց, Արմենակ Պարոնյանն այդ տավարներից մի քանի հատ ծախում է, իսկ մնացածը թողնում է Մուժումբարում իր զինվորների հսկողության տակ: Գենվազի հրամանատար գնդապետ Մելիք-Օհանջանյանը հսկողություն է նշանակում, որ չփչանա եւ չկորչի: Այնուհետև, կառավարությունը նոր մարդ է ուղարկում եւ ընդունում է: Ես ոչ մի կապ չեմ ունեցել այդ տավարի հետ, այժմ էլ չգիտեմ, թե ի՞նչ է արված այդ տավարը:

Թավրիզ
1921թ. սեպտեմբերի 4
Դատական գործ, թթ. 321-339:

Նժդեհ

Վ Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն – Ց ՈՒ Ց Մ ՈՒ Ն Ք Ն Ե Ր
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ն Ժ Դ Ե Յ Ի Մ Ա Ս Ի Ն

Թիվ 1
Երկրորդ Դավիթ-Բեգը

Հասարակական, մանավանդ կուսակցական գործիչները լինում են երկու տեսակի՝ մեկը գործում է *մեծերի* թելադրությամբ, մյուսը՝ *ոգու* թելադրությամբ, մեկը *մտածում է ներկայի* մասին, մյուսը՝ *երազում է* եւ *ապագան*, մեկին *գնահատում է թույլն* եւ *ներկա իշխանությունը*, մյուսին՝ *պատմությունը* եւ *ժողովուրդը*:

Գարիբալդին եւ Թելլը, Վարդանն ու Դավիթ-բեգը գործում էին ոգու թելադրության տակ՝ մտածելով ներկայի մասին, երազում էին ապագան եւ գնահատվեցին պատմության ու ժողովրդի կողմից: Հեքիաթների ու առասպելների դարը, այդ գեղեցիկ, հստակ դարը մոռացվում է ու չքանում:

Ապագա պատմաբանը Դիոգենեսի պես լապտեր վերցրած պետք է քրքրե մեր ներկա դարի պատմությունը, որ գտնե այն գաղափարական գործիչներին, որոնց գործը նմանվում է հին հեքիաթների դարու հերոսների գործունեությանը: Հայ ներկա իրականության մեջ, ապագա անաչառ պատմաբանը *շատ քչերին* կգտնի, որոնց անունը *արժանի կլինի հավերժացնելու*, որովհետև *գաղափարական գործիչների մարտիրոսական դարը մեռնում է*:

Խաչը Գողգոթա բարձրացնողները հատիկներ են:
Եւ փառք նրան, որի անունը կապրե եւ պատմության
եւ ժողովրդի երգերի մեջ ...
Եւ փառք նրան, որին կգնահատե եւ պատմությունը եւ
ժողովուրդը ...

Անշուշտ ու անկասկած՝ դրանց թվում կլինի եւ Գարեգին Նժդեհի անունն, որին արդեն ժողովուրդը գնահատեց:
Նրան, որն *ազատեց Դափանի ժողովրդին* հաճախակի հարձակում գործող թշնամուց եւ վերցրեց Դափուջուղի, Դաշքյասանի, Խուստուփի, Կոմբախի, Դրզալայի ու Ինջաբեկի դիրքապահությունը:
Նրան, որը հանեց Դափանի մեջքի սեպը՝ Գեղվաձորը:

Նրան, որը իրավունք տվավ արեւելյան գյուղերին ազատ շնչել:

Նրան չի մոռանալ Ղափանի ժողովուրդը, ինչպես չի մոռանալ իր սիրած Ղավիթ-բեգին:

Չի մոռանալ, որովհետեւ 5 չարքաշ ամիսների ընթացքում Նժդեհի կատարածը Ղափանի համար *մեծ է, գերբնական*: Քանի կանգուն են Բաղաբերդի անմատչելի բարձունքներն, որոնց վրա ազատության դրոշակ բարձրացրեց Նժդեհը, այնքան կանգուն կլինի Ղափանցու սրտում եւ Նժդեհի ամուլը:

Նժդեհը Ղափանեցուն սիրել տվավ Ղափանը, սիրել տվավ ազատությունը եւ ներշնչեց ժողովրդի ոգու մեջ այն հավատը, որ *ղափանցին հաղթող է* եւ պիտի լինի այդպիսին: Բայց զուգահեռաբար Նժդեհն իր գործունեությամբ սիրել տվավ եւ իրան: Եվ ժողովուրդը գնահատեց *հերոսին*...

Իր վերջին ամիսների ընթացքում կատարած հակահարձակումների համար Ղափանի քաջարի ժողովրդական ռազմական ուժերի ներկայացուցիչները վճռեցին նվիրաբերել իրենց *սիրած հերոս-ղեկավարին* մի «պատվի սուր» հետելյալ մակագրությամբ. «Գարեգին Նժդեհին, որին Ղափանն անվանեց երկրորդ Ղավիթ-բեգ, իսկ թշնամին՝ «Աժդահա փաշա»»:

Սուրն արդեն ձեռք է բերված, մնում է մակագրությունը քանդակագործել եւ ապա՝ հանձնել հերոսին: Եվ այսօր հասկանալի է, ինչու այն լուրը, որ Նժդեհն ուզում է թողնի Ղափանը, հնչեց ժողովրդի սրտի մեջ՝ ինչպես մահերգանք:

Ղափանը, երկու դար սրանից առաջ կորցրած *Ղավիթ-բեգին նորից գտավ*: Կորցնել սրան էլ՝ անտիանելի կլինի Ղափանեցու համար եւ երբեք Ղափանցին չի համակերպվի այդ նտքի հետ: Եվ նա *կպահի նրան*:

Փուշ

«Սյունիք», Գորիս, 1920, 26 փետրվարի, թիվ 7, էջ 2-3:

Թիվ 2

Ընկեր Սիմոն Վրացյանի ցուցմունքը

Իմ *անձնական* տպավորությունն այն է, որ Նժդեհն ամենաօրհասական րոպեներում, երբ նրա ներկայությունը

կարեւոր է եղել կռվի վայրում, այդ վայրը թողած՝ նա անցնում է բուլորովին ուրիշ վայր: Ընկերների բուլորի կարծիքով նա մի *դերասան* է: Ես այդ տեսակետի հետ *համաձայն չեմ*, ես չեմ կարող ենթադրել, որ նա դերասանությամբ կարող էր այդքան գրավել տեղական ժողովրդին եւ այդքան հեղինակություն ստանալ առանց անձնական որոշ լավ հատկություններ ունենալու:

Նժդեհին ես ճանաչում եմ դեռ կամավորական շարժման ժամանակից՝ գլխավորապես Անդրանիկի եւ Դրոյի տված տեղեկությունների հիման վրա: Ես նրա մասին *բարձր կարծիք չունեի*, ինձ թվում էր, որ ավելի *դերասան* էր, քան *լավ զինվորական*: Նա մեծ տեղ էր տալիս իր գործունեության մեջ իր *ես*-ին, սակայն իմ վերաբերումը դեպի նա՝ *միշտ եղել է շատ պատշաճ*, ընդհանուր գործեր չենք ունեցել, եւ ես պատճառ չեմ ունեցել անձնապես դժգոհ լինել նրանից:

Զանգեզուրի նրա գործունեությունը, մանավանդ, երբ մեծամասնականների գալուց հետո հնարավորություն ուներ հեռանալ, բայց չհեռացավ, առիթ դարձավ ինձ մտածելու, որ *իմ գնահատությունը* նրա մասին եղել է *սուբյեկտիվ*, մինչդեռ ուրիշ ընկերներ Զանգեզուր-Ղարաբաղ գնում էին իբրեւ *գաստրայյորներ* (ժամանակավոր եկվորներ-Յ.Ա.), նա երկար ժամանակ մնաց ժողովրդի մեջ, մասնակից եղավ նրա ծանր ապրումներին եւ *պատվով կատարեց կուսակցության կողմից իր վրա դրած պարտականությունները*: Այնուհետեւ, ես նրան պատահեցի վերջին նահանջից հետո՝ ապրիլի վերջերին Ղարաբաղի խառնուրդում, ուր Յովհաննես Քաջագնուհու հետ եկել էինք Զանգեզուրի իշխանության հետ խորհրդակցելու մեր անելիքների մասին: Խորհրդակցության նյութն էր՝ իշխանության կազմակերպությունը Լեռնահայաստանում:

Հայրենիքի փրկության կոմիտեն Քեշիշքենդում հանձնարարել էր ինձ եւ ընկեր Քաջագնուհուն խորհրդակցել Զանգեզուրի կառավարության հետ եւ ցանկալի էր համարել Լեռնահայաստանում ունենալ Հայաստանի կառավարություն: Սակայն Նժդեհը, որ խոսում էր Լեռնահայաստանում պիտի շարունակեր մնալ տեղական կառավարությունը վերընտրված Տաթևի համագումարից եւ ուժեղացրած երեւանից եկած ընկերներով, իսկ Հայաստանի կառավարությունը

նը պետք է անցներ թավրիզ: Լեռնահայաստանի կառավարությունը պիտի վարեր երկրի ներքին գործերն եւ ինքնապաշտպանությունն, իսկ Հայաստանի կառավարությունը պիտի մնար արտաքին քաղաքականության ղեկավար:

Իր այս տեսակետը Նժդեհը պատճառաբանում էր նրանով, որ եթե Ջանգեզուրում լինի Հայաստանի կառավարություն այդ մեծամասնականների աչքում կդառնա կարմիր լաթ եւ առիթ կդառնա, որ մեծամասնականները մեծ ուժեր ուղղեն Ջանգեզուրի վրա: Նա ասում էր նույնպես, որ Ջանգեզուրը հազիվ դիմանա եւ չարժե նորից Հայաստանի կառավարություն ստեղծել եւ այդ նոր կառավարության անկումով մի անգամ էլ հարված իջեցնել կուսակցության գլխի վրա: Հայաստանի անկումն եւ մեծ նահանջն անկասկած բավականին ազդել էին նրա տրամադրության վրա: Մեզ ոչինչ չէր մնում անել, քան՝ եթե ընդունել Նժդեհի տեսակետը: Այնուհետեւ, Հայաստանի փրկության կոմիտեն Տաթևում իր միջից կազմեց Հայաստանի կառավարությունը՝ միայն արտաքին քաղաքականության համար:

Ղարաքիլիսայում Նժդեհն իմ վրա թողեց *բավականին հասունացած եւ հեղինակավոր* մարդու տպավորություն: Թե Ջանգեզուրում գտնված ընկերների եւ թե ժողովրդի հետ շփվելով ես տեսնում էի, որ Նժդեհն *ահագին հեղինակություն* ունի երկրում եւ այն կարծիքի էի, որ այդ հեղինակությունը պետք է օգտագործել: Այդ պատճառով էլ՝ աշխատում էի համոզել կասկածոտ վերաբերում ունեցող ընկերներին, որ Նժդեհի հեղինակությունը չթուլացնեն, այլ աշխատեն ավելի ամրացնել:

Եհիշտ է, Նժդեհն ուներ մի շարք աչք ծագող թերություններ՝ ամենից առաջ նա *չափազանց արբեցած էր երևում իր փառքով* եւ ամեն տեղ աշխատում էր իր անձն առաջ քաշել: Երկրորդ, իրեն շրջապատել էր վատ մարդկանցով, մասնավորապես, դժգոհ էին ինչ որ մի Ռուբենից, որ իբր թե նրա քրոջ որդին էր եւ անսանձ թալաններ էր անում:

Ասում էին, որ Նժդեհը հենվում է գյուղի կուլակների վրա եւ կռիվներից ստացված ավարը բաժանում է իր սիրելիներին: Չնայած, որ Գորիսում գոյություն ուներ համագումարից ընտրված մի կառավարություն՝ *երկրում փաստորեն*

ոչ մի իշխանություն չկար եւ ամեն բան Նժդեհն՝ ինքն անձամբ էր կարգադրում:

Չնայած, սակայն այս ամենին՝ Նժդեհը *ժողովրդի աչքին մեծ հմայք ուներ*, նրա *խոսքն ազդեցիկ էր*, երկրում *միայն նրա կարգադրություններն էին կատարվում եւ գյուղացիությունը հավատում էր նրա աստղին*: Սպարապետը Ջանգեզուրում *ամեն ինչ* էր եւ իհարկե քաղաքական կարճատեսություն կլիներ չօգտվել այս ուժից: Եւ ինձ պես մտածում էին ընկերներից շատերը: Ջանգեզուրը դարձնելով կռվան մեր պայքարի շարունակության՝ ուզեցինք հենվել Նժդեհի այս բարոյական հմայքի վրա:

Մենք նրան ենթարկեցինք Երեւանից եկած զորամասերը: Հայաստանի սպարապետ Կուռոյին դարձրինք նրան օգնական եւ մեզ բոլորիս դրինք նրա տրամադրության տակ, խորհրդակցելով Նժդեհի եւ մեր կառավարության անդամների հետ՝ ես քաջազունու հետ որոշ առաքելությունով եկա թավրիզ, ուր մնացի մինչեւ մայիսի 18-ը: Մեր պայմանի համաձայն՝ Հայաստանի կառավարությունը պիտի վարեր արտաքին քաղաքականությունը եւ ես թավրիզ էի եկել արտաքին քաղաքականության վերաբերող խնդիրներով:

Այդ ժամանակամիջոցում, տեղի էր ունեցել Տաթևի համագումարը, որտեղ կազմվել էր Լեռնահայաստանի կառավարություն եւ Նժդեհին տվել էին արտակարգ իրավունքներ: Չնայած մեր պայմանին, որ արտաքին քաղաքականությունը պիտի վարեր Հայաստանի կառավարությունը՝ Տաթևի համագումարում կազմված կառավարությունը ունենում է արտաքին գործերի նախարար՝ ինքն Նժդեհը, որ համագումարից անմիջապես հետո դեկլարատիվ հայտարարություններ է ուղարկում արտաքին աշխարհին, դիմումներ է անում անգլիական հյուպատոսին՝ թավրիզ, եւ ուղարկում նախարար Յովհաննես Տեւեճյանին՝ թավրիզ Լեռնահայաստանի կողմից մասնակցելու իմ վարած բանակցություններին:

Այս ամենից լավ հոտ չէր գալիս: Ես իսկույն վերադարձա Ջանգեզուր, Մեղրիում հանդիպեցի Տեւեճյանին, որն ինձ հանձնեց մի քանի նամակներ Նժդեհից եւ Լեռնահայաստանի կառավարությունից եւ անձամբ երկարորեն բացատրություններ տվեց: Պարզվեց, որ մի տեսակ աննորմալ հարաբերություն է ստեղծվել համագումարից ընտրված եւ Հա-

յաստանի կառավարությունների միջեւ: Նորընտիր կառավարության առաջին գործերից մեկն է եղել հեռագրել Արեւիքի իշխանություններին միջոցներ ձեռք առնել, որպեսզի ես արտարժույթը թավրիզ չանցկացնեն: Հետո որոշում են հանում, որ Հայաստանի կառավարությունն իրենք են եւ հետեւաբար՝ իմ նախագահության տակ եղող կառավարությունը լուծել եւ ինձ էլ առաջարկում են մտնել այդ կառավարության մեջ՝ իբրեւ արտաքին գործոց նախարար:

Ի զարմանս իմ՝ Նժդեհը պնդել է, որ իբրեւ թե ինքը հակառակ է եղել երկու կառավարությունների գոյության: Ես չգիտեի, թե ինչ էին անցել դարձել ինձանից հետո, բայց զգում էի, որ ինչ-որ ներքին խնդիրներ կան, որոնք կարող են գործին վնաս հասցնել: Խորհրդակցություն ունեցա Ռուբենի հետ, նա շատ վրդովված էր Նժդեհի դեմ, համարում էր նրան *փոփոխամիտ եւ ինտրիգան*, եւ կողմնակից չէր կառավարությունների միությանը:

Իմ կարծիքն էլ այն էր, որ պետք է հեռացնել բոլոր այն ուժերն, որոնք կարող էին որեւէ կերպով խոչընդոտներ լինել Նժդեհին եւ ուժեղացնել նոր կառավարության դիրքը: Ես մտածում էի գաղթականության հեռանալուց հետո տեղափոխել թավրիզ եւ մեր կառավարությունը պայմանների համեմատ կամ լուծել նրան կամ ուրիշ որոշում անել, իսկ ամբողջ իշխանությունը թողնել Լեռնահայաստանի կառավարության: Մոռացա ասել, որ ընկեր Տեւեճյանի բերած նամակներից մեկն ուղղված էր ինձ եւ ստորագրված էր Նժդեհի, Մելիք-Յուլյանի, Սմբատ Եղիազարյանի եւ Տեւեճյանի կողմից:

Այդ նամակով, առաջարկվում էր Ջանգեզուրի կառավարությունը դարձնել Հայաստանի կառավարություն եւ ինձ էլ խնդրում էին լինել իրենց ներկայացուցիչը թավրիզում: Ճանապարհին ես խորհրդակցություն ունեցա նաեւ Բուդաղյանի հետ: Նա էլ գտնում էր դրությունն աննորմալ եւ անհրաժեշտ էր համարում կառավարությունները միացնել: Գորիսում ինձ համար պարզվեց, որ անկարելի է Հայաստանի կառավարության իսպառ չեզոքացումը, որովհետեւ դրա անմիջական հետեւանքը կլինեի Երեւանի զորամասերի քայքայումը: Գորիսում ունեցանք մի քանի խորհրդակցություններ Հայաստանի կոմիտեի, Հայաստանի կառավարության եւ Լեռնահայաստանի կառավարության՝ առանձին առանձին եւ

խառն: Կառավարության նիստերի արձանագրությունները կան եւ այստեղից կժանոթանաք մանրամասնություններին: Հայաստանի կառավարության անդամների մի մասը հնարավոր չէր համարում միությունն եւ պնդում էր երկու կառավարությունների անջատ գոյության վրա, մյուսներն՝ անհրաժեշտ էին համարում միացնել:

Լեռնահայաստանի կառավարությունը եւ Նժդեհը վնասակար էին համարում երկու կառավարությունների գոյությունը, որ առաջ էր բերում երկրում երկիշխանություն, իսկ արտասահմանում վատ տպավորություն էր թողնում:

Հ.Յ.Դ. Հայաստանի կոմիտեի նիստում ես մանրամասն բացատրեցի, թե ինչ անհարմարություն կա երկու կառավարությունների միության մեջ, մանավանդ որ համագումարն էլ Նժդեհին տվել էր որոշ լիազորություններ: Նժդեհը հայտնեց, որ համագումարի խնդիրն արգելք չի կարող լինել, որ ինքը կբացատրի ժողովրդին եղելությունն եւ ոչ ոք չի հակառակիլ, որ ինքն *երկրի շահերի* տեսակետից անհրաժեշտ է համարում երկու կառավարությունների միացումն իմ նախագահությամբ, ինքն այդ կառավարության մեջ կլինի զինվորական նախարար եւ Հայաստանի սպարապետ:

Ես նորից պնդեցի այն մտքի վրա, որ անհրաժեշտ է օգտագործել Նժդեհի *ժողովրդականությունը*, որ կառավարությունը Նժդեհի նախագահությամբ ավելի ուժեղ կլինի, որ ինչ անուն էլ տալու լինենք կառավարության, *փաստորեն իշխանությունը Նժդեհը կլինի*, որ մեր որոշումը կարող է թուլացնել այդ իշխանությունը, մինչդեռ մեր նպատակը պետք է լինի նրա ուժեղացվելը:

Նժդեհը պնդեց իր ասածի վրա, ընկերներն էլ համաձայն էին նրա հետ, եւ այսպիսով տեղի ունեցավ կառավարության միացումը: Այնուհետեւ, ես անցա Բագարչայ, ապա նորից՝ կառավարության որոշումով եկա թավրիզ: Հետագա դեպքերը տեղի են ունեցել իմ բացակայությամբ: Ինձ փոխարինում էր Արշակ Հովաննիսյանը:

Ինձ հասել են տեղեկություններ, որ Նժդեհը մի քանի անգամ հրապարակավ վատ է արտահայտվել կառավարության մասին, նույնիսկ բազմության առաջ արտասանած ճառում կառավարության անդամներին անվանել է դասալիքներ, դավաճաններ եւ այլն:

Ես հնարավորորիքս չունեմ այդ մասին ստույգ տեղեկություններ տալու, ինձ զեկուցել են, որ Նժդեհը զանազան պատրվակներով *խուսափել է կռվի դաշտից եւ անձամբ չի ղեկավարել դիմադրությունը* մեծամասնականների դեմ: Ես չգիտեմ, ինչքան է համապատասխանում այս իրականությանը: Արաքսի այս ափին գրգռված բազմության առաջ մաշատ գռեհիկ ձեւով խուզարկել է տվել նախարար Տեր-Յակոբյանին եւ վատաբանել նրան բազմության առաջ: Այդ բանի պատճառով ես նրան հեռացրել եմ կառավարության անդամությունից եւ հաղորդել եմ իրան գրավոր:

Մուժուժբարից նա ինձ գրել է երկու նամակ շատ գազազած բնույթով, որի մեջ մի շարք ամբաստանություններ է անում զանազան մարդկանց հասցեին եւ այն կարծիքն է հայտնում, որ Ջանգեզուրի անկման պատճառն է Երեւանից եկած պարտվողական ոգին եւ նախանձը՝ դեպի իր փառքը: Այդ նամակները, ինչպես եւ իմ ընդարձակ պատասխանն՝ ես կհանձնեմ դատական ատյանիդ, կհանձնեմ նաեւ այն նամակներն, որոնք գրված են եղել ինձ կառավարությունների միացման հարցի առթիվ: Այդ բոլորից դուք կտեսնեք, թե ինչքան *հեղհեղուկ, անհաստատ եւ փոփոխամիտ* էր իր գործունեության ընթացքում Նժդեհը: Նա չկարողացավ օգտվել իր *անսահման հմայքից* ժողովրդի վրա եւ այժմ բոլորովին իզուր մեղադրում է ուրիշներին:

Իմ կարծիքով սխալվում են եւ Նժդեհի հակառակորդներն եւ ինքն Նժդեհը: Նրանք ուզում են գնահատել այնպիսի երեւույթներ, որոնք միայն պատմությունը կարող է գնահատել, եթե պատասխանատվության հարց կա՝ *բոլորինքյանս էլ պատասխանատու ենք*, որովհետեւ ամենքս էլ այս կամ այն ձեւով դեր ենք կատարել այդ գործի մեջ:

1921թ. օգոստոսի 16
Դատական գործ, էջ 79-85:

Սիմոն Վրացյան

ԹԻՎ 3

Ասլան Շահնազարյանի ցուցմունքը

44 տարեկան, Յադրուք գյուղից (Ղարաբաղ), անկուսակցական, արեւելյան լեզուների ֆակուլտետ ավարտած:

Նժդեհի հետ ազգակցություն չունեմ, որեւէ ընդհարում էլ չեմ ունեցել: Լեռնահայաստանի կառավարության անդամների հետ նույնպես ոչ մի ընդհարում չեմ ունեցել: Ես Երեւանից հեռացել եմ ս. թ. մարտի 25-ին եւ որոշ առաքելությունով պետք է ես եւ ինձ հետ միասին եղած ընկերներն անցնեինք Ղարաբաղ, բայց Ղարաբաղում անհանգիստ դրություն էր ստեղծվել, դրա համար՝ մնացինք Գորիս: Այդտեղ, Տիգրան Սազանդարյանը եւ Լեւոն Միքայելյանը, որոնց առաջուց ծանոթ էի, դիմեցին ինձ եւ խնդրեցին, որ աջակցեմ իրանց այն գործում, որ հանձնել էր նրանց Նժդեհը՝ ռուսերեն եւ հայերեն լեզուներով գրված բազմաթիվ փաստաթղթերից կազմել մի ամբողջություն եւ տպագրել: Ես գործի հետ ծանոթանալով՝ գտա, որ նրանք ձեռնհաս չէին այդ բանն անելու: Ասացի նրանց իմ նկատողությունները, մինչ այդ էլ եկավ Նժդեհը, որ այդ ժամանակ բացակայում էր: Ինչպես երեւում է՝ նրանք գնացել եւ Նժդեհին ասել էին իրանց անկարողության մասին եւ իմ անունը տվել: Նժդեհը կանչեց ինձ եւ հանձնարարեց ինձ այդ փաստաթղթերի հիման վրա կազմել մի գրքույկ անհրաժեշտ բացատրություններով եւ հանձնել տպագրության՝ «Արնոտ գիրք» վերնագրով: Ամեն մի պատրաստած թերթ նախքան տպարանին հանձնելը ներկայացնում էինք իրան՝ Նժդեհին, որ սրբասգրում էր կամ հարկավոր հավելումներ անում եւ ապա միայն հանձնում էինք տպարանին: Տպվեց մոտ 850 օրինակ:

Ձեր հարցին՝ թե Նժդեհը մեղադրվում է շատերի կողմից իբրեւ *չափազանց փառասեր, փառամոլ մարդ*, որին ավելի հետաքրքրելիս է եղել իր *անձնական փառքը*, քան հայրենասիրությունը կամ սերը դեպի հայ ժողովուրդը, պետք է ասեմ, որ *միանգամայն անհիմն մեղադրանք* է: 1920թ. օգոստոս ամսին, երբ Դրոն Երեւան վերադառնալիս առաջարկեց Նժդեհին իր հետ գնալ՝ նա չհամաձայնեց, նա չուզեց բաժանվել Ղափանի ժողովրդից, որին նա՝ *իր սրտին շատ մոտ* էր ընդունում:

Եվ առանց թնդանոթների, առանց զինվորների թողեց, գնաց Ղափան: Երկրորդ անգամ Ռուբեն Տեր-Մինասյանը զինվորական սպայակույտի միջոցով կարգադրում է, որ Նժդեհը ձգի Ջանգեզուրն եւ վերադառնա Երեւան, բայց Նժդեհը *նորից* մերժում է:

Ջանգեզուրի առաջին կառավարությունը Գեղեոնի նախագահությամբ իրան շատ թույլ էր գգում, ընկերական խոսակցության ժամանակ նրանք խոստովանում էին, որ իրենց վրա վերցրած պարտականություններն իրանց ուժերից վեր էր, մյուս կողմից էլ՝ շատ գանգատվում էին, որ Նժդեհն իրանց բոլորովին վարկաբեկում է միտինգներում կամ ժողովրդի հետ ունեցած իր խոսակցություններով, կառավարության մասին միշտ բացասական կողմից արտահայտվելով եւ նրանցից մի քանիսին մեծամասնական անվանելով:

Այդ կառավարությունը գտնվում էր Նժդեհի *բարոյական ազդեցության եւ վախի* տակ, կառավարության անդամներն ուղղակի վախենում էին Նժդեհից եւ գործում էին ավելի վախի ազդեցության տակ, այսպես էր իմ անձնական տպավորությունը:

Թավրիզ
1921 թ. օգոստոսի 19
Դատական Գործ, էջ 103-104:

Ասլան Շահնազարյան

Թիվ 4

Ռուբեն Տեր-Մինասյանի գրավոր ցուցմունքը

7.3. Դաշնակցության Դատական Մարմնին

Դուք ինձ տված եք ինը դժվարին հարցեր, որոնց պատասխանը լրիվ տալու համար անհրաժեշտ էր գրել գուցե Ջանգեզուրի պատմությունը եւ գրել հատորներ, բայց դժբաղտաբար Ձեզ պիտի բավարարեմ հակիրճ ժամանակի սղության եւ փաստաթղթերի բացակայության պատճառով:

1. **Ջանգեզուրի եւ Դարալագյազի անկման պատճառները:**

ա. Ջանգեզուր եւ Դարալագյազ անխուսափելիորեն պիտի ընկնեին, որովհետեւ ամբողջ ժողովուրդը Երեւանի գաղթականների եւ կառավարության գալուց հետո հասկացավ, որ Երեւանը ընկած է ռուսական սվիններով, որ Թիֆլիս սովետական է, Բաքու սովետական է եւ ուրեմն Ջանգեզուրին մենմենակ այլեւս չէր համարձակվելու մտածել, որ կարող է հաղթել Ռուսաստանին:

բ. Ջանգեզուրցին հասկացավ, որ ինքը մենակ է եւ աննեցուկ բոլոր դաշնակիցների կողմից եւ դեռ Տաճկաստանի կողմից վտանգ կսպառնա:

գ. Ջանգեզուրցին մինչեւ իր անկումը կռվում էր, որովհետեւ վախը կար թրջության, Ադրբեջանի հետ միացման եւ ցանկություն կար միանալու Հայաստանին: Այդ հիմնական պատճառները վերանում էին սովետական Հայաստանի հարաբերությունների շնորհիվ, որ Ջանգեզուրը մտնում է Հայաստանի սահմանների մեջ:

Այս հիմնական պատճառներից դուրս եղան այնպիսի դեպքեր, որ արագացրին անկումը գուցե մի քանի ամսով, որ կարծում եմ հնար էր երկարացնել: Այդ անկման պատճառներն են. ա) մեծ քանակությամբ դեմորալիզ (ապաբարոյականացված-Ա.Յ.) եղած զորքի եւ ժողովրդի լցվելը այդ աղքատ լեռնաստանում, բ) դեմորալիզ եղած այդ ամբոխի պանիկական լուրեր տարածելը, գ) Ջանգեզուրում Հայաստանի կառավարություն հայտարարելը, որը առաջ բերեց այդ նուրբ վայրկյանին ինքնասիրություններից առաջ եկած խուլ դժգոհությունների եւ թշնամու ուշադրության սեւեռումը այդ լեռնաստանի վրա եւ նոր կառավարության բարենորոգման եւ այլ փորձեր, որ փոխանակ օգուտի՝ հակասություններ եւ դժգոհություններ էր առաջ բերում այդ աշիրեթային եւ ինքնահատուկ երկրի գործիչների մեջ, դ) Դարալագյազի արշավանքը, եւ ե) այն գիտակցությունը, որ կսպառնա պարենավորման եւ ռազմամթերքի կրիզիսը (ճգնաժամը-Ա.Յ.), եւ վերջապես գ) սովետական իշխանության հետ բանակցությունների մերժումը եւ դրա նախօրոք չբացատրելը ժողովրդին եւ նրա հավանություն չառնելը այդ մասին:

Կարծում եմ հիմնական եւ երկրորդական գլխավոր պատճառները դրանք են՝ այդքան արագորեն քանդվելուն այդ մեր ուժեղ ժողովրդական կենտրոնի: Կան եւ մանր պատճառներ, որոնք շատ երկրորդական են եւ եթե վերացյալներն չլինեին՝ դրանք արժեքազուրկ պիտի մնային:

2. **Ձեր հարցումը - «Ե՞րբ Ռուբենը եկավ Ջանգեզուր, ի՞նչ դրության մեջ գտավ Ջանգեզուրը, թե կուսակցական տեսակետից եւ թե ինքնապաշտպանության եւ կառավարելու տեսակետից»:**

ա. Կարծեմ դեկտեմբերի 7-ին Ջանգեզուր հասա:

բ. Ձանգեզուրում կուսակցական ոչ մի գործունեություն եւ մարմին չտեսա եւ ոչ էլ որեւէ կազմակերպություն: Առաջները՝ 1918թ. առաջ, եղել են կազմակերպություններ, որի կենտրոնը եղել է Շիրինը, բայց նրանից հետո Անդրամիկի, Շահմազյանի, Մելիք-Եռլչյանի եւ Նժդեհի ժամանակներում կուսակցական գործունեությունը երկրորդական տեղ է բռնել եւ առաջ է բերել ամբողջ ժողովրդի համախմբումը երկու հիմնական հարցերի շուրջը. 1) պաշտպանվել հարձակվող թշնամիներից (թուրքերից, տաճիկներից եւ Ադրբեջանից), 2) միանալ Յայաստանին:

գ. Գործերը չէին տարվել կուսակցության անունով, այլ անհատի եւ պետական զանազան պաշտոնյայի:

դ. Կուսակցական անհատներ շատ կային, բայց դրված՝ առանց կապակցության:

ե. Կազմակերպչական հիմնական ձեւը կարելի է համեմատել նահապետական, աշիրեթային ձեւի հետ: Գյուղը հավաքվում է մի կամ երկու քաջի կամ ճարպիկի շուրջը, գյուղերը համախմբվում էին մի կամ մի քանի ճարպիկների կամ քաջերի շուրջը եւ զավառները մի կամ մի քանի ճարպիկների կամ քաջերի շուրջը եւ այդպիսով տարիների ընթացքում փորձառությամբ ձեռք բերված հեղինակություններն էին գործին ընթացք տվողները՝ առանց կուսակցությունը ի նկատի առնելու:

զ. Ինքնապաշտպանության ձեւը շարունակությունն էր 1905-ի կազմակերպության (նկատի ունի 1905թ. հայ-թաթարական կռիվները-Ա.Յ.), որով Ղաշնակցությունը մտցրել էր մարտական խմբերի սիստեմը, որը ավելի զարգացած եւ դարձած էր վաշտեր եւ վաշտապետներ անվան տակ՝ փոխանակ նախկին խումբ եւ խմբապետ:

է. Ժողովրդական այդ խմբերը իրանց ուժեղ դիրքերի, պարտություն տեսած չլինելու եւ քաջ ոգի ունենալու հետեւանօք *ինքնապաշտպանության համար եւ իրանց սահմանների մեջ անզնահատելի ուժ* էին ներկայացնում:

ը. Հունվար-փետրվար ամիսներից միայն սկսվեց կուսակցական ընկերների համախմբում, մի թույլ կոմիտեի կազմակերպում Գորիսում Նիկոլի եւ Շահինյանի միջոցով, որը կարծեմ սաղմային վիճակի մեջ էր, որ տապալվեց Ձանգեզուրը:

3. Ի՞նչ հարաբերության մեջ էր Ձանգեզուրի խորհուրդը եւ Նժդեհը:

Դրան *մոտիկից ծանոթ չեմ եւ հետաքրքիր էլ չէ*, որով հետեւ քանի որ ինչպես վերելը ասացի ժողովրդական ղեկավարության սիստեմը դրված է եղել որպես վաշտ եւ վաշտապետ Նժդեհն էր՝ այդ շրջանի վաշտապետների սպարապետ ասվածը եւ քանի որ զանգեզուրցու միակ նպատակն է եղած ինքնապաշտպանությունը, ուրեմն *հմայքի, ուժի, ղեկավարության ծանրության կենտրոնը* դարձած էր Նժդեհը իր ստորադրյալներով: Մյուս մարմինները, խորհուրդները եւ այլն մի մի օրգաններ, հին օժանդակիչ կամակատարներ, համարյա *զուրկ արժեքից եւ հեղինակությունից*, կարծես երբեմն խաղաղության վայրկյաններին շատ ժողովրդի որոշ խավեր կզգային կարիքը խորհրդի գործունեության եւ ինքնության եւ այդպիսի վայրկյանն իրեն խորհուրդն էլ կցանկար դուրս ելնել կամակատարի դերից եւ ինքնություն ունենալ, բայց խաղաղության վայրկյանները շատ կարճ լինելով, կարճ կերպով էլ վերջանում էր երկվությունները եւ գործը տարվում էր կամ ներդաշնակության կամ փոխադարձ գիջողությամբ կամ իրարու հպատակությամբ:

4. Ե՞րբ Ռուբենը մեկնեց Ձանգեզուրից եւ ի՞նչու մեկնեց, ի՞նչ դերի մեջ էր Ձանգեզուրում:

ա. Եթե չեմ սխալվում՝ Ձանգեզուրից մեկնեցի մայիսի կեսերին:

բ. Ձանգեզուրում ոչ թե Ռուբեն, այլ Գելորգ էի եւ ծածկած եմ իմ իսկությունը թե ժողովրդից եւ թե պետական գործիչներից եւ թե անձամբ անձամբ ընկերներից:

գ. Վերոհիշյալի նպատակը եւ պատճառները. 1. Որովհետեւ կային ոմանք, որ կկարծեին թե իմ կապրիզի (կամակորություն-Ա.Յ.) եւ փառքի համար էր, որ կանդեի չհետեւել Երեւանի օրինակին եւ կամովին սովետիզացիայի (խորհրդայնացման -Ա.Յ.) ենթարկվել, 2. Որովհետեւ ոմանք եւ ինքս էլ կկարծեի, որ հրապարակով իմ անձամբ գործելը կարող է սեւեռել բոլշեիկների ուշադրությունը Ձանգեզուրի վրա, 3. Որովհետեւ իմ անունով գործելը կարող էր աններդաշնակություն ստեղծել եւ կվախենայի թե ոմանց ինքնասիրությունը վիրավորվի, 4. Որովհետեւ իմ անունով լինելը պիտի ստիպեր թե բոլորին եւ թե ինձ պատասխանատու պաշտոն ստանձնե-

լու, որը գտնոււմ էի վնասակար այն փափուկ վայրկյաններին իբր որեւէ փոփոխություն կարող էր ցնցում եւ տատանում առաջ բերել, 5. Եւ որպէսզի իմ անփառունակ, փախստական վիճակս հիասթափություն առաջ չբերի ժողովրդի մեջ հանդէպ ռազմական նախարար գաղափարին եւ ինքս էլ խուսափած լինեի նվաստացումների ստորացումից: Այդ բոլորով հանդերձ վճռած էի մնալ Չանգեզուր մինչեւ վերջ, թեւ վաղուց կարող էի արտասահման լինել դեռ անցյալ տարի, միմիայն հետեւյալ միակ նպատակով ազդել բարոյապես Չանգեզուրի միակ բանալու վրա, Նժդեհի վրա, որքան կարող եմ տալ նրան դիմացկունություն, հավատ եւ խորհուրդ եւ նրա ու մի քանիսի միջոցով դարձնել Չանգեզուրի նշանաբանը՝ դառնալ սպառնալիք Երեւանի համար, ազատել կամ վրեժ առնել ձերբակալվածներից եւ ազատել Երեւանը, Արարատը բոլշեւիկներից: Թե որքան այս դերի մեջ հաջողել եմ՝ չգիտեմ, միայն այսքանը կարող եմ ասել, որ իմ կամավոր աքսորի եւ բանտարկության դերից շատ գոհ իմ խղճի առաջ եւ մանավանդ որ մինչեւ ապրիլի կեսերը ոչ ինձնից դժգոհներ կային եւ ոչ էլ ես հիմնական հարցերում դժգոհ էի ուրիշներից, մանավանդ որ փոքր թերություններ ոչ կազդեին իմ վրա եւ ոչ էլ ուշադրություն դարձնելը կարելոր կհաշվեի:

դ. Իմ հեռանալու պատճառներն են. 1. Որովհետեւ Երեւանցիների գալուց հետո պարզվեց որ ես Գեւորգ էի, ոչ այլ Ռուբեն, ուրեմն իմ Գեւորգ էի դերը եւ նպատակը վերանում էր, մանավանդ որ բազմաթիվ կարող ընկերների գալով Գեւորգ էի, դերս իսկ ավելորդ էր, կարող էին բազմաթիվներ փոխարինել ինձ՝ ինչպես եւ փոխարինեցին, 2. Ոչ Լեռնահայաստանի եւ ոչ էլ Հայաստանի կառավարությունները եւ կամ համազումարները ու ժողովները ինձ չէին առաջարկած որեւէ պաշտոնական եւ անպաշտոն դեր, 3. Եւ ոչ ոք կարիք չէր զգում իմ մնալուն, բացի Հակոբ Տեր-Հակոբյանից, 4. Որովհետեւ ինձ կզգայի աննպատակ եւ առանց մի դերի կամ հայտնի կամ գաղտնի եւ միաժամանակ կտեսնեի բազմաթիվ անձնավորությունների եւ խմբերի, որ թյուրիմացությամբ կկարծեին ինձ որեւէ դերի մեջ, եւ 5. Որովհետեւ կտեսնեի հազարավոր մարդկանց անել կացության մեջ, որոնք եթե երբեմն տեղին, բայց հաճախ անտեղի կարհամարիվեին եւ որովհետեւ այդ արհամարհանքներից շատերը ինձ էլ կվերաբերեին

երբ փորձ կանեի նրանց բարձրացնել՝ ինձ եւս կարհամարհեին, 6. Եւ որովհետեւ ոչ մի արժեք կար գործել կամ խորհրդարան չէի ներկայացնում՝ վճռեցի հեռանալ գաղթականների եւ տաճկահայ զինվորության անցկացնելուց հետո եւ Գեւվազի վերջին զինվորների հետ անցկացա նախապես հայտնած լինելով (մոտ 20 օր առաջ) Ղափան կառավարությանը այդ մասին, թե գաղթականներին անցկացնելուց հետո մնաք բարով, 7. Մեծ դեր խաղաց իմ անցնելուն եւ այն հանգամանքը, որ այլեւս չէի հավատում Չանգեզուրի երկարակեցությանը եւ այդ մասին գրած էի կառավարությունը, որ քանի Ադրբեջան եւ Վրաստան շարժում չկա՝ պիտի լինել պասսիվ եւ Սիմոնին, թե համաձայնություն արեք բոլշեւիկների հետ, եւ քանի որ հակառակ տրամադրություններ կար, չուզեցի իմ ենթադրությունը նրանց վզին փաթաթել եւ պատճառ դառնալ: Գուցե եթե մոլեռանդ հավատ ունենայի ինչպես դեկտեմբերից հետո վերոհիշյալ պատճառները՝ ոչինչ կամաչեի եւ աներեսության ուժի հիմունքներով կմնայի, 8. ընկերական այն դիտմանսը, որ պիտի լինեի իմ մնալով Երեւանից եկած մի շարք (ծախ) ընկերների հանդէպ:

5. Նժդեհի եւ Երեւանի զորամասերի եւ արեւմտահայ զորամասերի հարաբերությունները, ի՞նչու վիժեց Գողթանի գրավումը:

Այս կարելոր չորս հարցերի պարզումը շատ կարելոր է, որովհետեւ դրա արմատը, սկիզբը Երեւանում է եղել, որ ինձ անծանոթ է, բայց Դարալագյազում պարզ նկատելի էր հակադրություն ռուսահայ զորամասերի եւ տաճկահայ զորամասերի մեջ, երբ դեռ մի քանի օր էր, որ եկած էին Երեւանից: Դրա պատճառը ոչ այնքան անհատական հաշիվներն էին ըստ իս, այլ այդ զորամասերի մեջ տարբեր մտայնությունների գոյությունը՝ ռուսահայ զորամասերը նահանջելով Դարալագյազ, ոմանց ուղեղը դեռ տեղն էր՝ դառնալ Երեւան եւ իշխանությունը ձեռք գցել: Իսկ հուսահատները նորից աչքերը հառած էին դեպի Երեւան տարբեր միտումներով՝ թեկուզ համախմբվելու բոլշեւիկների հետ, ուրեմն այսպես թե այնպես ռուսահայ երկու մտածելակերպ ունեցողներն էլ դեպի հետ էին մայում, մանավանդ որ նրանք ավելի տնտեսապես, բարոյապես կապված էին Երեւանի հետ՝ քան տաճկահայերը եւ ըստ իս դա էր պատճառը, որ Բազարչայ մնացող-

ների թիվը բավական մեծ էր եւ ռուսահայեր էին, բայց դժբախտաբար այդ մասսան իր մեջ տարբեր հաշիվներ ունէր մնալով եւ դրան գլխավորապէս պիտի վերագրել մասսայական դասալքումը եւ անցնելը թշնամու կողմը: Դրա վրա պետք է ավելացնել մի հանգամանք, որ Դարալագյազ-Ջանգեզուրը ռուսահայի համար մի խորթ, տարօրինակ երկրի էր եւ անծանոթ աշխարհ եւ անհասկանալի նրա համար այդ *հերոս մարտունակ առողջ ժողովուրդը*: Նա տեսնում էր իր թշվառության մեջ միայն սյունեցու բացասական գծերը. «բա-նոս»-ը, վայրագությունը եւ կոպտությունը, իսկ դրա տակ թաք-նված *զանձը* ոչ ժամանակ եւ ոչ էլ հնար ունէր շոշափելու:

Բոլորովին ռուսահայերին հակառակն էր ներկայաց-նում տաճկահայը: Նա ավելի կապված լինելով անկախու-թյան գաղափարին ավելի էր խորշում բուլշեիկ Երեւանից եւ իր կապերը այրված էր համարում Երեւանի հետ: Նա բարո-յապէս, տնտեսապէս քիչ կապված լինելով Երեւանի հետ ավելի քիչ էր նայում դեպի Երեւան եւ նրա մի խոշոր մասը՝ գլխավորապէս ոչ վանեցիները, մյուս տաճկահայերը (մշե-ցիք, սասունցիք, բասենցիք եւ այլն), դեռ 1918թ. ծանոթ էին այդ երկրներին եւ երբեմն ժամանակավոր հայրենիք դարձ-րած եւ այդ մասը նույնքան հարազատ կզգար նոր միջավայ-րը, որքան Երեւանը: Միաժամանակ, տաճկահայը կնկատեր ռուսահայերի մեջ եղած երկվությունը եւ Երեւան նայողների մեջ կտեսներ դավաճանություն եւ այդ կասկածը ընդհան-րացնում էր եւ համոզմունք դարձնում, որի հետեւանոք նա անվստահ էր դառնում: Բոլոր ռուսահայերը եւ միաժամանակ գլխավորապէս վանեցիները, որոնցից շատերը եղել են Պարսկաստան, նույն իսկ Բաղդատ նշանաբան էին գցած «դեպի Պարսկաստան եւ Բաղդատ եւ բնավ Երեւան», եւ ահա այս հիմնական ձգտումներն են ըստ իս պատճառները, որոնք երկրորդական տեղ են բռնում:

Եական է եւ մի հարց, որ մոռացած էք տալու: Դա Լեռ-նահայաստանի զինվորության եւ ժողովրդի վերաբերմունքն է հանդեպ վերոհիշյալ երկու տարրերի եւ փոխադարձաբար: Լեռնահայաստանի ժողովուրդը եւ զինվորությունը հաստատ կարող են ասել, որ իր հոգու խորքում սկզբներում իբր մոտից ծանոթ չէր հոգեբանության եւ ձգտումներին ռուսահայերի եւ տաճկահայերի, շատ ուրախ էր նա իր միակության մեջ, իր

բոլոր կապերը կտրտած լինելով բուլշեիկների հետ ուրախ էր, որ նոր ուժեր են գալիս եւ ինքը իր *փառամոլության եսասիրության* մեջ ուրախ էր, որ Հայաստանի հեռարանն է դառնում, նրա հաշիվն էր «միասին մեռնելն հարսանիք է»: Բայց երբ նա զգաց, որ այդ ամբոխին հաց պետք է, որովհե-տեւ նա խիստ ժլատ է՝ դժկամացավ եւ երբ նա տեսավ, որ եկողների միտքն ծուռն է ոչ թե կռվել մինչեւ վերջին մարդը, այլ նշանաբանն է դեպի Բաղդատ եւ Երեւան, նա դարձավ քարասիրտ, նույնիսկ անողոք, բայց կռվեց առանց դավաճա-նելու: Նա զայրանում էր, որ կռվել չեն ուզում, նա հուսահատ-վում էր, որ թողնում գնում են եւ այդ պատճառով նա սկսեց ատել եւ տաճկահայը եւ ռուսահայը:

Այսպիսով, ստեղծված էր երեք տրամադրությամբ հա-կառակ բանակներ. սյունեցիք, ռուսահայ եւ տաճկահայ, իսկ այդ 3-ի յուրաքանչյուրը հետեւյալ ստորաբաժանումներով. ռուսահայերի մի մասը դեռ չլքված սուր կռվի տրամադրու-թյամբ դեպի Երեւան՝ հանուն անկախության, մեծ մասը՝ դեպի Երեւան տուն գնալու համար, տաճկահայերի մի մեծ մասը՝ դեպի Բաղդատ, իսկ մի մասը՝ հանգստի վերջ պատ-րաստ գործելու ամենուրեք:

Հարցնում եք Նժդեհի վերաբերմունքը դեպի այդ հա-կադիր ուժերը: Նժդեհը վերելը ասացի, որ նա Ջանգեզուրի վաշտերի վաշտապետների վաշտապետն էր: Նա կարճատես եղավ, այդ երեք ուժերից ընտրելու այն միայն, որի վրա ցարդ հիմնված էր, նա այդ միակ իր պատվանդանը չկորցնելու հա-մար արտահայտիչ էր դառնում սյունեցու թե լավ եւ թե վատ տրամադրություններին, նա անտես էր առնում նոր ստեղծ-ված դրությունները եւ կարծում էր, թե այդ տրամադրություն-ները եւ տարերային հոսանքը դեպի Երեւան եւ Պարսկաս-տան կարող է չանդարդառնալ զանգեզուրցու վրա եւ այդ էր պատճառը, որ զանգեզուրցու հետ միասին երբեմն թռուցիկ-ներով, հաճախակի ծառերով գովքն էր անում տաճկահայի քաջությունն ու մարտիրոսությունը, ռուսահայ ուժն ու ըմբոս-տությունը, մյուս օրը զանգեզուրցու հետ միասին պախարա-կում, հայիոյում, վախկոտ եւ թալանչի անվանում: Նրան խուժանի հոգեբանության ընդառաջ գնալը բոլորովին հեռու քշեց թե ռուսահայ եւ տաճկահայ տարրերին եւ մթագնեց եւ զանգեզուրցու մտայնությունները: Նժդեհը չեղավ այն մեծ

ուժը, որը ամփոփեր իր մեջ բոլոր ուժերին եւ կարողանար տիրապետել եւ սյունեցուն եւ տաճկահային եւ ռուսահային: Ես չեմ ուզում մեղադրած լինել Նժդեհին, որովհետեւ նա հարազատ գործիչն էր միայն Սյունիքի եւ այն էլ Սյունիքի մի մասի (Ղափան-Գենվազի) եւ նույնիսկ *սյունյաց հրամանատարությունը մաքսիմուսն էր իր ուժերի*: Ես չեմ մեղադրում եւ նրա համար, որ այդ բարդ խնդիրը ինքը չէր առաջ բերել. իրանից անկախ էր ստեղծված եւ եթե նա մեղավոր է այդ խնդրում, ապա նույնքան մենք բոլորս մեր տկարության մեջ, մանավանդ Երեւանի հրամանատարությունը, որը նույնպես մեծությունը չունեցավ բոլոր հակադիր ուժերին տիրապետելու: Արդար լինելու համար պետք է ասել, որ Կուռռն եւ մյուսները նույնքան թույլ էին, որքան Նժդեհը այդ կնճռոտ խնդիրը լուծելու համար եւ նույնիսկ տեսնելու հակամարտությանց իսկական պատճառները:

Ըստ իս, թե Նժդեհը եւ թե Կուռռն պիտի համոզվեն, որ նրանք են լոկ լավ եւ շնորհիվ փոքրիկ մասնակի ուժերի ղեկավարներ եւ ոչ թե սպարապետներ եւ եթե իբր այդպիսի նայելու լինենք՝ իրանք չէին մեղավորները, այլ մեղքը մերն էր, որ այդ դերն ենք տված, եւ մեղքը նրանն է, որ այդ հակադրությունները ստեղծած է եւ պահպանած: Քանի որ սա պատմությանն է վերաբերում՝ կրկնենք այդ մտքերը:

Վերելը ասացի, որ տաճկահայությունը ամենահավատարիմն էր անկախության եւ ամենահակաբոլշեւիկը, ուրեմն դա ամենալավ մատերիալն էր օգտագործելու համուն պայքարի, բայց նա չօգտագործվեց, որ մի լոզունգ կար չկռվել եւ գնալ Պարսկաստան, թեեւ մի խոշոր մասի մեջ՝ գլխավորապես սասունցիների, մշեցիների եւ մյուսների, բացի վանեցիների մի մասից, նշանաբանն էր՝ մնալ Ջանգեզուր, որտեղի՞ց էր այդ լոզունգը: Ըստ իս, այդ միտքը բնական պահանջը չէր տաճկահայության, դա մի քանի անհատների եւ խմբակցությունների միտքն էր, որ վարակում էր տաճկահայության՝ մասնավորապես վանեցիներին: Այդ միտքը գալիս էր Վասպուրականի զինվորական խորհրդից, գլխավորապես Սամվելից, Մաքսապետյանից, որոնք եղած էին Բաղդատ եւ 1918 թվի բոլշեւիկների նման խրախուսում էին զորքի թույլ բնագրները. գնալ Բաղդատ հայրենակիցների մոտ, չկռվել եւ շուտով անցնել սահմանը: Այս նշանաբանը, մանավանդ նահան-

ջող զորքի համար, պարարտ հող էր կորցնելու մարտունակությունը եւ կայունությունը զորքի: Այդ էր պատճառը, որ Սմբատը հրամանատար էր, շատ զորք ուներ, բայց լսող չուներ: Իսկ Կուռռն սպարապետ՝ առանց վստահ լինելու թե որեւէ հրահանգ պիտի կատարվի, իսկ Ասլանը՝ վասպուրականցիների հրամանատարը, մի ֆիկցիա գործիք զինվորական խորհրդի, որը կցանկա միայն գնալ գետ եւ անցնել սահմանը:

Չգիտեմ ի՞նչ հաշվով կառավարությունը կամ հրամանատարությունը կհանդուրժեին մի այդպիսի մարմնի, այդ գտնում են ամենամեծ սխալը եւ ով անտես է առել գուցե նա անկարելորդ եւ չնչին է համարել այդ մարդկանց, ուրեմն հաշվի չի առել, որ մի գդալ մածունը կաթսում կաթը կմակարդվի եւ կամ մի ճանճը ամբողջ մի պղինձը եւ համոզված են, որ եթե կառավարությունը թույլ չտար, հրամանատարությունը կղզիացներ սրանց եւ կամ այդ մարմնից մի հսկա դիմակռվի գնդակի հաներ զորքի առջեւ, ամբողջ տաճկահայությունը մի հոգի, մի մարմնի նման պիտի գնար իր հրամանատարների ետեւից՝ կատարելով նրանց ամբողջ հրամանները:

Ասածս ապացուցանելու համար հիշեմ միայն մի երկու դեպք: Կուռռն եւ Սմբատը գալիս են Քեշիշքենդ եւ հայտնում, որ իրենց զորամասերը չեն ուզում ֆրոնտ (ճակատ-Ա.Յ.) գնալ, ուզում են հետ գնալ դեպի Ջանգեզուր եւ այնտեղից մեծ մասը միտք ունի անցնելու Պարսկաստան, այնտեղ են եւ կառավարության անդամները եւ Յապոնը: Ինձ հարկադրում են միջամտել: Կոյթուր ժողովվում է Ջինվորական խորհուրդը, բոլոր վաշտապետները, խմբապետները, այնտեղ պարզում են Ջանգեզուրի տնտեսական վիճակը, հապճեպ նահանջի տպավորությունը Ջանգեզուրում, որ պիտի թողնել եւ Արաքս անցնելու դժվարությունը եւ պարզում ժողովրդին զորքից բաժանելու անհրաժեշտությունը եւ զորքի տեղապահ մնալը, դիրքերի պահպանման կարեւորությունը, թե նահանջող ժողովրդի եւ թե Ջանգեզուր-Ղարալագյազի ապահովության տեսակետից, ժողովը իր ծայնը լավ չի ուզում ցույց տալ, թեեւ ամեն ինչի համաձայն ցույց կտան, բայց ժողովում՝ մանավանդ զինվորական մարմնի անդամներից, մնում է ինչ որ բան չասված, նկատելով որ որոշ տարրեր հրամանատարական կազմի՝ տրամադիր է թե բաժանվելու ժողովը-

դից եւ թե դիրքերը պահելու, առանց հաշվի առնելու՝ նրանց առաջարկում են Մուշեղին եւ Ասլանին իրանց զորքերը կարգի դնել եւ որոշված տեղերը շարժվել: Մուշեղը ենթակա չլինելով զինվորական մարմնին՝ զուտ զինվորականներով անցնում է Այնաջուր եւ մյուս շրջաններ, եւ լավ թե վատ կարողանում է շարժել իր մասերը: Վասպուրականցիներին անհնար է լինում այդտեղ կարգի բերել, նա զինվորական խորհրդի պահանջմամբ գալիս է Քեշիշքենդ կանոնավորվելու, իբր Քեշիշքենդում հարց է տրվում ժողովուրդը բաժանել զինվորներից, որ գնան որոշ գյուղեր՝ Մարտիրոս, Խաչիկ շրջաններ: Պաշտպանելու անհնար է լինում, ընդիմադրում է զինվորական մարմինը, հրահանգում է վաշտապետներին կանգնեցնել վաշտերը ստուգելու թիվը զինվորաց եւ նրանք անում են, ինքս են գնում կարգի բերելու վաշտերը, առանց զինվորական մարմնի, կարելի է լինում բաժանել զինվորները ժողովրդից եւ հրահանգել, որ գնան դիրքերը, եւ գնում են, բայց դժբաղտաբար նրանք դեռ իրենց տեղերը չհասած նույն զինվորական մարմնի միջոցով հրահանգվում է չկատարել հրամանները եւ շատ վաշտեր եւ իրանք զինվորական մարմինը փոխանակ նշանակված վայրերը լինելու՝ Մալիշկա են կենտրոնանում եւ գնում դեպի Բազարչայ:

Կան բազմապիսի խնդիրներ, որ կխնդրվի կանչել գլխավորապես վասպուրականցիներին եւ հասկանալ թե ինչպես այդ հեղափոխական ժողովրդին շահագործել եւ սխալ ուղիների վրա են դրել Մաքսապետյան եւ խմբակը: Իմ խորը համոզումս է, որ տաճկահայությունը այդ ժողովրդական պայքարի ընթացքում անենահավատարիմ եւ կայուն տարրը պիտի լիներ, եթե չեզոքացված լինեին կառավարության եւ հրամանատարության կողմից այդպիսի հիվանդոտ տարրերին եւ դրանց պատճառով էր, որ հակադրություն առաջ եկավ, թե հրամանատարության եւ թե Սյունիքի ժողովրդի միջեւ, քանի որ նա պարզ տեսնում էր, որ եկածները 1918թ. Անդրանիկյան տաճկահայերը չէին, որ որոշած էին պայքարել, այլ մի խուժան, որ կարող է անցնել լոկ Պարսկաստան:

Միաժամանակ Նժդեհը գնում էր ծայրահեղության: Նա առանց ըմբռնելու չարիքի արմատը, պատասխանատու էր գտնում տաճկահայությունը, փոխանակ նրա հատուկենտ անհատներին, որոնց կարելի էր չեզոքացնել, բայց դա նա

չարեց եւ հայիոյուն էր տաճկահայության այն ձեւին՝ ինչ ձեւի կհայիոյեր եւ սյունյաց խուժանը: Եւ փոխանակ աշխատելու ձեռքի մեջ պահելու այդ թանկագին տարրը՝ նա վանում էր իրանից եւ այդ չէր թաքցնում եւ ժողովրդից, որից առաջ էր գալիս էքսցեսներ:

Եզրակացնելով ասածս՝ գտնում են մեղքի պատճառը տաճկահայոց թերությանց եւ սյունեցվոց ու նրանց մեջ եղած թյուրիմացությանց եւ Մաքսապետյան, Սամվել եւ ընկերներ, երեսնյան կառավարություն եւ հրամանատարությունը, որ այդ չարիքին շարունակ կհայիոյեին, բայց չէին կամ չէին կարող արմատախիլ անել եւ Նժդեհը, որ փոխանակ հայիոյելու զինվորական մարմինը, իր հայիոյանքը տարածում էր տաճկահայոց վրա:

Գալով ռուսահայ զորամասերի եւ Նժդեհի վերաբերմունքին չեն գիտե, որովհետեւ ես եղել են Գենվազ, իսկ զորամասերը Բազարչայ եւ չեն տեսած այդ երկուսի հարաբերությունները: Միայն մի դիտողություն՝ առանձին առանձին զորամասեր արած են, որ կհամարեն հայտնել: Վերեն ասացի, որ ռուսահայոց մի մասը համոզված հակաբուլշեւիկ կայուն տարրն էր, որ կծգտեր Երեսան վերագրավել, իսկ մյուս մասը պարզ տուն գնալու ձգտումով էր, որ կմնար Բազարչայ: Ինձ թվում է՝ ճակատագրական սխալ է եղել հրամանատարության կողմից վերջիններին զինվոր համարելը եւ պահելը Բազարչայ, ըստ իս՝ ավելի լավ էր այդ վճասակար տարրը հեռացնել, քան հենվել նրանց վրա:

6. Հարցնում եք եւ Գողթանի գործողությանց անհաջողության պատճառները:

1. Որ զինվորական մարմնի որոշ անդամներ զինվորության շուրջ հրահանգում էին չգնալ եւ զինաթափ լինել եւ անցնել Պարսկաստան:

2. Որ բոլոր վասպուրականցիք չմասնակցեցին, բացի Սիմոնի վաշտից եւ ասպարեզում մնաց միայն Մուշեղը:

3. Որ Արմենակի վաշտը, որ խոստացված էր ուղարկել ռեզերվ, նա ճանապարհից վերադարձվում է դեպի Մեղրի զինվորական մարմնի ներշնչումով եւ կարծեմ Ասլանի հրահանգով (հարցրեք իրանից):

4. Որ Նժդեհը չէ պարենավորված լինում բավականաչափ պաշարով:

5. Որ փոքրաթիվ ուժ գնալով եւ Գողթանի ժողովուրդը այդ փոքր ուժը տեսնելով՝ լավ է համարել չշարժել իր տեղից:

6. Որ Մուշեղի եւ Սիմոնի զինվորների մեջ եւս կար լքում, քանի որ 3000-ի չափ զինվորներ լքեցին իրենց:

7. Ի՞նչ դիրք էր բռնել Բյուրոն դեպի Ջանգեզուրը, Դարալագյազի օպերացիաները եւ ի՞նչ քաղաքականություն էր թելադրվում:

Բյուրոյի 3 անդամներ կայինք, բայց գործերի բերումով ստիպված ենք եղել միշտ իրարու հետ չլինել եւ այդ մասին առանձին նիստ անելը անհնար է եղել, բայց իրարու կարծիք տվել եւ առել ենք կամ նամակներով կամ իրարու զույգ-զույգ պատահելով: Ես Համոյին չեմ պատահել, բայց Սիմոնի հետ խոսակցել եւ համաձայնվել ենք, մանավանդ որ նախապես նրա կարծիքները գիտեի այդ հարցերի վերաբերյալ: Քանի որ Սիմոնը վարչապետ էր եւ փաստորեն նրա ձեռքն էր դեկը, ուստի ես եմ հայտնած կարծիքները, որ պիտի ձեզ կրկնեմ.

1. Քանի Ադրբեջան, Վրաստան սովետական է՝ Ջանգեզուրը չի կարող եւ աննպատակ է ագրեսիվ լինելը (այդ ժամանակ խոսք չկար Դարալագյազի օպերացիայի մասին):

2. Ջանգեզուրի անկախությանը պիտի տալ ձեւական բնույթ եւ մի պատվավոր ելք գտնել բոլշեւիկների հետ:

3. Միաժամանակ թուրքերի հետ (Նախիջևեանի եւ մյուսների) համագործակցություն ստեղծել, որ բոլշեւիկները քիչ ագրեսիվ լինեն դեպի Ջանգեզուրը:

4. Որպեսզի կարելորություն չտան Ջանգեզուրին բոլշեւիկները՝ թողնել նախկին կառավարությունը. Սյունյաց եւ Հայաստանի կառավարություն չհայտարարել:

5. Թող չլինի երկու կառավարություն, Լեռնահայաստանի եւ Հայաստանի՝ վերջինս արտասահմանում:

Որքան հիշում եմ այս բոլոր կետերին համաձայն էր Սիմոնը, բայց հետո տեղեկացա, որ նա շեղվել է այս հիմնական կետերից՝ կարիքից ստիպված, իրանից հարցրեք: Թավրիզում Համոյին հայտնած եմ նույնը, ավելացնելով որ Ջանգեզուրի հարցը մասնակի եւ տեղական բնավորություն ունի եւ զուրկ է այլեւս քաղաքական արժեքից, այժմս ծանրության կենտրոնը հայկական հարցի պետք է որոնել Պոլսում. Նա հիմնական կետերին համաձայն լինելով համաձայն չէր

միայն այդ վերջին իմ հավելումին եւ կողմնակից էր բնավ զիջում չանել Ջանգեզուրի խնդրի վերաբերմամբ, բայց եւ կողմնակից չէր ագրեսիվ լինելուն:

8. Որքա՞ն դրամ է բաց թողել Բյուրոն Նժդեհին եւ ստացել է նրանից հաշիվ:

Բյուրոյի հաշիվները մեր ձեռքի տակ չեն, որ կարողանամ ճիշտ եւ հաստատ պատասխան տալ եւ ինքս չեմ հիշում, միայն թե Նժդեհից եւ Ե.Իշխանյանից լսել էի, որ նա ստացել է գումարներ Իշխանյանի միջոցով եւ Աշոտ Մելիք-Մուսայանի: Բայց թե այդ գումարները կուսակցական էին, թե պետական՝ չեմ գիտե: Իշխանյանի միջոցով ստացել է 11.420.000 հայկական չեկերով, 2500 թղթադրամ օսմանյան լիրա եւ 500 ֆունտ ստեռլինգ բանկնոտ: Հիշում եմ, որ Աշոտի միջոցով պիտի ուղարկված լինի գումարներ ֆինանսից (ֆինանսների նախարարություն-Ա.Յ.), թե որքան է ուղարկվել եւ հասել, որքան մնացել է Երեւանում՝ հարցրեք Մելիք-Եոլյանից: Կուսակցականը՝ չեմ գիտե: Հաստատ չգիտենալով, թե որտեղից է ուղարկված այդ գումարները, ցարդ հաշիվ չեմ պահանջած պաշտոնապես, բայց նրան լուր տված եմ, որ հաշիվ պատրաստ եւ պատճենը ինձ ներկայացնի, որ խոստացած է Իշխանյանի միջոցով:

9. Ժողովուրդը ի՞նչ վերաբերմունք էր ցույց տալիս դեպի Նժդեհը:

Ինտելիգենտ մասը վերապահությամբ էր վերաբերվում դեպի Նժդեհը եւ չէր *հարգում ու հավատում*, բայց եւ թշնամանք չուներ:

Իսկ ժողովուրդը *en masse* (ֆրանսերեն՝ զանգվածաբար-Ա.Յ.) *նրան սիրում էր եւ իր հետեւից գնում*:

10. Նժդեհը քո եւ Վրացյանի ներկայությամբ կարգադրություն արե՞լ է գերի բոլշեւիկներին եւ Երեւանից բերած բոլշեւիկներին զնդակահարել ասելով. «Թե ինչո՞ւ եք սրանց բերել եւ ինչո՞ւ եք պահում իզուր», այդ եղե՞լ է Տաթևում:

Այդպիսի բան չեմ հիշում, մանավանդ որ այդպիսի կարգադրություն անելու իրավունք չպիտի ունենա վարչապետի մոտ եւ քանի ես եղել եմ Տաթևում ոչ ոք չէ գնդակահարված եղել եւ Երեւանից եկած չեկային (նկատի ունի Հ.Յ.Դ. արտակարգ դատարանը-Ա.Յ.) էր հանձնված ավելորդ հաց չծախսելու համար անմեղներին արձակել, ոմանց պահել

գրավական: Հիշում եմ, որ խոսք կար մեր բնակարանում մասնավորապես Երեւանից բերած դահիճների (թուրքեր եւ կարծեմ մի հայի) մասին, որ ավելորդ է պահելն եւ պետք է, որ Երեւանից չբերեին մինչեւ հոս: Հիշում եմ, որ բողոք իսկ կար, որ մինչեւ Տաթեւ հասնելը լեռան վրա սպանած էին մի թե մի քանի հոգու պահակներ, որի համար հուզում կար ընկերների մեջ, բայց որ կարգադրվեր բանտարկյալներին, մանավանդ գերիներին կոտորելը չեմ հիշում եւ չեմ հաստատում, որովհետեւ գերիները Դարալազյազից բերածներն էին, որ բռնված էին Յապոնի կողմից եւ ամիսներ շարունակ գյուղացիներին բաժանված էին իբր աշխատավորներ եւ դա հայտնի էր եւ Նժդեհին:

1921թ. սեպտեմբերի 1

Ռուբեն

Իսկականի հետ ուղիղ է՝ Դատական ատյանի անդամ
Լ. Թադեւոսյան
Դատական գործ, էջ 283-296:

Թիվ 5

(Է. Խանադալյանի նամակը Գ.Յ.Դ. Բյուրոյին)

*Գ.Յ.Դ. Բյուրոյին
պատճենը՝ Պերագույն Դատական Ատյանին*

Թավրիզ եկածս օրից մինչ էսօր դժբախտություն եմ ունեցել լսելու եւ եթե վերջ չտրվի, դեռ երկար գուցե այդ դժբախտությանն ենթակա լինեմ... *փողոցային դատավճիռներ:*

Հայաստանի կառավարություն, դասալիք սպայություն, պաշտոնություն, կուսակցական հակառակորդներ, այդ բոլորն իրար են խառնվել, որոնց այդ վեճերին գույն ու տոն է տալիս *Թավրիզի փողոցը:*

Այդ բոլոր վեճերը, մեղադրանքները բխում են նրանից, որ շատերն *անձնական շահ* ունեն՝ այստեղ մնալու, Հայաստան վերադառնալու կամ արտասահման անցնելու մեջ: Դրա շնորհիվ է, որ մեղադրում են Սյունյաց Սպարապետ Փարեգին Նժդեհին:

Նժդեհի Լեռնահայաստանի գործունեության մասին ես չեմ խոսի, քանի որ *արդեն խոսել է ժողովուրդը, մամուլը, թշնամին, կխոսի նաեւ պատմությունը:*

Նրա անցյալ գործունեությանը՝ որպես մոտիկից ծանոթի, կուսակցական պարտքս եմ համարում տալ հետեւյալ տեղեկությունները, որոնք՝ ես կարծում եմ, մեծ լույս կսփռեն Սպարապետի դատի վրա:

1. **Ալեքսանդրապոլի ամրոցային գումարտակ:** Ռուսաստան գնացող զորքը սլանում էր բերդի արսեմալը: Հայ Ջինվորական միությունը, որի նախագահն Ամասիա Սուքիասյանն էր (ճարտարապետ), երկար տանջվում էր բերդի փրկության ճամբան գտնելու համար: Կարգադրվեց Նժդեհին բերդը գրավել ռուսներից: Նժդեհը երեք ժամում հավաքեց մոտ 60 ամեն հասակի ու հագուստի ուսանողների եւ բոլորովին անաղմուկ գրավեց բերդը:

2. **Ալաջայի արշավանքը:** Տաճիկները մոտենում էին Կարսին: Բեկլի-Ահմեդի մոտերքում մերոնք կռվում էին ամենայն քաջությանը: Կուսակցությունը հրահանգեց Նժդեհին կազմել «Արագած»-ը եւ Ախուրյանն անցնելով մաքրել մեր զորքի ձախ թելը, Աղա դաղա (Բերնա) սարի վրայով անցնել թշնամու թիկունքը: Չորս օրում կազմակերպեց եւ վեց օրում արդեն Ագարակի մոտերն էր, երբ մերոնք թողին Կարսն ու նահանջեցին: Նահանջեց եւ Նժդեհը՝ իր հետ ազատելով 150 հազարից ավելի Նախիջեվանի շրջանի հայերին ու եզիդներին՝ ապահովելով մեր նահանջող զորքի ձախ թելը, որի շնորհիվ թշնամին չկարողացավ մեր զորքի ճանապարհը կտրել, գերել կամ կոտորել:

3. **Կողբի արշավանքը:** Այս արշավանքը մեծ կարեւորություն ունեցավ այն տեսակետից, երբ հայ ժողովուրդն ամենուրեք հալածվում էր, օգնություն ոչ ոքից չէր ստանում, Նժդեհը կարողացավ մեզ կապել մի ժողովուրդ, որը մեր վարած կռիվներին մեզնից զոհերի քանակով հետ չմնաց: Դա եզիդների զինակցությունն էր, որ հաջողվեց Նժդեհին ահագին թուրք գյուղերի վրայով գնալ Գյուլլուջա, հրավիրել Յուսուֆ բեկին, ծանոթանալ, բանակցել, եւ ապա վերադառնալ Կողբի վրայով Ալեքսանդրապոլ, որտեղից եւ Տփլիս: Վերադարձավ Յուսուֆ բեկի հետ գոհ սրտով՝ զինակցած:

4. Ղարաքիլիսայի հերոսամարտը: Այն ժամանակ, երբ ամբողջ զորքը, ժողովուրդը, մտավորականությունը, **բոլորը բարոյալքված փախչում էին** առաջին իսկ պատահած ճանապարհով, այն ժամանակ, երբ հայ բանակի սպայությունը ժողով էր գումարում Դիլիջանում, ստիպում էր գեներալ Նազարբեկյանին գնալ Ղարաքիլիսա, սուրը հանձնել թշնամուն, ահա՛ այդ ժամանակ, **հրապարակ եկավ Նժդեհն իր ամբողջ հասակով**: Նա, երբ հրաման ստացավ կուսակցությունից կատարել Արամ փաշայի պահանջն (երեք օր դիմանալ), անցավ հավաքույթի հարմար տեղն եւ ասեց. «**Սպաները գնում են անձնատուր լինելու: Թող գնան: Իսկ ես գնում եմ մեռնելու: Ով դեռ իրեն բարոյապես մեռած չի համարում՝ թող հետեւի ինձ**»: Եվ նա գնաց քիչ մարդկանցով: Կատարեց **ամենամեծ** գործն՝ իր անձնագոհությամբ **տվեց պատմությանը Ղարաքիլիսայի հերոսամարտը, իսկ մեզ՝ անկախ Հայաստան**:

5. Մի քանի խոսք եւս Երեւանի գործունեությունից: 1918թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ժողովուրդը պիտի վերադառնար իր տեղերը: Հայաստանի կառավարությունը Նժդեհին նշանակեց Նախիջեւանի գավառապետ: Մինչ կազմակերպած միլիցիան 3-րդ գնդի հետ հասան Ղուշչի Դեմուրչի՝ թուրքերը վրա տվին, մերոնք նահանջեցին մինչեւ Ղավալու, Նժդեհը՝ նոր առողջացած տիֆից, դեկտեմբերի 20-ին հասավ ճակատ ու իսկույն կռվի ամբողջ նախածեռնությունն առավ իր ձեռքն եւ իր եզակի ռազմագիտական տաղանդով՝ շնորհքով, **փրկեց 3-րդ գունդը, թնդանոթները, Ղավալուն** (ներկա Արարատ - Հ. Ա.), **Հայաստանի պատիվը**:

Գեներալ Սիլիկովն ու Դբոն, թեւ այնքան էլ Նժդեհին բարեկամ չէին, մանավանդ գեներալը՝ Երեւանում մեր գործի **ազգայնացման** հարցը առաջ բերելու համար, Վեդի Բասարի ապստամբության ճնշման համար Նժդեհին պարգեւատրեցին Վլադիմիրի 3-րդ աստիճանի շքանշանով: Բացի այդ, Սիլիկյանը Ղամարլուից հեռագրում է ներքին գործոց նախարարին եւ միլիցիայի տեսուչ Առաքելովին. «Վեդի Բասարի այս կռիվների մեջ Նժդեհը ցույց տվեց **ամենահմուտ ռազմագիտություն, հոգու անվեհերություն**, որով փրկեց թե՛ դրությունն եւ թե՛ հանրապետական գործի պատիվը: Ցանկալի է եւ ես անհրաժեշտ եմ գտնում Նժդեհի միլիցիոն խումբը

չցրել, այլ պետության հաշվով պահել Բաշ Գառնու շրջաններում»:

Իսկ Հ.Յ.Դ. կենտրոնական կոմիտեն հրավիրեց Նժդեհին որպես պառլամենտի անդամ:

Այսքանը գրելով ինձ թվում է, թե դուք ոչ թե պետք է Նժդեհին **դատեք-քննեք-հարցաքննեք** այն լուրերով, որոնք բխում են արդեն ասացի թե ի՞նչ աղբյուրից, այլ լավ կլիներ թողնեիք պատմությանն, որովհետեւ **Նժդեհը պատմական անձ է**:

Թավրիզ
1921թ. հոկտեմբերի 7
Դատական գործ, էջ 401-403:

Հ. Յ. Դ. անհատ գործիչ՝
Է. Խանադալյան

**Վ Ա Վ Ե Ր Ա Թ Ղ Թ Ե Ր
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ն Ժ Դ Ե Զ Ի Մ Ա Ս Ի Ն**

ԹԻՎ 1

(Դրոյի նամակը Ջանգեզուրի Գյուղացիական կոմիտեին)

*Ջանգեզուրի Գյուղացիական կոմիտեին
Պատճենը՝ Նժդեհին*

Հայրենակիցներ

Երկու տարի ու կես դառը փորձերը բավական համոզեցուցիչ էին, որ իզուր էր հայ ժողովրդի հույսերը դնել Եւրոպայի վրա, որն ամենաօրհասական պահին նամարդի նման թողեց ամբողջ ժողովուրդը թշնամու գրկում, որովհետեւ իր շահերն այդ էին պահանջում:

Վերջին րոպեին, պետության գլուխն անցած Զ.Յ.Դ. պատասխանատու ընկերները նոյեմբերի 26-ի ժողովում խոշոր մեծամասնությամբ որոշեցին ընդունել խորհրդային կողմնորոշում: Հայաստանը հայտարարվեց խորհրդային՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ միայն հեղափոխական Ռուսաստանը կրնա անկեղծ կերպով պաշտպանելու հայ աշխատավորության շահերն եւ հետ կշարտի մեր հայրենիքից քեմալական դժոխային ծրագիրներ կազմող բանակը: Ներկայումս, Մոսկվայում հավաքվում է խորհրդաժողով, որտեղ պետք է լուծվի Հայաստանի սահմանների խնդիրը՝ Ռուսաստանի, Տաճկաստանի եւ Հայաստանի մասնակցությամբ:

1. Ջանգեզուրի՝ խորհրդային Հայաստանը չճանաչելը, խանգարելու է մեզ լուծել Նախիջեւանի, Շարուրի եւ Ղարաբաղի խնդիրները:

2. Պատճառ է դառնում Ջանգեզուրի այդ բռնած դիրքն եւ հաղթաթուղթ տալիս տաճիկների ձեռքը՝ չհեռացնել իրենց գործերը մեր երկրից, պատճառաբանելով՝ թե Հայաստանի խորհրդային իշխանությունը կեղծ է, որ մոտիկ ապագայում Հայաստանը նորից կլինի գործիք եւրոպական իմպերիալիզմի ձեռքը:

3. Քանի Ջանգեզուրը չի ճանաչել խորհրդային իշխանությունը՝ դեռ պիտի կասկածով վերաբերվեն Հայաստանին,

չի սկսվի խաղաղ եւ շինարար աշխատանք մեր արյունաքան եղած երկրում:

4. Դժվար է խոստովանել եւ հաշտվել այն մտքի հետ, որ կատարված են մի շարք քաղաքական սխալներ, բայց դժբախտաբար՝ դա դառն իրողություն է:

Ուստի, դիմելով ձեզ ուզում եմ հավատալ, որ Ջանգեզուրն եւ նրա ղեկավարները վերջ կտան իրենց բռնած քաղաքականությանն եւ կմիանան իրենց Մայր Երկրին՝ Հայաստանին, որ Մոսկվայում տաճիկների հետ բանակցությունը կգա ապացուցելու, որ խորհրդային Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատավորության շահերը:

Ա. Ուստի, ձեզ պետք է անմիջապես հայտարարել խորհրդային եւ միանալ խորհրդային Հայաստանի հետ:

Բ. Եթե որեւիցէ բան ունեք պարզաբանելու, առանց ուշացնելու պետք է ներկայացուցիչներ ուղարկեք Չեղկոմ, 11-րդ բանակի եւ Հայաստանի կառավարության մոտ:

Բաքու

1921թ. հունվարի 21

ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, ք. 29:

Դրո

ԹԻՎ 2

(Ս. Վրացյանի նամակը Ռ. Տեր-Մինասյանին)

Սիրելի Ռուբեն

Մենք ձեզ շատ սպասեցինք, բայց դուք չեկաք: Մենք չդիմացանք, որովհետեւ դուք ժամանակին օգնության չհասաք: 42 օր կռվելուց հետո մենք պարտվեցինք եւ հեռացանք քաղաքից: *Ուրիշ ճանապարհ չունեինք: Մեր բանակի մնացորդները, մեր ամբողջ մտավորականությունը, մեր շատերի ընտանիքները կարող են փրկվել միայն Լեռնահայաստան ապաստանելով:* Դուք գոնե մեզ պիտի տաք այդ հնարավորությունը: Մեր ուժերի խոշոր մասն ուղղեցինք դեպի էդ ուղղությամբ, որպեսզի ճանապարհն ապահովին մեր նահանջողների անցքն ապահովելու եւ ձեզ հետ կապվելու համար:

Առաջին շարքի մեջն են Հովհաննես Քաջազունին, Համո Օհանջանյանը, Հայր Աբրահամը, Լեւոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Արտաշես Զիլինգարյանը, Սիրական Տիգրան-

յանը, եւ ուրիշ շատեր: Նրանց մեջն է *Աննա Սողոմոնովնան եւ ուրիշ շատ տիկիւններ եւ օրիորդներ*, քո հովանավորութեանն են հանձնուած իմ զարկված ժողովրդի մնացորդները, պետք է մտածել նրանց ապագայի համար:

1921թ. ապրիլի 4

Յամբուլներով՝
Հայրենիքի փրկութեան կոմիտեի նախագահ
Սիմոն Վրացյան

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, ՍԿ:

ԹԻՎ 3

(Ս. Վրացյանի նամակը Գ. Նժդեհին)

Ընկեր Գ. Նժդեհին

Թավրիզում խճողված ծանր մթնոլորտը ինձ հարկադրում է նախագգուշացնել քեզ եւ խորհուրդ տալ, որ անախորժութիւններից խուսափելու համար *առայժմ մնաս տղաներով Մուժուժբարում*: Մանրամասնութիւնների մեջ չեն մտնում՝ հասկանալի է: Մթնոլորտը մի քիչ կպարզվի եւ այն ժամանակ կարելի կլինի անցնել:

Թավրիզ

1921թ. հուլիսի 15

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, ՍԿ 5-23, ք. 6:

Բարեւներով՝
Սիմոն Վրացյան

ԹԻՎ 4

Արձանագրութիւն թիվ 3

Հ.Յ.Դ. Հայաստանի կենտրոնական կոմիտեի նիստի
Լսեցին՝

Դուգալի դեպքը (եւլոյթ ունեցան՝ Հակոբ Տեր-Հակոբյանը, Արշալույս Աստվածատուրյանը, Եփրեմ Սարգսյանը):
Որոշեցին՝

Կախակայել ընկեր Նժդեհին Հայաստանի կենտրոնական կոմիտեի անդամ լինելուց եւ գրավոր բացատրութիւն պահանջել հիշյալ դեպքի առթիվ:

1921թ. հուլիսի 19

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

ԹԻՎ 5

(Ս. Վրացյանի նամակը Հ.Յ.Դ. Գերագույն Դատական Ատյանին)

Հ.Յ.Դ. Գերագույն Դատական Ատյանին

Լեռնահայաստանի վերջին դեպքերի առթիվ ստեղծված է հիվանդագին մթնոլորտ մեր կուսակցական շարքերում (տեղի են ունենում ծանր ամբաստանութիւններ եւ փոխադարձ մեղադրանքներ ընկերների շարքերում): Հատկապես անհանդուրժելի ձեւեր են ստացել հարաբերութիւնները կառավարութեան անդամների, սպարապետ Նժդեհի եւ զինվորականութեան միջեւ:

Սպարապետ Նժդեհը մեղադրում է կառավարութեան անդամներին եւ Երեւանից եկած զինվորներին, որ նրանք Ձանգեզուրում *չարաշահել են, սաքոտածով գրառվել, դասալքել են, դավաճանել, պարտվողականութիւն քարոզել, գիտակցորեն, դիտավորյալ կերպով քայքայել են թիկունքն եւ պարտութեան մատնել Ձանգեզուրը*: Այդ առթիվ, նա մի քանի ճառեր է արտասանել բազմութեան առաջ եւ Երեւանից եկող զինվորութիւնն անվանել *ժանտախտ, խոլերա, սրիկա*, իր թիկունքը քայքայող, իսկ կառավարութեան անդամներին՝ *դասալիք, դավաճան, զեղծարար*, եւ այլն: Սույն հողի վրա նա Դուգալում ծանր անպատվութիւն է հասցրել կառավարութեան անդամ Հակոբ Տեր-Հակոբյանին եւ Հայաստանի կոմիտեի անդամ Արշալույս Աստվածատուրյանին՝ նրանց կոպիտ ձեւով խուզարկել տալով եւ գրգռված ամբոխի առաջ զեղծումների մեջ մեղադրելով: Նույնտեղ, նա ծեծել է տվել ընկերներ Գեւորգ Կարապետյանին եւ Ալեքսանին, որոնք կառավարական պաշտոնով մնում էին գետափում եւ սպանել տվել սպա Ասլանյանին, որ խիստ հուզում է առաջ բերել սպայութեան եւ զինվորութեան մեջ:

Մյուս կողմից, զորավար Նժդեհին մեղադրում են նրանում, որ նա *ոչ մի տեղ անձամբ չի դեկավարել կռիվները*, խուսափել է ճակատներից ու *միշտ* զանազան պատճառներով *մնացել թիկունքում*, որով Ձանգեզուրը սպասված թափը ցույց չի տվել վերջին կռիվներում: Մեղադրում են նույնպես այն բանում, որ մի քանի գնդացիներ, թնդանոթներ եւ այլ

կարգի գեները դուրս է հանել Ջանգեզուրից եւ հանձնել խաներին: Ամբաստանում են նրա մեջ, որ նա իր ճառերով եւ խտրական ընթացքով սրել է ներհակությունները երեւանցիների եւ զանգեզուրցիների միջեւ ու դրանով արագացրել Ջանգեզուրի անկումը: Մեղադրում են, որ նա Հանքերի տեղահանությունը կատարել է տվել խուճապով, մի քանի ռուպեի մեջ, գրաստ չի տվել դրամներն արտահանելու համար, մինչդեռ մի քանի գրաստով հանել է իր անձնական գույքերը: Այս եւ նման բազմաթիվ փոխադարձ ամբաստանությունները ծայր աստիճանի անախորժ մթնոլորտ են ստեղծել:

Անկարող լինելով կառավարական միջոցներով քննություն կատարել, սյարգել մանրամասները, հանգամանքները եւ հանցավորները պատժել խնդրում են Ձեզ նշանակել լայն քննություն Հայաստանի կառավարության, սպարապետ Նժդեհի, կուսակցական գործիչների, հրամանատարական կազմի վրա եւ Լեռնահայաստանի վերջին դեպքերի պատասխանատուներին ենթարկել պատժի: Գործին լայն ծավալ եւ հարկավոր ընթացք տալու համար կխնդրեի առաջին հերթին հարցաքննել Ջորավար Նժդեհին, կառավարության անդամներ Ա.Հովհաննիսյանին, Ս.Եղիազարյանին, Հ.Տեր-Հակոբյանին, Ս.Մելիք-Յուլյանին, Հ.Տերտերյանին, պետական վերահսկիչ Գ.Տեր-Մինասյանին, գնդապետ Կուռոյին, ընկերներ Ա.Աստվածատուրյանին, Ռուբենին, Եփրեմ Սարգսյանին, հրամանատար Սմբատին, Գուրգեն Աղայանին, Համո Օհանջանյանին, Հ.Բուդաղյանին, Գերասիմ Աթաջանյանին, Յապոնին եւ այլն:

Թավրիզ
1921թ. հուլիսի 19
Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

Ս. Վրացյան

ԹԻՎ 6
(Ս. Վրացյանի նամակը Գ. Նժդեհին)

Ջորավար Նժդեհին
Մուժուճարում

Թե՛ կառավարության անդամների եւ թե՛ Լեռնահայաստանից եկած ուրիշ անհատների բերած տեղեկությունները

րից երեւում է, որ Դուք մեկից ավելի անգամներ հրապարակով անպատվություն եք հասցրել կառավարության, ըստ էության վերագրելով նրան այնպիսի հատկություններ, որ նա չունի: Միեւնույն ժամանակ Դուք Դուզալում թույլ եք տվել կառավարության անդամ Հակոբ Տեր-Հակոբյանի վերաբերմամբ մի այնպիսի վարմունք, որպիսին *հանդուրժելի չի կարող համարվել ոչ մի պարագայում*: Այդ հանգամանքները, իհարկե, բավական են, որպեսզի Դուք այլեւս *չհամարվեք անդամ այդ կառավարության*, ինչ եւ լինի՝ վերջինիս ապագա վիճակը:

Թավրիզ
1921թ. հուլիս 20
Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

Հարգանքներով՝
Նախարարապետ Ս. Վրացյան

ԹԻՎ 7
(Ս. Վրացյանի նամակը Գ. Նժդեհին)

Ընկեր Գարեգին Նժդեհին
Անձնական

Ընկեր Գարեգին

Գրում եմ ո՛չ իբրեւ կառավարության նախագահ եւ ո՛չ իբրեւ բյուրոյի անդամ՝ գրում եմ *սուսկ իբրեւ Վրացյան*: Ես գրում եմ ո՛չ սպարապետ Նժդեհին, ե՛ւ ոչ զորավար Նժդեհին՝ գրում եմ սուսկ Գարեգին Նժդեհին: Ինչ վերաբերում է մեր նախագահական, սպարապետական, բյուրոյական ու զորավարական հանգամանքներին՝ թող ուրիշները դատեն եւ թող դատի պատմությունը: Ես կուզեի խոսել մեր *մարդկային եւ ընկերական* հանգամանքների մասին: Խոսել ստիպում են ինձ քո հուլիսի 16 եւ հուլիսի 20-ի նամակները: Այդ նամակները ցույց են տալիս, որ դու առանց մտածելու կանգնած ես մի շատ թեք մակարդակի վրա եւ եթե շարունակես գնալ այդ ճանապարհով՝ խորտակումն անխուսափելի կլինի:

Ինչո՞ւ ես կարծում դու, որ միայն դու ես *մաքուր, ազնիվ եւ հայրենասեր*, իսկ մյուս բոլորը՝ *սրիկաներ* են: Ինչո՞ւ ես կարծում, որ միայն դու ես *քաջ, հերոս, անձնագրի*, իսկ ուրիշները՝ *երկչոտ նապաստակներ ու ֆանֆարոններ* են: Ինչո՞ւ քեզ ես համարում միայն անթերի, իսկ ուրիշները՝

թերութեան տիպարներ են: Եւ վերջապէս քեզ ո՞վ ասաց, որ «առանց ինձ (Նժդեհի) ազատ Սյունիք լինել չի կարող, ուրեմն եւ ազատ Հայաստան լինել չի կարող»: *Անդրանիկն էլ քեզ պէս մտածեց*, բայց ... Հայաստան եղավ, իսկ ինքը՝ *հիմա թափառում է օտար երկրքի* տակ: Նժդեհները, Անդրանիկները կան թե՛ չկան՝ Ազատ Հայաստանն ու Ազատ Սյունիքը կ'լինեն, քանի կա Հայաստանի եւ Սյունիքի ազատասեր ժողովուրդը: Քո *մեծագույն* սխալն այն է, որ դու *գերզնահատում* ես քեզ: Դու կարծում ես, թե «Ազատ Սյունիք» եւ «Նժդեհ» *միեւնույն* բաներն են: Պարզվեց, որ միեւնույն բանը չէ՝ «Ազատ Սյունիքը» չգնաց «Նժդեհի» հետեւից Մուժումբար: Եվ չգնաց ո՛չ թե «Երեւանյան ժամտախտի» պատճառով, այլ որովհետեւ՝ այդպէս էր թելադրում նրան ժողովրդական բնագոյը: Դու իզուր ես կարծում, որ Ջանգեզուրի անկման պատճառն այս կամ այն անձինք են կամ այս եւ այն սխալները՝ պատճառն անհամեմատ ավելի խորն է եւ առարկայական: Մենք *քաղաքական գործիչներ* ենք եւ պետք է սովոր լինենք դեպքերի էությունն ըմբռնելու եւ ոչ թե արտաքին երեւոյթներով տարվելու:

Ես *մեկն* եմ նրանցից, որոնք Ջանգեզուր ոտք դնելուն պէս աշխատում էին ամեն կերպ պահպանել քո *ժողովրդականությունը* ու ամրացնել քո *դիրքը*՝ նեցուկ լինելով քեզ: Չկարծես թէ իմ աչքից խուսափել են փաստերը, բոլոր գլուղերում ես տեսնում էի, որ քո անվան շուրջը կա երկու տրամադրություն եւ, դժբախտաբար, ինձ համար, գոհ էին ավելի կուլակներն եւ դժգոհ՝ ռաչպար մասն: Եւ սակայն *մեծ մասի համակրանքը քեզ հետ էր* եւ մեր դատի հաջողութեան համար անհրաժեշտ էր, որ դու մնայիր *բարձր ու անհողդողդ*:

Չհամակրելով հանդերձ քո գործելակերպի շատ բանի՝ ես ամեն կերպ աշխատել եմ ուժեղացնել քո դիրքը: Նույնը արել եմ եւ Լեռնահայաստանում մնացած ընկերները: Նույնը չես արել *դժբախտաբար* դու կառավարության եւ ընկերների նկատմամբ՝ քո լեզուն շատ անգամ հակասել է քո կեցվածքին: Մարդու մեծությունն երեւում է ոչ թե հաջողութեան օրերին, այլ՝ դժբախտութեան ժամանակ: Մարդկանց մեծ մասն ընկնում է անհաջողութեան օրերին, ինչպէս ընկավ՝ *Անդրանիկը* եւ ընկան *շատ ուրիշները*: Ես կուզեի, որ դու չհետեւեիր նրանց: Կուզեի այս հիվանդ շրջանում դու պահեիր

քո հավասարակշռությունն եւ վաղը՝ մեր հաջողութեան օրերին, որոնք անխուսափելի են, նորից լինեիր այն դիրքերում, որ թողիր Լեռնահայաստանից հեռանալիս: Մի կողմ դիր այդ *թեթևսուլիկ պարծենկոտությունը, ինքնասիրահարությունը, չքմեղանքը* ու ուրիշներին *ամբաստանելը*: Ո՞վ է «խեղդվում քո փառքի մեջ»: Նայիր դեպքերին ու մարդկանց *ավելի պաղարյուն եւ ավելի խորրը*, ամփոփվիր քո ներքին աշխարհը, դատի նստիր քո խղճի հետ եւ դու կտեսնես, թե քո բռնած ճանապարհը *սխալ* ճանապարհ է:

Չեմ գրում քեզ՝ իբր *մրցորդ կամ թշնամի*, քեզ հետ բաժանելու ոչինչ չունեմ, անձնական ոչ մի հաշիվ չկա քո ու իմ մեջ, քո փառքից մի կաթիլ անգամ չեմ ուզում սեփականել: Գրում եմ քեզ *լույ իբրեւ կուսակցական ընկեր*, որ քո անվան հետ որոշ հույսեր է կապել, կուզեի չհիասթափվել, կուզեի՝ որ դու պահեիր քո հավասարակշիռ վիճակը եւ այն *համեստ* տեղը, որ պատմությունը բաժին է հանել քեզ, ավելի լիասրտությամբ՝ քան շատ ուրիշներին: Գրում եմ միայն աչքերդ բաց անելու համար: Եթե հաջողեցի՝ լավ: Եթե այս նամակը կհամարես ոչ լավ զգացմունքի արտահայտություն՝ *վատ* քեզ համար: Հիշիր սակայն՝ մարդիկ բարձրանում են տարիների աշխատանքով՝ ընկնում են մի վայրկյանի մեջ:

Թավրիզ

Բարեւներով՝ *Ս. Վրացյան*

1921թ. հուլիսի 21

Հ.Յ.Ղ. Կենտրոնական Արխիվ:

ԹԻՎ 8

Արձանագրություն

ՀՅԴ Հայաստանի կենտրոնական կոմիտեի նիստի

Քննեցին Դուգալի դեպքը

Որոշեցին.

1. Հայտնել ցավակցություն բռնության ենթարկված ընկերներին,
2. Նժդեհին զրկել Հայաստանի կենտրոնական կոմիտեի անդամ լինելու իրավունքից,
3. Նժդեհին կախակայել կուսակցությունից եւ գործը հանձնել կուսակցական Գերագույն ատյանին:

Ա.Վրացյանի առաջարկով մնում են 1 եւ 2 կետերը:

1921թ. օգոստոսի 23

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, 316 Ա2-2, ք. 13-14:

ԹԻՎ 9

(Ա. Վրացյանի նամակը Գ. Նժդեհին)

Հայաստանի կենտրոնական կոմիտեի անդամ Նժդեհին

Հայաստանի կենտրոնական կոմիտեի մի շարք նիստերում մանրամասն քննելով Դուզալում ձեր հրամանով կոմիտեի անդամ Հ. Տեր Հակոբյանին խուզարկելու եւ նրա ու մյուս ընկերների հասցեին վիրավորական ճառ ասելու խնդիրը, ինչպես նաեւ ծանոթանալով ձեր այդ առթիվ գրած նամակ-բացատրությունը, իր ամսի 23-ի նիստում որոշեց հայտնել ձեզ, որ.

1. Դուք այդ դեպքի պատճառով չեք կարող Հայաստանի կենտրոնական կոմիտեի անդամ լինել:

2. Գործը հանձնել Հ.Յ.Դ. Գերագույն Ատյանին:

Թավրիզ

1921թ. օգոստոսի 30

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, 316 Ա 2-2, ք. 15:

Ա. Վրացյան

ԹԻՎ 10

Արձանագրություն

ՀՅԴ Հայաստանի կենտրոնական կոմիտեի վերջին նիստի

Կոմիտեի անդամների հաշվետվությունները:

1. Եփրեմ Սարգսյանի 8 միլիոն ռուբլի հայկական թղթադրամի հաշիվը փակել:

2. Եփրեմ Սարգսյանի 1,5 միլիոն խորհրդային թղթադրամի հաշիվը փակել:

3. Սմբատ Եղիազարյանի 1,331,500 խորհրդային թղթադրամի հաշիվը փակել:

4. Հանո Օհանջանյանի 50 միլիոն խորհրդային եւ 85 միլիոն հայկական թղթադրամի հաշիվը փակել, սրա կորած

գումարը գտնել հանձնել Հ.Յ.Դ. Ատրպատականի ԿԿ-ի միջոցով:

5. Հակոբ Տեր-Հակոբյանի 5,145 միլիոն հայկական թղթադրամի հաշիվը՝ գաղթի ճամբին տվել է կուսակցական նպաստ ընկերներին:

1921թ. հոկտեմբերի 19

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ, 316 Ա2-2, ք. 17:

ԹԻՎ 11

(Հայկ Ասատրյանի նամակը Հ.Յ.Դ. Բյուրոյին)

*Հ.Յ.Դ. Բյուրոյին
Պատճենը՝ Նժդեհին*

Դաշնակցական երիտասարդ սերունդը չի կարող չզնահատել արժեքն այն ծանր պայքարի, որ կատարել է Նժդեհը, նաեւ հեղափոխական այն գործը, որ կատարել է նա՝ Հայաստանի անկախության գաղափարը դրոշմելով մի առողջ եւ թարմ լեռնաժողովրդի հոգում: Նժդեհի հետ է մեր բովանդակ համակրանքը, եւ երբ հարկ լինի՝ նրա հետ կլինի նաեւ մեր հեղափոխական խիղճն ու կամքը:

Հ.Յ.Դ. Ուսանողների Անդրկովկասի բյուրոյի կողմից՝
Հայկ Ասատրյան

Թավրիզ

1921թ. հոկտեմբեր

Հ.Յ.Դ. Կենտրոնական Արխիվ:

Հ. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ՎՃԻՈՐ ԸՆԿԵՐ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ ՄԱՍԻՆ

Հ.3.Դ. Գերագոյն Դատական Ատյանը մանրամասն քննության առնելով ընկեր Սիմոն Վրացյանի առաջարկը՝ քննելու Նժդեհի եւ կառավարության շուրջ եղած տարածայնություններն եւ բազմաթիվ ընկերների եւ հասարակական գործիչների կողմից հարուցված ամբաստանությունը, որով մեղադրվում է Նժդեհը.

ա. Որ իբր թե նա իր գործելակերպով ցույց է տվել *ծայրահեղ փառամոլություն, այլամերժ եւ բռնակալ ոգի*, կենտրոնացնելով միայն *իր անձի շուրջ ամեն ինչ*, մի հանգամանք, որ չափազանց վնասել է ընդհանուր գործին եւ եղել է *պատճառներից մեկը* Լեռնահայաստանի անսպասելիորեն *արագ անկման*,

բ. Որ *ոչ մի տեղ անձամբ* չի ղեկավարել կռիվներն եւ զանազան պատրվակներով խուսափել է ճակատներից,

գ. Որ իր ճառերով եւ խտրական ընթացքով *սրել է ներհակությունը* զանգեզուրցիների եւ երեւանցիների միջեւ,

դ. Որ կարգադրել է եւ *թուլատրել* ուրիշներին Լեռնահայաստանում անելու մի շարք *սպանություններ*,

ե. Որ Հանքերի տեղահանությունն անել է տվել խուճապով, դրամները փոխադրելու համար գրաստ չի տվել, մինչդեռ՝ մի քանի գրաստով հանել է տվել իր սեփական իրերը,

զ. Որ Արագի պարսկական ափին սպանել է տվել սպա Ասլանյանին եւ հասցրել է ծանր վիրավորանքներ մի քանի ընկերների, նրանցից ոմանց՝ նույնիսկ ծեծել տալով,

է. Որ ինքնագլուխ կերպով Լեռնահայաստանից բերել է գնդացիներ, թնդանոթ եւ այլ կարգի զենքեր եւ հանձնել պարսիկ խաներին,

ը. Կուսակցությունից եւ կառավարությունից իր ստացած դրամների հաշիվները չի ներկայացրել մինչեւ այժմ:

Վերոհիշյալ մեղադրանքների առթիվ լսելով Գարեգին Նժդեհին, բազմաթիվ վկաների եւ ծանոթանալով ներկայաց-

ված փաստաթղթերի հետ, դատական ատյանս եկավ հետեւյալ եզրակացության.

Ա. Նկատելով, որ իրոք Նժդեհն եղել է *նպաստողներից մեկը* Լեռնահայաստանի *արագ անկման*, որի ապացույց կարող են ծառայել հետեւյալ փաստերը.

1. Որ նա, օգտվելով իր սպարապետի եւ զորավարի կոչումից, բավականացել է միայն Լեռնահայաստանի վերջին դեպքերի ընթացքին ծրագիրներ կազմելով եւ հրամաններ միայն ուղարկելով կռվի վայրերը, ուր սակայն եղել են դեպքեր, երբ իր անմիջական ներկայությունն էր անհրաժեշտ՝ ոգեւորելու եւ սրտապնդելու համար եւ զորքին, եւ սպայության, մինչդեռ ինքը դրա հակառակը՝ *մնացել է շարունակ թիկունքում եւ զբաղվել երկրորդական աշխատանքներով*, որոնք շատ հեշտությամբ կարող էին հանձնվել ուրիշներին,

2. Որ նա չի աշխատել բոլոր մարտական ուժերը *բարոյական կապով* իրար շաղկապել, ստեղծելու թշնամու դեմ ընդհանուր եւ կուռ ճակատ, ընդհակառակն՝ իր հրապարակային ճառերով եւ մասնավոր խոսակցություններով վարկաբեկել է Հայաստանից եկած բոլոր ուժերին, բարձրացնելով միայն Լեռնահայաստանի զինվորությունը եւ այդ պատճառով է եղել, որ կռվող ուժերի միջեւ խորունկ վիճի բացվի, տկարանա եկվոր զինվորությունը եւ Լեռնահայաստանի ինքնապաշտպանության գործը թուլանա,

3. Որ Նժդեհն իր սպարապետի իրավունքները չի գործադրել իրեն ենթակա հրամանատարների վերաբերմամբ՝ անհրաժեշտ կարգադրություններն անելու, օրինակ՝ Յապոնին հեռացնելու Դարալազյազի ճակատից, երբ իր իսկ խոստովանությամբ՝ Յապոնը Դարալազյազի ժողովուրդի համար մի չսիրված անձնավորություն է եղել, եւ այս առթիվ հարց էլ է հարուցվել մի քանի անգամ նրան փոխարինելու մի ուրիշ զինվորականով, որ չի հեռացրել պաշտոնից իր օգնական Կուռոյին, երբ սա մի քանի անգամ իր հրաժարականն է ներկայացրել կառավարությանն եւ երբ վերջինս (Կուռոն) իր՝ Նժդեհի իսկ արտահայտությամբ, վարակված է եղել «պարտվողական հոգեբանությամբ»,

4. Որ Դարալազյազի գրավումից հետո, երբ անսպասելիորեն տեղի կունենա հայկական ուժերի նահանջն եւ իմաց կտրվի իրեն այդ դժբախտ իրողության մասին, Նժդեհը

փոխանակ կտրուկ միջոցների դիմելու, անձամբ այդ կարեւոր ճակատն այցելելու՝ կբավականանա միայն հրահանգներ ուղարկելով եւ լիազորելով իր ոչ-զինվորական ընկերներին կարգադրելու այդ ճակատի՝ գերազանցորեն զինվորական խնդիրը,

5. Որ Նժդեհը մարտի 11-ին անցնելով սիսիանցիների մի վաշտով Նոր Բայազետ, այդտեղ կմնա շատ պասսիվ դերում, իրեն իրավունք չհամարելով այդ ճակատի կռիվներին մասնակցելու, թեւ Ախտայից ընկեր Յամո Օհանջանյանը նամակներով աղերսում է օգնության անցնել դեպի Ելենովկա, իսկ Մեսրոպը՝ կրկին ու կրկին խնդրում է նրան մի կարճ ժամանակ մնալ այդտեղ եւ կռիվներին ընթացք տալ, Նժդեհը սակայն չի մնում Նոր Բայազետի շրջանում, այլ բավականաճանաչում է միայն խորհուրդներ տալով Մեսրոպին եւ նշանակելով մի զինվորական խորհուրդ,

6. Որ շարունակ Նժդեհն *անվստահ, արհամարհոտ եւ վարկաբեկիչ* վերաբերմունք է ցույց տվել թե՛ իր կողմից նշանակված Լեռնահայաստանի նախկին դիվանի անդամներին, թե՛ իր համաձայնությամբ ընտրված Լեռնահայաստանի կառավարության եւ թե՛ վերջերս ստեղծված Յայաստանի կառավարության անդամներից շատերի վերաբերմամբ, համարելով նրանց ոչնչություններ, որոնք *առանց իր աջակցության* չեն կարող որեւէ ամենափոքրիկ գործ կատարել,

7. Որ թեւ համարել է Լեռնահայաստանի դիվանի նախագահ Գեղեոն Տեր-Մինասյանին զեղծարար ու թալանող (ոչ իրավացիորեն), բայց եւ միաժամանակ նրան նշանակել է Լեռնահայաստանի կառավարության պետական վերահսկիչ:

Բ. Նկատելով, որ իրոք Նժդեհի կարգադրությամբ կամ համաձայնությամբ կատարվել են բազմաթիվ սպանություններ թե՛ Երեւանից իբրեւ պատանդ բերված մեծամասնականների, թե՛ Ղարալագյազից ուղարկված բանտարկյալների ու գերիների եւ թե՛ տեղացիների, մի հանգամանք, որ արդարացիորեն վրդովեցրած է շատ-շատերին,

Գ. Նկատելով, որ Յանքերը թողնելուց երկու օր առաջ թեւ Նժդեհը համաձայնած է, որ այնտեղ գտնված փողերը փոխադրվեն, բայց եւ միաժամանակ ապահովուցած է կառավարության անդամներին, որ Ղափանը պիտի պաշտպանվի մինչեւ վերջ, որ կռիվներն ինքն անձամբ պիտի ղեկավարե,

րե, որ տեղահանության մասին խոսք լինել չի կարող, բայց հակառակ այդ հավաստիացումներին՝ երկու օր հետո խուճապ կծգի եւ կստիպե այդտեղ եղողներին տասն րոպեից թողնել Ղափանն, երբ դեռեւս մեծամասնականները գտնվում էին բավական հեռու տարածության վրա եւ մտած են Ղափան միայն հետեւյալ օրը,

Դ. Նկատելով, որ Արագի պարսկական ափին Նժդեհի եւ սպա Ասլանյանի միջեւ տեղի ունենալով մի կոնֆլիկտ, ստեղծվել է հոգեբանական այնպիսի մի դրություն, որի շնորհիվ Նժդեհի ծառայող զինվորականները կարծել են, որ իրենց պարտականությունը հաճելի կերպով կատարած կլինեն իրենց սպարապետի հանդեպ, եթե սպանեն Ասլանյանին եւ հոգեբանական այդ վիճակը մղել է նրանց ծեծելու, փախչող Ասլանյանին հետապնդելու եւ կրակ բանալու նրա վրա, մինչդեռ Նժդեհն, եթե ցանկանար, կարող էր մատի մի շարժումով արգելել Ասլանյանի սպանիչներին որեւէ քայլ առնելու այդ ուղղությամբ,

Ե. Նկատելով, որ Նժդեհն Արագի ափին անպատվել եւ բանտարկել է երեք օրով ընկեր Ա.Մաքսապետյանին եւ մի քանի այլ գործիչ ընկերների, վրեժխնդրության զգացումով տարված՝ անպատվել եւ խուզարկել է նաեւ նախարար Յակոբ Տեր-Յակոբյանին, վիրավորել է Արշալույս Աստվածատուրյանին, անպատվել է Եփրեմ Սարգսյանին, Օնիկ Մաճառյանին, ամենավարագ կերպով ծեծել է եւ ծեծել տվել երկու ընկեր պաշտոնյաների՝ Գեւորգ Կարապետյանին եւ Ալեքսան Մովսիսյանին այնքան, որ նրանք արյունաշաղախ վիճակում ուշաթափ գետին են ընկել,

Զ. Նկատելով, որ թեւ պարսիկ խաներից Ամիր-Արշադին հանձնված են առաջին անգամ մեկ, երկրորդ անգամ՝ երկու թնդանոթներ եւ զնդացիր, բայց այդ հանձնումն ունեցած է իր արդարացուցիչ պատճառներն եւ թե երկրորդ անգամ Լեռնահայաստանից պարսկական ափը բերված են թնդանոթներ զուտ ռազմական նկատումներով,

Է. Յաստատելով, որ Նժդեհը կառավարությունից եւ կուսակցությունից իր ստացած դրամների հաշիվները ներկայացուցած է արդեն կուսակցության եւ կառավարության,

Ը. Նկատելով, որ մինչեւ Լեռնահայաստանի անկման առաջին օրերը՝ Գարեգին Նժդեհի գործելակերպը *շատերի*

կողմից համակրալից եւ խանդավառ ընդունելություն է գտել, որ նրան շրջապատողները պետական շահերի նկատառումներով ամեն կերպ նպաստել են ժողովրդի մեջ նրա հեղինակության բարձրացմանը, որի հետեւանքով Նժդեհն ավելի եւս քաջալերված, կարծել է հաճախ, որ ինքը սխալներ չի գործում, որ իր ընթացքը համապատասխան է ընկերների, պետական գործիչների եւ ժողովուրդի ցանկություններին եւ սպասումներին եւ թե այդ ուղղությամբ պիտի շարունակել գործը մինչեւ վերջ:

Ղատական ստյանը վճռեց.

Չեռացնել Քարեզին Նժդեհին Ղաշնակցության շարքերից եւ ներկայացնել նրա դատն առաջիկա 10-րդ ընդհանուր ժողովին.

Սույն դատավճիռը հրատարակել կուսակցական օրգանում բացառությամբ մեղադրանքների Դ, Ե, Է կետերի եւ պատճառաբանությունների 3, 7, Բ, Զ կետերի:

1921թ. սեպտեմբերի 29

Յ.Յ.Դ. Գերագույն Ղատական Ատյան

Չունան Տեր-Ղավթյան - նախագահ

Լեւոն Թադևոսյան - անդամ

Սերուժան Օզանյան - անդամ

Ղատական գործ, էջ 375-378:

«Նոր Աշխարհ», Թիֆլիս, 1922, ք. 3, էջ 138-141:

Այս վճիռը Նժդեհի Բուլղարիա անցնելուց հետո ուղարկվել է նաեւ Յ.Յ.Դ. Բալկանյան Կենտրոնական կոմիտեին:

Ի Բ Ր Ե Վ Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Այս գրքում կարելուրը նրա թեման է՝ գործող անձինք եւ իրադարձությունները:

Անհատներ եւ գաղափարներ, որոնք ունեցան տարաբեւեռ ճակատագրեր, հաճախ՝ դաժան ու ողբերգական:

Մի մասն արժանացավ՝ հաճախ հանիրավի, կուսակցական անհաս դիրքի եւ կարողացավ վայելել ինչ-ինչ արիեստածին դափնիներ:

Եւ ընդհակառակն՝ մեկը՝ Նժդեհը, գիտակցորեն հրաժարվեց անձնական Ես-ի որեւէ ապահովագրումից:

Նա մինչեւ վերջ եղավ *նվիրյալ հայրենապաշտ* ու Չայրենիքը սիրեց՝ անկախ նրա քաղաքական կարգավիճակից, իր հերոսամարտի վերածված կյանքում սեփական անձը զոհաբերեց՝ անմնացորդ եւ նպատակասլաց, քանզի գիտակցեց, որ Չայի տեսակի հավիտենականացումն է այդ հրամայականորեն պահանջում:

Մեծ մեռելներից *օրինակ* վերցրեց եւ արդյունքում՝ *օրինակելի* եղավ գործով ու գաղափարով, այդ գաղափարի նկատմամբ անխախտ հավատքով, վարքով ու բարքով:

Քիչ խոսեց, բայց՝ *տեղին եւ նպատակամետ.*

Քիչ գրեց, բայց՝ *անհրաժեշտն ու պիտանին.*

Երբեք պաշտոնի չձգտեց, քաղաքական շահախնդրություններով չզբաղվեց՝ *միակ* պաշտոն համարելով պայքարը հանուն Չայ ցեղի:

Անդամակցելով կուսակցության՝ կուսակցամուլ չեղավ:

Անձնական նեղ հաշիվներով չտարվեց եւ սեփական Ես-ի նկատմամբ գործված անիրավությունն երբեք չընդհանրացրեց:

Որովհետեւ, յուրաքանչյուր Ես, այդ թվում՝ նաեւ իրենը, խորապես համարեց անցողիկ, որը միայն մեկ առաքելություն ունի՝ ծառայել ամբողջին:

Եղավ հաղորդակիցն ու արտահայտիչը Չայ Ցեղի:

Իր ուժն ու հավատը քաղեց նախնիների հավերժ հիշատակից ու Ցեղի ոգու գանձերի շտեմարանից:

Ստացածը կատարելապես յուրացրեց ու իմաստավորեց, ապա՝ արդեն հարստացրած, վերադարձրեց կենսատու աղբյուրին՝ Ցեղին:

Խնդիրներ դրեց իր առջեւ եւ ամենայն պատասխանատվությամբ եւ հետեւողականությամբ լուծեց դրանք:

Եղավ պարտաճանաչ ու երբեք չմեղանչեց Ցեղի դեմ:

Ցեղի հավերժի ճամբորդն էր Գարեգին Նժդեհը՝ Զորավար, Առաջնորդ, Մտածող:

Ավելի հակիրճ՝ *Ցեղի ոգու շարժը գիտակցած եւ Տարոնի շունչը զգացած Հայ Ցեղամարդ:*

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երկու խոսք	3
Լեռնահայաստանի հերոսամարտը եւ Գ. Նժդեհի դատը	5
Գարեգին Նժդեհի նամակները	37
Գարեգին Նժդեհի բացատրությունները	
Լեռնահայաստանի անկման պատճառների մասին	102
Մի քանի խոսք եւս Լեռնահայաստանի մասին	160
Գարեգին Նժդեհի հարցաքննությունը	176
Վկայություն-Ցուցմունքներ Գ. Նժդեհի մասին	195
Վավերաթղթեր Գ. Նժդեհի մասին	222
Հ.Յ.Դ. Գերագույն Դատական Ատյանի վճիռը Գ.Նժդեհի մասին	232
Իբրեւ վերջաբան	237